LEN
1534

1913

1999

Ն Ա Ր

ԱԶԳԱՅԻՆ

ԵՐԳԱՐԱՆԷԳՐՈՒԹԻՒՆ

ՊԱՐՈՆ ԳՈՒՐԳԵՆ ԲԻՒԶԱՆԴԻ
ԳԻՐՔ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ
28241-62

Գ. ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄԱՐԶՈՒԱՆ
ՏՊԱԳՐ. ՆԵՐՍԷՍ ԵՒ ՍՐԱՊԵԱՆ
1913

Լեր
1534

43771-Ա.Հ.



Ձեռ. 1539

1534.Լեո

ԶՕՆ

Ի ՅԻՇԱՏԱԿ

Վաղարևոիկ որդեգրիս

ՆԱԶԱՐԷԹ ՄԱՀՄՈՒՐԵԱՆԻ

Ծնեալ 30 Յունուար, 1888

Հանգուցեալ 11 Յունիս, 1909

Ի ՄԱՐԶՈՒԱՆ

ՅԱԿՈԲ Մ. ՍՐԱՊԵԱՆ

ՅԱՌՋԱԲԱՆ
ԵՐՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ
ԳՐԱԴԱՐԱՆ
ՀԱՅԿԱԶՆԵՐԷՆ

ԵՒԼԼԷՐ

Մեր ազգային կեանքին մէջ՝ երգերը իրենց գեղարուեստական նշանակութենէն զատ տակաւին արտայայտիչն են միանգամայն այն յուզումներուն ու խանդավառութեանց, որոնց մէջ ապրած է հայ ժողովուրդը, նամանաւանդ վերջին յիսնամեակի ընթացին: Բռնապետութիւնը այդ մխիթարութիւնն իսկ գլացաւ ու կաշկանդել փորձեց հայ սիրտը՝ կապկպելով հայոց երգուներ: Այդ սեւ օրերու ժողովուրդը պարտաւոր էր **ազատ** երգել, վտաւերելով ու եղծանելով ազգային ներկարագիրը, վասնզի տակի մօտիկ ազգային երգեր ծանրագին պահպանելու գինը՝ վիշտ կարելի էր երգել:

Ներկայ երգարանին պատրաստութեան առեն մենք երկու գլխաւոր տեսակէտներէ առաջնորդուեցանք առաւելապէս, 1.) Ազատ, դիւրաւար եւ ժողովրդական երգարան մը տալ ժողովուրդին ձեռքը, եւ 2.) գեղեցիկ նպատակաւոր հատաւածոյ մը բնծայել երգի եւ ժողովրդական բանահիւսութեան սիրահարներուն: Դիւրին չէ նպատակայարմար երգարանի մը յօրինումը, եւ հաղուածներով չյագնար: Հարկ է տակաւին ընտրութիւն որպէսզի երգելու բնածին փափաքը իւրմէ զգացումներու ազնուութիւն եւ ուղղութիւն տայ, եւ երգը՝ ժամանցէ զատ իր որոշ ծառայութիւնն ալ ունենայ նկարագրի կազմութեան մէջ:

Թէ ո՛ր ասիթեան յաջողած ենք մեր առաջադրութեան մէջ՝ այդ մենք չենք ուզեր ըսել: Ներկայ երգարանին Ա. եւ Բ. տպագրութեանց հաւաքուած օրինակներու այսչափ կարճ ժամանակի մէջ սպառումը աննախընթաց ցոյցն ապացոյցն է անոր ժողովրդային խաւերու մէջ գտած ջերմ ընդունելութեանը: Հեզնեցէք հասած բազմադիմի պահանջներուն վրայ ասիկոյ եզանիք ձեռնարկել անոր Գ. տպագրութեանը, որ ո՛չ միայն կը գերազանցէ նախորդ տպագրութիւններ, այլեւ իր տեսակին մէջ նախագոյնն ու անմրցելին է: Իր մեծագոյն առաւելութիւնը անո՛ր մէջ կը կայանայ որ, հակառակ իր լեցուն եւ բնիւր բովանդակութեան, նիւթապէս ալ շատ դիւրամատչելի է, այնպէս որ որեւէ մէկը, ի՛նչ սեռի, հասակի ու ասիթեան մէջ ալ որ գտնուի, դիւրաւ պիտի կրնայ մէկ օրինակ ձեռք բերել՝ չի զրկուելու համար նոյնիսկ ազգային ճարէն վճարելէն: Աւելորդ կը համարենք ըսել որ անոր այսչափ ամանագին հայթայթումը արհամարհելի զոհողութեան չէ որ կը կարօտի:

Կը հայտնենք որ գործիս ներկայ Գ. տպագրութիւնն ալ պիտի արժանանայ այն ժողովրդականութեան ու համակրութեան, որուն արժանացաւ Ա. եւ Բ. տպագրութիւնները:

Սրտագին շնորհակալութիւն անոնց, որ իրենց սիրայօժար աշխատակցութիւնը բերին մեզ՝ մեր այս օգտակար եւ լաւ ձեռնարկին մէջ:

15 Յուլիս 1913
ՄԱՐԶՈՒԱՆ

ՀՐԱՏԱՐԱԿԻՉԸ

1 ԱԶԱՏՈՒԹԻՒՆ

Ազատն Ազատած այն օրից,
Երբ հաճեցաւ շունչ փչել,
Իմ հոգանիւթ շինուածքին
Կենդանութիւն պարգեւել,

Ես՝ անբարբառ մի մանուկ
Երկու ձեռքս պարզեցի,
Եւ իմ անզօր թեւերով
Ազատութիւն գրկեցի:

Մինչ գիշերը անհանգիստ
Օրօրոցում կապկապած
Վալիս էի անգադար,
Մօրս քունը խանգարած՝

Խնդրեմ էի Նարանից
Բազուկներս արձակել՝
Ես այն օրից ուխտեցի
Ազատութիւնը սիրել:

Թոթով լեզուիս մինչ կապերը
Արձակուեցան, բացուեցան,
Մինչ ծնողքըս իմ ձայնից
Խնդացին ու բերկրեցան,
Նախկին խօսքն որ ասեցի
Ձէր հայր կամ մայր, կամ այլ ինչ.
«Ազատութիւն» գուբս թռաւ
Իմ մանկական բերանից,
«Ազատութի՛ւն», ինձ կրկնեց
Ձակատագիրը վերուից.
«Ազատութեա՛ն» գու զինու որ
Կամիս գրուիլ այս օրից,
«Ո՛հ, փշոտ է ճանապարհդ,
Բնդ շատ փորձանք կ'սպասէ,
Ազատութիւն սիրոյին
Այս աշխարհը խիստ նեղ է.»
—Ազատութի՛ւն,— գոչեցի,—
Թող որոտայ իմ գլխին
Փայլակ, կայծակ, հուր, երկաթ—
Թող թաւ ընէ թշնամին,
Ես մինչ ի մահ կախաղան
Մինչեւ անարգ մահու սիւն
Պիտի գոռամ, պիտ՝ կրկնեմ
Անդադար—ԱԶԱՏՈՒԹԻ՛ՒՆ.

Մ. Նալբանդեանց

2 ԻՋԷՆ

Ազատութեան այն վառ սէրը
Թունդ որոտաց իմ սրտում,
Իմ Հայրենեաց սուրբ անունը
Ինձ պատերազմ է կանչում.
Ելէ՛ք ելէ՛ք, Հայկազունք,
Ելէ՛ք Հայկայ զաւակունք.
Ելէ՛ք, ելէ՛ք, Հայ եղբարք,
Առէ՛ք ձեր սուրն ու նիզակ.

Ահա՛, եղբարք, Հայ եղբայրներ,
Առէ՛ք զրահ, սուր, զէնքեր,
Մահը գաշտում Շաւարշանայ
Մեզ հրաւեր կը կարգայ,
Ելէ՛ք, ելէ՛ք, Հայկազունք, եւլն.

Ա՛խ, հայրենիք, սուրբ անուն
Անշէջ վառի իմ սրտում,
Մեր Հայ եղբարց չիրիմները
Իրանց գերկին մեզ կանչում
Ելէ՛ք, ելէ՛ք,, Հայկազունք, եւլն.

Այս օրերը մեր քաջ կեանքին
Նուիրական թող լինին.
Մ'ով սիրում է Ազատութիւն
Թո՛ղ չմոռնայ Հայ անուն.
Ելէ՛ք, ելէ՛ք, Հայկազունք, եւլն.

3 ԵՐԳ ԱԶԱՏՈՒԹԵԱՆ

Ազատութեան աստղը պայծառ,
Որ վերսաին շողայ փառաւոր,
Ամէն սրտերն է հմայէր,
Դէցցենէրով դուռայ այեր։

Ազատութեան այս խաղաղիկ
Սիրոյ յուսոյ անմոռ ծաղիկ
Ծըլի փայլով անակընկալ,
Հալեցնէ հին սխերն ալ։

Ձերմակ կարմիր դրօշներ վէտ վէտ
Կը ծածանին հովերուն հետ.
Այդ ցոյզ գոյներ նոր իրական
Յիշատակ՛ք կը պարծենան։

Լուսապգեստ է ազատութիւն,
Բոսորազոյն զոհին արիւն,
Այն արիւնով օծուած անմեղ
Ազատութիւնն է փառայեղ։

Ազատութիւն կ'ուզենք սակայն,
Իմաստուն, լուրջ, հայեացքով լայն.
Արդարութեան հզօր բազուկ
Մեր իրաւանց ըլլայ նեցուկ։

Աբեւելքի ազգեր ենք քոյր,
Թող հալածի նախանձը կոյր.
Ձեռք ձեռքի տանք, ա՛լ հաշտուինք,
Եղբայրութեան կռնենք դաշինք։

Հայրենիքի մը և ազատ
Օճախներ ենք հարազատ
Ձեռք ձեռքի տանք և աշխատինք
Այս սուրբ ուխտին վրկայ երկինք։

4 ՆԱՀԱՏԱԿԱՑ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Ազատութեան սիրոյն համար
Շատ արիւններ թափուեցան.
Անմեղ հայրեր ու զաւակներ
Եկան այստեղ թաղուեցան։

Ահա՛, եղբարք, ես ալ կ'երթամ
Ազգիս համար մեռնելու,
Ազատութեան սիրոյն համար
Ամրողջ կեանքըս զոհելու։

Դերեզմանիս հողին վրայ
Թափէ արցունք, իմ մայրիկ,
Սրփուէ ծաղիկ բուրմնաւէտ.
Նահատակ եմ ես յաւէտ։

Ահա այսօր Հայ եղբայրներ
Կուգան այստեղ ողբալու,
Նահատակաց հողին վրայ
Ադի արցունք թափելու։

Ո՛վ եղբայրներ, դուք ալ երէք
Դերեզմանիս խորերէն,
Ուրախացէք և ցնծացէք
Ազատութեան զոչերէն։

5 ՀԱՅՈՒՆ ԵՐԳԸ

Ազատութի՛ւն, եկո՛ւր հոս.
Մեր փրկութեան հրրեշտակ.
Հին ոեժիմէն բարբարոս
Ա՛լ մի՛ թողուր յիշատակ։
Սփոփանքի շուքդ բեր,
Քեզ կ՚ըպատեն անհամբեր
Բնակութեանդ ենք տեղեակ
Հոգիներնիս քեզ գըղեակ։

Ազատութիւն, քեզ տեսանք.
Հայոց Ազգն ա՛լ ապահով
Քեզ կը կարդայ գովասանք
Հայրենասիրուհի բառերով։
Կեանք, ինչք, պատիւ, արդար տուրք
Քեզ կը պարտինք Հայ և Թուրք
Բընակութեանդ ենք տեղեակ
Մեր Թուրքիան քեզ Թըղեակ։

Ազատութիւն քեզմով մենք
Պիտի ապրինք երջանիկ,
Ալ ոխատած ենք սէր մ՚աննենգ
Բոլոր Հայ, Թուրք պատանիք.
Աներկութեան չունինք Թոյն
Մեր դաշինքն է միութիւն։
Բընակութեանդ ենք տեղեակ
Խղճմտանքներնիս քեզ գըղեակ։

Թէոդիկ

6 ԱԶԻԶ ՄԵՐԻԿ

Ազիզ մերիկ, քեզի Թողի,
Դարդ ունէի՝ գուրս ընկայ.
Սուրը վաՀանիս Ժողովըրդի
Ձէնը կանչեց գուրս ընկայ։
Դուման սարեր, գարդուս սարեր,
Դարդ ու գուման մեր վաՀան.
Ա՛խ գլուխըս քո ուղուրին,
Ա՛խ, մեր անուշ մեր վաՀան
Է՛յ, Սիս, Մասիս, ձեզի մեռնիմ,
Իմ Սիս Մասիս չան տըղերք.
Դուք տասի չափ, հազարի չափ,
Ձեզի մեռնիմ չան տըղերք։
Առիւծի պէս առուն կուգայ՝
Բաշը տըւած քոսերին.
Առիւծի պէս հայ ախպըտանք,
Վո՛ւհ վրայ կը տանք գուշմանին։
Մէկ սիրտ գառնանք, բիւր սուր գառնանք
Ջարգենք փշրենք գուշմանին
Ջա՛ն, տղերք չա՛ն, զա՛րնենք, զա՛րկենք,
Մեր վաՀանի ուղուրին։

7 ՄԱՇԱՄԵՐՁ ՀԱՅՐԵՆԱՍԷՐ

Ազնիւ ընկեր, մեռանում եմ,
Բայց հանդիստ եմ ես հոգւով.
Իմ թշնամիքս ես օրհնում եմ,—
Օրհնում եմ քեզ Աստուծով։

Հեռանում եմ, անգին բնկեր,
Զգնահատած ոչ ոքից,
Բայց հաւատաւոր անձնանուէր
Ազգիս մըշակ կը հաշուիմ։

Անխիղճ բնկեր, չը մոռնաս,
Անդաւաճան ջերմ սիրով
Ես վիրել եմ իմ հայրենիք.—
Դընաս և դու նոյն շաւղով։

Խեղճութիւնը հայոց ազգի
Կարեկցաբար մըտածի՛ր,
Ոսկեզբօյկն եղիչէի
Քաջ առաջնորդ քեզ ընտրիր։

Այնտեղ աւերը կրան, ազգ մխիթան՝
Ազատ կամքով ու խղճով,
Այնտեղ վարդան, անմահ վարդան՝
Իւր խրնկերի քաջերով։

Հայրենի՛ք,—սեղան արիւթեան—
Ես՝ Աստուծոյ առջեւ
Շատ կ՚ազաչեմ, շատ կ՚արտասուեմ
Որ ծագէ քեզ նոր արեւ։

Իմ մըտերի՛մ, ահա մօտ է,
Բայց հանգիստ եմ ես հոգւով,
Որովհետեւ խղճս արդար է,
Ձշմարտութեան չատագով։

Ս. Շահազիզեանց

Ց ՊԱՐ ՆԱՒԱՍՏԵԱՑ

Աշխոյժ նաւաստին
Անվհետ ճակատ՝
Ընդդէմ փոթորկին,
Երգէ անփոյթ, զուարթ։
Վարիթ թիւմպերելելլէ հա հա հա

Կոհակք փրփրագէզ,
Ձեն սոսկում վախ մեզ,
Հողմանք սաստկահար,
Դիզուեն մեզ ի պար։
Վարիթ թիւմպերելելլէ հա հա հա

Օ՛ն, խմենք զուարթ,
Դինին մինչ յատակ.
Օն, գրկենք զիրար
Պարենք անդադար։
Վարիթ թիւմպերելելլէ հա հա հա

Լուեցէ՛ք, գիտցէ՛ք.
Մինչդեռ մենք հոս եկած ենք.
Ահա ծերն՝ իւր ատքերն,
Հոս հան շուտ՝ տանի փոյթ։

Ա՛յ, ա՛յ, ա՛յ, պիտ՝ խընայ,
Օ՛ն, բռնենք՝ մեզ է մի՛դը.
Հա՛ հա՛ հա՛ կը խընդայ,
Հոս եկեք ամենքս ալ ծափ զարնենք։

Ձանգակն ուժգնապիրկ.
Կոչէ մեզ ի կարգ.
Վերջ տանք խընդութեան,
Փաչենք մեր պարան։
Վարիթ թիւմպերելելլէ հա հա հա

9 ԱԼԱԳԵԱՋ

Ալագեազ բարձր սար ա
Վայ լէ լէ լէ, Ջան լօ լօ լօ (կրկ)
Մեր դուռնը խընկի ծառ Կիւլիւմ Ջան
Ձեր դուռնը խընկի ծառ Կիւլիւմ Ջան
Ոակի պլպուլ վերէն Թառս » »
Կ'երթար կուգար շորոր տար » »

Ջուրը հիւանդի դեղ ա
Վայ լէ լէ լէ, Ջան լօ լօ լօ
Մեր դուռնը եւայլու

10 ՊԱՐԵՐՔ

Ալագեազ սարն ամպել ա
Վա՛յ լէ լէ՛, լէ՛, լէ՛, լէ՛, լէ՛, լէ՛,
Ադրեր իր ձին թամփել աւ
Իմ մայրիկ ջան, իմ մայրիկ Ջան,
Ադրեր իր ձին թամփել ա.
Ետոջ դրունէն անցել ա (կրկ)
Ելէ դաշտը՝ խաղցել ա
Ելէ դաշտը՝ խաղցել աւ
Ալնձրեւ եկէ՝ թըրջել ա
Ալնձրեւ եկէ՝ թըրջել ա
Աբեւ զարկէ՝ չորցել ա
Աբեւ զարկէ՝ չորցել ա
Ֆան կարմիր վարդ բացել աւ

11 ՍԲԱՐԱՆԸ ՔԱՐՈՏ Ա

Ալբարանը քարոտ ա, բոտ ա
Վայ լէ, լէ, լէ, Ջան լօ, լօ, լօ,
Ֆաթի տակը արօտ ա
Իմ մայրիկ Ջան իմ քոյրիկ Ջան,
Իմ մայրիկ Ջան իմ քոյրիկ Ջան

Թամամ օխտը տարի ա,
Վայ լէ, լէ, լէ, Ջան լօ, լօ, լօ,
Գիրն ախպօրը կարօտ ա,
Իմ մայրիկ Ջան, իմ քոյրիկ Ջան (կրկ)

Բերդի բոլորն աւազ ա, վայ լէ....
Նշխան գիւլլէն Թաւազ ա. իմ մայրիկ...

Կալատափր մազել եմ, իմ մայրիկ...
Կոզափ ձուկը ագել եմ, իմ մայրիկ...

Հազար ու մի գարդ ու ցաւ, վայ լէ...
Արտիս միջին Թագել եմ, իմ մայրիկ...

Ահւ տակը սարի գլխին, վայ լէ...
Կաքաւը քարի գլխին իմ մայրիկ...

Մէկ մէկու խօսք ենք տուել, վայ լէ...
Լէն բարձր սարի գլխին, իմ մայրիկ...

28234-62

ՀՍՍՌ—Արա Ս.Ր
ՄԵՍՐՈՊ
Ա. ՄԱՇՏՈՑԻ
Ա. ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ

12 Ի ՄԻՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

Ա՛լ թող գագրին արցունք հայուն աչքերէն,
Փոշտա քնարն վար առնուի ա՛լ սրմէն
Եւ սիրարծարծ նուագս իր լարք թող հնչէ,
Զի հայք այսօր սէր միութիւն կը գոչեն՝
Ազն սիրոյ նշան
Մեր բնկերութեան
Մաղթենք բարձր ձայն
Կեցցէ՛ յաւիտեան։

Հայեր, երթանք յետ, ձոր գըւարթ պարելով,
Հայաստանի մեր սիրելի հեգ մօր քով.
Զմեզ բամնող խաւարն վանենք և յառաջ
Երթանք սփռել ծագկունս ոսքին ընդ առաջ՝
Հայրենեաց ի նուէր
Պատրաստ մեր սրտեր
Մեր բնկերութեան
Կեցցէ՛ ձայն կատան։

Մեր հայրենեաց արիւնազանգ սուրը գաշտեր,
Ւ՞րը կը բուանին արդեօք փշոց տեղ վարդեր.
Ւ՞րը կը կապնին աւերակներն և հայեր
Ձայնեան իրենց պարտք, իրաւունք, այս ախտ մեր՝
Հայրենեաց ի նուէր
Պատրաստ մեր սրտեր
Սէր և միութիւն
Կեցցէ՛ ձայն կատան։

Ահա պարտուց և իրաւանց սուրը դրօշակ
Կը ծածանի մեր խեղճ ազգին յոյսն ու փառք.
Սահման, օրէնք դեռևս ած կան իր վրան
Որքան կրնան կեանք տալ հայոց ազգութեան։
Ազգի կենսատուն
Սէր և միութիւն
Գոչէ քաղաքն վան
Կեցցէ՛ յաւիտեան։

13 ԱԼ ՈՒ ԱԼԻԱՆ ԵՍ ՀԱԳԵԼ

Ալ ու ալեան ես հագել,
Կարմիր լարայ ես գոտևել,
Սուրայի կըլոր մէջքդ
Փամփուշտներով ես ծածկել՝
Ախպէր Ջո՛ն, քեզ զուրպան,
Դո՛ւ ես, դո՛ւ մեր գումանդ։
Ձեռքդդ թըվանք ես առել,
Դուշմանի դեմ ես կռնգնել,
Ինձ ասա՛, դըլխիդ մատաղ՝
Բլնիշդդ ո՞վ է կարել՝
Ախպէր Ջո՛ն, քեզ զուրպան,
Դո՛ւ ես, դո՛ւ մեր գումանդ։
Ճախճախ պէս կանգնել ես,
Բևեռդդ պըռել ես,
Ալ, թուխ բեխերիդ մատաղ,
Ցաղթանակը տարել ես՝
Ախպէր Ջո՛ն քեզ զուրպան,
Դո՛ւ ես, դո՛ւ մեր գումանդ։

14 ԱԼ ՄԻՆՔԱՆԷՔ

Ալ մինէթանէդ նոր ես կարել,
Թեւին արծաթի գուգ մէկ շարել,
Ընծի թողել նորն ես ճարել,
Եար, եար, եար, գովելի եար,
Եար, սիրելի եար, եարալու եմ եար,
Նըշանալու եմ եար։

Դու կայնել ես սարի ճոթին,
Ամ ես դրել կանանչ խոտին,
Ես մեռնիմ քո անոյշ հոտին, Եար ևին.

Չէլրանի պէս շօրօր տալով,
Իմ չորս բոլորս ման գալով,
Վիզս ծուռը թողիր լաղով, Եար ևին.

15 ԵՐԳ

Ախ թէ երկինք գէթ մի վայրկեան
Լսէր կրծքիս հառաչանք,
Փայլէր ինձ սուրբ ազատութեան
Վառ, կենատու արեգակ։
Ախ, թէ և ես կարենայի
Որպէս արծիւ անարգել
Դէթ մի րոպէ ազատ կեանքի
Ազատ օդում սուսուռնալ։
Որպիսի՛ ջերմ լի փափաքով,
Կարօտ պայծառ երկնքի՝
Կը թռչէի ես խնդալով
Դէպ հայրենիքս անցկացի։

Դէպ այն երկիրը նուիրական,
Ուր սահեցան անխռով
Զքնաղ օրերն իմ մանկութեան
Ի գրաթատային սուրբ սիրոյ։
Դէպ այն երկիրն երջանկալից.
Ուր մայրիկըս նազելի
Իւր ջերմ գրկօքս պարգեւեց ինձ
Ե՛ւ կեանք, ե՛ւ սէր, ե՛ւ հոգի։

16 ԱՆԲԱԺԻՆՆԵՐ

Ա՛խ, Մեր սիրտը լիքը դարդ, ցաւ,
Օր ու արեւ չը տեսանք,
Վա՛խ, մեր կեանքը սեւով անցաւ,
Աշխարհից բան չիմացանք։

Հարուստ մարդիկ կ'ուտեն, կ'խմեն
Աշխարհի ճոխ սեղանից,
Մենք աշխարհի խորդ-ադերքն ենք,
Մեզ փայ չկայ աշխարհից։

Խեղճ ազքատի հոգին դուրս գայ,
Քարից-հողից հաց քամէ.—
Բեռով հացը հարուստին տայ,
Հարուստն ուտէ, վայելէ։

Խեղճ ազքատը դառը գառի—
Դատարկ նառի... Է՛յ, աշխարհ,
Էլ ինչո՞ւ ես քարը թողնում
Քարի վրայ, քար աշխարհ ..

17 ՀԱՅԵՐՈՒՍ ԲԱՂՁԱՆՔԸ

Ակ, ինչպէս կ'ուզեմ տեսնել մեր Հային
Ազատ, ապահով, կրթեալ, ինքնագոհ,
Ամէն հայի տուն – դրբաստ երկնային...
Լոկ այդ բանն ինձնից չուզենար մէկ զոհ։

Ակ, ինչպէս կ'ուզեմ տեսնել Հայաստան
Մի օր ազատուած թշնամու ձեռքէն,
Հայի երկիրը հայի սեփական . . .
Լոկ այդ չի բաժնէը ինձ իմ կօպէկէն։

Ակ, ինչպէս կ'ուզեմ որ մեր Հայերուն
Աբծարծուէը սերը ուսման, գիտութեան,
Հայի մէջ չի մնար մի հատիկ անուն . . .
Լոկ հետս ինձնից թուղթ առորագրութեան։

Ակ, ինչպէս կ'ուզեմ որ Հայ պատանիք
Դէպ համալսարան խումբով վազէին,
Եւ Զուիցերիա երթար Հայ աղջիկ . . .
Լոկ ինձնից նորա կօպէկ չուզէին։

Ակ, ինչպէս կ'ուզեմ, որ մեր Զէյթունցին
Մխիթարեան, շապ, ուրմկէն ունենար,
Զարդ ու բուրդ անէը քաբա ու չէրքէզին...
Լոկ ինձնից գենքի նա փող չուզենար։

Երբ մեր Հայրենիք հրաշքով ազատուէը,
Մէրոնք էլ ազատ կեանք-օր վարէին,
Ակ ինչպէս, ինչպէս, լաւ բան մը կը քնէը՝
Երբ Հայք ինձ իրանց իշխան ընտրէին։

Գամառ – Փարիզ

18 ՈՂԲ ՎԱՍՈՒՐԱԿԱՆԻ

Ախ վասպուրական սրխուր Հայաստան,
Անթիւ հերոսներ քեզ մէջ ժողուեցան.
Ահեղ կրուի մէջ այնքան զիմացան,
Ի սէր ազգութեան նահատակուեցան։

Ակ, բաւ է, Հայեր, միշտ այսպէս գերի
Թողնիլ Հայրենիք գիմել օտարին
Օտար սիրում է մեզ իբրեւ հիւրի,
Եւ մեր հացն ու ջուր գարձնում է ապի։

Վան փաքրիկ քաղաք իր պատառներով
Լեցուեցաւ գիակ Տարիւր Տազարով.
Ներկուեցան գաշտեր Հայու արիւնով,
Զայն տուին երկինք, ամպերն աստղերով։

19 ԵՐԳ ԲԱԳՈՍԻ

Ալոռիին մեծ կառասին բոյորիին են բազմեր,
Ուազ իշխանին, մեծ պարոնայք ժողովի են հոն կազմեր
Այո՛, այո՛, ժողովի են հոն կազմեր:

Սասիկ է պէնն. մեծ է խնդիրն զոր հոն տեղ կը խորհին,
Թէ ի՞նչ կերպով դարման մ'գտնեն հիւանդ մեր ազխարհին.
Այո՛, այո՛, հիւա՛ղ մեր ազխարհին,

Մէկն ասկ կ'ըսէ, մէկն այն կ'ըսէ կը ծագի լոյսն առտուն.
Անոնք չտեղէ, տեարք, կը կանչէ աւանին պետն արդուն:
Այո՛, այո՛, Աւանին պետն արդուն:

Ասոդ բազն առնու, կ'ըսէ, Բազոս եւ փառօք ապրի տաս,
Իսկ գրնուիչնն բլայ դրչոյ եւ գանն ալ յԱրտաշատ:
Այո՛, այո՛, եւ գանն ալ յԱրտաշատ:

Այսպէս մեզի նոր գործերուն առիւծներ կը ծագին,
Առողջ կ'ըլլայ մեր ժամանակն եւ նոր՝ մեր աշխատին հին
Այո՛, այո՛, եւ նոր մեր աշխատին հին:

20 ԵՐԳ ՈՒՐԱԽՈՒԹԵԱՆ

Ահա՛ բաժակ ուրախութեան,
Ի սէր յաւերժ միութեան,
Չի վայելուչ սրդիք հայկեան,
Ա՛կ առ հրճուին և ցնծան՝
Կեցցէ՛ սէր և միութիւն,
Կրեմք մի սիրտ, մի արիւն:
Վերցուր աչքդ յերկնից կամար,
Փայլի հեռուն աստղ մը պայծառ.
Եւ դու ո՛ Հայ զարթի՛ր սիրտ առ
Հայոց բաղդն ալ չէ խաւար.
Կեցցէ՛ սէր և միութիւն
Կրեմք մի սիրտ, մի արիւն:
Բա՛ւ է այսչափ բաժանում,
Ըլլամք ուրախ և խնդում,
Նախանձ վրէժ ձեզ թողում,
Ննդունդք և վիշք անհատնում
Կեցցէ՛ սէր և միութիւն
Կրեմք մի սիրտ, մի արիւն:
Փարձ մը ըրինք բաժանման,
Փարձ մ'ալ ընենք միութեան.
Լեցուի վաստքդ Հայաստան,
Տես որդիք քո միանան:
Կեցցէ՛ սէր և միութիւն,
Կրեմք մի սիրտ մի արիւն:

Ինչ և ընեմք ինչ կերպ առնեմք
Ո՞ չըգիտաց թէ մենք Հայ եմք.
Ո՞վ չի գիտեր թէ եղբայր եմք,
Արիք ծիծաղ դիմօք երգեմք. կեցցէ՛
Ո՞ր բանաւոր, ո՛ր օրէնքներ
Կը պատուիրեն թէ մի՛ սիրեր.
Ազգիդ օգուտն ու բարիքներ.
Սիրոյ գահն է յերկինս ի վեր: կեցցէ՛

21 ՀՈՎԻԿ

Ահա ելաւ լուսին արծաթի
Մուխ ամպերու ստուերէն,
Ահա նաւակն ալ գեղազարդ
Դուրս սահեցաւ ժայռերէն.
Անուշ հովիկ, փչէ յուշիկ
Ու դէպ ինձ բեր բիւր բիւր սիրտ՝
Նաւակին մէջ իմ գեղուհին
Փառաւած՝ անփոյթ՝ լուսնի տակ,
Կը ձայնակցի իր կիթառին,
Հնչուն ձայնով մը յստակ.
Անուշ հովիկ, փչէ յուշիկ
Ու դէպ ինձ բեր երգն անուշիկ:
Ձայնով կ'երգէ սէր ու գգուանք,
Համակ յուզում ու սարսուռ,
Ալ թո՛ղ, աղջի՛կ, երգն ու նուագ,
Բաց աչքերըդ ինձ դարձուր.
Անուշ հովիկ, փչէ յուշիկ
Ու դէպ ինձ բեր սէրն անուշիկ:

22 ՁՕՆ ԻԶՄԻՐԼԵԱՆԻ

Ահա գարուն գեղածիծաղ փրկութեան,
Նոթափետուր կուգայ ափեղ մեր վրան
Բիւր բարիքներ, ո՛ Հայ եղբաւրք համօրէն,
Ոյց կ'ըղձայինք մեր սրտերու խորերէն
Ցնծամբ հոգւով կամ ոգին,
Փառք վերերգեմք մեք յ'երկին։

Հայր ժ՛ունէինք գորովալիր՝ բարեգութ,
Խլուած մեզմէ ձեռքերով վատ՝ ժանտաժուտ.
Հայր հոգւոյս անձնագիր իւր հայ հօտին,
Ահա փառքով դարձաւ իւր պերճ գահ կրկին։
Ցնծամբ ևն։

Օրհնեք, սահման, սեր, մխիթարն, ազատ կեանք
Բերաւ նա մեզ զերծ փունջ ծաղկանց երփներանգ.
Մեր վհատած Տէր Մաթէոս սրբազան,
Կեցցէ՛ յաւերժ, կեցցէ՛ փառաւք անսահման
Ցնծամբ ևն։

Եկէ՛ք ուրեմն եղբարք մեր Հօր գահուն շուրջ
Բոլորուելով ուխտենք սրտով՝ սիրով լուրջ,
Զանազ, գործել յօգուտ Ազգին ու հայրենեաց,
Փայլիլ ուսմամբ, յառաջ դիմել քաջընթաց։
Ցնծամբ ևն։

Մ՛վ Հայր մեր, հայր ծընեալաբեր վհոգւի,
Վիշտ, ցաւ, կնճիռ, հոգ տրտմութեան ալ հեռի,
Այդ հայրական մեզ հովանի՝ պահապան,
Օրհնէ՛ յաւէտ քո որդիներդ համբուրմ։
Ողջ կը գոչեն, յաւիտեան
Ապրի Հայր մեր Իզմիրլեան։

23 ՅՈՅՍ

Ահա՛ կ'երթամ, սիրելի մայր,
Ազգիս համար մեռնելու.
Քաջ ընկերքս ես միասին,
Անգութ քրդեր ջարդելու.
Մի՛ լար, մայր իմ, ա՛ղբար, մայր իմ,
Վերադարձիս ըսպասէ,
Ազգիս հայոց ազատութեան
Տիւ և գիշեր ազօթէ։

Ահա՛ կ'երթամ, սիրելի քոյր,
Նպատակըս է բարի,
Զենք դիմանար մենք գերի ենք,
Իրը վեց հարիւր տարի.
Մի՛ լար, քոյր իմ, ելլեմ։

Ահա՛ կ'երթամ, սիրելի հայր,
Մնաս բարեաւ դու հիմա.
Այսքան ճնշման՝ տակ ինկած է,
Հայը ինչպէս դիմանայ։
Մի՛ լար, հայր իմ, ելլեմ։

Ահա՛ կ'երթամ, սիրելի կին,
Քու արտասուք չը հոսէ.
Պատերազմի դաշտին վրայ
Իմ ընկերը կը սպասէ.
Մի՛ լար կին դու, ելլեմ։

Մ՛ով բարեկամք եւ ազգականք,
Թողէք մեզի որ երթանք,
Պատերազմի գաշտին վրրայ,
Վէրքեր տանք ու առնանք.
Մի՛ լար եղբայր, եւ՛ն,
Թէ յաջողիմ ողջ կը դառնամ,
Այս ամէնը կը մոռնաս,
Թէ պատուիմ ես սուրբ մահով,
Օր մը անշուշտ դուն կու գաս.
Մի՛ լար, մայր իմ, եւ՛ն,
Դերեզմանիս քարին վրրայ
Թափէ արցունք, ո՛վ մայրիկ,
Թափէ արցունք, ցանէ ծաղիկ.
Երիտասարդ եմ, մայրիկ.
Մի լար, մայր իմ, եւ՛ն,
Սերտատիս երբ կ՛երթայի,
Երկու օրէն դառնայի,
Երկու օրս ալ կ՛ըլլար տարի,
Ես քեզ շատ կարօտնայի,
Մի լար մայր իմ եւ՛ն,
Ելլէի լեռանը վրրայ,
Քար մը զարնէի գլխուս,
Իմ գլխուս եկած ձիւները
Մատաց գագաթն ալ չըկայ.
Մի, լար, մայր իմ եւ՛ն,
Աբգեօք այս մեր քաշածները
Պիտ՝ վերջացնե՞ս, ո՛վ Աստուած,
Ըսէ մեզի, ե՞րբ պիտ՝ տեսնենք
Հայրենիքը ազատուած։

24 ՀԱՍՕԻ ԵՐԳԸ

Ահա՛ ծագեց կարմիր արեւ,
Տաք և պայծառ է օրը.
Դէ՛հ, քաշեցէք սիրուն եզներ
Յառա՛ջ տարէք արօրը։

Վարը վարենք, ակռս փորենք
Խոր ակօսներ հողի մէջ,
Սերմ ցանենք որ հունձ հնձենք
Յորեան դիզենք կալի մէջ։

Կը գայ ձմեռ—մենք վախ չունինք—
Ուրախ կ՛անցնի մեր օրը,
Ուտելու միշտ պաշար ունինք։
Լի և կուշտ է մեր փորը։

Դէհ քաշեցէ՛ք, սիրուն եզներ
Շուտով վարենք արտերը.
Թող չասեն մեր դրացիները՝
Ծոյլ են Հասօի եզները։

25 ԵՐԳ ՄԱՀՈՒԱՆ

Ահա մօտեցաւ մահուան ժամերըս.
Ալ չեմ խմանար բոլոր ցաւերըս.
Կը զատուիմ քեզմէ սիրուն ծաղիկս,
Բայց դադրեա՛ չունին իմ խեղճ աչերս։
Ինչպէս տա՛ի զատուիմ, սաստիկ է սէրս
Բայց օգուտ չունի, Աստուած է Տէրս։

Համբերէ քիչ մը ո՛վ մահ սոսկալի,
Ձիս մի մեգքանար փրան իմ ցաւալի
Համբերէ քիչ մը որ ակբրս առնեմ.
Եւ այնտեղաւ հանգիստ քուն բնեմ,
Ինչպէս ՚տի զառուիմ ևյն.,

Երբ կը մտածեմ, մէկ երկու ժամէն
Հողեր ու որդեր գիս սիրտ ծածկէն,
Ամէն կոմէրքս ծակէն ծակծկէն,
Իմ մատղաշ մարմինս մատաղ ՚տի անէն,
Ինչպէս ՚տի զառուիմ ևյն.,

Ցաւրա գերեզմանին երբոր մօտենաս,
Զըլլայ որ երբեք սարսուռ մը զգաս.
Քաղցր ժպիտով մը երբ անուշքս տաս,
Անշուշտ այն տեղն գիս սիրտ խղճաս
Կը զառուիմ քեզնէ սիրուն ծաղիկս,
Բայց դադրում չունին իմ խեղճ աչերս։

26 ՍԱՅԼՈՐԴ

Ահա սուրհանդակի սայլակը
Ուղիղ ճամբով է դուրս թըռչում.
Եւ վարդայի սրխաւը գանգակը
Կամարի տակ կ զօղանջում.
Արթնան սայլորդքս գիշերուայ գէմ
Իւր վիճակի վերայ սրխրեց,
Եւ սիրեկնի աչաց կարօտը
Նայ տրխրագին ձայնով երգեց։

—Կապուտ աչեր, կապուտ աչեր,
Կըտրիճիս կեանքը մաշեցիք,
Ինչո՞ւ, ինչո՞ւ դուք չար սոսկներ
Ինչո՞ւ սրբտերքս բաժնեցիք։

Մընաս բարեաւ իմ տուն հօրական,
Մընաս բարեաւ իմ սիրական,
Ես կը հանգչիմ մինչ բոց կըրակին
Այս անընակ դաշտի մէջէն.

Արեւս լոյսը խաւարել է,
Այս աշխարհումն էլ որը եմ ես.—
Սըրտիս կարօտը աղջկայ տեսնելից
Մինչեւ ի մահ զրկած եմ ես—

Այս որ ասաց, շարժեց մըտրակը,
Երեք ձիանց մէջքին խրփեց.
Իւր սիրեկնի պարզ յիշատակը
Այսպէս երգով նա փարատեց։

ԿԻԼԻԿԻԱ

Այգուն, այգուն իմ խրճկի մօտ,
Լուսաժըպիտ մինչ ցառաւօտ,
Երգէ պըլպուլն իմ Սիս վանայ՝
Կիլիկիա՛, Կիլիկիա՛, Կիլիկիա՛։

Դարուն կուգայ, ծաղկանք փթթին,
Դաշտերու մէջ, ի ծոց հովտին,
Բայց պըլպուլին իմ դեռ ոգայ
Կիլիկիա՛, Կիլիկիա՛, Կիլիկիա՛։

Ահա այն վարդին կարմիր թերթերը,
Արեամբ նախնեաց են ներկրուեր,
Եւ այն ցօղեր որ կը կաթին,
Արիւնն են, արցունքն են Զապելին,
Լա՛ւս կա՛ց պըլպուլ ալ մի՛ երգեր,
Մի՛ նորոգեր մեր հին վիշտեր.
Լա՛ւս կաց, քո տաղ վերքերը բանայ՝
Կիլկիա՛, Կիլկիա՛, Կիլկիա՛։

28 ԱՍՈՒՊ ՄԸ

Այդ աղբիկը երէկ տեսայ,
Հե՛ղ մը մեայն, ան ալ վերջին.
Կարծես ասուպ մը դիւրասահ.
Որ կը կորչի աչքիդ առջին։

Հազիւ գողցայ ակնարկ մը վառ
Սեւ աչքերէն իր տենչարծարծ,
Ու ժպիտ մը, որ այտէն վար
Ինձի նետել ուզեց յանկարծ։

Հազիւ դիպայ քնքուշ թոթիկն
Հրրաժեշտի պատրուակով,
Ու ըզգացի քայլ մը անդին
Սրբատես բան մը մընաց իր քովն։

Շանթ

29 ԱՐՄԻԿԻ ԵՐԳԸ

Աղջիկնե՛րք, պար բռնեցէ՛ք,
Արմիկի երես գովեցէ՛ք.
Այ երես շարմաղ երես,
Դու մեզ չը թողնես սեւ երես։
Բարձր սարէն պաղ ջուր կուգայ,
Արմիկի երես կը լուայ,
Այ երես, արեւ երես,
Քու շափաղով մեր սիրտ կերես։
Աղջկե՛րք, պար բռնեցէ՛ք,
Արմիկի աչեր գովեցէ՛ք.
Այ աչեր, սիրուն աչեր,
Արեւի պէս փայլուն աչեր։
Ո՛վ պատուեց վագրի բերան,
Արմիկ պատուեց վագրի բերան,
Վագրի բերան –ահա այսքան—
Ժանիքները մէկ-մէկ գերան։

30 ՎԵՐՅԻՇՈՂՈՒԹԻՒՆ

Ազատ օրեր իմ մանկութեան
Զուարթ պահեր կեանքիս գարնան
Երազներու պէս վազանցիկ
Որքան ալ շուտ անցաք գացիք
Ամէն անգամ որ յիշեմ ձեզ
Հառաչ մ'խակոյն թրջէ կուրծքս
Բաղցրիկ օրեր իմ երջանիկ
Որքան ալ շուտ անցաք գացիք։

Պապուտագէղ երկնից վրայ
Աստղ մ՚ահա կը պլպլայ,
Բայց պահ մ՚է լոկ, լոյսն այդ չքնաղ
Կը մարմրի մէկէն աւա՛ղ,
Այդ աստղին պէս սիրունիկ,
Ցզաք ազատ կեանք մ՚ունիք,
Բայց այդ օրեր ժպտուն, թէև
Գեղեցիկ, սակայն չեն յարատեւ
Օրեր ալ կան ապագային,
Հակապատկեր ձեր այս կեանքին
Ուր վարդերի տեղ փուշեր մինչն
Պիտի գանէք դէմ հանդիման,
Այն ատեն երբ ամեն դիէն
Հոգեր դքեզ շրջապատեն,
Ձեր մանկութեան օրերն անուշ
Պիտի յիշէք. ո՛հ սակայն ուշ

ՅԻ ԱՄՕԹ ՀԱՋԱՐ ԱՄՕԹ

Ամօթ հազար ամօթ, հայ իշխաններին,
Որ Սրբուհուն թոզին անօրէնի ձեռին.
Ամօթ հազար...
Միամիտ նստած ի քոյրիկ բազին
Անօրէն լսուն էլաւ իմ եաչին
Ամօթ հազար...
Սրբուհու ունքերն ամէնից կամար,
Աստուած ստեղծեր ինձի համար.
Ամօթ հազար...
Սրբուհու արցունքն բարեխօս էլաւ,
Դիւլլէն ուլին ցակոր ախօրն չդրխաւ
Ամօթ հազար...

ԱՂԱՍԻ ԵՒ ԸՆԿԵՐՔ ԻՒՐ

Այն որ ծանօթ է պատմութեան տզրին
Ճանաչէ Վահան, Մուշեղ, Դարեգին
Նոքա զնացին, տէր ետ մեզ կրկին
Սէդ Կարօն, Մուսէն և քաջն Ազատին
Ապրին պաշտպանք մեր տզրին
Կարօն, Մուսէն, Ազատին.
Կեցցե՛ն գիւղացք մեր տզրին
Կարօն, Մուսէն, Ազատին
Միշտ պիտի պարծի Բանաբիս աւան,
Որ ծընաւ ձեզ պէս կորիւն անընման.
Դուք Արարատայ սիրտ ախոյեան.
Փառք և ցնծութիւն Աբգանաղեան տան
Ապրի՛ն պաշտպանք մեր ևայլն
Մասիս, Արագած, Նպատ և Զիրաւն,
Սիրով տեղի տան ձեր սուրբ մուրհակին.
Դուք նոցա պլխին կեցէ՛ք Հայաստանի
Ուր տեղ վտանգ կայ հասէ՛ք օգնութեան
Ապրին պաշտպանք մեր, ևայլն
Միշտ մեր սև բադդէն Սասունն այն գազան
Երկեր խեղճ Հայերն մշտօք զանազան,
Դուք նորա գոբեանք սարսափ յաւիտեան,
Ձորս նորին վանեալ տարաչք ցիր ու ցան
Ապրին պաշտպանք մեր, ևայլն
Ձի մոռնար Անին այն ձեր յաղթութիւն,
Որով Թշնամին ապարիք նրկուն,
Այնու Հայ գերեաց հատաք յօդնութեան,
Խումբ խումբ փրկեցիք գառնոյ յիւրեանց տան
Ապրին պաշտպանք մեր ևայլն

33 ԱՆԴՐԱՆԻԿ

Անդրանիկ Փաշան բիւր ընկերներով
Ձինուած պատրաստուած Մօսին դէնքերով
Անցաւ սար ու ձոր իւր տասնեակներով
Սասուն, Ալխաթ, Վան դարձաւ արեան ծով։
Շրչուեմ անվեհեր փոքրիկ խմբերով
Ընդդէմ Թշնամուն կռիւ մղելով
Կռուեմ անվեհեր գողտրիկ երգերով
Վրէժ առ վրէժ Հրայր յիշելով։
Դէհ, ելէք տղերք ժամանակ հասաւ
Հայդուկ Անդրանիկ մեզի կ'սպասէ
Տարօն, Մուշ գաւառ արիւն կ'հոսին
Անդրանիկ Փաշան ձեզ խրախուսէ։

34 ԵՐԳ ԳԻՆԻՈՅՆ

Անմահ անուշ գու գինի,
Շատ սիրելի ես քաջին,
Չի գոյնդ արեան նմանի՝
Պատերազմաց ի գաշտին։
Բոսորափայլ քո փըրփուր
Որ մեզ ի կռիւ փըչէ հուր,
Թէ հաշտութիւն գայ արդար
Փոխի ի ցօղ զովարար։
Դափնիէք քեզմով կ'առնեն ոյժ,
Կարմիր կրակոտ գու գինի
Քեզմով զուարթ և աշխոյժ
Կ'ըլլայ հեզիկ ձիթենի։
Քեզմով վառի բոցագոյն՝
Օրիորդին համեստ գոյն.
Կեցցեն մեր քաջ պատանիք,
Եւ նահելի գեղանիք։

53 ՈՂԲ ԱՆԻ ՖԱՂԱՔԻՆ

Անի քաղաքս ըստեր կուլամ,
Ձրկայ ասող, մի՛ լա, մի՛ լա.
Կասեն թէ չէ՛ թուղ նըստիմ լամ,
Ակ ե՞րբ լըսեմ, մի՛ լա, մի՛ լա,
Շատ ցաւերով կ'այրիմ, տապիմ,
Ձրկայ մէկ մարդ հաւատարիմ,
Որ խըղճալուս գայ մօտենայ,
Դոնէ ասէ, մի՛ լա, մի՛ լա։
Ա՛յ հայ տըղայ, խըղճա՛ ինծի,
Տե՛ս քո Անին, թէ ի՛նչպէս է,
Հերիք ես լամ, դուն չը գրծաս,
Զէ՛ քո Անին շատ ափսոս է։
Ախ ու վախով օրերս անցան,
Վայով աչերս կուրացան,
Որ մրնայն ինձ վիճակեցաւ
Թախտս բրնաւ զիս մոռացաւ։
Կորուսեր եմ թագաւորներ,
Փողովեր եմ գլխուս բաներ,
Որ միշտ կ'երգեն, «Անին անցա՛ւ,
Անին անառէր աւերեցաւ»։
Ա՛յ հայ տըղա, խըղճա՛ եղնի
Անին եմ շատ մարդ սըրընակ,
Մրնացեր գաւն աւերակ,
Իմ լացն, իմ կոծ, իմ ազաղակ,
Անառէր որբոցըն նըմանակ,
Երբեմն էի շատ անընդման՝
Հայոց քաղաք արեւելեան,
Ա՛յժըմ աւեր հիմնայատակ,
Ցըստեր կուլամ ես միայնակ։
Ա՛յ, հայ տըղա, խըղճա՛ եղնի

Եկաք, տեսաք, գարձեր կ'երթաս,
Լալով կ'ասես «Բարեւս մընաս».
Աստուած սիրես դիս չը մոռնաս
Մասիս սարին երբ մօտենաս.
Աստ՛ իմ քոյր Արարատին,
«Ներսեր կուլայ քո խեղճ Անին».
Կասես, ե՞րբ գաս աւետիք տաս.
Թէ՛ «իմ Անին, հերիք է լաս»։
Ա՛յ Հայ արդայ խղճամ եւն.
—Ողբերգութիւնը հերի՛ք, Անի,
Թշնաւտացեալ դու լաս քանի՛
Օր մը գթամած ալ Անգղի
Մարգասիրեալ առ քեզ հայի՛
Դան ժողովին Հայք միաբան,
Դեղեցկանաս շատ անդրման.
Հա՛պա մի լար սիրուն Անի,
Անի, Անի, իմ չքան Անի։

36 ԵՐԳ ՕՐՕՐՈՑԻ

Մայրն Անուշ քնակն ալերն առեր.
Անուշ հովերն ալ տարտրեր.
Իմ տատրակիս քունն է եկեր.
Անուշ երգով քսեմ օրօր։

Որդին Ես քուն չունիմ անգութ մայրիկ
Հերի՛ք աչքըս կապես, հերի՛ք.
Մէկ պահ հիկն կ'ընեմ պաճիկ,
Ես տրձակէ՛, մ'քսեր օրօր։

Մայրն Մինչեւ չի լան մատաղ մանիկիկ,
Ծիծ չեն խտար անոր գա՛նիկ.
Դուն չի լացած իմ մէկ հատիկ,
Ես ծիծ կուտամ կ'քսեմ, օրօր։

Որդին Խըղճուկ պատով ձայն եմ ձըգեր,
Կը ճըվճըվամ, գուն չես լսեր,
Անուշ ձայնիդ ես ըզմայլեր,
Ես կուլամ գուն կ'քսես օր օր։

Մայրն Արցունքներդ մարգարիտի պէս,
Երեսդ է վար ի՞նչ կը թափես.
Մի՛ լար, ձագուկ, մի՛ լար, մեղք ես,
Ո՞վ կ'ուզես, ան քսէ օրօր։

Որդին Դիրկըդ ինծի հանգստարան,
Ծիծերդ լեռներս անուշ ծորան,
Իրիկուան գեմ պառկիլ օրրան,
Աչքըս կապէ, քսէ օրօր։

Մայրն Քընացընեմ իմ ադաւնիս,
Մեծացընեմ սիրով սըրտիս.
Կարմիր վարդի նըման բացուիս,
Շուքըդ նատիմ, քսեմ օրօր։

Որդին Ինչ մը ինծի թեւերս առքերս,
Ալ թըմրեցաւ փափուկ մրսերս.
Անուշ մըրափն առնէ աչերս,
Հապա արխմէ՛, կարգա՛ օրօր։

Մայրն Այդ սաւառնով չեմ խարուիր ես,
Կ'ուզես որ դիս նըստեցընեմ,
Զի քընանաս, ծիծըս ուտես,
Դասարկ տեղը քսեմ օրօր

Ոտիկն

Քիչ մը ճոր ճոր, քիչ մը ճոր ճոր,
Քիչ մը տան տան, քիչ մը պոր պոր
Քիչմ՛ոլ պապան ա՛ռ. Հօպքա տա՛ր,
Քիչ մ՛ոլ մէն մէն, եաքը օր օր։

Բուրաստան Ս. Սահակեան

37 ԿՈՉ ՄԻՈՒԹԵԱՆ

Ապերախտ ենք մենք հայերս,
Բեզի մոռցանք հայրենիք,
Մեր սերունդը մեր եաեւից,
Պիտի կարդայ նախատինք։
Եգեմական դրախտ էիր,
Դու մեզ համար հայաստան,
Մ՚թէ հիմա դժոխք դարձար
Դու, սիրելի բնաբուտան։
Սեփհական շահերի համար,
Մոռացել ենք ազգ ու թիւն,
Եղբայր եղբօր դէմ ենք կանգնել.
Այդպէ՞ս է արդարութիւն։
Դերութիւնը մ՚իմէ մեզի
Վիճակուա՞ծ է մեզ անպայման,
Մինչեւ ե՞րբ մենք ման պիտի դանք,
Այսպէս խեղճ թափառական։
Երգիչ Մինջաղը խնդրում է,
Կապեցեք սէր մ՚ու թիւն,
Մեր ցաւն սիրով պիտի դանենք
Խեղճ հայերս մ՚ու թիւն։

38 ՀԱՐՍՆԵՐԳ

Առաւօտուն բարի լոյս,
Աստուած պահէ ամէնուս
Թող գուբս գայ թշնամուս
Լո՛րիկ, լո՛րիկ, լո՛րիկ, լո՛րիկ,
Թող գուբս գայ թշնամու լուս
Լո՛րիկ, լո՛րիկ, լո՛րիկ, սիրուն լորիկ
Լո՛րիկ, լո՛րիկ, լոր իմ, լո՛ւս լորիկ։
Հազար երնէկ էն ուսուբ
Տաւուլ զուրնա չալեցուցին,
Կանաչ կարմիր հագեցուցին,
Տարան ժամը կայնեցուցին,
Աւետարան կարդացուցին,
Ձեռը ձեռին տըւեցուցին.
Տո՛յ, տո՛յ, տո՛յ, տո՛յ . . .
Լո՛ր իմ, լո՛րիկ, սիրուն լորիկ,
Լո՛րիկ, լո՛րիկ, լո՛ր իմ, լո՛ւս լորիկ։
Առաւօտուն բարի լոյս,
Բարեւ տաս բարեւուս,
Բարեւ հասնի տրեւուս։
Առաւօտուն բարի լոյս,
Արեւ եկաւ տարի ուս,
Արի՛, երթանք դար ի դուռ։
Առաւօտ բարի լոյս,
Աստուած պահէ մեր երկուս,
Լոր, ասկի իմ հոգուս։

39 ԱԿԻՆԻ ԵՐԳԸ

Առաւօտ արշալոյսին
Զորս կողմերնիս պատեցին,
Բոցաճաճանչ զինակներ
Կարկուտի պէս տեղացին՝
Արիւնների ներկերով
Խեղճ Ակինը ներկեցին,
Եւ Հայկեան դիակներ
Ագին անդին փռեցին։
Ա՛խ Հայրիկճան ու՛ր տեղ ես
Լջմիածին բազմիր ես,
Հայրը արիւն է թափեր,
Եկուր Հայաստանը տես։
Կացիններու հարուածով
Դուռ պատուհան կոտրեցին.
Չի թողուցին փայլուն տուն,
Բոլորն ալ այրեցին։
Ա՛խ Հայրիկճան դուն եկուր
Սուրբ խաչը ձեռքդ եկուր,
Տէրը խիստ զօրաւոր է
Ցոյց վրան դիր եկուր։

40 ՕՐՕՐՈՑԻ ԵՐԳ

Արի՛ իմ սիրակ, թո՛ղ պարահդ, մերին,
Տագերով քուն բեր սրդիս աչերին.
Բայց նա լալիս է.— դու, սիրակ մի՛ գալ.—
Իմ որդին չուզէ ախրացու դառնալ.
Եկ, արեզակդ, թո՛ղ արտ ու արօտ,
Որ բէ տղիս քնի է կարօտ.

Բայց նա լալիս է. դու ձագուկ մի՛ գալ,
Իմ որդին չուզէ արեգոյ դառնալ։
Թո՛ղ դու տատրակիկ, քո ձագն ու բունը
Վազվազով տղիս բե՛ր անուշ քունը.
Բայց նա լալիս է. տատրակիկ մի՛ գալ,
Իմ որդին չուզէ սգաւոր դառնալ։
Կաչաղակ՝ ճարպիկ, գող արծաթաձաւեր,
Շահի գրոյցով որդուս քունը բեր.
Բայց նա լալիս է. կաչաղակ մի՛ գալ,
Իմ որդին չուզէ սովդադար դառնալ։
Թո՛ղ երագ արի, քաշմասիրտ բազէ,
Քու երգը դուզէ իմ որդին կուզէ . . .
Բազէն որ եկաւ՝ որդիս լռացաւ,
Ոտքմի երգերի ձայնէվ քնեցաւ։

41 ԱՐԱՋԸ ՀԵՇՏԱՑԵԼ Ա

Արագը հեշտացել ա,
Ինչ ասեմ Տօրըս մօրըս
Եաման եար, ճամբէքը կոշտացել ա,
Եար, եար, եաման եար,
Գարգերս չատացել ա եար, եար։
Ծաղիկ ես բազի մէջին, եաման եար,
Մի հատ ես թազի մէջին, եար, եար։
Դիշեր ցերեկ, առանց քունի, եաման եար,
Գոխում եմ խազի մէջին, եար եար։
Անցնում եմ գետի էն կուզը,
Բազեմ մի գասասյ նուռը։
Ով իմ սիրածն ինձ չի տայ,
Կը քաշեմ խանի թուրը։

42 ԱՅՐԻՆ ՈՂԲԸ

Աբշալոյսը նորէն բացուա՛ւ
Ամպու՛ զամպէն ձօն կուգայ,
Ալ ձին քրանաց ներս ինկաւ.
Ա՛խ իմ եարը տուն չեկաւ։

Լոյսը բացուա՛ւ գուռը բացուա՛ւ
Ալ ձին քրանած ներս ինկաւ,
Սիրուն կուրծքին վերք սոացած
Աբիւն թաթախ ներս իյնկաւ։

Ա՛խ սիրուն ձի դու ինձ սաս,
Ո՞ր տեղ թողիր իմ եարը,
Ո՞ր ձորի մէջ ո՞ր քարի տակ,
Անակր թողիր իմ եարը՝

Ամպեր եկան մուխը պատեց.
Մինակ նստած կուլամ ես,
Սիրելիս՝ կորած եարիս՝
Սուգ ու շիվան կ՚անեմ ես։

43 ԼՈՒՍԻՆ

Աքդեօք պըբտիս իմ տէրազին
Հառաչանքներ քեզ կը հասնի՞ն,
Ակչքէս արցունք որ կը հոսին
Կը ցոլանա՞ն քեզմով, լուսի՛ն

Դու անդ տրտում երկնից երես
Ի՞նչեն ցաւերն մարդուս, գիրկ՞ս
Դիտե՞ս թէ սիրտ մ՚ունի ինչ կ՚զգայ
Սիրելիին երբ զուրկ մընայ։

Երբ մըթութեան խաւարին մէջ
Կը ցոլանաս դու բացարեա
Ալ խաւար ես դու ինձ բոսուկր
Չի կրնաս սիրելուդ սէր։

44 ԳՈՒՔԱՆԻ ԵՐԳ

Աբի՛ գութան, վարի գութա՛ն,
Օրն է կել է ճաշ դո՛ռնել,
Առը շուռ տուր խորիդ զուրբան
Օրհնեալ է Աստուած, հօրօ վեր։

Ֆաշի՛ր, եզը, ուսիդ մատաղ,
Ֆաշիր. քաշենք, վար անենք,
Ձիպտին ապա, քիչիր հատաղ,
Մեր սև օրին ճար անենք։

Պարաքանոէրը գանգատ գնաց,
Բեօխէն կըզայ կըծեծի.
Տէրտէրն օրհնեց անվարձ մնաց,
Կը բարկանայ, կ՚անիծի.

Էն օրն էկան, թովչի արիր,
Հարկ են ուզում տէրութեան,
Ի՞նչ տամ կօսին ու բեգաուին,
Վարի՛, վարի՛, իմ գութան։

Զեռքս պակաս, ոյժս հատած,
Հազար ու մի ցաւի տէր,
Ինձ են նայում, մերկ ու սոված,
Մի տուն լիքը մանուկներ։

45 ԱՐՏՔԻ ԲԱՐՁՐ

Աբթի բարձր գեղայ
Լօ, լօլօ, լօլօլօ, լօլօլօ ջան
Ջուրը հիւանդի գեղայ
Լօ, լօլօ, լօլօլօ, լօլօլօ ջան

Լա՛ ի՛նչ անօրէն գեղ ա՛,
Լոլօ, լոլօ, լոլօ ջան
Սիրածը սիրածին չեն տար
Լոլօ, լոլօ, լոլօ ջան
Ուզածն ուզածին չեն տար
Լոլօ, լոլօ, լոլօ ջան
Ձոբս կոզմը կարմիր եղայ
Լօ լո լո, լո լո լո, լո լո լո ջան։

46 ԱՐԵՒՆ ԻՋԱՒ

Արեւն իջաւ սարի գլխուն,
Դար ու գաշաւ մ'լոյս չը կայ.
Հաւք ու թռչուն մտան խոր քուն.—
Ա՛խ, ինձ համար քուն չը կայ։
Լուսնակն ընկաւ երիվերիդ ներս,
Կշեռքն ելաւ երկնքում,
Ջոլ հովերն էլ մրմնջողէս
Ասդիսի հետ են զրցում։
—Սիրուն աստղե՛ր, անուշ հովեր,
Ետքը ո՞ւր ա՛ էս գիշեր,
Պարզ երկնքի նշխուն աչե՛ր,
Ետին տեսա՞ք էս գիշեր . . .
Լուսը բացուաւ, գուռը բացուաւ,
Ամպ ու գամպ է, ձօն կուգայ.
Ալ ձին եկաւ, ձիուկը եկաւ,
Ա՛խ, ետրս ո՞ւր ա՛, տաւն չի գայ . . .

Ա. Իսահակեան

47 ԵՐԳ· ԱԶԳ· ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԵԱՆ

1861 ՄԱՅԻՍ 24

Արի՛ք Հայկազունք յառաջ ընթանանք,
Սահմանադրութեան նոր բարեւ մ'ալ տանք.
Մ'ը ազգն երբ զինի փրկարար գտնէ,
Նո՛ր հոգի, նո՛ր կեանք անոր պարգեւէ,
Եկայք բարեկամք, աւ բարձրեալն Աստուած
Ուղղենք մեր մաղթանք սուրբ սրտէ բղխած,
Կեցցէ, կեցցէ, կեցցէ միշտ,
Ազգն ու Սահմանադրութիւն։

Զրկանք բռնութիւն վատթար վարչութեան,
Բերին մահ ի գուռն Հայոց ազգութեան
Սահմանադրութիւնն եկաւ զայն վանեց,
Եւ կենաց ուղին մեր առջեւ հարթեց,
Յառաջդիմութեան բացաւ առապարէզ,
Ուր ամեն վայրկեան գտնէ պարտ է մեզ
Կեցցէ, կեցցէ, կեցցէ միշտ
Ազգն ու Սահմանադրութիւն։

Ջնջեց ամենայն կարծիք անձնական.
Խեղդեց ամենայն ձայն անհատական.
Հրաւէր կարգաց Աստուծոյ ձայնին,
Առաջնորդ ընիկ գործոց ազգային
Այն որ Աստուծոյ ձայն տուաւ մեզի,
Մենէ թող առնու ձայնով մ'այնպիսի.
Կեցցէ, կեցցէ, կեցցէ միշտ
Ազգն ու Սահմանադրութիւն։

Հայերս անարգուած գրկից բարձրացուց-
Մարդկային կոչման մեզ արժանացուց.
Շրնորհեց մեզի զոր ազատն Աստուած,
Մարդկութեան երկրորդ նշանն է գրած.
Որուն շնորհին յարգ առացանք մենք,
Անոր յարգ տալով ապրինք ու երգենք.
Կեցցէ, կեցցէ, կեցցէ միշտ
Ազգն ու Սահմանադրութիւնն

Դու ալ, Հայաստան, սիրուն հայրենիք,
Ալ այսուհետեւ մի սգար լսիկ,
Չի ա՛լ քու որդիք նոր ոգւով բերկրեալ,
Չքեզ հարս կ'ուզեն տեսնել զարգարեալ.
Ալ մի՛ լար, մայրիկ, լացդ ի զար փոխէ,
Եւ ձայնիւ քաղցրիկ որդւոցդ հետ երգէ.
Կեցցէ՛, կեցցէ՛, կեցցէ՛, միշտ
Ազգն ու Սահմանադրութիւնն

Հայե՛ր միանանք, մեր մօրն հետ օրհնենք
Զանոնք որ մեզի տուին տուրս օրէնք.
Սահմանադրութեան բարեաց փոխանակ,
Թո՛ղ վարեն ուրախ կեանք մի փառունակ.
Թո՛ղ եւ մեր որդիք հետ անոնց անուանի,
Բիւրաւոր տարիք օրհնեն ու կարդան.
Կեցցէ, կեցցէ, կեցցէ, միշտ
Ազգն ու Սահմանադրութիւնն

Յ. Պ. Սիամանեանց

48 ՎԱՆԵՑԻ ՈՐԲԻ ԵՐԳԸ

Արեւ, արեւ, գուբս ելիր,
Աչքդ ունքդ ինձ ցոյց տուր.
Յրտից ճանս գոզում է,
Զպլախ որբիս տաքացուր

Չորքս մօրքս սպանաւ
Բաժիր քուրդը, ու՞ր գնամ..
Փարա չունիմ փայտ առնիմ,
Օճախ վառիմ տաքանամ

Արեւ արեւ չուտ արա՛,
Բուք բօրանը գալես ա.
Էս օր ցրտից որ մեռնիմ,
Էլ արեւդ ինչես ու

Սիմէոն Սապարեանց

49 ՊԱՐԵՐԳ

Արեւը կայնէ կէս օր,
Դէ՛, քէ՛ լէ, դէ՛, քէ՛լէ, եա՛րօ, չա՛ն,
Իմ եարը կուգայ էս օր.
Դէ՛, քէ՛ լէ, դէ՛, քէ՛լէ, եա՛րօ, չա՛ն,
Իմ եարի քալած ճամբէն,
Դէ՛, քէ՛ լէ, դէ՛, քէ՛լէ, եա՛րօ, չան,
Կը ցանեմ կարմիր մասուր,
Դէ՛, քէ՛ լէ, դէ՛, քէ՛լէ, եա՛րօ, չան

50 ԽԱՆԻ ԵՐԳԸ

Ագուլիցի քալ պատանի.
Մահտանըդ լուրը ով Թոզ տանի,
Ֆեզպէնեերին միչա երանի
Դուք էք յոյսը Հայաստանի։
Խունկով մօմով գամ խանասար
Աղջունք Թափեմ ես ամեն օր,
Ֆեղ հարցնելով մնացի մոլոր
Նոտած կուլամ ես սրգաւոր.
Վարտաստքոս հեզնդ գարձաւ
Պայծառ օրերս խաւարեցաւ
Վեռներ ձորեր արիւն լացաւ
Խանի պէս քալը զոհուեցաւ։
Առնեմ սուրը եղնեմ Առաւտգ
Ֆուրտեր ջարդեմ ես ալ ու ձախ
Ես ալ հայ եմ պարտաճանաչ
Պէտք է մեռնիմ ես ալ քալ քալի։
Դուն ով ուներս որ քեզի լայ
Դերեզմանիդ վրայ ողայ
Ֆըշնամիէն վրէժդ կ՝առնես
Այնպազդ հայուն օգնող չըկայ։
Յուվս ամուսն քսանըհինգին
Մօսին հրացան պատրաստ ձեռքին
Թուրքին ոխը պահած սրտին
Դէպ Խանասր դիմեց ուժգինս
Ալխ երանի ես մեռնէի,
Ազգս ազատուած տեսնէի
Ուրախ գերեզման մտնէի
Ու հանգստութեամբ ննջէի։

51 ՀՐԱՒԷՐ ՄԱՐՏԻ

Բա՛մբ, որոտան բարձուստ բամբիւնք յԱբարատեան
դաշտն ի վար
Աբի սրանց արձնք յեռանդ առաստանն ի հրապոյր,
Հրաւէր հայրենեաց հնչակի նգհանուր,
Հոգիք հայկազանց բորբոքին ի տուր.
Որք երկնաւորին պահկին էք կարօտ,
Որք երկնաւորին փառաց երկնայորդ.
Հապ՝ օ՛ն, արի սրանց մանկունք,
Հայրենասիրէժդրդ հայկազունք
Հապ՝ օ՛ն, ի զէն զունդ ազունդ,
Յեռեալ ի պար Թունդ ի Թունդ
Ի զէ՛ն ի վրէ՛ժ, օ՛ն անդր յառաջ,
Ի զէ՛ն ի վրէ՛ժ, մի՛ ձախ, մի՛ յաջ,
Օ՛ն անդր յառաջ,
Մի ձախ մի յաջ,
Օ՛ն անդր յառաջ,
Յառաջ յառաջ, ..
Հապ՝ օ՛ն յառաջ։
Հայկեան փանդռանց որոտընդոստ դռնէին բարբառք
մարտագոռ,
Դառնագոռոչ անդրաձայնէ Պարսիկ կերկերն ի շեփոր.
Շարժեն հրեշատակք Թեւս լուսափոդոզ,
Ձիւազք ճռճռոցաց կայտառն ի դրժոխս.
Շուխնդրն չանհետաւք զեհերօք փարի,
Սարսափին սանդարք ի Թոյլ խաւարի
Հապ՝ օ՛ն, արի սրանց մանկունք, ևն։

Մամիկոնեան սատանեցաւ դրօշն հայերս զոգ ծալ
ի ծալ,
ի ճակատուց ի թըշնամեաց սա ո՛չ՝ գիտաց յուբաս-
պըկալ

Հնծեալ հրանժոյգ վհերն Վահանայ՝
Վրէ՛ժ կանչէ արեան Կարմիր Վարդանայ,
Փռնչեալ բոցաշունչ գափր ի գարշապար.
Ոտքմամբուտ վարդն յայնժոյժ երիվար՝
Հապ՝ օ՜ն, արի սրանց մանկունք, եւն՝

ի գուպարել մարտայարդար գարշապարաց Արամայ,
Դառան Կորդիք, Մասիս սարսին, հնչեն սահանք
երասխայ,
ի գրոհ ի գրոհ տալ բիւրուցն ոտնատրոփ
Տատանին գաշնակք՝ յատն է շռինդն ապշող
Կռուփ սո կռուփ կոփեն կըմփայք տէգ սա տէգ,
Դղորդ սունսն տարերք՝ կորովեացն ի վէգ՝
Հապ՝ օ՜ն, արի արի սրանդ մանկունք, եւն՝

Աբի՛ք ի կռիւ քաջակորովիք ընդ կորակոր հրոան
Արեաց.
Հա՜պա համհարգք մեր բիւրապաղծ ձեր նոր հան-
դէսք են փառաց,
Թռի՛ք ի ռազմ ի խազմ, առի՛ք զէն և զարդ.
Երեանիւք յինանիւք հարիւր բիւրս հազարս.
Ի սուր ի սուրբ, կարշնեղ յաղեղունս՝
Ըզգեաւ Սասունեանց ջարդել կոտիւնս.
Հապ՝ օ՜ն, արի սրանց մանկունք, եւն՝

Մեիչեւ ցե՞րբ, ցե՞րբ սուգ ունի դէպռ. հառաչ՛ք դար-
ատար սրբէ պըրկ
Հարանց՝ հարանց՝ եղբարց՝ որդւոց, հանուրց Հայոց
վրէժխնդիրք

Թինդս առեալ երթամբ յատպարէզ քաջաց
Յուշիկ հընչեն ձայնք արեան սիրելեաց.
Սասափիւնք յերկնից՝ արաւիրք յերկրէ
Բաչացս օժանդակ՝ ըզպաբս հերքեսցէ,
Հապ՝ օ՜ն, արի սրանց մանկունք եւն՝

Օ՜ն անգր ի բա՛ց Հայկեան հողոյ հրսկայազանից եւ
սրբոց,
ի բա՛ց ջոլիր չուառական մոխրապաշտից. պըղծոց
Դաշտք մեր մերժեսցեն զոակըրտին անգամ,
Աբիւնք վկայից զճապաղիան անժամ.
Ոտն ընդ դիս առնեալ դարձին ի փախուստն
Մատնակուրծք ընդ հայս հայեսցին հեռուստ
Հապ՝ օ՜ն, արի սրանց մանկունք եւն՝

Աբք ազեղանց բարձր ի թիրախ թռուսջի՛ք վերջին
ձեզ խրախոյս,
Առեալ տասցուք զանթիկնադարձ զայս վարդապոյն
դրօշ անխոյս.
Ի վերայ յինանից յաղթից վարդանայ,
Պարսկական բազկաւ սուսյն վահանայ,
Շեչտ ի ծայր չիրմի դաշտին Շաւարշան
Տընկել յաղթանակ անմահ Հայութեան.
Հապ՝ օ՜ն, արի սրանց մանկունք, եւ այլն.

Հ. Ղ. Վ. Ալիշան

52 ԸՆԿԵՐ

Բարի գեղեցիկ, առաքինի ընկերը մարդուն
Փառլեցնում է արևի պես պատկերը մարդուն.
Մինչ մարդ ունենայ իւր մօտը հաւատարիմ ընկեր
Յերեկին նման անցնում է մութ գիշերը մարդուն։

Կեանքդ նուիրես ընկերին լաւին՝ քիչ է զարձեալ
Այդպէսն է հոգեկան լուսատու լապտերը մարդուն.
Ընկեր լմաստուն, աստուածասէր, ճշմարիտ ընկեր
Որ բարձրացընէ աստիճանը մինչև վերը մարդուն։

Թշնամիները իր վրայ քաշած ժամանակը,
Կարիճ հարատատ ընկերն է սուսերը մարդուն,
Ով որ ունենայ Ջևան աշխդ, մտերիմ ընկեր,
Չի ապիտակիր ամենեւին մէկ հեղը մարդուն։

53 ԿՈՒՒՆԿ ՀԱՅԱՍՏԱՆԻ

Բարով եկար սիրուն կռունկ
Ինչ լուր բերիր հայրենիքէս,
Խօսի՛ր ինձ հետ ազատօրէն,
Կեանքս կը նուիրեմ ես քեզ։
Տեսա՞ր իմ հայրենեաց տունը,
Գեղեցիկ զարդարուած գոյնը,
Նորա սիրուն տանիքուած եմ,
Աչքերիդս կորաւ քունը.
Ազատ տեսա՞ր մեր լեռները,
Հազարգեջիր դաշ իմ սերը,
Ա՛յն լեռներու պաշտպանողը,
Արծուի, կորիւնի նետերը։

Տե՞սար մեր փոքրիկ բուբաստան,
Վարդ, մեխակ, շուշաններ շատ կան.
Եդեմական դրախտավայր,
Նա կոչում է Հայաստան։
Այնտեղ ունիս եղբայր ու քոյր,
Միշտ ինչ կը սպասես ի զուր.
Արի առնեմ իմ թեւերուն,
Գնանք այնտեղ ուրախացուր։

54 ԷՅ ՋԱՆ ԱԽՊԵՐ

Բարձր, հասակիդ աչքիդ ծաւի,
Իմ անգին ընկեր,
Ես միշտ կարօտ, միշտ ծարաւի,
Հիւսեցի երգեր։

Այդ երգերուս խապերն սուի,
Աստղերէն զար վառ,
Եւ մէղեդին իմ քնարին,
Հմայիչներն տակաւ։

Մեր պայքարը, մեր յոյսերը,
Հաւն են իմ կրծքիս,
Մեր Սուրբ ուխտը, մեր Սուրբ Սէրը,
Հոգին են երգիս։

Էյ ջան ախպեր, ապիգ ընկեր,
Խաժուժ աչերով,
Ես հիւսեցի իմ ողջ երգեր,
Քո նուէշ յուշերով։

Յեղիս-ձէմիլ

55 Ի ՄԱՐՏ

Բաւ է, որդեակք, այսքան տարի
Շղթայակապ տանջուելդ անք.
Մենք դէպի մահ, յԱզատութիւն
Ձեռք ձեռքի տանք, պատանք,
Եկէք տղերք, գ'ՀՀ շարուեցէք.
Մինչ վերջ գերի՞ պիտ' կենանք,
Պազ սև հոգին լինինք բաժին
Կամ թէ ազնիւ յաղթանակ,
Ի զէն, եղբայր, է'լ քաջ, արի',
Կուրծքդ դէմ տուր առաջի.
Շարժէ բազուկ, դու ֆեդայի,
Թող սառառայ թշնամին,
Յառա՛ջ, եղբայր, պարզէ դրօշակ,
Թող սրտան Մօսիններ,
Եւ քո դէմից ազատական
Թող դղրդան լեռներ, ձորեր։

56 ԿԱԽԱՂԱՆ

Բերին աթոռ եւս, չորս կողմ նայեցաւ,
Կայծակ են աչերը, լուռ է անտոխը.
Լուռ է դահիճը, ցնցուեց և այսպէս խօսեց,
«Ընկերներս, ազատ ընկերներ,
Ձեր կարգն է արդ, ձեր ժամն է հնչում.
Դէ'Հ, ի զէն ընկերներ, արդ ի' զէն,
Դէ'Հ յառաջ, ընկերներ արդ յառաջ,
Քեզ, հէ'գ Հայրենիք, քեզ են յառած
Մեր սուգ աչեր, մեր սուգ աչեր.

Քեզ համար առինք մենք հրացան
Եւ մերկացրինք մեր սուր սուրեր,
Թող թշնամին դեռ խրոխտայ.
Հեռու չէ ժամը կ'ընկնի նա,
Եւ մենք, որ այսքան զոհեր տուինք,
Մենք պիտ' հանինք մեր խոչոլին»։
Լռեց, Ջուան առաւ վիզը անցուց . . .
Լուռ է ամբոխը . . . լուռ է դահիճը . . .
Ամբառը հրեց, ցնցուեց, ուղղուեցաւ,
Օրօրուելով այսպէս նա խօսեց.
Ընկերներ, ազատ ընկերներ,
Ձեր կարգն է արդ, ձեր ժամն է հնչում.
Դէ'Հ, ի զէն, ընկերներ, արդ ի զէն.
Դէ'Հ, յառաջ, ընկերներ, արդ յառաջ,
վրէ'ժ, վրէ'ժ ենք ուզ եմ, վրէ'ժ պահանջում,
Մատաղ սրտեր ձեզ ենք դիմում.
Թող չլսորոանի՛ն, ձեր հոգին մաքուր
Հեռու ձեզանից աղ, արցունք.
Փա՛ռք ու պարծանք ձեղնից ներքան,
Որ կը զոհուի ազատութեան . . .
Վազե՛ք այնտեղ, ուր տաք է կռիւ
Յառաջ նետուե՛ք մեր՛ք պիտ' յաղթենք.
Մենք պիտ' յաղթենք ոտքին անարգ.
Ամուր բռնենք պարզուած դրօշակ,
Յառաջ, ընկերներ, յառաջ ի յաղթանակ.
Ձեզ չի վախցնի ո'չ սուր, ո'չ հրաբ,
Ձեզ չի վախցնի և կախաղան.
Միշտ յառաջ, Ջան ընկերներ, յառաջ,
Միշտ յառաջ ի յաղթանակ։

57 ԽԱՆՉՄ ԵՒԱՁԱՆ

Բերդիցը գալս ելայ, Ալագեազ տեսայ,
Խանչմ Եւա Ճան,
Աբաման աչերիս գուման ա գառել,
Դուն կեցիր բարով, ես կերթամ լալով,
Լալով, ողբալով, քէօչ ու պարխանով,
Բեզնից զատուելով, Բեզնից զատուելով,
Ընկեր Ճարելով, սարեր ման գալով

Մէկդին ոչխարք կարածեն, մէկդին գառները,
Կանաչել են ծաղիկները, ծառները,
Դուն կեցիր բարով, ես կ'երթամ լալով,
Լալով ողբալով, քէօչ ու պարխանով,
Ընկեր Ճարելով, ընկեր Ճարելով,
Ձենքեր շարժելով, Աստուած կանչելով

Արի գնանք քու ման քալած արտերը,
Բեզի տեսայ նորացաւ իմ տարտերը,
Ես Աղէկն եմ, Զամալեցի մի ջիւան
Տուգաղն իննայ Ղարապաղից երեան,

Ձեռքս ու ոտքս կապին բերդը դրեցին
Զուխա չալմաբ, լալով տունը բերեցին

58 ՎԵՐՋԻՆ ԳԱՐՈՒՆ

Գարունն է եկել նաշխուն թեւերով,
Նաշխուն թեւերը պէսպէս ձեւերով,
Դոյն ծաղիկներ կարմիր ու սպիտակ,
Վարդ մեխակ, շուշան անուշ հոտերով

Երկինք ու երկիր քեզ ասենն, գարուն,
Չի ես քան զամէն եղանակ սիրուն
Նա անձրեւ ցօղ տալս չի վերէն
Գա օրհնելով ասյ քեզ երկար Տաւերան

Ոակի արեւը փայլէ քեզ վերէն
Կենդանիք Տովը փչէ չի լեռէն,
Ամէ, ամէն գարուն եղանակ սիրուն,
Արդիօք գու ինչ բանս բերիր ինձ Տէրնէ

Դիմաքարշ երթամ չի պարտէզ այգուն,
Ամէ ու վարս քաշեմ ես անդ օրն ի բուն,
Չի կայ ինձ հանդիստ, բրինձս թխին սրտիս,
Ես վազ եմ մտցնել զինչ անդորը է քանս

Մտցած պատանքս գետնին կեանք ասիր,
Տերեւ թաւ ծառին ասու երակիս սիրը,
Բեզ թռչնոց երամ հանդէս կանչելիր,
Ինձ մինակ խեղճիս էապէս մոռացար

Ասաջ գնա՛, գարուն, դէպ հիւսիսն չի խոր,
Դրնա՛, կանանչցո՛ւր գու անդ սար ու ձոր,
Որոց անհամերը քեզ կանչ տա՛ր բարեւ,
Քո հնչա գալըստեամբ նոցա գլուարձացուր.

Կուգաս գալ ասրի գու ինձ կը գտնես
Մ'չ չի մնր այգին և ա՛չ չի պարտէզ.
Այլ անգարձի քընով հողի տակ պառկած,
Դերեզմանաքար մը վրաս կը տեսնես

Գ. Յ. Տ. Պատկանեան

59 ԵՐԳ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԵԱՆ

Դարուն Հայաստան գայ ծաղկապսակ,
Ջայն աղջունելու ելէ՛ք, հայ զաւակք,
Անցաւ սև օրեր, օրեր մահահոտ,
Հայոց նոր բադին ծագի առաւօտ.
Սահմանադրութիւնն ուղեցոյց կենաց,
Սիրոյ գրօշակով եկաւ զարդարուած.
Որ փայլի արեւ սուրբ Հայաստանի,
Եւ Հայ ազգութիւնն փառօք վերածնի.
Կեցցեն անձնուէր որդիք հայկազունք,
Կեցցէ՛ Ազգային Սահմանադրութիւնն

Կամիմ մ՝արտասուք հեղուիլ աննախանձ
Ի սուրբ յիշատակ մեր քաջ նախահարց,
Կամիմ մի քրտինք հեղուիլ անխնայ՝
Ի նպաստ Ազգիս յաւոյն ապագայ,
Եւ ոչ իսկ խնայենք բոլոր մեր ճգունք,
Կրօնի հայրենեաց եւ Ազգի սիրոյն՝
Որ փայլի արեւ, եւն։

Հայե՛ր, միանանք, ըսենք առաքօր,
Ամէն այժ և նենգ պարիսպներ ամուր,
Երկինք զայս մեր սուրբ կ՝օրհնէ միաբանիւն,
Եւ Աստուած Երիգործի զօրավիգ արթուն,
Հապա՛ խրախուսինք, կոչ՛ը տանք անվեհեր,
Ընկճենք, կործանենք ամեն արգելքներ,
Որ փայլի արեւ, եւն։

Ունիմք սիրտ արի, ոգի եռանդուն,
Ժառանգ մընացած բազուկ աննկուն,
Դարերու յաղթող Ազգի զաւակ ենք.
Ամեն նախատինք օ՛ն փուքով ջընջենք.
Անմահ հայութեան կանգնենք յաղթանակ.
Հայոց մօր ճակտին հիւսենք պերճ պըսակ
Որ փայլի արեւ, եւն։

60 ԱՐՏԱՒԱԶԴ Ի ՎԵՀ ՄԱՍԵԱՑ

Դարուն էր կենացս գեղ,
Երկինք ինձ նայէր հաշտ,
Ինձի համար ձոր, լեռ,
Ծաղկեր և գալար գաշտ

Թագն էր զարդ իմ վարսից,
Քաջաց մէջ էի պերճ.
Շուտ զիս զրկեց Մասիս.
Փառքիս վազ հասաւ վերջ։

Հեծայ ՚ի սեաւ իմ վհե,
Անցայ լուրջ մարգերէ,
Որսալ ՚ի գինայ գեհ,
Յեռ եւ պարարտ երէկ,

Ողջոյն լերինք ու ձոր,
Ողջոյն տուին ծառեր.
Անշունչ նիւթերն բոլոր
Լեզու էին առեր։

Բարէ՛ յանկարծ կասեաց,
Ոտքն իմ աչքոյժ սևոյս
Կապան զիս քաջէ Մասեաց,
Տարան ի վիհն անդոյս։

Փախաւ, թռաւ արեւս,
Ողջա՛ զիս Սաթենիկ.
Ու իմ վերջին բարեւս
Ազնիւ իմ հայրենիքս։

Ինչո՞ւ բոլոր մարգիկ
Ինձի դէմ են եկեր։

Ինչո՞ւ այսպէս սատիկ
Կ'զառան մըրճեր, սալեր։
Անգութ եմ իմ կապէս,
Ի զուր ազգըս կ'խորհի.
Կրնա՞յ հէք մ'ինձի պէս
Վախճան տալ աշխարհի։
Անէծք կը կապեն դիս.
Շրնիկըս, զուր կը մաշես
Ակռադ զանուր վրդիս
Կապեց Հայրս Աբռահէս։
Խիստ, խիստ են հօր մ'անէծք,
Դառն են եւ ահագին.
Անով կ'ըլլան, ո՛ մնծք.
Ոչինչ փառք ձեր թագին։

Գ. Ս.

61 ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԳ

Գացէք, տեսէք, ո՞վ է կերել զէծ.
—Գացինք, տեսանք, գէրն է կերել զէծ։
Գէրն է զէծուն
Լծան զոհիւն,
Տիկ զարեւուն,
Հալալէ կրմօ, հալալէ
Հալալէ, չամօ՛, հալալէ,
Լ՛ս ինչ քաֆուր զարու հասանք հալալէ
Լս ինչ խարար կրմօ ատացանք. հալալէ։
ԳէՀ, գնա, կիզամ, գէՀ գնա, կիզամ, շուտ կիզամ,
Կարմիր ասկերս հագնիմ, կիզամ, շուտ կիզամ։

Գացէք, տեսէք, ո՞վ է կերել զէծ,
—Գացինք, տեսանք արջն է կերել զէծ.
Արջն զգէուն
Գէրն է զէծուն,
Լծան զոհիւն,
Տիկ զարեւուն,
Հալալէ կրմօ հալալէ.
Հալալէ չամօ հալալէ։
Լ՛ս ինչ քաֆուր զարու հասանք, հալալէ,
Լս ինչ խարար կրմօ ատացանք. հալալէ,
Նազ մի աներ, նազ մի աներ, նազ աղջիկ.
Դէբեազ քաշիր Թոզ մի աներ հայ ազջիկ,
—Նազ կու էնիմ, նազ կու էնիմ հայ տղայ,
Մինչդանամօ Թոզ կու էնին հայ տղայ։
Խորոտիկ, մորոտիկ,
Խորոտիկ, մորոտիկ,
Իմ եարն է։

Գացէք, տեսէք, ո՞վ կերել է զէծ։
—Գացինք, տեսանք, ոսիծն է կերել զէծ.
Ոսիծն գաչուն,
Արջն զգէուն,
Գէրն է զէծուն,
Լծան զոհիւն,
Տիկ զարեւուն,
Հալալէ չամօ հալալէ.
Լս ինչ քաֆուրդարու հասանք հալալէ,
Լս ինչ խարար կրմօ ատացանք հալալէ։

Մտաք ես եմ, բարը դու ես Աննա ջան
Արտով սիրած եարս դու ես Աննա ջան,
—Մտաք դու ես, բարը ես չեմ հայ ազայ,
Արտով սիրած եարս դու չես հայ ազայ,
Խորտակ, մորտակ,
Խորտակ, մորտակ,
Իմ եարն էր
Դիրգորն ե՛մ, Դիրգորն ե՛մ,
Ձեր մայրեցի Դիրգորն եմ
Խորտակ, մորտակ,
Խորտակ, մորտակ,
Իմ եարն էր

62 ԱՐՄԷՆ ՂԱԶԱՐԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

(Դժոխք կամ Հոգի)

Գերեզմանիս թող արձանին վերայ,
Գրեն, յաղթութիւն, թէ՝ կոթող է սա,
Թող տեսնէ Հայաստան թող կարդան հայ քաջեր,
Տեսնեն իրենց ընկեր,
Նահատակ է պատկեր,
Որոց Հայաստանին։
Աննմուէր և քաջ Ղազարեանի պէս,
Յուշեն գերեզման քաջ արմենի պէս,
Գալարեն ազիքներ, թափեն գաղջ արցունքներ
Տեսնեն գիրենց ընկեր
Նահատակ է պատկեր,
Որոց Հայաստանին։

Գետոյ եմ կընքած աչացս վերջին քուն,
Տեսնայ Հայաստան իւր ազատութիւն,
Իմ գերեզմանիս քով թող կայնեն ձայնեն,
Ահա ազատութիւն,
Ահա փրկութիւն,
Բազդը Հայաստանի։
Հանգչին ոսկորներ մէջ իմ տապանին,
Տեսնեմ փրկութիւն Մայր Հայաստանին,
Այն օրն թող կնքեն իմ գերեզմանիս վէմ,
Ազատ գրչակներով,
Հայ պետարներով,
Ու քահանաներով։

63 ԳԵՂԵՑԿՈՒՀԻ

Գեղեցկուհի, բառ եմ ուզում,
Բառարանում բառ չկայ,
Ձքնաղ գիրի տառ եմ ուզում,
Տպարանում տառ չկայ։
Ոհ խնդրում եմ բառեր տուէք,
Պատմեմ անհուն իմ սէրը,
Աղաչում եմ բառեր տուէք,
Պատմեմ սիրուս վիպերը։
Սէրս անզուսպ, սէրս բիւր
Սէրս մեծ է և հսկայ,
Նորա տիտր պատմութիւնը,
Նորա վիպին վերջ չկայ։
Թէ վիճաբան սեգ լեռները,
Թրմեցի կայս գառնային,
Իսկ ծովերն ջուրը մելան,
Ձէին բաւեր իմ վերքիս

64 ԱՐԱԲՕՅԻ ԵՐԳԸ

Գրրող տանի քուրդ Աբօյին,
Իրաջ մացեր Արաբօյրին.
Ըսպաներ է ջօջ ափօյին.
Ձարթիր լաօ մըռնիմ քըզիւ

Ձուր ե՞ր ինամ էլու դռներ,
Էրթամ գանեմ գիմ խեզճ գառներ,
Սուքեմ գիմ բաղչա, ծառեր.
Ձարթիր լաօ, մըռնիմ քըզիւ

Դէն իրիկէ գալոզ ո՞րն է
Քաջ Արաբօ բազդաւորն է,
Կարմիր իրիցանց գինուրն է,
Ձարթիր . . .

Խեզճ մչեցին ինաց լալով,
Հեռու երկիրներ մաև գալով,
Մեռաւ Թուրքի պարտքը տալով,
Ձարթիր . . .

Ոտքի կայնէ կարճ խերան,
Ձօրքով գնա առաջ ուրան,
Սալլաթ մէհրաւ բաժին խուրբան,
Ձարթիր . . .

Սէֆիլ, շիւար մացած Հայեր,
Էդած անառէր, բնաւեր հաւքեր
Տէ՛ր, դու փրկէ, պահէ արթուն,
Ձարթիր . . .

65 ԳՈՒՐԳԷՆԻ ԱՆՄԱՀ ՅԻՇԱՏԱԿԻՆ

1899 Ապրիլ 24 ին

Դլզլպով ջուր է իջնում
Մ'չոյ մչուչ սարերէն,
Ծիծառները ծո՛ւռ- ծո՛ւռ եկան
Դարնան գալը երգելէն,

Դարուն չկայ Հայի համար
Ծաղիկ, ծիծեռ մեզ պէտք չեն,
Դերեզմանս հողին հաւասար,
Թող փուչ բանի իմ վրէն,
Դնա ծիծեռ, թո՛ղ ինձ մինակ,
Վէրքը արիս հողի տակ։

Բայց երբ ուզես թշնամու դէմ,
Հայ ժողովուրդը սարի պէս,
Զէնքը ձեռին հպարտ կանգնած
Կուրծք դէմ տուած ժայռի պէս,
Ահա, այն օրը արի ծուռ.
Դարնան գալը նո՛ր կանչէ,
Հայոց դարնան որ բիւր բարեւ
Սիրաս խորէն զօդանջէ . . .

66 ԱՌ ՍԻՐՈՒՀԻ

Դիշեր ցերեկ կը հառաչեմ,
Ահ, օրիորդ քո սիրուդ,
Սեւ աչեմուդ վարդ այտերուդ
Ձարնուեցայ, ինչ օգուտ
Դիտես անգութ, որ պատանին
Ձի դիմանար այս ցաւին,

Քեզի համար ալ չի գազրիր,
Աչքիս արցունքն օրն ի՛ բուն
Քեզի համար թափառական,
Ես սար ու ձոր ինկեր եմ,
Քեզի համար ոչնչացեր,
Ոսկոր ու մորթի եղեր եմ։
Ալ բաւական է դիս խոցես,
Ահա ոտքդ ինկեր եմ.
Ըսէ՛ ինձի բառ մ՚երջանիկ
Թէ՝ «ես ալ քեզ կ՚սիրեմ»։

67 ԴԱՐԲԻՆՆԵՐ

Դիշերն անցաւ, լոյս ծագեցաւ,
Աշխատութեան ժամ է արդեօք
Ժամ է տղայք,
Օն երկաթաց շրխինթ եւ պայտ,
Պահկեն օրուանս աշխատանք։
Այս աշխատանք.
Մն այս երկաթ ծեծենք մօնք,
Որ զուր տեղը ծեծ չուտենք՝
Զարկենք կարգաւ տիկ, տակ, տակ։
Ծեծենք, ծեծենք, տիկ, տակ, տակ։
Բայց բռնաւորն էլ գընաց,
Պատեհ առիթ մեզ մընաց,
Գրկենք զիրար եւ պարենք,
Երկաթ վերջը կը ծեծենք։
Մն գրկենք մենք արդեօք,
Պարենք, անփոյթ անդադար,
Այս գերութեան գառն է կեանք,

Անփոփոխ են եւ կապանք,
Դահ սրտով եւ զրաթթ
Օրհնենք զվատուած մեր արդարո
Մն ցնծացեք. օն խնդացեք,
Մն պարեցեք, գուք անդադար։
Տրա լա, լա, տրա լա, լա, լա, լա
Լա, լա, լա, լա, լա, լա, լա

68 ԳԻՒՂԻՆ ԾԱՅՐԸ

Գիւղին ծայրը վըտակին քովիկ,
Ծառերուն մօտ կանուչ զովիկ,
Խրճիթ մը կայ համեստ սիրուն,
Իմ անմման հայրենի տունն
Կը փափաքեն հոն անդադար,
Ձուխտ մը սրտեր ինձի համար,
Հօրս մօրս անուշ սրտեր,
Դրկարներուս հետ չեմ փոխեր
Օրօրոցս հին և ցածուկ,
Հոն անկիւն մը կը գտնէք գուք,
Հոն բաշուեցան լեզուս կապեր,
Նախկին քայլերս հոն եմ տեսեր
Ուրախ թիւն հաճոյք ու սէր,
Հայրենի տունս են լեցուցեր.
Արեւուն տակ չկայ մէկ բան,
Իմ հայրենի տանս նման
Գիւղին ծայրը վտակին ջովիկ,
Ծառերուն մօտ կանանչ զովիկ,
Միշտ կեցած է համեստ սիրուն,
Իմ պաշտելի հայրենի տուն։

ՀՕ Ի
ԳՐԱԴԱՐ

69 ԲԼԲՈՒԼ

Գընա՛ բլլուլ, մեր աշխարհից,
Էլ դու այս տեղ մի՛ երգիր.
Մեր օրը սև, մեր կեանքը ցաւ.
Էլ այս երկրում մի՛ երգիր։
Տանջուած սիրտը, անուշ երգից
Բըքբըւում է, խռանւում,
Սրտի վիշտը, քո երգերից՝
Փրփրում է, լեռնանում։
Գնա՛, բլլուլ մեր աշխարհից,
Գնա՛ երգիր այլ երկրում.
Ասա՛ այնտեղ, որ մեր վարդից՝
Արեան Թարմ հոտ է բուրում։
Որ ազատ ոյն մրմնջացող
Վտակների հոսանքին՝
Միանում են արեան շիթեր,
Ազատ շարժւում մոգերին։
Որ ծպտազարդ հովիտներից
Մահուան ցուրտ հոտ է փչում,
Որ մեր երկրում կանաչ դաշտերն
Խակոն կարմիր են ներկում։
Գնա՛ պատմիր, որ դու տեսար
Արիացած մի երկիր,
Սարեր, ձորեր կարմիր հագած
Աբլանազարդ մեր երկիր։
Ա՛խ, չան բլլուլ, էլ մի՛ կանգնիր,
Գնա՛, պատմիր աշխարհին,
Մեր ցաւն հոգան, վիշտն ու Թախիծ,
Մեր օրերը գառնագին։

70 ԳՆԱՑ ԱՇՈՒՆ ԵԿԱՒ ԳԵԱՐՈՒՆ

Գնաց Աշուն, եկաւ Դեարուն
Աղբրանց արուն մըջ քարերուն,
Դեչին սուսան վըր սարերուն,
Զէկեօ էկաւ բարի գեարուն,
Թե կառնեմ վըր իմ Թեւքերուն,
Թրռում վըր բանձրիկ ծառերուն,
Թուն կը գնեմ մըջ ճիւղերուն,
Ցերդիս բանամ դէմ խոյ քեամուն։
Վայ լէ, լէ, լէ, լէ, լէ, լէ, լէ,
Վայ լօ, լօ, լօ, լօ, լօ, լօ, լօ,
Վայ, լէ, լէ, լէ, լէ, լէ, լէ, լէ.
Վայ, լօ, լօ, լօ, լօ, լօ, լօ, լօ,
Բեա սև սեւաւոր ազիկ,
Բեզի կիտամ վանայ խօչին,
Կարմիր ֆէսին մաշխուն յօղին-վուլ։
Բեա սև սեւաւոր մարէ
Ես ի՞նչ կեանիմ վանայ խօչին,
Կարմիր ֆէսին նաշխուն յօղին,
Ղուբրան կեանիմ գիմ Սախօյին,
Զուլքիա գեախուն ծակքիօ յօղին
Զարխի Թելին, ձեռքի փէտին վուլ։
Հով, հով, հով էղնի,
Եարբա քեամարով էղնի,
Հով, հով, հով, էղնի
Եարիս տունը ծով էղնի,
Դէ՛ Թրռիք, Թրռիք, Թողը Հանէք,
Մեր գաշմանի գեօղը Հանէք,

Դէ՛ զարնէ՛ք զարնէ՛ք թմզը հանէ՛ք,
Մեր գուշմանին գլօզը հանէ՛ք,
Գնաց Գէաբուն եկաւ աշուն,
Կըտրաւ խոտիկ ծաղկըներուն,
Կըտրաւ ջրիկ ակռըրներուն,
Կըտրաւ ձէնիկ կաքվըներուն,
Քե կառնեմ վըր իմ թևերուն,
Թըռնում վըր ըսն ձրիկ հովերուն
Վանիմ խանիմ վըր վարերուն,
Բուն կը շինեմ մըջ ձորերուն
Վայ լե . . .

71 ԵՐԳ ՓԱՌԱՑ

Գողթան մանկտիք ասա ձեզ
Շքեղ փառաց ասպարէզ,
Օ՜ն, փութացէ՛ք, խումբ կազմեցէ՛ք,
Պրտակ անթառամ ճեպ ձեզ։

Գիտէ՞ք, ո՞ւր են ձեր նախատինք
Բանաստեղծից էք որդիք,
Որք քնարով, ոսկի լարով
Հայրենի փառքն երգեցին։

Դուք ամենքիդ էք զրկուած
Փառքեր ունիք բայց կորսուած,
Հարք ու եղբարք են ձեր քաղցած
Եւ հայրենիքըն աւերած։

72 ԳԵՐԻ ՀԱՅՈՒ ԱՂՕՔԸ

Գոհ ենք քեզնից. ո՛վ Բարերար,
Օրհնեալ լինի միշտ քո անուն,
Արդար արեւդ այդ լուսավառ
Թո՛ղ հետ բերէ մեզ փրկութիւն։
Մ՛հ. ուրախ օր շնորհիր. Տէ՛ր,
Մեր խղճալի Հայրենիքին,
Նորա սիրուն սարեր, դաշտեր
Օրհնում են քեզ եռանգագին։
Մի՛ տար, Աստուած, որ կործանուի
Սրբակրօն Հայոց աշխարհ,
Թո՛ղ քաղցը անուն Հայաստանի,
Մնայ կենդան միշտ մեզ համար։
Բայց մեզ քո գուռն ողորմութեան,
Ցեսու, Մոսէս մեզ ուղարկի՛ր,
Որ այս գժնեայ Եգիպտոսից՝
Աւետեաց մեզ տանեն երկիր։
Մ՛հ, այն աշխարհ, ուր առատին,
Բարոզեաց Աւետարան,
Փայլեց գրօշը ծերանածին,
Կանգնեցաւ խաչ Քրիստոսական,
Ուր նա իրական նահատակներ՝
Դէմ վիշապին զինուորեցան,
Պատերազմի կանանչ գաշտեր
Նոցա արեամբ ներկուեցան,
Ուր մեր Հայրեր երանելի՝
Գրիգոր, Ներսէս, Մեսրոպ, Սահակ,
Մեծարեցին անուն ազգի,
Եւ ննջեցին ծաղկապըսակ։

73 ԱՆԴՐԱՆԻԿԻ ՄԱՐՇԸ

Դաշնակցական խումբ գընանք մենք Սասուն,
Մեր հայ եղբայրներ մեզ են սպասում,
Անգրանիկը քաջ իր բնիկներով,
Կ'ուզե պատերազմ, կ'սպասե գարնան։
Մօտ է գարունը, շուտով կը բացուի,
Հայու խօսքը քաջ շուտով կը լսուի,
Հայեր անվախ հոգւով միացած
Հրացան ուսերին ատրի են կանգնած։
Խմբապետները հոգւով են երգուած,
Ձիերայի ուժով գնում են առաջ.
Առաջ է կանգնած Անդրանիկը քաջ,
Գոռում է գոչում, կ'ուզե պատերազմ։
Հերիք, եղբայրներ, մենք շատ քնեցինք
Բաւական չէ՞ մեզ այսքան համբերեցինք.
Մայր Հայաստան ձեռքից հանեցինք,
Հիմա այժ ուռնինք, գարձեալ ետ կ'առնենք։

74 ՄԱՅՐՆ ԱՌ ՈՐԴԻՆ

Դա՛, շապիկն էր այն քաջ մարդուն, պալաջան
Որ քեզի նա հայր էր կոչում, օրօր, օրօր զաւակ։
Առաւօտեան ժամը եօթին պալաջան
Պատերազմում հայրդ սպանուեց, օրօր, օրօր զաւակ։
Տէ, մեծացիր շուտ պոյ քաշիր, պալաջան.
Թիւրքի արիւն ծծել սովիր, օրօր, օրօր զաւակ։
Կարմիր արիւնով էր ներկուած, պալաջան,
Արտասուքով էր լուացած, օրօր, օրօր զաւակ։
Վրէ՛ժ, վրէ՛ժ շար ոսոխին, պալաջան.
Խանաւարը քեզ կանչում է, օրօր, օրօր զաւակ։

75 ՀՈՎՏԻՆ ԿԵԱՆՔԸ

Դաշտի ընդարձակ ատրաճումեան վրայ,
Ինչ անուշ ձայն է զոր կը լսուի,
Եւ անդորը օդին մէջ մեղմ կը թրթռայ,
Ու սիրտս հրճուանքով խինդով կը լեցուի
Հովտին մեղմանուշ սըրինդն է ոգեզ
Որ զուարճացնէ զառնուկներն անմեղ։
Բլրին կողին վրայ ան ընկոզմանած
Հեռու վանելով հոգը անհարկի
Արշալոյսը վարդ վերջալոյսը ոսկի
Կը վայելէ կուշտ, Կապրի վերացած
Ախ ինչ հաճելի է, կեանքը հովտին
Անոր ծառան կ'զգայ իմ հոգին։

76 ԵՐԳ ԱՌ ԵԶՆԻԿ

Դատարանին խմացուցին,
Փողովուրդէս զիս զատեցին,
Տիգրանակերտ ուզարկեցին.
Աբի եզնիկ, ա՛յ, քաջ եզնիկ։
Մնաք բարեաւ, նորէն կուգամ,
Վատ քրտին եւ սարսափ կուտամ,
Ու եռանդով քարոզ կուտամ.
Աբի եզնիկ, ա՛յ, քաջ եզնիկ։
Ազէճուլուն տակ կայնեցայ,
Դէպ հայրենիքըս նայեցայ,
Սուրը ձեռքս բանակ մըտայ.
Աբի եզնիկ ա՛յ, քաջ եզնիկ։
Բահանաներ զիս պատեցին,
Անէ զգեստներըս հագուցին,

Ձերմակ ձիուս նըստեցուցին.
Սրի եղնիկ, ա՛յ քաջ եղնիկ։

Օր պիտ՝ ըլլայ վերադառնամ,
Յարկիս ներքեւ հանգըստանամ,
Ժողովրդիս հետ մխանամ.
Սրի եղնիկ, ա՛յ քաջ եղնիկ։

77 ՍՐՇԱԻԱՆՔ ԴԷՊԻ ՎԱՆ

Դաւաթանի գաշտում գարշ վերջացաւ,
Մեր հայ մանկանց արեան յորդով լեցուեցաւ
Մեր հայկական մի խումբ Պատոլէն անցաւ
Աըշաւենք, սիրելիս դէպի սիրուն Վան,
Աըշաւենք, հայ տղերք, դէպի Հայաստան։

Հայդուկների ճամբան Դաւթիզ Հաֆթեան
Կանչեցեք հայ տղերք պատրաստուած ինձ պան
Մէջքերնիս պատրօնաշ, ձեռներ հրացան.
Աըշաւենք ևն.

Եկէ՛ք գուք Հայ տղերք, վառուած սրտերով
Ձամբորդել սկըսինք քաջ ընկերներով.
Հալածենք վատ քիւրտին փայլուն զէնքերով,
Աըշաւենք ևն.

Կանչեցէ՛ք Հայ տղերք, յորով հաւաքուած
Ուզենք մեր մաղթանքներ Ս. սրտէ լըսուած,
Մեզի օգնական է Աստուած պետական,
Աըշաւենք ևն.

78 ՔԱՋ ԱՆԴՐԱՆԻԿԻՆ

Դարձեալ փայլեց Աստղոյ գլխին,
Ազատութեան դրօշակ.
Կեցցէ՛ Հայրենիք, գոչելով
Բարձրացրին ազազակ։

Թնդաց, որոտաց Ձայներից
Ողջ աշխարհը Հայկական,
Թումբ թումբ կարգած Հայ զաւակներ
Հասնում էին օգնութեան։

Դուրգէն, Վահան, Հրայր (Դժոխք)
Քաջ Անդրանիկը զեկավար,
Տալորիկի լեռներումը,
Շրջում էին անգադար։

Սարսափեցան քիւրտ ցեղերը.
Մինչ պալատը Սուլթանին,
Հրամայեց չուտ կոթծանել
Դիրքերը Հայդուկներին։

Ահա անգութ քիւրտ ու տաճիկ,
Սարսափելի տեսարան.
Ժամանակ է վրէժ լուծել,
Գոչեց Ձայնը Հայկական։

Կրակ տեղաց Հայ քաջերի,
Բնակավայրը դիրքերից
Այլայլեցան քիւրտ խուժաններ
Ահեղի զնդակներից։

79 ԴԱՐԴՍ ԼԱՑԷՔ · · ·

Դարդը լացէք սաբի պըմբուլ,
ալա՛ն ալա՛ն ծաղիկներ
Դարդը լացէք, բաղի բըլբուլ
Ամպ շող երկնուց զով հովեր
Երկինք գետին գրկուտ մըմնան
Անառն, անառը կուլամ ես · · ·
Կարես տարա՛ն, չանես տարա՛ն—
Հանգո՛ւը հանգուը կուլամ ես · · ·
Ա՛խ, կարըս ինձ հանից սրտէն,
Անճար թողից ու գընա՛ց,
Սըրտես սաւգէն, խորունկ կարէն
Անգէղ թողից ու գնաց·
Դարդը լացէ՛ք, սաբի սըմբուլ,
Ալա՛ն ալա՛ն ծաղիկներ
Դարդը լացէ՛ք, բաղի բըլբուլ,
Ամպշող երկնուց զով հովեր · · ·

80 ԴԷ՛ ԳՆԱ՛, ԿԻԳԱՄ · · ·

Դէ գնա՛ կիգամ, վա՛յ գնա՛ կիգամ շուտ կիգամ,
Նըխշուն մըգարըս առնիմ իգամ, շուտ կիգամ·
Դէ՛ գնա՛ կիգամ, վա՛յ գնա՛ կիգամ, շուտ կիգամ,
Կարմըր ասլերս հագնիմ իգամ, շուտ կիգամ·
Դէ՛ գնա՛ կիգամ, վա՛յ գնա կիգամ, շուտ կիգամ,
Խօրօտ բըճերս առնիմ իգամ, շուտ կիգամ,
Դէ՛ գնա՛ կիգամ, վա՛յ գնա՛ կիգամ շուտ կիգամ,
Դրվատս լսչին առնիմ իգամ շուտ կիգամ,

Դէ՛ գնա՛ կիգամ, վա՛յ գնա՛ կիգամ, շուտ կիգամ,
Թափլիկներս առնիմ իգամ, շուտ կիգամ·
Դէ՛ գնա՛ կիգամ, վա՛յ գնա՛ կիգամ, շուտ կիգամ
Ասլընջաններս առնիմ իգամ, շուտ կիգամ·
Դէ՛ գնա՛ կիգամ, վա՛յ գնա՛ կիգամ, շուտ կիգամ,
Մեղրիս կապերն առնիմ իգամ, շուտ կիգամ·
Դէ՛ գնա՛ կիգամ, վայ գնա՛ կիգամ, շուտ կիգամ,
Էրեանոցներս առնիմ իգամ, շուտ կիգամ·
Դէ՛ գնա՛ կիգամ, վա՛յ գնա՛ կիգամ, շուտ կիգամ,
Դեղ ու գեղքերս առնիմ իգամ, շուտ կիգամ·

81 ՈՂԲԵՐԳ

Դըժնեայց գիշերն անցաւ ու լոյս արեւուն
Ծագեց կարմիրը Հայաստանի սարերուն · · ·
Դարձեալ մինակ զուրկ սիրելեացս գրկերէն,
Հեծող բուեր միայն ինծի ընկեր են·
Մ՛ գո՛ւ, անգութ Սեւ Հողեր,
Սիրելիքս ծո՛ցդ ես թաղեր·
Ձեփիւռներէն կըշանիկ մի խնդրեմ լուր · · ·
Ակ անոնք ալ սահին քովս տխուր լուր,
Ծաղկունք թոռմեր և լեր է ալ սոխակ,
Մահ կը հոտի մահ · · · Հայաստան աւերակ·
Մ՛ գո՛ւ, անգութ Սեւ Հողեր
Սիրելիքս ծո՛ցդ ես թաղեր·
Էրկինք, զթա՛ յիս, տար զիս ի ծաց սիրելեաց
Եւ կամ ցցո՛ւր իրենց գամբանն ագագեաց,
Եւ թող հոն հոն ցամքին արցունքս ու արիւն,
Մ՛ հն, հոն վերջ տամ կենացս սեւ օրերուն·
Ցցո՛ւր, անգութ Սեւ Հողեր,
Իմ սիրելեացս գամբաններ·

82 ՔՐԻՍՏԱՓՈՐԻՆ

Դու անցար, Հերո՛ս, դէ՛հ Հանդի՛ստ քեզ քուն,
Դու լուսագէմին մնառաբ լիայոյս,
Դու ճամբորդ միր դէպ ազատութիւն,
Երբ դեռ հեռո՛ւ էր հեռո՛ւ, արշալոյս։

Տե՛ս ինչ հերոսներ՝ երդովդ սահմռնած՝
Փակեցին աչքերդ, որ Հանդիստ առնաս.
Հերոսների մէջ դո՛ւ մնառաբ Հերո՛ս,
Մարմնով գարձար հող, հոգւով արշալոյս։

Էքնէ՛կ քո յոյսին, նա որ չէր դողում,
Երբ Թոյլ ուքնում էր մեր դահիճն անյոյս.
Այն օձե՛ր էին և գորտեր սողում,
Քանզի գալու էր անշուշտ արշալոյս։

Սակայն երբ քու ազդ Թմբկով ու փողով
Դէպ ազատութիւն երթայ սրատոյզդ,
Դու կրգաս այնտեղ յաղթութեան շողով.
Բայց ննջիր. . գեռ կա՛յ մինչեւ արշալոյս։

83 ՄԱՀ ՀԱՅՈՐԴԻՈՅՆ

Դու գո՛վ խնդրես. մայր իմ անուշ.
Ե՛կ, մի՛ գոգար, մօսեցիր հոս,
Ականց աչօք գիտէ զորդիդ.
Ու իր վերքերն արիւնահոս։

Բերդացդ մայրեր Թող լան ու գոն
Ուրախ լուրեր տար ի Զէյթուն։

Ինչպէս երբեմն. օրրանիս մէջ
Կակուղ ձեռքով փայփայելով.
Մանկիկ մարմնոյս հանգիստ տայիր՝
Իրրեւ հրեշտակ նըւագելով.

Ձիս հանգչեցուր ի հող ու գոն
Ուրախ լուրեր տար ի Զէյթուն։

«Նորեկ որդւոյս կենացն արեւ
Զեզի համար փայլի, Հայե՛ր,»
Այսպէս յանժամ դու կ'երգէիր,
Օրօրոցիս նըստեալ քովիր։

Անոնց համար շիջաւ, և դուն
Ուրախ լուրեր տար ի Զէյթուն։

Կարմիր կայլակը ցոյսանն վերքէս,
Սակայն, մա՛յր իմ, նայէ չորսգին,
Զարիւնուռշտ սա քիւրտերըն տե՛ս,
Հազարներով փռուած գետին.

Կերաւ դանակը սուրն մեր, ու գոն
Ուրախ լուրեր տար ի Զէյթուն։

Մըրընչեցին ինչպէս վիշապ
Ու մեր վրայ յարձակեցան.
Մ'վ հայրենիք, ի հուր ի բոց
Քո համար մեր սիրտ վառեցան։

Կարմիր նիշկան ձորք մեր, ու գոն
Ուրախ լուրեր տար ի Զէյթուն։

Ու ծոփ զարկին մեր հարց բառաչք.
Չի չէ՛ մեռած Հայոց կըրակ.

Ու ցնծացին այնչափ զոհեր,
Չի լուծաւ վրէժ յարեան վրաակ.
Խնգաց Մասիս, մայր իմ ու գուն
Ուրախ լուրեր տար ի Զէյթունն
Վերջին համբոյր տամ քեզ, մա՛յրիկ,
Հառաչանաս պայն սիրուհւոյս,
Վերջին անգամ գրկեմ մեր հող,
Ուր արդ կիջնամ ի ծոցն անլոյս
Թաչ մը անկէ վրբաս, ու գուն
Ուրախ լուրեր տար ի Զէյթունն

84 ՀԱՅԵՐՈՒ ԲՈՒՔՆ

Դու խելօք հաշուով վաճառական ես,
Միլէք, փող ու ապրանք, կ'սանեն շատ ունես,
Բայց թէ փոդէդ չան չունի Հայաստան,
Թրքել ենք քո ալ, փոդիդ ալ վրբան,
Քաղ ես, լակ ենք, ինքդ մեծաւոր,
Անուն յաղթողի ունես փառաւոր,
Բայց թէ Թրբէդ չան չունի Հայաստան,
Թրքել ենք քո ալ Թրբիդ ալ վրբան,
Ի վերջաս քանքար քեզի տուած է.
Հեզինակ անուն աշխարհ փըռուած է,
Բայց թէ գրչէդ չան չունի Հայաստան,
Թրքել ենք քո ալ գրչիդ ալ վրբան,
Հեռատես մտքով դու զարդարեցար,
Հզօր իշխանին սիրելին դարձար
Բայց թէ մըտքէդ չան չունի Հայաստան
Թրքել ենք քո ալ մըտքիդ ալ վրբան,

Բանակ ու ճարտար դու ունես ձեռքեր,
Շատ կը յօրինես Թանկագին բաներ.
Բայց թէ ձեռքէդ չան չունի Հայաստան,
Թրքել ենք քո ալ, ձեռքիդ ալ վրբան,
Երկինք շնորհեցին քեզ լեզու ճարտար,
Քարոզչի սուրար հրաչակ ու հանճար,
Բայց թէ լեզուէդ չան չունի Հայաստան,
Թրքել ենք քո ալ, լեզուիդ ալ վրբան
Մեծ ուսում առիր եղար գիտնական,
Դավքովդ լեցուած է մարդոց բերան,
Թէ ուսումդ չան չունի Հայաստան,
Թրքել ենք քո ալ, ուսմանդ ալ վրբան
Կուտամ քեզ պատիւ, կ'ունենաս դու յարդ
Ու կը գնեմ քեզ ոգնիւ մարդոց կարդ.
Երբ օրօրանէդ մինչեւ գերեզման,
Ազգասիրդ լինի փրկել Հայաստան
Գաւառ-Քարիպա

85 ԽՐԱԽՈՅՍ Ի' ՄԻՈՒԲԻՒՆ

Դու նոր հայրենիք. գեղ նոր ազգութիւն,
Դարուս շնորհիւ պարաք եւ իրաւունք
Սահման և կշիռ Թոթոփել որ գիտցանք,
Մ'վ Հայաստանի պանդուխտ զաւակունքս
Կրնանք այդ զոհել, կրնանք ամեն բան
Ազնական կրից մատնել անխնայ,
Եւ օտարին չան ազգին վերադ,
Մ'վ կրնայ խնդրել, որ այն եղեռն հայ,

Զգույշ, ա՛վ հայեր, զգույշ կեանք միշտ,
Բանդի ազգագաւ պանան նետեր
Մեր խոցուած սրտերն կրկին խոցելու,
Պահենք զայն ամուր սիրով վահանցաւ
Միաբանութեան բլոյ զբրահ անվրաանդ,
Եւ անհամաձայն թէ զանուինք մեր մէջ,
Մեզ մի՛ջամուտ ներենք ա՛չ երբէք,
Ազատ ու հաւասր, ամէնքս ալ եղբայր՝
Հեռատես, զգույշ և գործն անգոլ,
Ազգային կամաց հպատակ անխոս,
Այսպէս կրթուի հայ մանկութիւնը,
Այսպէս պատրաստուի պատանեկութիւնը՝
Ու երիտասարդութիւնն բլոյ աննկուն՝
Անտէր ախոյեան Ազգին իրաւանց,
Ու թող ծերութիւնն հակէ ողջմիտ՝
Հայոց բազդն ու արեւ յաւով ողջունել՝

86 ՍՈՒ ՉԵՓԻՒՌՆ ԱԼԷՄՏԱՂԻԻ

Դու փափկաթեւ մանկիկ զեփիւռ,
Աղբերց վրայէ լուսակարկաջ,
Անուշ հոտով ծաղկանց ըսփիւռ,
Ինչպէս թըռչիս ինձ ընդ առաջ.
Ու խունկ եւ զով ընծայելով,
Ձիս կը պահես հեզիկ շնչով՝
Ո՛հ, կը սիրեմ ըզքեզ հոգւիկ,
Երբ գու փութաս ինձի գալու,

Ի պար, ի թռիչ, ի սայլ մեզմիկ,
Սլքած ճակտիս ինձ ալեկոծ՝
Ծաղիկ հոգւոյս քեւ զովացած,
Ծիլ ծիլ բացուի ի լոյս կենաց,
Սլացիր փափկիկ գու սուբհանգստիկ,
Լաւ առաւ հովտին ու ծորձրկին.
Եւ աշտաւաց բարձրապետիկ,
Ուր երամով սոխս կը թռանին.
Թէ մշտերիմն իւրանց եկաւ.
Բիւր ըղմայլմունց ձիշտ ակաւ՝
Ո՛հ, կորչուած իմ տաճոյքներ,
Հոս վերըստին զըտնեմ ըզձեզ.
Ծառոց շքով էք ծածկուեր,
Ու փըրփուրով առուակին հեզ.
Ահա կայտուէք ի յայս ծիրակ,
Ի յայս թըփուտ հովանոցակ՝
Հոս գառն հոգեր մէկիկ մէկիկ,
Ճակտէս ի բաց հեռանային.
Ու փունջք ժամուց գեղապարեակ,
Սիրտըս թեթեւ օրօրէին,
Եւ ընութիւն մայր որգեսէր՝
Քնքուշ գրկած մէջ գիս գըգուէր՝
Հոս ճեմէին երեկոյեան,
Ի զով ըստուեր պար մը կուսից,
Մազերը հովուն բազմաբուրեան,
Սիրաք ընծայուած հեշտ վայելից,
Շող լուսնակին կոյսն ու ծաղիկ,
Ձիրաք շոյեն սիրաստրվիկ՝

Մահրմահ թիւրն, սէր կրակուրց,
Ինչ անուշ էք յայս տեսարան,
Ուր գալարիք ձեզ հանգըստաց,
Ու անհուն գաշտեր ըղօսարան.
Մահրմահ թիւրն, ինձ երանի,
Թէ հոս ծոցէդ հողիս թառանի

Դու փափկամեւ մանկիկ գեփիւռ,
Ազգերց վրայէն քաղցրակարկաջ,
Անուշ հառով ծագկանց բոփիւռ,
Թրխի՛ր, թրխի՛ր ինձ ընդ առաջ,
Ու խունկ և զով ընծայելով,
Պատմէ չորս դիս հեզիկ շնչով։

Մ. Պէհիկը ։ ըեռաճ

87 ԵՂՐ ՋԱՆ

Ցաւ Ջան ուզուիմիշ արա,
Դէյրէդ գուզուիմիշ արա,
Դաստ ու գուշանի մէջին.
Դարգերըս գուզուիմիշ արա.
Երևան ըսդ եմ առել,
Չիգնաբս գազ եմ արել,
Դաստ ու գուշանի մէջին,
Լացս ծիծաղ եմ արել։
Վակը գէմ առաւ քարին,
Վեկաւ, բոլորաւ տարին,
Խօսքերդ թէ՞ չը յիշ առաբ,
Զրկացար քո իրդարին։
Ցաւ Ջան Լայլա։

88 ԻՄ ՄԱՀԸ

Եթէ ժէզոյն մահու հրեշտակ
Անհուն ժպտով մ'իջնէ իմ գէմ,
Շողխանան ցաւքս ու հոգիս
Դիտցէք որ գեռ կենդանի եմ։
Եթէ սընարըս իմ տխպար
Մամ մը վրտիա ու մահագէմ,
Ո՛հ, նշշուկէ ցաւքս ճառագայթ,
Դիտցէք որ գեռ կենդանի եմ։
Եթէ ճակտովս արտօսրագօծ
Ձիս պատանքի մէջ ցաւքս գերթ վէմ
Փաթթեն, գնեն սև գազաղը,
Դիտցէք որ գեռ կենդանի եմ։
Եթէ հընչէ տըխուր կոչնակ,
Թրմռուն ձեծաղն մահու գժխեմ,
Դագաղս առնէ իր համր քայլ,
Դիտցէ՛ք որ գեռ կենդանի եմ։
Եթէ մարգիկն այն մահերգակ
Որք սև ունին ու խժռու գէմ,
Համասփռուն խունկ ու ազօխք,
Դիտցէ՛ք որ գեռ կենդանի եմ։
Եթ՝ հարգարեն իմ հոգակցայ,
Եւ հեծեծմամբ ու սգալեն
Իմ սիրելիքը բաժնըլեն,
Դիտցէ՛ք որ գեռ կենդանի եմ։
Իսկ անհնչուն եթէ մնայ
Երկրի մէկ խորշն հոգակցյան իմ,
Եւ յիշատակս ալ թաւամբ,
Ո՛հ այն տաեն ես կը մռանիմ։

89 ԱՐԻ՛Ք, ԵՂԲԱՐՔ, ՄԻԱՆԱ՛ՆՔ

Եթէ կամիք փրկել Թշուառ Հայրենիք,
Նախ պիտ՝ կապենք մեր մէջ մի սիրտ մի հոգի։
Եթէ կամիք անցեալ փառքին տիրանալ,
Հարկաւոր չէ տատամսիլ բաժնուիլ
Արի՛ք, եղբարք միանա՛նք,
Բա՛ւ համարենք մեր տանջանք,
Ի սէր ճնշուած Հայ ազգին՝
Գործ դընենք մեր ճիգ ու ջանք։

Մեր պապերն էլ նեղկային պէս գործեցին,
Ու մեր տունը իրանց ձեռքով քանդեցին,
Ուրիշների սուտ պարգևից գլացած
Մենք մատնեցինք մինչեւ այժմ դերութեան։
Արի՛ք, եղբարք, ևն։

Մենք Հնչակեան, եղբարք գո՛ք, Դաշնակցական,
Մենք երկուսս էլ կուլանք միշտը Հայկական.
Արիք վճռենք, հոգւով սրտով միանանք
Ջեռք ձեռքի տանք, ապա գործենք արշաւանք։
Արի՛ք, եղբարք, ևն,

Մի նպատակ մի վսեմ գաղափար
Մեզ կ՚սպասեն անհամբեր ու անդադար
Ուխտենք, եղբարք, յայտնենք սրտի միութիւն,
Միութեամբ պիտի գտնենք փրկութիւն։
Արի՛ք, եղբարք, ևն։

90 ՖԷՏԱՆ

Էլ ՓԷտայի տա՛ղնքերդ,
Գնա Դէպի բանակը,
Զօրքեր ցրուէ բանակ չմրդէ,
Ձամեցուր չար Սուլթանը,
Ցոյց տուր որ Աերոյ փաշային
Ցաչորդն ես դուն յայն Հային,
Կռիւ, սարսափ, ահ ու վրէժ
Մահ տարածէ թշնամիին։
Երկու Արշակն ալ միասին
Քաջ ազամարդ Մէչէտին,
Ուխտ ու պայմաններ ալ ձեռին
Մեկնիլ հզօր Մուրատին։
Էլ սարերը արծիւն մօտ
Տաք երեսիդ հով գալի,
Նոր սեսթէմի հետ տիւռմիա
Դազան պէտին Թող գալի։
Անչափ քաջեր հետը առած
Ամպրոպ կուգար օգնութեան
Ջինջիճ դուռերն ալ հետը
Շէֆ Անդրանիկ քեզ մատաղ։
Գործեր գործենք որ ամօչէ
Կուպպաչա Հայ Հարուստը,
Անզգայ մը գուցէ զգայ
Թշուառ Հայուն կորուսը։
Գործեր գործենք հետու տեղեր,
Ջարմանալի լուր առնէք,
Ընթերցողն ալ բացագանչէ,
Շէֆ Անդրանիկ քեզ մատաղ։

91 ՆԱԶԼՈՒ ՋԱՆ

Եկաւ գարուն բացուաւ սարիի վարդը
Ախ՛, Նազլու Ջան, ով սպաննեց քո մարդը
Եկաւ գարուն կթինք ոչխարի կաթը
Ախ՛, Նազլու Ջան էս ինչ սև եր քո բաղդը
Արիւն թափուաւ մահու ճաղի թիւերուն
Ախ՛ Նազլու Ջան մնացել դիշերուն
Վա՜յ, վայ՛ վայ, վայ շատացել են գարգերս
Ախ Նազլու Ջան, եգէմ մնալին բոլէքդ

92 ԵՐԳ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԵԱՆ

Եկաւ ժամանակ բոլեկամ բազդին,
Նոր գարուն բերաւ Հայաստան երկրին.
Իջաւ յԱրարատ հաւատ ՚ի Տիզրիս,
Դարձաւ, դադրեցաւ, կեցաւ ի Մասիս
Եւ ձայն տուաւ անկէ Հայոց,
Ձայն մը Թորգոմայ որդւոց,
Որ Մերկանան բղցուբա ձմրան վարագոյր
Ժամ է արդ, Հայեր,
Ընկնիք առ ընկիր
Տամք սիրոյ համբոյր
Համբոյր մեր բլլայ վերակ միութիւն
Սահմանադրութեան
Եւ հիւսիսափառ Հայրենեաց խորան,
Բացաւ տրխրագին զիւր քօղ ճգնութեան,
Հասին հոն Մուսայք, և ցուսոյ հրեշտակք,
Ախորժ երգեցին խընդութեան նուագ,
Սիրա տուին անկէ Հայոց,

Սիրա մը Թորգոմայ որդւոց
Որ Մերկանան հետ նախանձաւ վարագոյր
Ժամ է արդ, Հայեր,
Ընկնիք առ ընկիր
Տամք սիրոյ համբոյր
Համբոյր մեր բլլայ մեր ուխտ միութեան
Սահմանադրութեան
Երբ Հայաստան նոր գարնան ի գէն,
Դարձաւ ի շրջեզ իւր փառաց հանդէս.
Դարձիր բախտակած Բիւնարդ իմ հոգւոյն,
Դարձէ՛ք աւուրք կենաց, գարձէք յարդն յոյս
Եւ լոյս առէք անկէ Հայոց.
Լոյս մը Թորգոմայ որդւոց,
Որ Մերկանան մանի գիշերին վարագոյր
Ժամ է արդ, Հայեր,
Ընկնիք առ ընկիր
Տամք սիրոյ համբոյր
Համբոյր մեր բլլայ կընկիք միութեան.
Սահմանադրութեան
Ս. Հ. Յակոբեան

93 ՍՐԻՆԳԸ

Ե՛կ իմ սրինգ, իմ բոլեկամ սըբատոքին
Նիհար չրթներդ, ա՜հ, երերան,
Դի՛ր գալկահար իմ չրբդնեբուն,
Երգնիք ու լանք, լանք ու երգնիք սրբատոքին
Լա՛ց, զի լոկ քեզ զբսի հատորն իմ սրտին.
Դու բարեկամ էիր կանանչ,

Երբ մի անգութ ձեռք անճանաչ
Կարեց ըզքեզ անջատեց մայրն ու որդին

Եւ թոյլ տըւիր որ լանջքիդ վրայ գալարուտ
Ծա՛ներ բացին, վերք երկաթի.
Թող այդ վերքէն, բոխր կաթի
Արիւն, բողոք, մրմունջ ըւիսափ վիշտերուդ։

Ես ալ մանուկ էի անմարդ երբ վազուց
Մի անծանօթ պատճառ վրդիս
Լուծ մը գրաւ, ո՛րը կոչեց դիս.
Եւ հօր ու մօր սիրոյ կարօտ դիս թողուց։

Իմ ալ կուրծքըս ծակծկեցին ժանտ վերքեր,
Եւ որպէս դուն սիրես որմին
Ցենոլ, լռել, մրնչիւ որ մին
Չի յուզէ քեզ, չե՛ս հասաչեր, չես երգեր։

Լըսիկ մնչիկ սիրեմ եւ ես հեռու կալ
Ընկերութեան ժիտ ժըխորէն,
Եւ իմ սրտին, հոգւոյն խորէն
Ջննել, ըզգալ, լսկ զարմանալ ու խոկալ։

Թող երգէն, գաշնակ, քընար գեղգեղեն
Յեկեղեցւոջ, ի դիննեատան,
Ադօթք ու պար թռչին, խայտան՝
Թող այլք վայելն հաճոյք մարմնոյ հոգեղէն։

Ա՛խ, իմ սրինգ, աշխարհ յայսով թո՛ղ բերկրի,
Թող բազդն անոր ժպտի յայսին,
Ե՛կ ես և դուն ի միասին
Լանք ու երգեմք, մեր բաժինն այս է յերկրի ...։

94 ՀԱՅՐԻԿՁԱՆ

Եկել է գարուն, սխալը սիրուն
Վարգի թըփի տակ, Հայրիկճան,
Երգէ Հայրենիքը

Ծիծեռնակ, բազէ թըռչունք հասնորէն
Գալումբ են մըշտ ա՛ռ Հայրիկճան,
Օտարաց երկրէն։

Կառնեմ մեր պանդուխտ՝ իւր բարձր դիրքով,
Փափաք ձայն ասել մեզ, Հայրիկճան,
Հայրենեաց սիրով։

Վատպուրականի երիտասարդներ
Եւ օրիորդներ, Հայրիկճան,
Սեւեր են հագեր,

Պատանիք, մանկունք, օրիորդք, կուսանք,
Հայրիկ կանչելով, Հայրիկճան,
Գալեն հասաչանք։

Մեր սիրան ու հոգին քու հոգւոյդ զուրգան,
Հրեշտակ Տայ ազգի, Հայրիկճան,
Դարձիր Հայաստան։

Մեր սիրան ու հոգին դու մարմաքեցիր,
Գազգր, անուշիկ Հայրիկճան,
Թողիր գընացիր։

Վատիորի ափեր, գիտեմ, չես սիրում,
Վարագայ վանքիդ, Հայրիկճան,
Կարօտ ես քաշում

Հրաժարական գարդագրգ տաւիր.
Խնդճուկ սրտերնուս, Հայրիկեան,
Կրբակ վաւերիր։
Իսկ երկաշարքի, որ օրն էր Աւագ.
Ի տաւրր Յակոբէն, Հայրիկեան,
Դառնայիր Արագ։
Մ'ւր որ ալ լինիս, մ'ւր որ ալ երթաս,
Քու փայտան ջահդ, Հայրիկեան,
Մեզի լոյս կուտայ
Եւ բոլ՝ ճանաչէ քու բարձր արժանիք,
Մինչ քու կարօտով, Հայրիկեան,
Կ'այրինք տաղտրինք։

95 Ի ՅՕՆԱԽՄԲՈՒԹԻՒՆ Տ· ՆԵՐՍԷՍ ՊԱՏՐԻԱՐՔ ՎԱՐԺԱՊԵՏԵԱՆԻ

Երէք, եղբարք, բոլորուելու
Դահլին քովը Հօրն Հայուն,
Աւէք ծաղկանքս փունջ կապելու
Որ պարգաւիմք իւր վեհ անուն
Նա հայրը է մեզ ճշմարիտ,
Որ կը հակէ անբծթիթի,
Նա նոր Մովսէս երկնանուէր
Միշտ կը աչքն անձնուէր,
Անգէն հանել անվշտատ
Հայն տառապէն յուսահատ։
Որբին, հեգին և հայրենեաց
Նա կ'ափոփէ սիրտը յուզեն

Եւ ազգային տաւրր իրաւանց
Մատաղ կուտայ իւր կեանքն ողջոյն.
Օ՜ն, արդ փութամբ ի հանգէս.
Տանել ըղմեզ նոր Ներսէս,
Որ իւր չորգին ի բախիւռ
Կանգնէ տաճարս լուսափառ.
Հոն քաւելու գարաւոր
Ազգին վշաերն բիւ բաւոր
Որ փրկութեան ազգի միայն
Ուխտեց ունել նշանաբան,
Եւ անխնայ արքնի ահա
Հայրենական փառաց վերայ։
Արեան ծովէն փոթորկուն,
Ուր ազգն անկաւ անկայուն,
Նա կերկարէ զիւր բազուկ
Անկեալ Հայուն տալ նեցուկ,
Կեցցէ՛ Հայր մեր պատուական
Կեցցէ՛ Ներսէս Սրբազան։

96 ԱՐԽԱՆԵԱՆԻ ԵՐԳԸ

Ես եմ ազատ հայ պատանի,
Աշխարհս են այս լեռները,
Սուրս է միայն իմ սիրելի,
Եւ ընկերքս պէքտանը։
Իմ դարթերքս են ղէնքերքս
Եւ թանգ ոսկի փամփուշտներս
Անկողինս կանանչ մարգեր,
Փափուկ մաքուր պատուական։

Ապաստանս ժայռ քարերը՝
Եւ հայելիս ջինջ վտակ
Բնակարանս անտառները՝
Եւ լապտերս վառ լուսնակ։
Ես պարծենալ չեմ կարող չեմ
Որևիցէ ուսումով,
Միայն գողտրիկ երգել գիտեմ,
Եւ զինք շարժել սուրբ սիրով։
Խմբապետ եմ հայ խումբի մը
Զարդարուած լոյզ զգեստով,
Յանուն ազգիս կռուիմ եմ ես
Բաջարի ընկերներով։

97 ԵՐԱԶ

Ես լսեցի մի անուշ ձայն,—
Իմ ծերացած մօր մօտ էր.
Փայլեց նշոյլ ուրախութեան,
Բայց ափսո՜ս որ երազ էր։
Կարկաչահոս ազբիւրն այնտեղ
Թաւալում էր մարգարիտ.
Նա յաւտակ էր որպէս բիւրեղ,
Այն երազ էր ցնորամիտ։
Եւ մեզմէն ախտը, մայրենի,
Յիշեց մանկութեան օրեր.—
Մօրս համբոյրն ես զգացի,—
Ա՛խ, ափսո՜ս որ երազ էր։
Կրծքին սեղմեց կաթօտպէն,
Աչքերս սրբեց— չատ թաց էր
Բայց արտասուք գնում էին
Ա՛խ այդ ինչո՜ւ երազ էր։

98 ՁԻՆՈՒՈՐԻՆ ԵՐԳԸ

Ես եմ քաջ զինուոր
Ջանիմ մաքառիլ շոր,
Հրացանը ձեռքիս
Շրջեմ ամէն օր։
Բայլ մ'առաջ, քայլ մ'ալ յետ
Դիմանք մենք իրար հետ,
Փչրեցէք թշնամին,
Այս խօսքերս լրսուին
Դէհ եղբայրք, ըշտապով
Բայլ փոխենք մենք շուտով
Շուտ վանենք թշնամին,
Ազատել հայրենիքս։
Պարզ արև երկնքում
Մեզ վրայ է խնդում,
Ինչո՞ւ մեր ազգութիւն
Սիրեց մխիթիւն։
Բայլ մ'առաջ ևն։

99 ՁԷՅՔՈՒՆԻ ԵՐԳ

Ես հասեցի սուրս պատեանէս, արտասուքով օծեցի
Տրտմած անուշ սիրականիս, ես իմ ողբը կարգացի։
Նա երդուեց իւր սիրովը, չխնայել բնաւոյն
Այս պայմանաւ ափսոյս տալին, հուր հրացան յանձնեցինք։

Հոգեւորաց երկնից լաւեր ում կ'սպասեն ո՛ն մեզի
Նա բաժանեց մաքնչալով իբրեւ կորիւն առիւծի։
Խլեց բերդերը, այրեց գիւղերը, թուրն իրաւ այս փոյթը
Ծակեց տուն մ· . . ին ինքն նէզ ոչ ալի գառ հոտ։

Ջարդեց գարձաւ գերիներով իմ պատեղի անուններ,
Սեւ մազերով սպրեամ փայլի բրիս կապած արիւնով.
Հանգրստացնեմ կուրծիս վրայ չի խանգարի իւր ընկեր
Մեզի մոնաքոյր կեցցէ իրեն. ազատած է Չէյթուներ:
Առատած սիրէմ հայ աղջիկներ, եկեմ խորհիմ միասին
Այսուհետեւ ալ չսիրեմ, կռուից փախչող վախկոտին:
Խիստ գարնուրելի կերպով բռնեց, ոսկւոյ սիրոյ մեռնողին
Համբոյրի տեղ ցոյն կամենամ վախից սրէժ չառնողին:
Տիրանի պէս ֆաջեր սիրեմ արժանի է մեր սիրոյն
Որոյ գիտեմ սիրով պահել, արժանիքը ֆաջեռուն:
Ա՛խ, ինչի մեռնիմ Տիրան, Տիրան ոսկւոյ սիրող ամեայ,
Հազար երեկ ամէն հայուն ասեն ուենեայ ինչ նման:

100 ՀՈՎՀՈՒՀԻՆ

Ես եմ սրբիկ խեղճ հովուհին
Աչխարհս է այն զեղ մարգը,
Շունս է միայն իմ սիրելին
Եւ ընկերքս գառնուկը:

Իմ դարգս են այն ծաղիկները
Եւ հայելիս պարզ վտակ,
Պատսպարանս անտառները,
Լապտերս՝ վառ արեգակ:

Ադամանդս՝ ժայռ քարերը,
Եւ թանկ ոսկիս՝ անմառամ,
Մետաքսենիս՝ կանանչները՝
Փափուկ, մաքուր պատառական:

Ես պարծենալ չեմ կարող, չեմ
Որ ես իջէ ուսումով,
Միայն քաղցր երգել գիտեմ
Ու կեանք վարել սուրբ պարզով:

101 ՂԱՐԻԲ ՄՇԵՑԻ

Ես մշեցի ճամբորդ եմ՝ հեռու տեղերէն,
Ձեզ շատ բարեւ բերեր եմ հայի զեղերէն.
Սիպակերքդս ինձ զրկեցին դէպի էս կողմանը.—
(Մի՛ վախնաք չուզեմ ձեր մանկիկն ու թաւման
Վարագայ Սուրբ խաչէն բերեր եմ ձեզ լուր
Խրզճացէք հայ ազգիս, տուէք մէկ մէկ թուր

Հայ ազգը մեր տեղ նեղ օր կը քաշէ,
Օսմանլին ու քիւրդը կեանքերս կը մաշէ.
Օր կ'ըլլայ՝ գերեվար կ'անէ մեր տղոց
Օր կ'ըլլայ՝ արտերս ձգէ կրակ ու բոց,
Թէ չօդնէք՝ մենք ալ շատ կ'ըլլանք ցիրուցան.
Խղճացէք հայ ազգիս, տուէք մեզ հրացան,

Սուրբ ժամերքս դարձուցին անառանց կոյանք,
Խորանները պղծեցին, քանդեցին սուրբ վանք,
Խաչը ոտքով փըշրեցին, տեղը գրին լուսնակ,
Խեղճ հայը օրնիբուն ծառը է ու ծանակ.
Ո՛վ աղբարք, բերեր եմ ձեզ այսպէս սեւ բօթ,
Չուզենք մենք ձեր ոսկին, տուէք մեզ վառօդ:

Այսքան շատ տանջանքին ինչպէս դիմանանք,
Մինչեւ ե՞րբ ձեր գիտց անօգ պիտ՝ մնանք.
Մեր ազգը սէր չունի Աւետեաց նըման,
Բարի դուք ըլլայիք մեզի օգնական.
Հոգիներս սըրոցած է, չաներքս ցաւոտ,
Չուզենք մենք ձեր փարան, տուէք թընդանօթ:

Շատ տառապանք քաշեցինք գուշմանի զէնքէն
Շատ ալ մահ գուշմանը կերաւ մեր ձեռքէն,

Ազանց ատոր աշխարհքը մեր էր բազմամարդ,
Հիմի փուշ կը բուսնի, ու առաջ էր վարդ.
Բայց մենք ձեր արնառուկի փողին կարօտ չենք.—
Հայ ազգաքաք, շնորհեցէ՛ք դուք մեզ մէկ մէկ զէնք։
Ձեր զարդերուն ու սիւսերուն խակի չենք կարօտ
Խըզճացէ՛ք հայ ազգին տուէ՛ք մեզ վառօդ։
Մի վախնաք չեմ ուզեր ես շատ սուզ բաներ
Խըզճացէ՛ք հայ ազգին տուէ՛ք պօմպաններ։

102 ՂԱՐՍԵՑՈՑ ԵՐԳԸ

Ես վերէն կուգայի՝ դու դուռը բացիր,
Ձեռքըդ ծոցըդ տարար՝ ա՛խ էրիր լացիր,
Ես էլ քեղի չառայ՝ տունը ձնացիր
Դընը, զապլի խային, եար չեզար ընծի։

Ես տարէն կուգայի, շալակըս բուրդ էր,
Լեզուդ ինծի համար վառած քուքուրթ էր
Բոյըդ զարդու զամիշ, յերեսդ Թուղթ էր,
Դընը, զապլի խային, եար չեզար ընծի։

Երկինքը ամպեր էր, լինչ անուշ Թոն էր,
Լկայ գընէին անցայ, ջանաքս հոն էր.
Էրեցայ-վառեցայ, ես ինչդ տուն էր
Դընը, զապլի խային, եար չեզար ընծի։

Լաօք շարաթ էգնիր էգուց կիրակի,
Եարըս գընէին անցնիր էրթար կըրակի,
Լեզուն բանլիք էգնիր, ծոցը փընէնկի,
Դընը, զապլի խային, եար չեզար ընծի։

103 ՀԱՅՈՑ ՎԻՃԱԿԸ

Ես Սիսակն եմ երգնկացի
Փշուր մը հայի կարօտ մնացի
Մայրիկ, մայրիկ, մայրիկ, մայրիկ.
Մայրիկը մեռնի այս սարերուամ
Անյոյս, անյոյս, անյոյս, անյոյս։
Աբեւ ծագեց կամար կամար
Մայրեր մեռնին օրդւոց համար
Մայրիկ, մայրիկ, մայրիկ, մայրիկ։
Էջմիածնի ոսկի սիւներ
Մհ քանգեցին հայոց տուներ։
Մայրիկ, մայրիկ, մայրիկ մայրիկ։
Հայոց պատրիարքն՝ Աշիգ Խարէն,
Մատնիչ դարձաւ ընարուած օրէնի։
Մայրիկ, մայրիկ, մայրիկ, մայրիկ։
Ամանոյ սարերը լեռներն է բուսեր։
Հայ մայրերուն աչքն լուսեր։
Մայրիկ, մայրիկ, մայրիկ, մայրիկ։
Զէյթունն ապստամբ կրակ է առեր
Հայ քաջերուն սուրն է բարձեր։
Մայրիկ, մայրիկ, մայրիկ, մայրիկ։

104 ԵՐԳ ՍԻՐՈՑ

Ես սիրել եմ մի զոյգ աչեր
Նման փայլուն սատղերի
Նրանք խորն են որպէս եղեր
Նման յուզուող ջրերի։

Ես գերուեցայ նոցա փայլից,
Արար աշխարհ մոռացայ,
Զքնաղ կոյսին չեմ կարօտից,
Աշուղ դարձայ երգ հիւսեցի
Կանանչ կարմիր փունջ կապեցի
Որ իմ սիրած եարին տամ
Նա անգութ էր ձեռքէս չառաւ.
Թողուց որ սեւ բախտս լամ,
Բայց այն կոյսը անառարկելի էր
Ամէնքս նշան չէր գրաւած,
Իմ վառ սէրը լոկ ցընորք էր,
Նա տեղ չունէր աշխարհումս

105 ՀԱՌԱՋԱՆՔ ԱՔՍՈՐԱԿԱՆԻ

Երբ ալեկոծ ծովի վրայ
Իմ մակոյկս խարտակուի,
Ես փրփրագէզ ալեաց մէջը
Դեռ իմ յոյսս չեմ կտրի
Բոլոր ոյժով և համարձակ
Բազուկներս կը շարժեմ,
Ալիքները պատառելով
Դէպի ափունք կը թռչեմ
Անհատատար այս կեանքի մէջ
Թէ ուժերս ինձ թողնեն
Ալիքները յորձանք տալով
Դէպի անդունդ ինձ առնեն,
Այն ժամանակ մի ափսոսանք
Ես զանուամ եմ նրա մէջ,

Որ մեռնում եմ քաջի նման,
Կռիւ տալով մինչեւ վերջ,
Ես Կուկուեան Սարգիս անուն
Աքսորման մէջ ինկած եմ,
Ազատութեան սիրոյն համար
Կեանքս ու հոգիս զոհած եմ
Ձեռքերս չղթայ ոտքերս չղթայ
Մութ բանտին մէջ ինկած եմ,
Հայրենիքիս սիրոյն համար
Կեանքս ու հոգիս զոհած եմ
Գերեզմանիս քարին վրայ
Ակըդ սիրով գու երգիր,
Եւ փոխանակ իմ եւսին
Շիրմիս քարին համբուրիր
Մընաք բարեաւ, սուբ, հրացան,
Մընաք բարեաւ, բնկերներ,
Անցան օրերս ազատութեան,
Եկան բանտի չղթաներ
Գերեզմանիս չորս բոլորը,
Վարդ, մանիշակ թ՛ողը բուսնին,
Իմ հայրենեաց խէղճ զաւակունք
Այս վարդերով զբօսնին

106 ՀԱՅԴՈՒԿԻ ԵՐԳ

Երբ ես մեծացայ, տղամարդ դարձայ,
Ու սիրտս գընդաց սիրով վառ-վառման,
Ուզեցի սիրել աղջիկ սեւաչեայ,
Բայց գու գիրկս ընկար, անգին հրացան,

Ու բաց կարօտով գըրկեցի ես քեզ,
Սեղմեցի կրծքիս, անդին հըրացան
Իմ սրտի տէրը,— հարսնացուս գարնամբ,
Աննենգ ընկերս, իմ սէր հըրացան . . .
Երբ թշնամու դէմ կռւի եմ վազում,
Դո՛ւ՝ կրծքիս սգաման՝ անլռժան հետս ես-
Դո՛ւ ես մըշտ սրբոյս մըրկիր յաչտնում,
Քեզնով եմ փնչում, որտում վըրէժ . . .
Ես երբ գագըրած գըլուխս դնեմ,
Կռւի գաշտերում, կ՚ուզեմ որ փոքրն
Քեզմով ինձ մի փա՛ կռւի ընկերներ,
Քեզ հետս թաղեն, իմ հա՛րս, իմ ընկե՛ր ...

107 ԵՐԳ

Երբ իրիկուան խաղաղ սըրտով տուն դառնաք,
Սեղան նըստեք ուրախ ըլլաք ու խայտաք,
Ես ձեր որդւոցը հեշտ զըղուանքը վայելէք,
Թըշուառն խորհեցէք,
Թըշուառն սիրեցէք։
Երբ հանգիստ էք, ձեր սրտերն զուարթ են,
Կ՚երգէք կայտաէք, զըպմանքնիդ երգեր են,
Դիշերն անփոյթ և անգորրիկ քուն նիրհէք,
Թըշուառն խորհեցէք,
Թըշուառն սիրեցէք։
Երբ առաւօտն գայ սղջունել, ու արթննաք,
Աբփւոյն շողքը վայելելու սիրտ ունենաք,
Անվիշտ ազու մը պէս զուարթ կը կայտաէք
Թըշուառն խորհեցէք,
Թըշուառն սիրեցէք։

Երբ յերկ դառնաք, քիչ շատ շահէք գոհ ըլլաք,
Յերեկն անցնէք առանց վըշտի անվտանգ,
Մ՚հ անգամ մը ձեր ուշն անոր դարձուցէք,
Թըշուառն խորհեցէք,
Թըշուառն սիրեցէք։

108 ՆԱԽԱՆՁ

Երբ կը տեսնեմ աչերուդ փայլ,
Երբ կը լըսեմ լեզուիդ դայլայլ,
Կ՚ուզեմ աշխարհ չլլայ խալ, կայր,
Որ ես միայն քեզ լըցուխմ, քոյր։
Երբ կը տեսնեմ ծոցիդ երեր
Երբ կը լըսեմ հոգւոյդ երգեր
Կ՚ուզեմ գառնալ մարտիկ անյաղթ
Եւ ի բաց վանել պահպան հրեշտակդ։
Երբ կը տեսնեմ բիբերդ ի վեր,
Երբ կը լըսեմ իզձերդ առ տէր,
Կ՚ուզեմ յարձան փոխուիս քոյր իմ.
Ես Աստուծոյ կը նախանձիմ։

109 ՎԱՏ ԿՂԵՐՆԵՐԸ

Երբոր ազգին գահը փլաւ,
Երբոր ազգին թագը վերցաւ,
Յայնժամ մըտի վատ կղերներ
Քարձրացուցին երենց գահեր։
Ըսին Հայոց իրկ հայրենիք
Ի կղերին պաշտած երկինք,
Լաւ է կրօնի չ՚հաւատալ
Քան թէ անոր գերի ըլլալ։

Հին բռնակալ Թագիդ փոխան,
Հայ, մարդ ընտրէ գու քո իշխան,
Թանգ զարդն, պչրանքն գեշ կղեքին,
Ա՛ռ տո՛ւր կրթէ Հայի որդին։

Ազգ մ՚որ չունի ազատութիւն,
Ան չունի կեանք, շունչ և արիւն,
Զունի կրօն, յոյս հոգեկան,
Անբան նիւթ է ոտնակոխան։

Երդմամբ մՃռէ կամ մահ կամ կեանք,
Փշրէ, կոտրէ լուծ և կապանք,
Լաւ է որ մարդ ընաւ չապրի,
Քան թէ ապրի այլոց գերի։

Փանփուշա, գնդակ, ռումբ, ուժանակ.
Առատ լեցուր քո լայն տոպրակ,
Պատերազմի դաշտին մէջ գուն
Ընտրէ մեռնիլ քան թէ քո տուն։

Լաց, կոծ, բողոք, արիւն, ազօթք,
Անօգուտ են, կը ցնդին յօդ.
Քանզի ազգաց իրաւունքներ
Որոշած են քաջաց սուրեր։

Որու սուրը կարուկ լինի,
Որու գնդակը հեռու նետուի,
Իրաւունքը անոր կ՚ըլլայ
Աշխարհն այսպէս կը հաստատայ։

ՈՐ ԿԻԼԻԿԻԱ

Երբոր բացուին գուներն յատոյ
Եւ մեր երկրէն փախ տայ ձմեռ,
Զբնաշատ երկիրս մեր Արմենիոյ
Երբ փայլէ իւր քաղցրիկ օդեր,
Երբոր ծիծառն իր բոյն դառնայ,
Երբոր ծառեր հագնին տերեւ
Յանկամ տեսնել զիմ Կիլիկիա,
Աշխարհ որ ինձ եռուր սրեւ։

Տէր ի դառերքն Սիւրիոյ,
Լեռն Լիբանան և իւր մայրեր,
Տեսի վերկիրը Իտալիոյ,
Վենետիկ և իւր կոնտոլներ,
Կըզգի նըման չէր մեր Կիպրեայ,
Եւ ոչ մէկ վայր է արդարեւ
Յանկամ տեսնել զիմ Կիլիկիա,
Աշխարհ որ ինձ եռուր սրեւ։

Հասակ մը Կայ մեր կենաց մէջ
Ուր ամենայն իզձ կ՚աւարտի.
Հասակ մը ուր հոգին է տենչ՝
Յիշատակաց իւր կարօտի.
Յորժամ քընարս իմ ցրտանայ,
Ակրոյն տալով վերջին բարեւ,
Երթամ նընջել յիմ Կիլիկիա
Աշխարհ որ ինձ եռուր սրեւ։

111 ՄՇԵՑՈՑ ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴԸ

Երբոր մայրը երկունքով
Աշխարհ բերէ երեխայ,
Հայրը որդուն մի սրբած
Պիտի դաշոյն տայ ընծայ։

Երբ երեխան մեծանայ,
Խաղալիքներու փոխան՝
Հայրը ձեռքը պիտի տայ
Մի մահարեր հրացան։

Երբոր սրդին վարժատուն
Դայ ժամանակ երթալու,
Նախ սուր խոզցնել և ապա
Պիտ՝ սորվեցնենք կարգալու։

Կարգալ, գրբել լաւ բան է...
Բայց որ հասաւ քննութիւն՝
Աշակերտին հարցուցէք—
Վամիկ դիտէ նա սրիւն։

Լոկ գուք այսպէս յուսացէք
Փրկել խեղճուկ Հայաստան,
Ազատ, անկախ մարդ երբէք
Լինելու չէ մուրացկան։

112 ԵՐԿՐԱԳՈՐԾԻՆ ԿԵԱՆՔԸ

Երբոր ծագի գարնան արեւ
Կ'երթամ հերկել ես իմ արտիկ,
Կ'երգէ արտոյտ գլխուս վերեւ,
Կ'երգէ հոգիս ալ հանգարտիկ։

Երբոր հասնի ամրան տաքը,
Սիրտս ուրախ է տրդու նըման,
Տէրն օրհնած է իմ վաստակը,
Արտս հասկերու ծով մ է լըման։
Ու երբոր գայ աշուն նորէն,
Սիրտը պիտի դըռնէ զուարթ,
Ոնիմ առատ պըտուղ ցորէն
Եղչերուս ալ չոր խոտ ու յարդ։
Եւ երբ հասնին ցուրտեր ձըմրան,
Զաւակներս պէտք մը չունին,
Իրենց հացէն մաս մ՝ալ կուտան.
Խեղճուկ սրբին ու թըռչունին։
Տարին ամբողջ մենք կ'աշխատինք,
Մ'արմնով առողջ, մըտքով զուարթ
Ջուր չեն հոսիր համեստ քրտինք,
Տէրը կ'օրհնէ մեր տունն ու արտ։

113 ԵՐԵՒԱՆԻՑ ԴՈՒՐՍ ԵԼԱՅ

Երեւանէն գուրս ելայ
Թիֆլիզ քաղքին մօտեցայ,
Փողոց, փողոց ման եկայ.
Սիրականս չ'տեսայ։
Ախ սիրուն սիրական
Ինձ մը թողուր անպաշտպան։
Սիրականըս տուն չեկաւ,
Դրուխիւնս գնչացաւ,
Ելայ ճամբան նայելու,
Ամբողջ գեանքս մաշեցաւ։
Ախ սիրուն սիրական,
Ինձ մի թողուր անպաշտպան։

124 ԳԸ՛ՆԱ, ԳԸ՛ՆԱ, ՈՏԻԴ ԵՄ

Գը՛նա, գը՛նա, ոտիդ եմ,
Հա՛, հա՛, հա՛, հա՛, հա՛, հա՛, հա՛, հա՛,
Սա՛բին, օ՛, եա՛ր ջան,
Եա՛բին, օ՛, եա՛ր ջան,
Կարմիր խընձոր՝ գօտիդ եմ,
Հա՛.
Եաբին, օ՛, եա՛ր ջան,
Սա՛բին, օ՛, եա՛ր ջան,
Դու ինձ էասեղ չի՛ս թողնի,
Հա՛, հա՛ հա՛, հա՛, հա՛, հա՛, հա՛, հա՛,
Սա՛բին, օ՛, եա՛ր ջան.
Եա՛բին, օ՛, եա՛ր ջան.
Ուր որ երթաս, մօտիդ եմ՝
Հա՛.
Եա՛բին, օ՛, եա՛ր ջան,
Սա՛բին, օ՛, եար ջան՝

Ապարանը քարօտ ա,
Բարի տակըն ափօտ ա.
Ուղիղ եօթը տարի ա,
Բայըն աղջօրը կարօտ ա՝

Եար եմ գըտել՝ եարի պէս.
Ընկուզենի ծառի պէս.
Ուր որ երթայ կայնել եմ,
Էն մեր սիրուն տարի պէս,

115 ՔԱՂՀԱՆ

Գարնան գուման հանեցի,
Եար, նայ, նայ, նա՛յ, նայ, նա՛յ,
Արար բանրակ ցանեցի.
Ամառ եար, նա՛յ նայ, նա՛յ.
Ամառն եկաւ, քաղն եկաւ,
Եար, նայ, նայ, նա՛յ, նայ, նա՛յ,
Քաղհանաւոր ճարեցի,
Ամառ եար, նա՛յ, նայ, նա՛յ,
Քաղհան կանեմ հօ՛ բարով,
Տոլմա կեփեմ բիբարով.
Աչնան անի լաւ օրեր,
Բամբակ քաղեմ նաւթարով՝

Բեռնեմ սայլը տար հանեմ,
Տար հանեմ ու տուն տանեմ.
Գուբս գայ չարի չար աչքը,
Ջըմբուռ հանգիստ օր կանեմ՝

116 ԴՈՒ ՉԵՍ ՀԱՒԱՏՈՒՄ

Դու չես հաւատում թէ քեզ եմ սիրում,
Թէ դիշեր ցերեկ անքուն անհանգիստ.
Միայն քեզ համար մտածում եմ միշտ,
Դու չես հաւատում, որ քեզ եմ սիրում՝
Թէ քո վառ սիրով ես հիւանդ պառկած,
Ուժս սպառած լեզուս չորացած,
Աեմ քո սիրոյն հոգիս կաւանդեմ.
Դու չես հաւատում, որ քեզ եմ սիրում՝

Բայց եթէ յանկարծ ես խերագաբիմ,
Ձեռներս ծոցիս փողոցները շրջիմ,
Եւ սիրոյ երգը երգեմ սգալով,
Դու չես հաւատում, որ քեզ եմ սիրում։

Վերջապէս թէ քո սէրը յաղթելով,
Սպաննէ յանկարծ վերջին շունչս տալով,
Քեզի համար միայն սրինես թափեմ,
Դու չես հաւատում, որ քեզ եմ սիրում։

Թէ սառ դիակս ամիսներ լինի,
Մի քանի չոր չոր տախտակների մէջ,
Ընկերներս տանին գազազ գրկած
Դու չես հաւատում, որ քեզ եմ սիրում։

Ամենքն գառն արցունք թափելով պիտի,
Ինծի համբուրեն հրաժեշտ տալով,
Դու չես մօտենայ գէթ վերջին անգամ,
Բարեւդ տալու մինչեւ չսիրեանս։

Ծնողք, բարեկամք երկինք եւ երկիր,
Իմ սիրոյս համար վկայ եմ կանչում.
Որ սիրեմ անկեղծ դու էլ ինձ սիրես,
Դու չես հաւատում որ քեզ եմ սիրում։

Երբ արեւ լուսին խաւարին յանկարծ,
Երբ ինձ իջեցնեն խաւար գերեզման,
Գերեզմանիցս էլ՝ մի ճիչ կ'արձակեմ,
Որ քեզ եմ սիրում էլ չես հաւատում . . .

117 ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԳ

Աւատ կ'ելլես դու ժուռ կուգաս,
Թափած մազով վայ, վայ
Բարեւ կուտաս բարեւ կ'առնես,
Հազար նազով վայ, վայ,
Սիրուն աղջիկ, աղուր,
Քեզ կը սիրեմ իրաւ որ,
Սիրտս սիրովդ վիրաւոր
Աղուր, սիրուն աղջիկ մի հեռանար։

Ձրկոզին քեն է սիրոր,
Մահ կը գոցէ վայ, վայ,
Քու նայուածքիդ ինկած տեղը,
Հուր է, լոց է վայ, վայ
Սիրտս սիրովդ տաջոր,
Կը մեռնիմ կոր խաչոր,
Քեզ կը սիրեմ իրաւ որ
Աղուր, սիրուն աղջիկ մի հեռանար։

Աղուր աղջիկ սիրտդ մեղրէն,
Ակ անուշ է վայ վայ,
Մի ըսեր մի վազը վազը
Ան ալ ուշ է վայ վայ,
Մի ըսեր մի չեմ գար
Չի ես քեզի չեմ օտար,
Դուշէ բլլամ օգտակար
Աղուր սիրուն հայլիս։

Երկու աչտէդ մէյմէկ համբոյր
Թէ ես դողնամ վայ, վայ,
Զը խոժոռի սակայն դէմքդ,
Չի ես թողամ վայ, վայ.
Շրթունքներդ ծիրան,
Դէղձի նման բերան
Համբոյր գնեմ վրան
Ազատ, սիրուն աղջիկ մի հեռանար։

118 ՊԱՐԵՐԳ ԹՌՆՈՑԻ

Ձա՛ր՝ ղը՛նգը, զա՛ր՝ ղը՛նգը, Թո՛ղ ղը՛նգայ
Պարենք գիշեր լուսնկայ
Էս գիշեր՝ լուսնակ գիշեր,
Ձա՛ր՝ ղը՛նգը, զա՛ր՝ ղը՛նգը, Թո՛ղ ղը՛նգայ.
Ձիւնն եկեր՝ գետինն նախեր,
Պարենք գիշեր լուսնկայ,
Էլի պարը բոլորաւ
Եարըս մէջին մոլորաւ։

119 ԱՂԱՍՈՒ ՄՕՐ ԵՐԳԸ

Ձարթիր, մանուկ իմ նազելի,
Բա՛ց այդ պայծառ աչերը.
Թերթեր ունքիդ քունը թօթռէ
Դիրկը հանդչիր քո մօրը.
Բաւ քեզ որքան բարի հրեշտակը
Հէքեաթի ասին երազում,
Այժմ արի քեզ այն պատմեմ
Ին՛չ պիտ՝ տեսնես աշխարհումդ։

Ձարթիր, որդեակ, քանի՛ քնես,
Բա՛ց աչքերդ այդ նաչէուն,
Ուր որ մարդ իր բաղդ, փառքը,
Կեանքն ու արեւն է տեսնում։
Դու կը մեծնաս, բոյ կը քաշես—
Ձինուր բոյիդ ես զուրպան.
Բեզ ուժ կուտան Մասիս քաջերը,
Որ դու լինիս քաջ վարդան.
Իմ մտաներով մի ոսկեթել,
Մէջքիդ գոտի եմ կարել
Գօտիջրդ սուրըդ կախեմ,
Այն էլ ինքըս եմ սրել։ Ձարթիր, եւն.
Մեր բակումը ձի է կաշնած,
Բեզ է մնում անհամբեր,
Ձարթի՛ր, որդեա՛կ, քանի՛ քնես.
Աւ թուրը մահաբեր,
Քո Հայ ազգը հեծեծում է
Ձեռքը ոտքը չղթայած
Քու եղբարքը գերութեան մէջ...
Քաջ, միայն դո՞ւն ես քընած։ Ձարթիր, եւն.
Զէ՛, իմ որդին չուտ կը զարթի,
Ձին կը հեծնէ սանձակած,
Հայի արցունքը կը սրբէ,
Կը գադրեցնէ լաց ու կոծ
Հայ եղբայրներ, քիչ էլ կացէք,
Իմ Ազատին զարթեցաւ,
Գօտին կապեց, թուրը կախեց
Եւ իր նժոյգ ձին նըստաւ։ Ձարթիր, եւն.

120 ՄՕՐ ՀՐԱՒԷՐԸ Ի ՄԱՐՏ

Զարդիր որդեակ, յուշ բեր վեր կաց.
Պատերազմի ձայն հնչեց.
Զարդի՛ր գոչեց ձայն հայրենեաց,
Կենաց մահու ժամ հնչեց,
Պատրաստեր եմ քո զէնքերը,
Ահա գլխիդ վերեւ կան
Ինչպէս երբեմն քո գրքերը,
Երբ կ՚երթայիր վարժարան,
Ելիր կապեմ սուրը մէջքիդ,
Ասպար կախեմ քո ուսէդ ,
Եւ սուրը դրօշակ հայրենիքիդ
Թող ծածանի աջ թեւիդ,
Փոխան գրքիդ ահա սուսեր,
Փոխան Թղթի կռուի դաշտ.
Դնա մեռիր ազգիդ համար,
Թող մայր-երկիրդ ապրի հաշտ,
Քան տարի կերակրեցի
Մինչ հասակդ այդ առիր.
Այդ հասակիդ մայրդ մեռնի,
Դուն ալ քու ազգիդ մեռիր,
Յառաջ, որդեակ, ի մարտ անմահ,
Տուէք անվախ կուրծք ու ճակատ,
Հոգ չէ թէ քեզ կը գտնէ մահ,
Ջի յայնժամ է ազգն ազատ։

121 ԶԱՐԹԻՐ ՍԻՐՏ ԻՄ

Զարթիր սիրտ իմ վըշտահար,
Նոր առաւօտ քեզ ծագեաց,
Պարք մուգայից շուրջ ըզգեա,
Պահեն զգա հոյսդ յարհաւրաց։
Պանծա դիւցազուն մեծ արքայ փառաք,
Ճնմա առեալ յերթիքս քո երգով,
Ոչ արև, ոչ լուսին, ոչ աստղեր,
Ոչ երկինք հասանին քոյդ փառաց,
Յաւերժացիր։
Ուրախութեան օր է այս,
Բերկրին սրտեր գեհտհաս,
Պարք մուգայից և այլն։

122 ԵՐԳ ՉԷՅՔՈՒՆՑԻՈՑ

Չէյթունցի ենք, ժայռի ձագ ենք,
Կը թըռչըտինք սարէ սար,
Որ օրս գտնենք ու բըզկտենք
Եւ յօշատենք չարաչար։
Չէյթունցիին կերակուրն է
Արիւնապուր, ոսկրէ թան
Զոր ասխի սեւ արիւնէ
Կը պատրաստենք միասան։
Մենք վախ չունինք ո՛չ գնդակէ
Եւ ոչ սուրէ երկասյրի
Թող մ՚է մզի—Աստուած գիտէ—
Թափել արիւն գազանի։

Ազատաժիլ քաջ զաւակաց՝
Վախ կամ երկիւղ ամօթ է.
Ջէյթունցիին պըտակն փառաց՝
Լեռի գաշտի կռիւն է։

Ջէյթունցի ենք, մարդ ենք մռուի.
Միշտ ջարգելու ենք յաժար.
Այս է կտակ պապերի
Զարնել մէկի դէմ հազար։

Ուրեմն հասա փոր գուբ հարուստներ,
Գրպրոց, անառուկ, գուբ բաց բրէք,
Մրարներով շատ ոսկիներ
Մեզի պաշար զրկեցէք։

Եւ գուբ, եղրա՛րբ, օ՜ն, ա՜նգր յառա՛ջ,
Ջէնք ու զրահ կապեցէք.
Բա՛ւ է այլ եւս լաց ու հառաչ,
ԱԶԱՏՈՒԹԻ՛ՒՆ գոչեցէ՛ք։

123 ՋԻՆՈՒՈՒԱԾ ՊԱՏՐԱՍՏՈՒԱԾ ...

Ջինուած, պատրաստուած, Ջէյթունի քաջեր,
Սուրբ ազատութեան վկայք անվհեր.
Վրէժով լցուած առիւծի նման
Քաջ-քաջ կռուում են թուրքի դէմ գաժան։
Կեցցէ՛ք, գուբ միշտ Ջէյթունցիք,
Որ պիտ՝ փրկէք հայրենիք,
Դուք Հայաստանի պարծանք,
Մեր կեանքին էլ ձեզ կը տանք։

Մանուկն օրօրոցում հանգիստ չէր պառկած,
Խնդրուն էր մօրից՝ «բազուկներս բաց»...
«Ես չուզեմ մնալ այս օրօրոցում,
Մինչ իմ եղբայրներ լաց կած են անում»...
Կեցցէ՛ք գուբ միշտ Ջէյթունցիք,
Որ պիտ՝ փրկէք... ևն.։

Ինչ ես կաշկանդել, քանդէր ինձ, մայրիկ,
Ես կ'ուզեմ կռուիլ թուրքի դէմ ճարպիկ,
Տուր ինձ հրացան և մի սուր գաշոյն.
Ես կ'ուզեմ ձօնել կռիւն տեղ արիւն։
Կեցցէ՛ք գուբ միշտ Ջէյթունցիք ևն.։

124 ՋԻՆՈՒՈՐԻՆ ԵՐԳԸ

Ջինուորին երգերը, եղբարք լսեցէք,
Աչքարհիս բաները լաւ ճանաչեցէք։
Ոմանք հայկապ պատաներ ունին
Ոմանք չէն դռեակ խաղող բնակին։
Մէկն ունի մեծ տներ, մրան գիւղ ունի,
Միսյն խեղճ զինուորը ոչինչ բան չունի։
Շորերը թանկագին, փորը միշտ քաղցած,
Տուր ձիուդ միշտ գարի. ինքդ կեր չոր հաց
Թէ քաջ պատերազմիս կ'տան մեծ պարգև,
Թէ ոտքդ կորցնես՝ կ'տան միաս բարև։
Ո՛ւր գնամ ես մինակ աշխարհիս վրան,
Ահա քեզ վատակ քսան մէկ տարուան։

125 ՉԻՆՉ ՈՒ ՉԻՆՉ

Չի՞նչ ու չի՞նչ տամ լողուրդչուս,
Ջամա ջամա էր։
Չիմ լաչակ տամ լողուրչուս,
Բամա քամա էր։
Ո՛չ էառ, ո՛չ հանեցաւ,
Ջամա ջամա էր։
Ո՛չ եհան, ծամկալ ծովէն։
Բամա քամա էր։

Չի՞նչ ու չի՞նչ տամ լողուրչուս,
Չիմ մէջկազ տամ լողուրչուս։
Ոչ էառ, ոչ հանեցաւ,
Ո՛չ եհան ծամկալ ծովէն։

Չի՞նչ ու չի՞նչ տամ լողուրչուս,
Չիմ, չապիկ տամ լողուրչուս.
Ո՛չ էառ, ոչ հանեցաւ
Ո՛չ եհան ծամկալ ծովէն։

Չի՞նչ ու չի՞նչ տամ լողուրչուս,
Լուսնակ գիշեր պագ մի տուր։
Հետ էառ, հետ հանեցաւ
Հետ եհան ծամկալ ծովէն։

126 ՋՈՅԳ ՋՈՅԳ ԿՈՒՆԿ

Ջոյգ ջոյգ կըռունկ էրկան վիզ,
Պապօ, մամօ կարգէք գիս։
Համ գիւղ, համ վարդ, համ նարգիզ,
Պապօ, մամօ, կարգէք գիս։
Ալիպուխար քնա՛մ ես,
Իս ի՞նչ զաղու քսայ է։
Էդման մեռել Թորկին վիզ,
Պապօ, մամօ կարգէք գիս։

127 ՏՐՏՈՒՆՋՔ

Էյ, մընաք բարով, Աստուած և արեւ,
Որ կը պըլպըլաք իմ հոգուոյս վերեւ ..
Աստղ մ՚ալ ես կ՚երթամ յաւերժ երկնից,
Աստղերն ինչ են որ եթէ ոչ անբիծ
Եւ թըշուառ ոգւոց անհ՚ծք ողբագին,
Որք Թըռչուն պէտք ճակատն երկնքին.
Այլ, այն Աստուծոյն՝ չանիծեր՛ւ արժատ՝
Յաւերժն ղէնքերն ու զարդերն հրեշտա...

Այլ ո՜հ, ինչ կ՚ըսեմ... չանիծահարէ՛ զիս,
Աստուա՛ծ, խոկն հակայ փշրէ՛ հիւլէից՝
Որ ժպրծի ձգտիլ աւազիկ խորն երկնի,
Ելնել աստղերու սանդուխքն անալի...
Ողջո՛յն քեզ, Աստուա՛ծ դողդոջ էակին,
Շողին, փըթիթին, ալոյն ու վանկին,
Դու որ ճակտիս վարդն ու բոցն աչերուս
Խըլեցիր Թըմբուռմս չըմնաց՝ Թռչին հոգուոյս,
Ամպ տըւիր աչացս, հեւք տըւիր սըրտիս,
Ըսիր մահուան դուռն ինձ պիտի ժըպտիս,
Անշուշտ ինձ կեանք մը պահած ես եարբի,
Կեանք մը անհուն շողի բոյրի ազօթքի,
Իակ Թէ կորնչի պիտի իմ հոգւոյ շունչ
Հոս մառախուղի մէջ համր անշշունչ,
Այժմէն Թո՛ղ որ շանթ մ՚բլլամ գոկհաղթ,
Պըլլտիմ անուանդ, մանչեմ անդադար,
Թո՛ղ անէծք մ՚բլլամ ու կողբդ խըրխմ,
Թող յորջորջեմ քեզ. «Աստուա՛ծ ոխերիմ»։

Մհ կը դողդոջի՛մ, սրժգոյն եմ ահգի՛ն,
Փըրփըրի նե՛րսըս գըժոխքի մ՚հանգոյն...։
Հառա՛չ մ՚եմ հնծող նոճիներու մէջ սեւ,
Թափելու մօտ չոր աշնան մէկ տերեւ...։
Մհ, կայծ տըւէք ինձ, կա՛յծ տըւէք, ապրիմ...։
Ի՞նչ, երազէ վերջ գըրկել ցուրտ շիրի՛մ...
Այս ճակատագիրն ի՞նչ սեւ է Աստուա՛ծ,
Արդեօք դամբանէ մրուրո՞վ է գըծուած...
Մհ, տըւէք հոգւոյս կրակի մի կաթիլ,
Սիրե՛լ կ՚ուզեմ դեռ ս՚ապրիլ ու ապրի՛լ
Երկնքի աստղեր, հոգւոյս մէջ ընկէ՛ք,
Կայծ տըւէք, կեանք՝ ձեր սիրահարին հէք
Գարուն ոչ մէկ վարդ ճակտիս գալկահար,
Մ՚չ երկնի շողերն ժըպիտ մ՚ինձ չե՛ն տար.
Գիշերն միշտ գազազ, աստղերը ջահեր,
Լուսինն յար կու լայ խուզարկէ վըհեր.
Կ՚ըլլան մարդիկ որ լացող մը չունին,
Անոր համար է որ նա գըրաւ այդ լուսին.
Եւ մահամերձն ալ կ՚ուզէ երկու բան.
Նախ կեա՛նքը, վերջը լացող մ՚իր վրան։

Ի զո՛ւր գրեցին աստղերն ինձի «ահ՛ը»,
Եւ ի զո՛ւր ուսոյց բուլբուլն ինձ «սիրել»,
Ի զո՛ւր սիւգեր «ահ՛ը» ինձ ներշնչեցին,
Եւ ցիս նորատի ցուցուց ջինջ ալին,
Ի զո՛ւր թաւուտքներ լըռեցին իմ շուրջ,
Գազանապահ տերեւք չաւին երբեք շունչ,
Որ չը խռովին երազքըս վսեմ,

Թոյլ տըւին որ միշտ ըղնէ երազեմ,
Եւ ի զո՛ւր ծագկունք փրթիթներ գարնան
Միշտ խնկարկեցին խոկմանցըս խորան...
Մհ, նոքա ամէնքը դիս ծաղրեր են...
Աստուածոյ ծաղրն է աշխարհ ալ արդէն...

128 ԷՅ ՃԱՆ ՀԱՅՐԵՆԻՔ

Իյ ճան հայրենի՛ք, ինչքան սիրուն ես,
Սարերդ կորած երկնի մամի մէջ,
Ձորերդ անո՛ւշ, հովերդ անուշ,
Մինակ պահէքդ արաւն-ծովի մէջ։

Քու հողին մեռնիմ, անգին հայրենիք,
Ախ, քիչ է թէ որ մի կեանքով մեռնիմ,
Երնեկ ունենամ հազար ու մի կեանք,
Հազար էլ սրտանց քեզ մատաղ անեմ։

Ու հազար կեանքով քու դարտին մեռնիմ,
Պահէքդ մատաղ, մատաղ քո սիրուն,
Մինակ մի կեանքը թող ինձի պահեմ,
Էն էլ քու փառքի գովքը երգելուն։

Ու արտուտի պէս վեր ու վեր ճախրեմ,
Նոր օրուայ ծեգիտ, ոսկի հայրենիք,
Ու անո՛ւշ երգեմ, բարձր ու դիլ գովեմ,
Կանանչ արեւդ, ազատ հայրենիք։

129 ԷՍ ՁԱՄԲԷՔԸ

Էս ճարէքը ոլոր ա
Վա՛յ լէ, լէ, լէ, լէ, լէ, լէ, լէ,
Ես քեզ տեսայ մոլորա,
Նա, նայ, նայ, նայ, նայ, նայ, նայ, նայ,

Մոլորիս մէկ ճար արա, վայ լէ....
Ինձ էլ քեզ ընկեր արա նա, նայ....

Ծառեր գուք ծիրան մինք տալ. վայ լէ...
Ձղներ, գուք էլ բար մի՛ք տալ նա...

Ես զարիք եմ, գոնաղ եմ, վայ լէ...
Դարգերս իրար մի՛ք տալ նա...

Սև փուշին վիզս եմ գցել, վայ լէ..
Կրակը սիրտս եմ լցել, նա...

Թամամ հինգ օր չեմ տեսել, վայ լէ ..
Իմ եարը միտս եմ գցել, նա...

130 ՇՈՒՇԱՆԻԿ

Լ՚ը հեռանաս քո մայրենի աշխարհից,
Կարօտ Թաղուս սերտ բարեկամք քեզանից,
Մեր ամենս մայր էիր գիմառատ,
Աւրգ հեռանաս մեզ մութ պատէ անիարատ։

Քո սուրբ ձեռօք մեր վերքերը շատ անգամ
Լուանայիր, գեղ գնէիր ամէն ժամ
Քո մազերից ոլորէիր վիրակապ,
Քո բոլոր կեանք ազգիդ համար էր անկապ։

Աւրդ հայոց զօրքն իւրեանց մօրից սրբանայ,
Վրաց ազգը քո խնամօք պերճանայ,
Հայաստանը գրկուի իր սուրբ Շուշանից,
Վրաստանը բուրէ հոտով քաղցրալից։

Ուր որ երթաս, ուր որ լինիս, Տիրուհի.
Մեր սիրտն, հոգին քեզ հետ տանիս. Մաքրուհի։
Դընաս բարեաւ., մեր լոյսը հաւատքն քեզ ընկեր,
Աչքն ու խաչը քեզ պահապան զոր գիշեր։

131 ՏԱՐԱԳԻՐ

Լինդ տատեղօք օտար ափանց
Տարագրելոյս չի՛ք բերկրանք.
Լքքեալ հոգւոյս, յոյս Հայրենեաց,
Դու ես միայն քափփանք։
Օտար տատղեր լոյս չունին,
Օտար երկիր ինձ մըթին։

Օտար բոյսեր գառն ու անհամ,
Ջրերը պղտոր ու լեղի,
Դաշտք. անապատք. հովիտք, արտեր,
Ու պարտէղներն անբերբի։
Օտար ծառեր շուք չունին,
Օտար ծաղիկք հոտ չունին։
Օտար երկիր երջանկաբեր՝
Ծանր այդ պայման ինձ համար.
Ջիւն ձըմեռ են իւր գարուններ,
Ջանիւ երբեք ինձ ամառ։
Օտար երկինք ամպոտ են,
Օտար սրբտեր անգութ են։

Թէև օտար չընչեմ ես օդ,
Յաւօք սահին իմ օրեր,
Ջեզ, Հայաստան սիրակարօտ
Սիրարս համայն քեզ նուէր։
Օտարութիւն փուշ ես դու,
Այլ հայրենիք, վարդ ես դու։

132 ՄՇԵՑՈՒ ՈՂԲԸ

Ընցաւ տարին, հայոցս էլ փառք ընցաւ հետ.
Դրախտի սարէն գարուն յետին բարեւ եւս.
Կարիճք առան զէնքերը. իջան տակ հողին,
Վա՛յ մեր դլխուն, սև մուր էկաւ էն օրին։
Հայու աչքեր թող մեզ լա՛ն,
Ա՛խ, մեզ լա՛ն, վա՛խ, մեզ լա՛ն։

Հայերս զերի եղանք բախտին անողոք,
Աստուած, հրեշտակ, մարդ չլսեց մեր բողոք.
Մըր լարերու ձէն ծածկըւաւ Տարնոյ տակ,
Մշու դաշտեր պահեն սրբոյս հառաչանքն։
Հայուս աչուդք թո՛ղ մեզ լա՛ն,
Ա՛խ, մեզ լա՛ն, վա՛խ, մեզ լա՛ն։

Մըր աշխարհի քակմուկ չէնքերու նեըքեւ
Նըստուկ մամ, պապ, ճժեր մնացին անարեւ,
Նօթի, տկլոզ, ա՛խ, չկայ տէր տիրական,
Անգութ քրդու զուլմին եղած ենք խուբապան։
Ղարիպ ախթերք թո՛ղ մեզ լա՛ն,
Ա՛խ, մեզ լա՛ն, վա՛խ, մեզ լա՛ն։

Մատաղ աղջիկ ու հարս հալաւ մի չունի,
Որ իր մարմին անօրէնին դէմ ծածկի.
Էնպէս դրած ձեռքերն ուխց ամբչկոտ,
Գութի, սիրոյ, ողորմութեան է կարօտ։
Հայ աղջիկներ թող մեզ լա՛ն,
Ա՛խ, մեզ լա՛ն, վա՛խ մեզ լա՛ն։

Կեցէ՛ք, Մշոյ դաշտի քամիք, քիչ մ'կեցէ՛ք,
Մըր ողբաձէն բարեւն՝ալ ձըր հետ տարէք.
Ու՛ երբ ընցնիք Սահմանադրութեան կամարից,
Հանկուց ըսէք զարիպ մըր հայ ախթերից.—
Մըր արտասուն սրբեն թող մըր աչվընուց,
Կ'անցնի տարին էլ չը լա՛նք, էլ չը լա՛նք։

133 ԻՂՋ ՊԱՆԴՈՒԽՏԻՆ

Թէ Թև ունէի
Ո՛հ, կը Թռչէի
Աղատ Մասեաց սարերն ի վեր ես ուժգին,
Անկէ ձեզ, Հայեր.
Կարգայի հրաւէր
Թեկնէք Հայեր, ըլլանք մէկ սիրտ մէկ մարմին,
Սիրեննք ընկեր զընկեր՝ սիրեննք կաթոգին
Թէ դեռ յիմ արիւն
Չի խառնուէր Թոյն.
Դեռ երակաց մէջ աշխոյժ խաղային
Ո՛հ քանի հրպարտ
Կանչէի ազատ.
Թեկնէք, Հայեր, ըլլանք մէկ սիրտ, ևն։

Թէ կեանք ունէի
Ո՛չ, կը լսէի
Թէ քընաթի բազդին Հայոց անկենդան
Որ նա Ձեզ խօսէր,
Ձե՛զ, պանդուխտ Հայեր.
Թեկէք, Հայեր բլլանք մէկ սիրտ, ձեռ
Թէ սեր բլլայի
Կամ անմահ հոգի,
Կը կապէի Հայոց սրտերն անմեկին.
Յայնժամ և նոքա
Մի որդիք Հայկայ
Կ'բլլան ի մի անշուշտ մէկ սիրտ մէկ մարմին.
Սիրենք ընկեր զընկեր, սիրենք կամձոլին

134 ԵՐԳ

Թէ իմ ալեւոր հերքս սեւնային,
Այժմ ինձ հետ գար, կըսրճէ գառնային.
Նըժոյգ ձի նըստած, պեխերս պորած,
Ձեռքս Թուր առած ես գաշտ կ'երթայի,
Ես գաշտ կ'երթայի, գաշտ Ասարայի,
Ոգոած, ցոգած Հայոց արիւնով.
Ա զգ իմ սիրական, դու ազգ Թորգոմեան,
Քու կորցրած Թագը քեզ կետ կուտայի,
Կ'տաէի Հայոց օրիորդներին.
Ծախեցէ՛ք Հագի ձեր Թանգ չորերը,
Թոզէ՛ք պատռուճանք, զարդ մարգարիտներ,
Ժանգոտած ու գուլ են մեր Թըրերը,

Տուէ՛ք բնհգեայ մեզ ձեր չապիկը.
Որ մենք փոխանակ մեր մարմնոյ վերջը,
Վիրակապ հիւսէք գուք ձեր մազերից.
Այսպէս յայտնեցէք գուք մեզ ձեր սէրը

Թէ ես լինէի հարուստ մեծատուն
Արնատուկներբս լի ոսկով արծաթով.
Շատերի նման ես չէի լինէր,
Երբէք ազգասէր ունայն խօսքերով

Շանըսանէս գինու, սիմոս խաչին տակ
Կ'տանուի տատա գնուակ ու փոռօզ,
Արձակ համարձակ կ'երթայի հանգէպ,
Հայատեաց ազգին անհին գօրքերով

Թէ ես լինէի մի երկրի իշխան,
Կուտայի գօրքս սատուկ հրաման,
Շուշաքայլ երթայ դէպ ի Հայաստան,
Խեղճուկ Հայ ազգէն լինիլ օգնական

Բայց՝ եթէ մի օր, մի ժամ, մի րոպէ.
Ազատած լինէի մեր հոգազբնդէն,
Ինչ սուր սրլաքներ պիտի շուռ տայի,
Մեր արիւնարբու Թըշնամիաց գլխներն

Նենք՝ վատ ու մոխ, Պարսիկ սխերիմ,
Դարաւոր ոսոխ գու ցոյն կրօնամոլ.
Գիտցի՛ր որ իմ այն երկսայի սրեց,
Անմաս չեն մնալ ոչ մի ձեր օրգին

135 ՏԵՍԻԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ

Թէ ինձ Հայրենեաց քնար ազաւոր
Հնձէ ախթագին՝ իմ հոգիս է այն.
Թէ նորա բնկերկ թելեր վշտաւոր
Խօսի ողբածայն՝ իմ սրտիկս է այն:
Թէ հայ մանւոյին սրտատուչ նուագ
Դեռ կ'եղերգէ՝ հառաչանքս է այն,
Թէ Հայաստանի սեւ բազդին հազագ
Լայ ազնկատը՝ հեծեծանքս է այն.
Թէ ինձ Հայրենեաց կիսամեռիկ շունչ
Դեռ բոլ տխուր՝ իմ ոդերս է այն.
Թէ լռիկ ծնկիկ հնձէ անշշուկնչ,
Ո՛հ անկարելիը իմ լալքս է այն:
Եւ Հայկայ փառաց յաժար ոդերգուն
Հարազատ լոյսդն իմ ձայնիկս է այն.
Զորս հազար տարուան պարծանաց գարուն,
Աբձագանգ տուող՝ ազգակից է այն:
Իմ Հայաստանիս ցաւերուն հառաչ
Ահա այս մաշած՝ իմ կուրծքըս է այն.
Սեւ սեւ թերթերուն էջ սրտակտոր
Արտասուօք զրուած իմ ազիքս է այն:
Թէ բանաս կարդաս արիւնոտ գաշուր
Վարդագոյն ներկուած՝ իմ կոզիրս է այն.
Թ'աչքէ անցընես չամփրած նիշակներ
Մահահոտ ցցուած՝ իմ թիկունքս է այն:
Թէ Հայկ և Արամ վահան վարդաններ
Ինկած տեսանես՝ իմ ուժըս է այն.
Թէ զէնք, թէ զրահ թէ սուր թէ տեսիլ
Փշրած կտորած՝ ոսկրներս է այն.
Թէ արեամբ ներկեն ափսնք նզեմին
Նշխար քաջերուն՝ իմ բիբերս է այն:
Թէ քաղցր ու անբիծ ալիք նեբտաին
Լեղի են գարձեր՝ արտասուքս է այն:

Թէ վճիտ գետերն, ազբերքն արծաթի
Լռիկ առուակին՝ երակներս է այն,
Թէ Տիգրիս, Ցոհան, Փիսան մանչեն՝
Թէ պղտոր գնան՝ իմ արիւնս է այն:

Թէ սառնամանիք ձմրան բքաբեր
Ձեռներն է պատեր՝ իմ գագաթս է այն.
Եւ քաղցրիկ գեփիւռն, անուշակ հովեր
Յրտագին փչեն՝ զիմ նշիկս է այն:

Թէ փոակ փոակ ցօղէ գյիշատակ
Զայս սրտմաղսատակ. աչքերըս է այն.
Թէ սրտաձայնիկ երգէ գՀայաստան,
Կանչէ գՀայաստան՝ անկեղծ սէրս է այն:

Թէ մշին խորշերն ու ձորեր լանն,
Ալերով ծածկեն մանուտանս՝ է այն.
Թէ ոդը կը կարգան վայրէն եգեմին,
Ճնշած լերգերուս՝ արձագանգն է այն:

Եւ Հայաստանիս հոգերը ախտիս՝
Պինդ սերով գրկոգն՝ իմ ձեռքերս է այն.
Թէ կը համբուրեն կամիոգին սրտիս՝
Ո՛հ, մայրակարօտ շրթունքներս է այն:

Եւ կիսակործան տաճարն Հայրենի
Ալ սուգ է պատեր՝ տարտաւրս է այն.
Ուր շիջելուան կանթեղ դեռ հիւծէ
Նուազ առ նուազ՝ իմ յոյսըս է այն:

Ուր տխուր նստեր, մազերն են ծածկեր
Իւր սեւ ակ աչքեր՝ սերակոնս է այն.
Ձեռքերն ի ծնկաս, կռնակն ի հոգեր
Յուսով կոխերներ՝ գերեզմանս է այն:

Ու երբ տեսնեմ զիմ հէգն Հայաստան,
Ի մէջ իւր փառաց՝ իմ բազձանքս է այն
Յայնժամ ես'ղ մեռնիմ չիւր ծոց մայրական
Զիմ վերջին շնչոյս մխակ ուխտս է այն:

136 ԳՈՂՔՆԻ ՔՆԱՐՔ

Թէ Հայրենեաց պահակիը
Գողթնի քնարք լռեր են,
Երկնից Թոզ գան անմահ Հոգիք
Հայոց քաջիր պահկիր։

Մահեաց գազաթն Թոզ գան բազմին
Երկնից գունդ գունդ հրեշտակներ.
Ատուած իջեր ի Հայաստան
Հայոց արիւնն հոտոտել։

Փախէք, ամպեր, Շաւարշանէն,
Ալ մի ցօղէք ձեր ցօղեր.
Շաւարշանը ոռոգուած է
Հայոց քաջաց արիւնէն։

Եւ կը ծլին ու կը ծաղկին
Այս գաշտին մէջ ո՛չ խոտ, վարդ.
Այլ Վարդանայ ինկած երկիր
Պիտի ծաղկի սուրբ հաւատ։

Բանգակագործ քաջ Եղիշէն
Դրիչ ի ձեռին գայ Կիրառոյ.
Զափէ, ձևէ, գրչէ, գրօշմէ
Կեանք, մահ, հաւատք Վարդանայ։

Ո՛հ, Վարդանայ անուան արժան
Մտիս կանգնի համարձան.
Մենաստաններ, խոյն ի գմբէթ,
Աչեաւբան, սուրբ հաւատ։

Շապէ, արեւ, քոյդ ճառագայթ
Խազաւաց լեռնէն, մութ խորչեր.
Այնտեղ ինկաւ քաջ Համայեակ,
Այնտեղ պահկեր նահատակ։

Լուսին, լուսին, աչօքդ անքուն
Պահէ Հայոց ոսկորներ
Եւ Մայիսի ըղաւրթ ցօղով
Ցօղէ անոնց շիրիմներ։

Արծուիք, բազէք Հայաստանի
Եւ արագիլք, անբան հիւր,
Դուք հակեցէք այս աշխարհին,
Ժառանգեցէք Հայոց տուն։

Մոխիրներու վրայ նըստէք,
Աչերակներ շինէք բոյն.
Եւ ծիծեռնակ գայ ու երթայ,
Մինչեւ Հայոց գայ գարուն։



137 ԹԷ ՏԱՅԻՆ ԻՆԾԻ

Թէ տային ինձի
Թագ և ադամանդ գաւազան,
Ինդ գային ձօնէի
Թագուհեաց գըլխոյ Հայաստան։
Թէ տային ինձի
Ծիրանի շողշող պատմուճան,
Ես լուս ձըգէի
Ո՛վ իմ մայր թշուառ Հայաստան։

Թէ տային ինձի
Հաւր, ըզ իմ աւուրց պարմանեան,
Ինձ պարգեւէի՝
Զաւիւն իմ և խանգ, Հայաստան,
Թէ տային ինձի
Դարուց հոյլ ի հոյլ շրջեան,
Սիրով քեզ տայի՝
Իմ կեանքն ու հոգին, Հայաստան,
Թէ տային ինձի
Սիրա և աչք կուսի շուշան,
Ես քեզ ընտրէի՝
Սրբոխս միակ սէր Հայաստան,
Թէ տային ինձի
Պրսակ յիմ ճակատ մարդարտեան,
Զաչքիդ ընտրէի
Արտասուաց մի չիթ, Հայաստան,
Թէ տային ինձի
Գառ ազատութիւն անահման,
Ես վերընտրէի՝
Քո վիհ դերութիւն, Հայաստան,
Թէ տային ինձի
Հայրենիք՝ շրջեզ եւրոպան,
Ես քեզ ինդրէի՝
Բոլոր ցաւերովդ, Հայաստան,
Թէ տային ինձի
Սրբոխս իմ ընտրել օրհնեան,
Զաւէ՛րդ ասէի
Ինձ արքայութիւն Հայաստան։

Թէ տային ինձի
Հրեշտակի քընար ոսկեզեան,
Ես քո՞զ կ՚երգէի
Բոլոր իմ շընչով, Հայաստան։

138 ՎՏԱՐԱՆԴԻՆ

Թէպէտ վըտար քաղքէ քաղաք կամ թափառ,
Բաղդն ու մարդիկ զիս հալածեն անդիմարար,
Այլ արդէն իսկ Ազատութեան երբ վիհ ձայն
Թըռաւ բերնէս, յանձն առի զայս վիշտս հաճոյն
Ազատութեան ես անձնուէր,
Վիշտս, ցաւ սիրով եմ յանձն առեր.
Թէպէտ հեռի եմ սիրելեաց զիրկերէն,
Հեռի անոնց գաղտրիկ ձայնէն, երգերէն,
Տըխուր քնարս նոճիներէն վար կախած՝
Լըսիկ ոգւոյս խեղճ Ազգիս բազդն մըտայած,
Ազատութեան ես անձնուէր, եմ
Թէպէտ յաչացս գառըն հաւեն արտասուք,
Յայտնել սըրտիս կարօտն ու սուգ և պաղատք.
Այդ արտասուք սրբոխս վերքերն լուանան.
Վէրքեր, զորոնք Ազգիս ցաւերն հան բանան,
Ազատութեան ես անձնուէր, եմ
Վտարանդի, թէպէտ գառն են այս օրեր,
Օր մ՚ալ տեսնես նպատակիդ ես հասեր.
Ազատութեան յաղթանակը քո ձեռիդ՝
Վարդն ու շուշան սրբոխ պըճնել գան ճակտիդ,
Ազատութեան ես անձնուէր. եմ

139 ՖԷՏԱ

Թխիլ, փոքան մութ գիշերին
Պըտուտամ էր ֆէտային,
Փամփուշտները խաչկապ կցած
Հրացաններ ուսերին։

Ախ, ֆէտայիներ, չան ֆէտայիներ,
Ձեր մայրեր ձեզի դուքան,
Մշու Սուլթան Սալը Կարապետ
Ձեզի լինի օգնական։

Ախ ֆէտայիներ, չան ֆէտայիներ,
Ձեզ հետ տարէք իմ տղէն,
Ձեզ հետ տարի, ձեզ հետ մեռնի,
Ազգին մատաղ իմ տղէն։

Թիկունքըդ լայն, թեւերդ պինդ,
Թեւերդ պինդ պղպատից,
Սիրել գիտես, կռուիլ չգիտես,
Դու հակայ երիտասարդ։

Քայրդ տանում են քիւրտերը,
Հօրդ սրինն են ծծում,
Քու եղբայրն էլ կռուի գաշտում
Կատորում է թշնամուն։

Դաշտը թողե՛ր այսօր ու մտճ
Իմ մէկ ու ճար, ազիզ լաճ,
Մի քիչ խաղայ հրացանի հետ,
Որ էլ չտանէ քու բախ խաբճ։

Վէրքերով լի չան ֆէտայ եմ,
Կը թափառի՛մ, տուն չունիմ,
Եարիս փոխան զէնքս եմ գրկել,
Դիշերները քուն չունիմ։

140 ՍԱՍՈՒՆ

Թշնամական զոռ վաշտերը կատաղի
Պաշարեցին մեր լեռները սոսկալի։

Մի՛ վհատիր քաջ Սասուն,
Քեզ համար չէ նորութիւն.
Մեր պապերից սորվել ենք
Մեռնել քաջամարտի պէս,
Որ մեզ Թոզին յիշատակ։

Շէնիկ, Սէմալ պաշարուած են քուրդերով,
Տալորիկի անցքն է փակուել թիւրքերով։

Զքեզ տեսնեմ, քաջ Մուրատ,
Սուրդ շարժիր անվհատ.
Մեր հեռաւոր եղբայրներ,
Ձեն կենաք միշտ անտարբեր
Շուտով կըգան օգնութեան։

Թնդանօթի դէմ գրել ենք քաջ ոգով,
Սոսի դիմագրել ենք կամով, բանջարով։

Ի սէր Աստուծու, դժուար է
Հպատակիլ օտարին,
Լաւ է մեռնել առանց հացի,
Քան յանձնուիլ ոսխին,
Անգութ և անաստուածին։

Հայ աղջիկներ, սուէք վառօթ ու կապար
Լըցէք գաւառի փամփուշտները չարաչար,
Իսկ դուք, կանայք անմեռա,
Ասէք սուր և հրացան,
Խրախուսեցէք հայ քաջերը,
Ազատենք մեր հայրենիք
Ձեր կանացի արիւնով։

141 ՎՐԷԺ

Թո՛ղ կորնչին բռնապետներ
Հայաստանի սուրբ հողէն
Բռնակալի անարգ լուծը
Ջնջուի հայաստանէն։
Ցաւ է սրբան նոքա
Հայու արիւն ծծերին,
Հայու ջանքով աշխատանքով
Պետութիւն պաշտպաններին
Հայու հացը, հայու փողը
Մինչեւ ե՞րբ վատերը ուտեն,
Իր գաբշելի պիղծ բերանով
Հայութիւնը անարգեն։
Վրիժուց կայծակ Թող բորբոքի
Հայ սուիծներուն սրտում,
Թաղել Թշնամոյն գլուխը
Դիւցազուններուն ներքում։
Սուրով սուրի դէմ մարտնչիլ,
Արեան դէմ արիւն հանել,
Իր մէկ հատը զոհացողին,
Ամբողջ ազգը թալանել։

Աչքերու տեղ աչքեր հանել
Ատամի տեղ ատամներ,
Միակ հարուածի փոխարէն
Ամբողջ ազգը կոտորել։
Այս անօրէն անխիղճ գարուամ
Աչերց վերայ յոյս դնել,
Նշանակում է յաւիտեան
Կեանքիցը հրաժարուիլ։

142 ՄՈՒՇ

Թո՛ղ երգէ բլբլուլ, Մշու գաշտերում
Թո՛ղ վարգեր բացուին Սասնոյ լեռներում,
Թո՛ղ մեր Թըշնամիք սարսեն սարսափեն—
Գազան ոսխներ ճաքեն, տրաքուեն
Մշու գաշտեր ծաղկունքով բացուած,
Հայու սերունդը կը պահէ Ատուած,
Ինչքան որ կ'ուզեն Թշնամիք Թող գան,
Սասնոյ լեռներէն ինչ պիտի ատանան
Ինչո՞ւ չը ծագիկ ծաղիկն անխնայ,
Այդ դշնամուցը ո՞վ կը վախենայ
Թող Հայ աղջիկը երգէ վառվռուն,
Սուր զէնքը ձեռին՝ չարդ տայ քիւրտերուն...

143 ՀԱՅՈՒՆ ՅՈՅՍԸ

Թող փչէ քամին պաղ պաղ երեսիս,
Վերէն ամպերէն սառուկ ձիւն թո՛ղ գայ.
Մրբան որ կ'ուզէ՝ Թող փչէ հիւսիս,
Ցաւալով եմ, վաղ-ուշ գարունը պիտ գայ։

Թախիծը Թող պատէ երկինքը պայծառ,
Թանձր մաքախուղ երկիր Թող փակէ.
Տարերք աչխարհիս խառնուին իրար.
Յուսով եմ վաղուշ արեւ պիտ՝ ծագէ։

Թո՛ղ գայ փորձութիւն Թո՛ղ գայ հոյածանք.
Խաւար Թող գառնայ անդադար լոյսը,
Մարտիրոսի չէն Հային տառապանք
Մխայն . . . չի հատներ խեղճուկի յոյսը։

144 ՄՈՒՇ

Թո՛ղ պղպջալ չերգէ Մշոյ գաշտերում,
Թո՛ղ երգ չհնչէ Սանոյ լեռներում.
Թո՛ղ ժպիտ չը գայ Հայերուս դէմքին,
Թո՛ղ Թախիծ տիրէ Հայերուս սրտին։

Հայի ձեռքեր արիւնով ներկուած,
Հայոց սրտեր վշտով է պատած.
Ալ ինչո՞ւ ծագկի քաղցրահոտ շուշան,
Հայոց եգեղի գաշտում աննման։

Քանի՛ հայ աղջիկ չէ զարգարելու,
Ծագկով իր կուրծք չքեղ պճնելու.
Թո՛ղ երգ չհնչէ Մշոյ գաշտերում,
Թո՛ղ պղպջալ չերգէ Սանոյ լեռներում։

145 ԵՐԳ ՍԻՐՈՅ

Բախիր իմ սէր սրբոյ խորքից
Գնա փնտռէ սիրուհիս
Նրբա քնքուշ սրտի խորքում
Դիր կրակը իմ սիրուհուս։

Կամիմ աչխոյժ աչքերից,
Թռէք չանթող ոլաքներ
Շանթէք կուրծքը իմ սիրուհուս,
Բացէք սիրոյ նոր վէրքեր։
Եւ նա կ'ըղդոյ այն ժամանակ,
Թէ ինչ է իմ տանջանքս
Օր ու գիշեր ժամանակ.
Մաչվում է իմ խեղճ կեանքս։
Այն ժամանակ էլ դու անխիղճ,
Իմ վիճակիս կը խղճաս
Թէ ինչ տղի գառն արցունքներ,
Թափել եմ ես անպատճառ։

146 ԱՆՄԱՀ ԳԱԼՈՒՍՏԻ ԵՒ ՅԱՓԷԹԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Փանոս անուրը բանուոր,
Ազատութեան խիզախ քոյր
Շղթայած էր օրէ օր
Իր լարին տակ մուխի, անփայլ։

Կառավարտին հատուս սուր,
Փորձեց փշրել ամէն յոյս
Իսկային, բայց ի զո՛ւր,
Որ փայլակէր գերի վառ լոյս։

Ջոյդ հերոսներ անդաժան,
Յաւի գինուոր, վշտի ծով,
Փշրեցին այդ սև շղթան
Իրենց կարմիր արիւնով։

Սուբ տապարին տակ ՅԱՐԼԻԹ
Անվախ, խրոխտ, անընդհատ
Կոչեց, «Կեցցէ՛ նա յաւէտ,
Դիտէ մնանել անվտանգ»
Իրենց կեանքէն յիշատակ,
Մնաց անշուք գերեզման,
Լացող ուռւդն կուրծքին տակ,
Իրրեւ կտակ հայութեան։

147 ԵՂԲԱՅՐ ԵՆՔ ՄԵՆՔ

Ի բիւր ձայներ ընութեան շքեղ
Թէ երգք Թրքին սիրոգարար,
Մատուռնք կուսին ամենագեղ
Թէ որ զարնեն փափուկ քրնար,
Զուներն ձայն մը այնքան սիրուն
Քան զանձկալի եղբայր անուն։

Ծո՛ւր լինձ քու ձեռք, եղբայր ենք մենք
Որ մըրըրկաւ էինք զատուած,
Բազդին ամեն սև չարաճնիգ
Ի մի համբոյր ցրուին ի բաց
Ընդ ատեղօք ինչ կայ սիրուն
Քան զանձկալի եղբայր անուն։

Երբ պիւռը մայր Հայաստան,
Տեսնէ զորդիս իր քովէ քով,
Սրբոյն խորունկ վիրքըն դաժան
Բազդը արատաւած բուժին ցօղով
Ընդ ատեղօք ինչ կայ սիրուն
Քան զանձկալի եղբայր անուն։

Մէկտեղ լացինք մենք ի հընուտ
Եկէ՛ք գոթձեալ յար անբաժան
Խառնենք զարտօսր և բզխնդուտ,
Որ բազմածնունդ ըլլայ մեր ջան.
Ընդ ատեղօք ինչ կայ սիրուն
Քան զանձկալի եղբայր անուն։
Մէկտեղ յոգնինք մէկտեղ ցաւնինք,
Մէկտեղ թափինք մեր քրտինքներ,
Ըզհանձ բարեաց յերկինս հանենք,
Որ կեանք առնուն հայոց գաշտեր։
Ընդ ատեղօք ինչ կայ սիրուն
Քան զանձկալի եղբայր անուն։

148 ԱՆԴՐԱՆԻԿԻՆ

Իրրեւ արծիւ սատառնում ես լեռ ու ժայռ
Թռնգացնում ես երկինք գետինք անչափաւ,
Քաջ անունդ պիտի յիշուի դար ե դար.
Հըսկայ լերինք քեզ ապաստան, Անդրանի՛կ։
Թշնամիներ երբ լըսեն քու անունը,
Օձերի պէս պիտի սողան խրեանց բունը.
Ելա կներիդ ապնիւ քաջի արիւնը
Ջը ցամաքի մընչ յաւիտեան, Անդրանի՛կ։
Հայոց կանանք դափնեայ քրտակ Թո՛ղ հիւսեն,
Քնքոյշ ձեռամբ քու ճակատը պըսակեն.
Անվախ կռիվդ գոհարներով զարդարեն,
Կեցցե՛ս յաւետ դու անատաւ, Անդրանի՛կ։
Հայաստանի սովակներք քեզ համար
Փող դայլայլեն գիշեր ցորեկ անդադար.
Անյաղթ մինաս դափնիներդիդ անհամար,
Մ՛ վ քոչ հերոս հայրենիքի, Անդրանի՛կ։

149 ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆ

Ի գաշտ մարտի կայք կանգուն
Ձանք ըրէք, գուք, Ձանք ըրէք,
Կը գործենք քաջ յաղթութիւն
Ձանք, Ձանք, Ձանք ըրէք։
Մինչ արև կայ ի յերկին,
Ձանք ըրէք, գուք, Ձանք ըրէք,
Փութով կատայ ցայդ մըթին,
Ձանք, Ձանք, Ձանք ըրէք։
Ժիրին համար չկայ արդելք
Ձանք ըրէք, գուք, Ձանք ըրէք
Այլ միայն քաղցրիկ վայելք,
Ձանք, Ձանք, Ձանք ըրէք։
Թող գուք չանցնին այս ժամեր
Ձանք, ըրէք, գուք, Ձանք ըրէք։
Կրնանք վայել միշտ ի վեր
Ձանք, Ձանք, Ձանք ըրէք
Կատայ ձգմեռ մեր կեանց,
Ձանք ըրէք, գուք, Ձանք ըրէք
Ժիրին հանդիսան է անանց,
Ձանք, Ձանք, Ձանք ըրէք։
Թող գուք չանցնին այս ժամեր
Ձանք ըրէք, գուք, Ձանք ըրէք,
Մանկական այս առըք օրեր,
Ձանք, Ձանք, Ձանք ըրէք,
Աղատութիւնն է նեկտար,
Ձանք ըրէք, գուք, Ձանք ըրէք
Անմահութեան զեկտար,
Ձանք, Ձանք, Ձանք ըրէք,

156 ԱՐՁԱԳԱՆՔ ՀԱՅԱՍՏԱՆԻ

Ի զէն Հայեր, ի՛ւր, և հրացան,
Տաճկա-Հայաստանից կուչում է մի ձայն,
Լեռից լեռ թնդում է ահեղ հրաման,
Թռէք Հայեր, Թռէք դէպի Հայաստան։

Արեւելք, արեւմուտք, հարաւ և հիւսիս
Դղրդաց ու թնդաց քաղցր աւետիս
Հայկայ քաջ զաւակաց առոյգ կուրծքերից
Ազատութիւն հնչեց ամեն կողմերից։

Տաճկա-Հայաստանը ոտքի է կանգնում,
Ահեղ ծարոց վրէժ, վրէժ է գոչում.
Արիւնով ներկուած են բոլոր դաշտերը։
Արիւնով ներկուած են բոլոր գետերը։

Թշնամին զարհուրած փախուստ է դիմած,
Անթիւ աւար ու գանձ Հայերին թողած,
Յաղթութի՛ւն, յաղթութի՛ւն գոչեց մխիթարն,
Թշնամին յաղթուած է. կեցցէ՛ Հայաստան։

151 ՇՂԹԱՅԱԿԱՊ ՀԱՅ

Ի զո՛ւր են ի զո՛ւր բըռնաւոր,
Ըսպառնալիք քո ամենայն,
Ո՛չ քո չղթայք չեն զօրաւոր
Յընկճել զոգիս մեր Հայկական։
Ըզմարմին միայն զայս մարմին
Կարես գերել՝ քեզ ի նախատ.
Սակայն ոգիք մեր երկնային՝
Սիրուք Հայկազանց են միշտ ազա՛տ։

Ազատ են, ազատ մեր լեզուն,
Մաղթել բոլոր Աբգարեանին,
Ի գլուխ ձեր ա՛յլ աբեղնարքուն՝
Որ աւրէն բղխայատանն
Ի գաժոխս ահեղին թշնամիէն,
Անհետացին մինչ յաւիտեան,
Կէ՛ջէ՛ անմահ մեռա Հայաստանն։

152 ՀԱՌԱՋԱՆՔ

Իմ անուշիկ մայրիկս
Կանչէ ինձ գալ քովիկս
Տամ իմ վերջին համբոյրս
Կանչում է հայրենիքս։
Գնում եմ կռուելու
Օգնելու, յաղթելու յոյսով
Դէմ դնել քաջի պէս թշնամուն
Փրկել հայրենիքս։
Բացուել է ասր Գրօշակ
Գնանք մանենք նրա տակ
Աերոր փաչային նմանակ
Լինինք ապնիւ նահատակ։
Ուխտել եմ զինուել եմ, անձնուէր
Քաջի պէս կռուել
Ազատ Թեան գրօշներով
Փրկել խեղճ հայրենիքս։
Այնտեղ Ռուսն է մեզ սանջում
Այստեղ Թուրքն է մեզ մորթում.

Համարում են մեզ մրջին
Ինչ որ մեզ Թանկագին է
Մեր ձեռքից են խլում,
Գնում եմ ևն,
Ուխտել եմ ևն։

153 ՀԱՅՐԵՆԻՔ

Իմ հայրենիք զիս կը կանչէ,
Հեռու եմ Հայաստանէն.
Հայու սրտն կը վայելէ
Հեռանալ Հայաստանէն։

Միմէ սրծաթ, ոսկի, գոհար
Կ'ըսխփէ Հայաստանը,
Այն որ կ'ողջոյ սրգուց համար՝
Խըղճալի Հայաստանը։

Խոր տըխրաթեան մէջ է Թագուհը
Թագուհի Հայաստանը,
Բոպիկ ոտքով սրձակ մազով
Կ'արտասուէ Հայաստանը։

Անգութ երկինք ա՛լ չը յիշեր,
Մոռցեր է Հայաստանը,
Անտիրտ Հայերն ալ չեն յիշեր
Անուշիկ Հայաստանը։

Ո՛հ Թողէք զիս խօրխմ ազատ,
Երգեմ միշտ Հայաստանը,

Անուշ երկիր, կոյս անարատ,
Անհման Հայաստանիդ

Արեւ ծածկէը է իր դէմքը,
Խաւար է Հայաստանը,
Հայոց արեւն ալ մարեր է.
Ան հազեր է Հայաստանիդ

Թշուառ սրբոյս ձայն կը կրկնէ,
Ողբալով Հայաստանը,
Ո՜հ, չիկայ հայ որ ըսփոփէ
Նահապետ Հայաստանիդ

Մինչեւ կարի իմ վերջին շունչս,
Պիտի կանչեմ Հայաստանը,
Պըլլուխիմ մէյ ’իմ Հայրենեացս
Հապա մանեմ գերեզմանիդ

Անդորրութիւն ես կը խնդրեմ
Սիրելի Հայաստանին,
Կարել այս ձայնս չէ՛ չէ՛ կարող
Մսակումը գերեզմանին։

154 ՎԱՐԴԱՆ

Իմ Հայրենեաց հոգի վարդան.
Հոգիս հոգւոյդ եղնի զոհըման,
Որ Տըղմատի ափերի քով
Վահճաներ հազար կարիճներով,
Ջարկիր, զարկուր, ինկար՝ քաջ՝ քաջ,
Պարսիկ սիւնած ի ձախ ու յաջ։

Իմ Հայրենեաց արեւ վարդան,
Արեւս ար՛ուագ եղնի զոհըման։

Աւետարան ու խաչ առիր,
Տարիր երկինք բարձրացուցիր,
Եւ գան ալ խեթ Թոզիր գացիր.
Անուշ արեւդ հոգին առիր,
Որ Հայրենեաց չոգայ արեւ
Շաւարշանայ գաշտին վերեւ։
Իմ Հայրենեաց արեւ վարդան
Արեւս ար՛ուագ եղնի զոհըման։

Արիւնդ կարմիր կարմիր Թափուաւ,
Փաչուաւ ծաղիկ ներկուեցաւ.
Լուսնակն եղաւ ամպի տակից,
Պաղ պաղ Թափեց ցօղիկն յաչից
Որ Հայրենեաց վարդեր բացուին,
Պլպուլն երգէ դրախտի սարին։
Իմ Հայրենեաց արեւ վարդան
Արեւս ար՛ուագ եղնի զոհըման։

155 ԻՄ ՁԻՆԱՐԻ ԵԱՐԸ

Արեւ Թովելով եղաւ, իմ չանարի եարը
Մեր բանն կատաւ եղաւ դարտիման եարը։
Թշնամու որդին մեռնի, իմ չինարի եարը
Իրա չար սրտով եղաւ, դարտիման եարը։
Իմ չինարի եարը, իմ չինարի եարը։
Իմ չինարի եարը, գովական եարը։

Ճրագը վառայ, վառայ իմ չինարի եարը
Հօր հետ վատ մարդ դառնայ դարդիման եարը՝
Մեր ու ազգեր Թող տուի իմ չինարի եարը
Ես իմ սիրածին վառայ դարդիման եարը՝
Քարափի ծերն կանանչի, իմ չինարի եարը
Թող Թշնամին ամաչի, դարդիման եարը՝
Արեւիդ մնանիմ եար ճան, իմ չինարի եարը
Չինարի պէս կանանչի դարդիման եարը՝

156 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՒԳԸ

Իմ սիրելի զաւակներըս
Կը Թափառին օտար աշխարհ.
Ես ո՞ւր գիմեմ, ո՞ւր փնտռեմ,
Կը ծառայեն այլոց խնամքի՝
Եկա՛յք, որգեակներք իմ,
Ձեր մօրն այցելութեան՝

Դարեր անցան, լուր մը չառի
Իմ քաջերըս մեռան, կորան,
Կուլամ, արիւնըս կը սառի...
Մէկը չունիմ տայ ինձ գարմանի՝
Եկա՛յք, ևն.

Աբիւնս ցամքած, սիրտս մաշած,
Գէմքս է տխուր մինչ յաւիտեան
Եւ կարօտով իմ որգեկաց,
Պիտի իջնեմ սեւ գերեզման,
Եկա՛յք, ևն.

Եւ գու, հովիւ Թափառական,
Կ'երգես տրխուր ի մէջ հովտաց,
Ե՛կ, արտասուենք Թանկ կորըսեան,
Տըխուր մահուան մեր որդեկաց,
Եկա՛յք, ևն.՝
Իսկ գու կշտանիկ իմ հայրենեաց,
Գընա՛ հեռու աչքէս ի բաց...
Ցեղին ազգայնս տար գաւակաց,
Չի կեանքիս մէջ յոյս է մեռած՝
Եկա՛յք, ևն.

157 Ի՞ՆՉ Կ'ԸՍԵՆ

Ինձի կ'ըսեն.— «Ինչո՞ւ լաւ ես.»—
Ո՛հ, մէյմէկ բառ կամ խօսք տնի՞
Աբշարոյը՝ որ կը բռնկի,
Չի անհետն է այն ալ ինձ պէս՝
Ինձի կ'ըսեն.— «Մխիթար ես.»
Ինչպէս չըլլամ. մէկիկ մէկիկ
Թօթափեցան գրկուս սատղիկք,
Աբշարոյս մը չանցաւ սրտէս՝
Ինձի կ'ըսեն.— «Կրակոտ չես,
Լրճակի մը պէս ես մեռած,
Դակհասը՝ դէմքդ ու հայեցո ած՝»—
Ո՛հ, յաւտակն եմ իմ փրփուրներս՝
Ես ինձ կ'ըսեմ.— Ժամդ է հասեր,
Քու երկրորդ սեւ մօրդ գընա՛ պոպ,
Գերեզմանն հոն գանես գու գոգ,
Վարդեր՝ Թրթռուտ Թռիչ ու սատղեր՝

158 ԷԳՈՒՑ

Ինձ մի տանչել, մի չարչարել, սիրական,
Լոկ խոստմունքդ իմ սրտին չեն բաւական.
Բոց աչքերդ ու շուրթներդ վարդանման,
Երջանկութիւն խոստանում են յաւիտեան։

Քեզ տեսնելիս, ա՛խ, մոլորում է միտքս,
Ուժգին ուժգին թափ է տալիս վառ սիրտս,
Մէկ ջերմջերմ, մէկ սառ վազում է քիրտս,
Ջօրութիւնս հատաւ ինձնից, սիրական։

Էգուց, էգուց լրաւ եմ քո բերանից,
Յոյսս հատաւ, հատաւ էսքան խափուկից
Քունս փախաւ, փախաւ իսպառ ինձանից,
Դէ՞ւ ես դու չար, թէ հրեշտակ է՞ս աննման։

Էլ մի՛ խաբիր ու մի՛ խաբուիր, անձկալիս,
Էգուցները միշտ նման չեն յետ դալիս.
Վա՛յ թէ էգուց ապի սրտունք թափելիս,
Դու ինձ ճամբէս դէպի մ՚թին դերեզման։

159 ԻՆՁ ՄԻ՛ ԽՆԴՐԻ

Ինձ մի խնդրի, ես չեմ երգի—
Տխրութիւնս է ահագին.
Ադէկըտաւը նորա ձայնից
Կը խորտակուի քո հոգին։
Ո՛չ, քեզ համար այդպիսի երգ
Երգելու չեմ ես երբեք։

Ես երգեցի սարի վրայ,
Ուր չորացան խոտ ու վարդ.
Անապատ է այնտեղ հիմա,
Սև, ամայի անապատ,
Հառաչանքից այրւած սրբտում
Էլ ծաղիկ չի գալարւում։

Բաւր եւ զեփիւռ ես կ՚ուզէի,
Եւ արշալոյս ոսկեվառ.
Որ մի պայծառ երգ հիւսէի
Ու երգէի քեզ համար։
Բայց իմ սիրտը բրնտած են դեռ
Հուր, հառաչանք, սեւ գիշեր։

160 ԻՆՁ ՀԱՄԱՐ ՉԷ

Ինձ համար չէ՛ գարնան գալը,
Ինձ համար չէ՛ ծառի ծաղկիլը,
Ուրախութեան աշրտի գլրդիւնը,
Ո՛չ մի բերկրանք չեն ինձ համար։

Ինձ համար չէ՛ կենաց բաղդը,
Ինձ համար չէ՛ երջանկութիւնը,
Եւ մրսյօն կուսի աչքերը,
Նոցա արցունք չեն ինձ համար։

Ինձ համար չէ՛ փայլուն լուսնի
Անուռ ու ասր լուսաւորիլը,
Գարնան վարդի, երգչի տաղերը,
Սոխակ ու վարդ չեն ինձ համար։

Ինձ համար չէ՛ բարեկամաց
Մէկտեղ սիրով ուրն կատարելը,
Ջաղիկ օրուայ ուրախ ասելը
«Բրիատոս յարեաւ» չէ՛ ինձ համար։
Ինձ համար չէ՛ ծնողաց լացը,
Ինձ համար չէ՛ աղջկայ արխիվը,
Գերեզմանիս վրայ արտասուելը
Բարեկամաց՝ չէ՛ ինձ համար։
Բայց ինձ համար կուգայ ժամը,
Կ'երթամ թշնամեաց պատերազմը,
Եւ մահաբեր սպանիչ զընդակը,
Անդ պատրաստած է ինձ համար։

161 ԼՃԱԿ

Ինչո՞ւ ապշած ես, լճա՛կ,
Ու չեն խայտար քու ալեաք,
Մինէ՛ հովտիդ մէջ անձկաւ
Գեղուհի մը նայեցաւ։

Եւ կամ մինէ՛ կը զմայլին
Այլեակդ երկնի կապոյտին,
Եւ այն ամպոց լուսափեթիթ
Որք նըմանին փրփուրիդ։

Մենամաղձուռ լճա՛կ իմ,
Քեզ հետ ըլլանք մըտերիմ,
Սիրեմ քեզի պէս ես ալ
Գետիդ լանլ ու խոկալ։

Ո՛րքան ունիս գուշ ալի՛
Ձակատս այնքան խոկ ունի,
Ո՛րքան ունիս գուշ փրփուր՝
Սիրտս այնքան խոց ունի փիւր։
Այլ եթէ գոգդ ալ Թափին
Բոլոքն աստեղաց երկնքին,
Նըմանիլ չե՛ս կրնար գուն
Հոգւոյս՝ որ է բոց անշուն։
Հոգ լուսաւորք չեն մեռնիր,
Ծագիկները հոգ չեն թառմիր,
Ամպերը չեն ըրջեր հոգ,
Երբ խաղաղ էք գուք և օդ։
Լըճակ գուշ ես Թագուհիս,
Զի թ'հովէ մ'ալ խորշոմիս,
Գարձեալ խորքիդ մէջ խառն
Ջիս կը պահես գողդոջուն։
Շատերը զիս մ'արժեցին,
«Քնար մ'ունի ասոկ» ըսին,
Միւն «Հոգով է գոյն չունի,»—
Միւսն ալ ըսաւ.—«Կը մեռնի՛»։
Ոչ ոք ըսաւ.—«Հէ՛ք տըզայ,
Արդեօք ինչո՞ւ կը մըխայ,
Թերեւս ըլլայ գեղանի
Թէ որ սիրեմ, «չը մեռնի»։
Ոչ ոք ըսաւ. «Սա տըղին
Պատռենք սիրտը տրամագին,
Նայինք ինչե՛ր գըտած կան . . . »
—Հոն հըշտհ կայ, ոչ մատեան։

Չոն կայ մոխիր . . . յիշատակ . . .
Ալեաքդ յուզուիր թոզ, լճակ,
Զի քու խորքիդ մէջ անձկաւ
Յուսահատ մը նայեցաւ . . . ։

162 ԵՐԳ ԱՐԱՄԱՅ

Երբ քեզ Հայաստան կը տեսնեմ թշուառ
Ակռաս կարիւնի կը փնտռեմ մէկ ճար,
Զարս դիս կը նայիմ կը դառնեմ խաւար.
Եւ մաքէս կըսեմ, ու՛ր ես դու Արամ

Տնակիս մէջէն կը լսեմ ձայներ
Ուրախ ու զուարթ կ'երգեն օտարներ
Ես միայն կ'ողբամ մեծ են իմ ցաւեր,
Յուսահատ կ'ըսեմ, ու՛ր ես դու Արամ

Օտարներու մէջ աչքս կը բանամ
Միայն փուշ տատասկ չորս դիս կը տեսնեմ
Տրտում ու տխուր տուներս կը դառնամ,
Յուսահատ կ'ըսեմ, ու՛ր ես դու Արամ

Մեր թշնամիներ մէկ երկու հատ չեն,
Մեր տաճարներըդ, անոնք կը մաննն,
Մեր հայրենի հող անթափ կը քանդեն,
Եւ ըսող չկայ, ու՛ր ես դու Արամ

Երբ այսպէս տխուր ես կ'արտասուէի
Ձայն մը լսեցի սուր եւ ահռելի,
Ինչ օգուտ ունի ողբեր կանաչի,
Կանգներ մարդու պէս, դու եղիր Արամ

Այն ձայն լսելով նոր աշխարհ եկայ
Արարատ կոչմին լոյս և սուբ տեսայ
Նժոյգս տաի ու ճամբայ ելայ
Միտքս դնելով որ լինիմ Արամ

163 ՍԻՐԱՀԱՐԻՆ ՆԱԻԱԿԸ

Լըճի մէջ նաւակը
Մեզմ հոգմիկ կը տանի,
Նորա մէջ նըստած է
Սիրահար պատանի։

Պատանին ձեռքն ունի
Կիթառա ու կ'երգէ,
Իսկ քամին կը փախցնու
Նաւակը եղերքէն։

Լըճակին մէջը կայ
Բարաշէն մի ամրոց,
Սիրահարուց բնակարան՝
Հանապազ փակ ու գոց։

Պատանւոյ նաւակը
Դէպ ամրոց կը վազէր,
Ուր նորա անձկալին,
Սըքատարոփ կ'սպասէր։

Մեղմ հովը սւելի,
Աւելի սառակացաւ,
Երկինքը թաւթապ պատեց,
Փոթորիկ բարձրաձաւ։
Ալիքի լեռները
Գոռալով կը ծըփան,
Պատանին աներկիւղ
Կը նաւազէ կիմաբան։
Լուսինը ամպերի
Տակերէն երեւցաւ,
Սոակալի ազէտի
Պատկերը բացուեցաւ։
Կէս ճամբան ալիքը
Նաւակին խըփուեցան,
Նաւակը փշրեցին,
Ցոյս չի կայ փրկուելեան։
Պատանին աչքերը
Լուսնեակին բարձրացուց,
Կիմաբի լարերը
Նա ուժգին հնչեցուց։
«Տա՛ր վերջին խօսքերըս
Անձկալուստս, ո՛վ լուսին,
Թէ քազձրիկ անուշըդ
Յիշելով կը մեռնիմ։»
Դադրեցաւ փոթորիկը,
Ու ալիք պառկեցան,
Ջրի վրայ կըտորտանք
Նաւակի երեւցան։

Սիրտ-հին աղբատարմի
Նայեցաւ լճակին,
Հասկցաւ դառնութիւն
Իր անբախտ վիճակին։
«Իզուր մեզ բաժնեցին
Մեզ աշխարհ և այս կեանք,
Գէթ մահով այսուհետ
Ջրի տակ միանանք։»
Ասաց և ապտակ
Բարձրացուց նա ոյժգին,
Գլխովին, զոհ եղաւ
Անկուշտաւմ ծովակին։

164 ԼԷՓՕ ԼԷ ԼԷ

Լէփօ լէ լէ, լէփօ լէ լէ, լէփօ լէ լէ, հօտալի
Հոգալու ջան, հոգալու ջան, հոգալէ
Հոգալու ջան, հոգալու ջան, հոգալէ
Գիւղէ չիրին, եարալը ջան եարալէ
Գիւղէ չիրին եարալը ջան եարալէ։
Հօլէյ, հօլէյ, հօլէյլէ,
Հայրս տունը թող ճըղնի
Մայրս տունը թող չեղնի
Թէ տղերք եկէք թող հանենք
Զար թշնամու աչքը տանենք։

165 ԽՒՆԻ ԵՐԳԸ

Լուսին չկար, մութ գիշեր էր,
Մի խումբ կ'երթար արագ արագ,
Տեսանք որ քալ խանի խումբն էր.
Զինուած էին մօխինեներով։

Կեանքերը ազգին նուիրած,
Կարիճ Խանն առաջ ինկած՝
Դնում էին թշնամու դէմ,
Թուչում էին ինչպէս կրակ,
Հերթացանները ուսերին,
Դրօշակը պարզել էին,
Դընում էին ուրախ զրուցթ,
Ազատութիւն երգում էին,
Մութ անտառից անցնում էին
Ամէն մէկը առիւծ էին,
Նժոյգ ձիանց վրայ նստած՝
Մերկ սրերը քաշել էին,
Երբ քաջ Խանը ելաւ Բասէն,
Թնդանօթներ արձակեցին.
Հայ քաջերի մօտիններից
Դնդակները զոռզոռացին,
Երբ քաջ Խանը հրահանգ կուտաք,
Աբո՛ւք առիւծներս իմ քաջ,
Մտան թշնամու խիտ շարքեր,
Կոտորեցին ձախըն ու աջ,
Կեցցէ՛ Խանը իւր խմբովը,
Սարսափ թողից բանակումը,
Երեք օր ու գիշեր կռուեց,
Աչերից կարկ քուներ,
Հայաստանի հողի վրայ,
Քաղը թափեց իւր արիւնը՝
Միաձայն, յիշէ, չը մոռանաս
Կարիճ Խանի քաջ անունը։

166 ՄԵՆԵՐԳ

(Շուպերդ Սիլվեստի եղանակով)

Լուսնակ գիշերուան այս անձայն պահուն
Վըշտահար գառն սրտով,
Ի նչ անուշ, հոգիս, երթալ գողդոջուն
Ծովեզրն անվերջով
Ես ալ ունիմ սիրտս անհուն
Վշտակոծ ալիքներ, կատաղի, փրփրուն
Բայց քնաթեան մեծ ցաւին առջեւ
Ես կը մոռնամ յոյզերս, յոյսերս չդարշաթեւ։

Խորհրդաւոր այս հանդիսութեան
Խառնուի իմ ձայնս ալ,
Վայրաբաբառ կիրքերս, յոյզերս սառակագին
Թող լուեն հոգ ի հոգ։
Անուշ ցաց մ'ես լալ կ'ուզեմ
Աբձագանքը ըլլալ ծովուն ցաւին վրայէ
Եւ ցաւատանչ լանջքին վրայ
Կեանքըս տարտնքեր, ա՜հ, նաւակ մը թող ըլլայ։

167 ԼՈՒՍՆԱԿ ԳԻՇԵՐ

Լուսնակ գիշեր ըղձրծովին քուն չունիմ,
Ջիս տեսողը կարծում է թէ տուն չունիմ։
Ընդհակառակը սենեկիդ պատին տակն է.
Կեանք խնդութիւն պարզ գիշերապլուսնակն է։

Մի՛ լար, մի՛ լար, մեռնիմ գամար ունքերուդ.
Աբասասուքը վրնաս կուտայ աչերուդ։
Արի՛ գնանք խորհուրդ անենք մյասին,
Ամուսնանանք ալ չսպասենք մեծ պասին։

168 ԼՈՒՍՆԱԿՆ ԱՆՈՒՇ

Լուսնակն անուշ, հովն անուշ,
Շինականի քունն անուշ.
Ծագեց լուսնակ երկինքէն,
Հովսաին սրինգ էր անուշ։
Հօտատն եղներ կ'արածէ,
Մաճկալ պառկեր քունն անուշ,
Քաղցրիկ զեփիւռ կը շնչէ,
Ծովային հովն էր անուշ։
Դաշտեր, ձորեր ննջեր են,
Ջուրեր գլգլան, ձայն անուշ,
Թռչուններըդ, մրտան բոյն
Սոխակին ձայնն էր անուշ։
Անմահական հոտ բուրեր,
Կարմիր վարդի հօտն անուշ,
Հասուն պտղով լի ծառեր,
Որոնց տակ քունն էր անուշ։

169 ԼՈՒՌ ԳԻՇԵՐԻՆ

Լուռ գիշերին մտաքս գիմաց
Շատ տուեր՝ներ ժողվուան.—
Ընկերներս մեռա՜ծ, կորա՜ծ,
Հոգիս խոյզ ի՞նչ կացան։

Ներանց՝ աչքերն բա՜ց ու վրրէ՜ծ
Սրբախս խորշ նայեցին.
Սիրտըս բաց էր խոր վերքի պէս,—
Ներանք այնտեղ առզեցին։

Անհատատար, գոռ կրնաի մէջ
Ընկաք, իմ վե՜հ ընկերներ.
Ա՜խ, ձեր չիրնին իմ սրբտումն է,
Իմ վե՜հ, իմ սա՜բր ընկերներ . . .

170 ԼՈՒՍԻՆ

Լուեց Ամպերն եկան ծածկեցին
Երկինքն, ու լուսինն աչքես խլեցին,
Մնացի մինակ, հոգիս վրդոված,
Ջեռներս ծոցիս, գլուխս քարշ առած,
Եւ այնուհետեւ ամէն իրիկուն
Մնում եմ լուսնի խաղաղ ծագելուն.
Ցորա տխրամած գէմքը նայելիս՝
Ցիշում եմ Թշուառ վիճակը ազգիս։

Ա՜խ ցոյա՜-փայլէ՛, տխրադէմ լուսին,
Դուցէ քո փայլից փայլ տաս և Հային.
Պատմէ շառերուն Վարդանի մահը,
Կամ ինչպէս կորաւ Հայ ազգին գահը,
Կամ ինչ վէհ սիրով սիրում էր Վարդան
Մայրենի հողը,— աշխարհ Հայաստան։

171 ՍԻՓԱՆԱՅ ՍՂՐԵՐ

Լ՛ քո՛ լո՛, Սիփանայ սէգ սարի վրայ
Կարիճներ շտապով գալիս են մխանում,
Այնտեղ անվախ որդիք, անյաղթ հսկայ լեռան,
Ձէնք ու զրահի են ընթանում.
Ինչո՞ւ վառւում են, գինւում,
Սանձակած ձի հեծնում անհամբեր.
Աւիւնը նոցա լորքոք սրտի մէջ եռում,
Փայլում անցնում անհամբեր,
Քանց սիփանայ պինդ գամին,
Սլանում են դէպի ցած, դաշտի մէջ է թշնամին.—
Նա է վառում նրանց վրէժ անմոռաց.
Ահեղ ռուի մէջ վատ թշնամին
Հատու սուսեր է հանել, ցեղապետին սպաննել,
Նա էր վառում քաջերին,
Բոլոր ցեղն այժմ ոտքի է կանգնած՝
Թշնամու ընդդէմ, մահու մարտի է կանչում.
Արեան մեծ վրէժ է թշնամուց պահանջում,
Ու թշնամին պարտուած՝
Թողնում փախչում սարէ սար
Յետ է ձգում մեծ սուար
Արիւն թափեցին, արիւնի փոխան՝
Արիւն խմեց Ծարաւի սուսեր.
Նրան յաղեցած գրեցին պատեան,
Երգում են հիմա ամէն Սիփանն իմեր
Սէգ Սիփանայ կանաչ գլխին
Ցաղթող ցեղն անում է մեծ խնդում,

Եւ ամպերի բարձրութեան միջից
Հսկայ Սիփանն է երեւում.
Ի՞նչ չիպայ մեզ մօտ թշնամին,
Սուր սեսաւ մեր պողովատին։

172 ՈՒՍԱՆՈՂԻՆ ԵՐԳԸ

Երկինք՝, ժպտուն են մեր արտեր,
Բերկրութեամբ լի սուսաւնի վեր,
Աշխատութեան փափաքը վառեմ
Մեզ չթողուր տզէտ նեամ,
Պարտականութեան պօռոտ ձայնը
Կարձագանգէ մեր սիրտը,
Եւ մեր մատղաշ հոգիներէն
Քաղցր զգացումներ կը բողբոջէն
Հապօն մեր գործերուն,
Հապօն մեր գործ սիրուն,
Հապօն, հապօն, հապօն, հապօն,
Հապօն մեր գործ սիրուն։

Ուսանողներ եմք փոքրիկ սիրուն,
Որ մեզը չխնայենք մեր սիրտերուն,
Հոգիներուն մեր զեղեցկարոյր
Մենք կ՛ըսատանանք ջերմագին հաւր,
Տաք զգացումներ կը հրգեհեն
Անչինչ ծախքեր եր սրտերէն,
Ջարգացումի փոքրիկ պաշար
Մեր սիրտը կը լեցնէ համով հաղար։
Հապօն եր գործերուն,

Ցառաջ եղբարք ժամանակ ներկայ,
Ահա մեզ իւր հրաւէր կը կարդայ,
Ցառաջ դէպ ուսում և ի կրթութիւն
Որ տանին մեզ դէպ լաւ ապագայ.
Մինչ փարինք դիտութեան լուսոյ տաճարին
Ուր թոռիչք առնին մեր մինաք մանկական,
Խնայենք ժամերուն մեր ո՛վ թանկ հոգի
Դիմենք մենք շուտ դէպ յառաջ չառնունք
Հապճն մեր գործերուն ետին. [կանգ։

173 ԽԱՒԱՐԵԼ ԵՄ ԻՆՁՊԷՍ ԳԻՇԵՐ

Խաւարել եմ ինչպէս գիշեր,
Իմ չորս կողմս է փոթորիկ.
Զաւնիմ քեզ սէր, չաւնիմ քեզ սէր,
Ես սիրում եմ հայրենիք։

Ամենեղ անթիւ անբաղդ մայրեր,
Որդեկորոյս ծնողներ,
Եղբայրազուրկ անթիւ քոյրեր
Թափում են յորդ արցունքներ։

Ինձ մի՛ սիրիր, ինձ մի՛ սիրիր,
Ես շատ ու շատ փոխուել եմ.
Ա՛ռ թաշկինակդ աչերդ սրբիր
Ես քեզ սիրել կարող չեմ։

Մընա՛ս բարեաւ, իմ աչքի լոյս,
Ոչերդ լինի ինձ խընբախոյս,
Արդ արտասուք ես պիտ՝ թափեմ
Որ իմ ցաւերս ըսփոփեմ։

Ա՛խ, տուէք ինձ մի քաղցրը քուն,
Կեանքիս հեռու պատառ
Այն աշխարհը ուր խնդութիւն,
Ու սէրն է միշտ անթառամ։

174 ԽԱՂԱՂ ԴԱՇՏԻ ՈՐԴԻՔ

Թագաւոր դաշտի որդիք,
Լեռները եղնիք,
Արօր, գութան մոռնանք,
Հրացան առնենք,
Ճընշուած մեր բազուքը
Ցայտանենք զէնքերով,
Եւ մեր արդար գատը
Վարենք արիւնով։
Մեր կեանքը, մեր մալ,
Թող լինի ազատ,
Ճնշուած հայու
Որդիք հարազատ։

175 ԽԱՆՄ ԵԻ ՋԱՆ

Բերդիցը դուրս եկայ Ալագեազ տեսայ, խանըմ եւա
Ապարան աչերիս դուման է գառել, [Ջան։
Դուն կեցիր բարով, ես կերթամ լալով.
Լալով ողբալով Բէօչ ու պարխանով,
Բեղնից զատուելով Բեղնից զատուելով
Ընկեր ճար՝ լով, տարեր ման գալով։
Մէկդին ոչխարք կարածեն մէկդին գառները, խանըմ
Կանաչել են ծաղիկները, ծառերը, [եւա Ջան
Դուն կեցիր բարով, ես կ՝երթամ լալով,
Լալով ողբալով, Բէօչ ու պարխանով,
Ընկեր ճարելով, ընկեր ճարելով,
Ջենքիր չարժելով, Ղատո ած կանչելով։

Աբի գնանք քու մանքատ սարերը, խանըմ ելա՜ճան
Բեզի տեսայ նարացա իմ տարեր. Դու կեչը ես այլն
Ես Աչէքս Չամալնեցի մի ճիւան խանըմ ելա՜ճան
Տուգան ինկայ զարապազից ելան. Դան կեչը ես այլն

Զեռքս ու ոտքս կապեն բերդը սրեցին
Ձախտ պարիսը, լալով տանը բերեցին
Օրեր, գարնան օրեր, դաբաւ էք կորեր

176 ՇԷԽ ՍԱՖՕ

Խընամս գեղի մէջտեղը
Խրամատից մինձ շէթը,
Խրամատից մինձ շէթը,
Թարկից զիս լաց ու շիւան,
Եարս ի տարաւ մինձ պէխը,
Եարս ի տարաւ մինձ պէխը,
Տարան, տարան գիմ եարը
Տարան գիմ մէկ ու ճարը,
Խոպար էրէք Մարօյին:
Տարան խորամ Վառօյին
Իմ եարն անուշ ճնճղուկ է,
Եարս արտիս գիզուկ է,
Մինձ պէխի տակ խանչալից
Գիմ սիրտ ճզուկ-ճզուկ էւ
Տարան, տարան ելայլն.

Անուն Վառօ էր եարիս,
Խոզ քաշէցի գիմ խաչիս,
Էն մինձ պէխի կէս Թուրը,
Կարից Թէլէր գիմ սրտիս
Տարան, տարան ելայլն.

177 ՄՈՒՇԵՂԻ ԵՐԳԸ

Խնամիդ քալող Հայ գինւորները քալ
Այրան գաշտից եկած ու պատառաճանապ
Հին հին վրէժներ առնել էր նրանց պահանջ
Քայի պէս վազելին Թշնամուն առաջ։

Մօտ Թուով տասն ու չորս և իրանք անվախ
Ղեկտար՝ Տիգրանն էր, գործում էր անկախ,
Անմահ Մուշեղ հերոս, Շապուհ և Մելիք,
Համալսատ, Մարտիրոս կանգնած էին գիրք։

Թաթոն ընտրից Մօսէ, Շապուհ և Մխիկ,
Անուանեցան սրանք խմբեր Թուրիկ,
Խրտխռ Թագի գերքերումը միշտ անքուն,
Այրելին, չարդելին անգութ Մօլի տուն։

Վրաստանի շքեղ Թիֆլիզ քաղաքը,
Զէր ճանաչում կանխում իրա օրդոցը,
Երբ նրանք Մշնու Թագում կանգնեցան,
Այն ժամանակ Հայերն ուրախացան։

Թէպետ քալ Մուշեցին նրանք գոհ տուին,
Անգութ Թշնամացը չուտով յաղթեցին,
Որ լինի ազատութեան գրաւական,
Նրանք պատիւ կը բերին Հայ Դաշնակցութեան։

178 ԽՈՒՄԱՐ

Խումար պատկե երեւալ,
Հա՛պ, հա՛պ, հա՛պպըտա, գը՛մրտա.
Գեղին կարպետ, բըմբուլ բարդ,
Հա՛պ, հա՛պ, հա՛պպըտա, գը՛մրտա,

Հէյ, հէյ, լաւն է, հէյ, հէյ, լաւն է,
Հէյ, հէյ, լաւն է, հէյ, հէյ, լաւն է։

Անուշ քընէ երես բաց,
Սահմին եկաւ՝ խելք գընաց։

Հաչոց բակն էր զալգըմա,
Աչնան Թոխլին զաւ ըմա։

Խարար տարէք ըռեսին.
Աղջիկ բերէ վեր մըսին։

Հաւարն ընկաւ ըռեսին.
Դեադէք Թափան չէր մըսին։

Հէրօն ուտէր, գիրանար,
Մըկօն խըմէր ուրախանար.

Հաչոնց կալը բոլորպար.
Խումար մէջը կը խաղար։

Ծամեր Թալոկ իր յետեւ,
Կը Թռվըռէր շատ Թեւեւ։

«Հասատա՛տ մընայ մեր Հաչին,
Որ պահէ մեր նոր փեսին»։

Գարնան բացաւ նոր լայա,
Խումար բերաւ ջուխտ բայտա։

Աչքդ լոյս, Հաչի՛ ազա,
Թոռներուդ հալաւ արա։

179 ՀԱՄԱՉԱՍՊԻ ԵՐԳԸ

Ծագեց արեւ ազատութեան
Փախեր ամպեր երկնքից,
Համազասպը իւր խումբովը
Կուգայ քաջէն գաւառից։

Գալիս է բազմաթիւ զօրքով,
Առը կիւզէլ Պէկ խանը,
Ցանկարծ ինկաւ Ախքերհանը,
Հերոսների ուռհանը։

Թուրք խուժանը ապստամբար
Փախչում էին գլխակոր,
Թողելով իւրեանց եաեւից
Դիակներ հազարաւոր։

Հայերի տէր Դաշնակցութիւն
Քաջեր ունի սրտակից,
Ամէնդէ աշխար հռչակուեցաւ
Համազասպը պատճառից։

180 ԵՐԳ ՍԱՍՈՒՒ

Ծագէ՛ արշալոյս ծագէ՛ արեւակ
Ծագէ մեր վրայ չի լինի կորուստ։
Թուրքն յարձակեցաւ բազում զօրքերով.
Սասունը լեցուեցաւ լաց ու կածերով։
Ամանք կիսամեռ ինկած կը մարին
Օգնութեան համար երկինք կը նային։
Ով Սասուն Սասուն աւերակ գարձար
Հայկազանց սիրուն անմեղ զոհաւեցար։

Օգնեցէք մեզի արմէնեան քաջեր,
Դիակներ լեցուեցան Սասունի դաշտեր
Երբ օգնեն մեզի հզօր ձեռքերը
Շուտով կը յաղթենք վատթար թուրքերը։
Ինչո՞ւ կը ննջես իմ սիրուն գառնուկ,
Արեամբ կը լոգան Սասունի մանկունք։
Հայրիկճան հայրիկ ինչու գնացիր
Սասունի դաշտեր արեամբ լեցուցիր։
Շատ երիտասարդք ի զուր զոհ գնացին
Անին ալ մոռցան Սասունը լացին։
Երբեք չի մարիր վատ Բիւրգին կիրքը
Տոմար Թող անցնի Սասունի դէպքը։
Ի՞նչ ընեմ այսպէս տառապեալ կեանքը
Ե՞րբ պիտի տեսնեմ Հայկազեան փառքը։
Մատաղ մանկտիք զոհ եղան գացին
Անմեղ արիւնով ազգը փրկեցին։
Երկինք Թող պատմէ անոնց անունը
Թող յաւերժ կեցցէ Պօյաճեանը։

181 ԱՌ ՎԱՇԱԿՆ

Ծածանեցաւ Լջմիածին
Հնչակեան վէհ դրօշակ,
Կռւում էին ընդդէմ Թաթար
Ղեկավարն է քաջ Վահակ։
Թուով տասներեք ընկերներ
Կռւում էին անվրէտաս,
Թաթար խուժան սարսափահար
Փախչում էին անդադար։

Երբ քաջ Դրիգոր կուտար հրաման
Խմբով գնաց գէպ առաջ,
Զորս ժամուան մէջ գրաւեցին
Ամբողջ գիրքը Թշնամեաց։
Ձահիճներու մէջ բռնած
Անվախ ֆէտան հնչակեան,
Կեցցէ Նալբանդեան իւր խմբովը
Թողուլ չուէտ չիշտտակ։

182 ԾԻՄԵՌՆԱԿ

Ծիծեռնա՛կ, ծիծեռնա՛կ,
Դու գարնան սիուն Թռչնակ,
Դէպի ո՞ւր, ինձ ասա՛,
Թըռչում ես այդպէս արագ։

Ա՛խ, Թռի՛ր, ծիծեռնա՛կ,
Ծրնած տեղըս՝ Աշտարակ,
Անդ չինի՛ր քո բոյնը՝
Հայրենի կըտուրի տակ։

Անդ հեռու՝ ալեւոր
Հայր մ՚ունիմ ես սըգաւոր,
Որ մինակ իւր որդւոյն
Ըսպասում է օրէ օր։

Երբ տեսնես դու Նօրա,
Ինձնից շատ լաքեա արա՛,
Ասա՛ Թող նըստի լայ
Իւր անպատիւ որդւոյն վրայ։

Դու պատմէ՛ թէ ինչպէս
Ամա անտէր ու խեղճ եմ ես,
Միշտ լալով, ողբալով
Կեանքս մաշուել, եղել է կէտ
Ինձ համար ցեղակը
Մութ չրջուած է արեգը,
Դիշերը թաց աչքեա՛
Քունը մատը չի գալիս
Աչե՛ր, որ չի բացուած
Թառամեցայ մինացած.
Ես ծաղիկ գեղեցիկ՝
Հայրենի հողից զրկուած,
Դէ՛հ, սիրուն ծիծեռնակ,
Հեռացի՛ր, թռի՛ր արագ,
Դէպ՝ Հայոց երկինը,
Ծրընած տեղը՝ Աշտարակ։

183 ԱՉՔԵՐԴ

Ծով մը կապոյտ կը ծաւալի
Աչքերուդ մէջ, ուր չրկայ սէր,
Ծով մը հանգարտ, զմայլելի,
Ուր կը ցոլան ցայտուն յոյսեր
Բայց զգացումն հան կը հալի
Ինչպէս տաքին՝ պատառ մը սէր։
Երբեմն անկէ կ'անցնին բարակ
Ձառագայթներ պայծառ ու չինչ,
Ջրղօտ հոգւոյս ցոլքեր կրակ
Երեւոյթով մ'ապուոր անչինչ.

Բայց կը մարին անոնք արագ,
Ինչպէս հոգին դէմ կայծ մ'ոչինչ։

Մերթ ծաղիկները կ'ըլլան փափուկ
Դորշ կապոյտով մանուշակի,
Այնքան նրբին և խուսափուկ
Որ չունի գոյն որոշակի,
Բայց կը թափին ինչպէս յափուկ
Դաժան շունչին դէմ խորշակի,

Օր մ'ալ տեսնես շատ են յոգներ
Մեծ թախիծի խոհով մ'անանց,
Աչքանքներու տաք կապլակներ
Թարթիչներէդ կը մաղուին թաց,
Որ կը թուին սեւ ժանեակներ
Գոհարներու շարքով բանուած։

Աչխարհներ եւ աչքերդ անհուն,
Ուր կան լոյսեր յոյզեր հրակայ,
Սառոյց, հրդեհ, բոցեր փայլուն,
Ժըպիտն ու յոյս չեն բացակայ.
Կուգան կ'անցնին անկէ սահուն
Գաթեն ու արցունք. լոկ սէր չրկայ։

184 ԵՐԳ ԿԱԽԱՂԱՆԻ

Կախաղանը պատրաստուեցաւ
Աբի՛ք, երթանք, ո՛վ Հայեր,
Թո՛ղ բռնութիւնը յոգեցնէ
Իւր անօրէն, չար կիրքեր։

Մնա՛ք բարեաւ, ո՛վ բնկերներ,
Մնա՛ք բարեաւ, ո՛վ Հայեր,
Մի մոռանա՛ք ձեր եղբայրներ,
Անդթութեան լուկ զոհեր
Օ՛ն, Յաֆհաննէս և Մկրտիչ
Կ՚առաջնորդեմ ես ձեզի.
Մի՛ վհատիք, մի՛ վշտանաք
Հետեւեցէ՛ք դուք ինծի
Թող՝ նկատէ բռնութիւնը
Հայը մահէն չի վախնար
Չի դադարիր պատերազմիլ
Իւր ազատութեան համար
Անյիշաչար ո՛վ Աստուած իմ
Վրէժխնդիր դու եղիր
Մեր Հայրերուն, մեր մայրերուն
Մխիթարիչ դու եղիր

185 ԻՄ ԸՆՏԱՄԸ

Կապոյտ երկնքում
Աստղեր են փայլում,
Այլ և լուսնակը,
Ամենից սիրուն,
Ամենից փայլուն
Ի արեգակը։
Կանանչ դաշտերում
Եւ այգիներում
Ծաղիկներ կան շատ.

Բայց չէ ոչ մինը՝
Վարդի նմանը,
Նա է ընտրեան զարդ։
Սիրուն աղջիկներ
Ինչպէս ծաղիկներ
Ամեն տեղ շատ կան,
Բայց իմ ընտրածը,
Սրտիս սիրածը
Հրեշտակի է նման։

186 ԽԱՆԱՍՈՐԱՅ ԱՐՇԱԽԱՆՔԸ

Կարկուտ տեղաց խանասորայ դաշտումը,
Ձեւացիներ դաշնակցական, վրէժխնդիր զոռում են.
Սոսկաց հիւրը լեզապատառ Մազրիկցին,
Չէր սպասում իպպատ ջնջուիլ էէայի գիդաւից։

—Նամա՛ն, Աստուած, էէտան եկու մ՚ուր փախչիմ,
Ասաց ողորմ կրծիմ սեգմած լեզապատառ հրտունին.
—Մի՛ փախեցար, հաճգիստ եղիր բաջի ջան,
Դանացց էէրէ ձեռ տալու չէ վրէժառու հայ էէտան։

Մի ժամուայ մէջ Մազրիկ ցեղը ջնջուեցաւ,
Խանասորայ կանանչ պատեր կարմիր արեամբ ներկուեցաւ
Հայեր, յիշէ՛ ճակատագրական այս օրը.
Ցուցիս ամայ հրապանի նիշգին կատարեցէ՛ մեր տօնը։

187 ԺԱՄԱՆԱԿ ՀԱՅՈՑ

Կար ժամանակ, որ և Հայերն,
Աբքայ իշխող ունէին.
Եւ զինուած անթիւ զօրքեր,
Իւրեանց երկրում շատ կային։

Կար ժամանակ որ և նոքա,
Նման ծագկած ազգերի.
Զարգարելով աշխարհ Հայկայ,
Փայլում էին անուանի։

Բայց այժմ անուէր, անթագուոր,
Դերի, ծառայ ցաւագին.
Այս տեղ այն տեղ խոտ չքաւոր,
Զարչարուած են զխովին։

Այժմ նոքա անմխիթար,
Հայրենիքից զրկուելով.
Վա՛յ են կանչում թշուառաբար,
Հալածանքներ կրելով։

188 ՀԱՅՐԵՆԻՔԻ ԿԱՐՕՏԸ

Կարօտցեր եմ հայրենիքս
Կարօտցեր եմ մայրիկս
Անցան գեղեցիկ օրերս
Անցան ժամերս թանկագին։

Ո՛հ ինչ անբաղդ վիճակ ունիմ ես
Երբոր ինկած եմ բանտում
Ինչպէս սոխակը գեղեցիկ
Զարչարուում է վանդակում։

Ես շատ ընկերներ ունէի
Երբոր ինկայ պանդխտ
Ոչ մէկը չի կրնար մի անգամ գալ
Վայ իմ այն օրերուն։

189 ՏԻՎՐԻԿՅԻ ՆԱՔԱՆԻՆ ԵՐԳԸ

Կենաց փշոտ ասպարէզը ինձ բացուաւ,
Զաւթս լեզի, կերած հացս թոյն դարձաւ,
Հեռու երկինք հեռու երկիր տխրամած,
Ո՛հ, կը հեծեմ բանտիս խորեր չղիմացած։

Զկայ հայրիկ, չկայ մայրիկ, քոյկ, եղբայր
Եւ ոչ ալ մի մխիթարիչ բարեկամ.
Երանի՛ թէ տեսնէի, ա՛խ իմ ընկերք,
Կը փարատուէր սրտիս մէջէն խաց ու վերք։

Աւա՛դ, սակայն, որ զրկուած այդ բոլորէն,
Ձիրանն ինկած դահճապետին անօրէն,
Բռնակալը չար մտածեց իմ մասին,
Վնասակար նկատեց զիս իւր անձին։

Անմիչկան լուր տրուելով Սուլթանին
Եւ իր անարգ սպրուկներու վոհմակին,
Անխղճօրէն չքննելով կնքեցին
Եւ իմ մահուան սեւ վճիռն արձակեցին,

Անգութ բազդն իմ զայս որ լսեց անհամբեր,
Զիս մխացուց շիտիր ախտին մահտուր,
Շուտով հասաւ դժբախտ օրը սոսկալի.
Բաւին բանտին տխուր գուռը սգալի։

Արձագանքը մխայն կրկնեց ՆԱԹԱՆԸ,
Սեւ գիշերը քօղով ծածկեց կախաղանը.
Երբ հագցնէր իր լոյները գոռ Սարգիս՝
«Պիտի մեկնիմ մինչ յաւիտեան, ո՛հ Դաւիթ»։

Մնաք բարեաւ, տա՛ր բարեւս ընկերաց,
Թող չմոռնան հեգ նահանջս կածն ու լաց,
Թող հնչական իմ ընկերներ վրէժս լուծեն
Հայրենիքիս ու խեղճ ազգիս դահիճէն։
Ա՛յ, իմ բաղդը իմ վախճանը չուտ գրաւ,
Սիրտս լիքը հազար իղձով հող դրաւ,
Ահա կ՚ինձնեմ սեւ գերեզման, գրկեմ հող,
Իմ յիշատակ իմ անունը մնայ Թող։

190 ՆԱԽԵՐԳԱԿ

Կեցցեն յաւէրժ որիք հայկեան
Յօյան սուր Թագ փառք յոյսեր,
Օտար ազինք ափի բերան
Թողուն դողդոջ ժանգոտ սուրեր։
Կեցցէ յաւէրժ վեհն Արտաշէս,
Օտար ափանց նախանձ սարսափ
Կեցցէ Տիգրան նոր լոցադէզ,
Աբքայն, լեռ ձոր զարնեն Թող ծափ։

191 ԿԷՑՑԷ ՇԱՊՈՒՀ

Կեցցէ Շապուհ, կեցցէ արքայ,
Փառաց նա միշտ օրեր տեսնայ,
Օրեր տեսնայ,
Իւր Թշնամիք փախչին հապճեպ,
Իրրեւ ըմբէդ լուսոյն հանդէպ
Եւ տարածին իւր զօրութիւնք,
Իրրեւ ըմբէդ նըշոյլ է արփւոյն,
Իրրեւ ըմբէդ նըշոյլ է արփւոյն։

192 ԿԷՍ ԳԻՇԵՐ ԷՐ

Կէս գիշեր էր.
Լուռ եւ հանդարտ էր չորս դին.
Երկրի վրայ ադամանդներ կը շողան,
Եւ լուսոյ մեղմ փափուկ շողեր Թոխմաղին
Վտիտորի ջինջ ալեաց վրայ կը լողան։
Եւ մակոյկը
Ծփուն ալեաց խաղալիք՝
Ձիս կը տանի հեռու, հեռու ափերից
Քաղցր զեփիւռ, աստղեր, երկինքն ու ալիք,
Երազներու մեղմ օրօր կը մրմնչեն։
Մակոյկիս մէջ
Ընկողմանած երազուն.
Յընոքքներու կապոյտ փունջ մը կը հիւսես,
Լոկ երազներ կեանքի գարնան օրերուն,
Երբեմն յստակ մերթ մառայլ թալկադէմ։

193 ՂԱՐԻՊ ՂՈՒՐՊԷՔ

Կըռա՛ւնկ, ուստի՞ կուգաս, ծառայ եմ ձայնիդ.
Կըռա՛ւնկ, մեր աշխարհէն խապրիկ մը չունի՞ս.
Մի՛ վազեր, երամիդ շուտով կը հասնիս.
Կըռա՛ւնկ մեր աշխարհէն խապրիկ մը չունի՞ս

Թողեր ու եկեր եմ մըլքեքս ու այգիս,
Քանի որ ա՛խ կանեմ, կու քաղուի հոգիս.
Կըռա՛ւնկ, պահ մը կեցի՛ր ձէնիդգ է հոգիս.
Կըռա՛ւնկ, մեր աշխարհէն խապրիկ մը չունի՞ս

Քեզ խաղաղ հաքցնողին չես աներ տպտպ.
Ձենիկդ անուշ կուգայ քանց ջրի տօլապ.
Կըռա՛ւնկ, Պաղտա՞տ իջնուս թէ ի Հալապ.
Կըռա՛ւնկ, մեր աշխարհէն խապրիկ մը չունի՞ս,
Սըրտերնիս կամեցաւ, եկանք գընացանք,
Այս սուտ ասաքնաւորիս տըրտերն խմացանք,
Ազու հայ կեր մարգկանց կարօտ մընացանք,
Կըռա՛ւնկ, մեր աշխարհէն խապրիկ մը չունի՞ս
Ասաքնաւորիս բաներն կամաց կամաց է,
Մէ՛թէ Աստուած լըսէ, գըռնակն բաց է,
Ղարիպին սիրտն ի տուգ ուզերն ի բացցէ,
Կըռա՛ւնկ, մեր աշխարհէն խապրիկ մը չունի՞ս
Աստուա՛ծ, քեզնէ կ'ուզեմ մոլիկէ ու քէրէմ,
Ղարիպին սիրտն է խոց ճիկերն է վերէմ,
Խըմած ջուրն է լեզի հացը հարէմ.
Կըռա՛ւնկ, մեր աշխարհէն խապրիկ մը չունի՞ս
Ո՛չ ըզկուր օրն գիտեմ, ո՛չ ըզկիրակին,
Զարկած է գիս շամփուրն՝ ըրձնած կըրակին,
Այրիկըս չեմ հոգար, զարկ կու մեռնիմ.
Կըռա՛ւնկ մեր աշխարհէն խապրիկ մը չունի՞ս
Ի Պաղտատ կուգաս, կ'երթաս ի Սահրամ,
Թըղթիկ մը ըրբեր եմ, տամ քեզ ամանաթ,
Աստուած ալ Թող վերկայ լինի քու վըրադ,
Տարեալ հասուցես զայդ իմ սերելեացս
Դրբեր եմ մէջ Թըղթիս՝ ես հոս մնացի,
Օրիկ մը օրերուս՝ դարձըս չի բացի,
Սիրելիք, ձեղնէ կարօտ մնացի
Կըռա՛ւնկ, մեր աշխարհէն խապրիկ մը չունի՞ս

Աչուընէ մօտեցեր՝ գընա՛ լա ես Թէապիր,
Երամներ ես ժողվեր՝ հազարներ ու բիւր,
Ինձ պատասխան չի տըւեր՝ ելար գընացի՛ր
Կըռա՛ւնկ, մեր աշխարհէն գնա՛ հեռացիր։

194 ՔԱՋԱՐԻ ՀԱՅԴՈՒԿԻ

Կոմկապ քաջեր, խմբեր կազմեցէք,
Բաջ Անգրանիկին օգնութեան հասէք.
Առած իր շուրջ զինուորներ ութսուն,
Մաքրէ ճանապարհ նա դէպի Սասուն,
Բուռ դը սարսափած, ճարը կտրած
Հազար ոսկի է գլխին խոստացած։

Հայ պատանիներ, շուտով շարչռեցէք
Երրէք մի՛ վախնաք, սուրը շարժեցէք,
Հասել է ժամը սուրը ազատութեան,
Կենդանի ժամ չէ, շուտով քալեցէք,
Սիրենք մխութիւն չանենք վատութիւն,
Ունենանք Հայեր սուրը ազատութիւն։

Օտար հողի մէջ չմնանք Հայերս
Հերի՛ք է Հային այս պանդխտութիւն,
Թող չը ծաղրէ մեզ անգութ Թշնամին
Մինչեւ մենք հասնինք մեր նպատակին
Սիրենք մխութիւն, չանենք վատութիւն,
Ունենանք Հայեր սուրը ազատութիւն։

Բաջ Անգրանիկը անվախ, ուրբ առած,
Հայաստան գնալ վազուց էր ուխտած.
Այ ու ձախ ջարդել տաճ՛ա՛ զինուորին,

Քիւրտերից մատաղ բերել վանքերին
Դէ՛հ, շէքիր փաշա, մատիր հնար,
Հազար ոսկով անես գլխից ճար։
Կովկասի քաջե՛ր, առիւծի ճուտեր,
Սիրէք ձեր աւրեր, առէք նեղակներ,
Հայ օրիորդներ պճնեալ սիկիներ,
Ծախէք ձեր զարգեր, առէք զնդակներ.
Հարուստք ձեր ոսկին տուէք մեր ազգին,
Ձեր անգին անունը յիշենք սերունդներ։
Դէհ, հայ ընկերներ, հեծէք ձեր ձիեր,
Բաց թողէք սանձեր, անցէք սար ու ձոր,
Ահա՛ կուսի գաշտ, Թշնամին անհաշտ,
Մեր սուր թող ուտէ Թշնամու վաշտեր.
Աստ քաջ Մուրատ, առած իմ խրատ,
Կամ կռուել ազատ, կամ մահ անարատ,

195 ԱՏԱՆԱՅԻ ԿՈՏՈՐԱԾԸ

Կատրաճն անգութ, հայերը թող լան,
Անապատ գարձաւ շքեղ Ատանան,
Կրակը, սուրը և անեխիճ Թալան,
Ուր բնի տունը, ամբ բրին վիրան,

Ալ մի տար լոյգ պայծառ արեգակ,
Լուսնի շուրջ կապէ գուն աւգի մանեակ,
Անցան մեր երկրէն հարուր խորշակ,
Զորյուց Թուռքերուց ծառ ծաղիկ համակ։

Բոպէ մը չանցաւ ու հայոց խեղճեր
Ինկան աւրին տակ խաւծանին տեղ,

Ժամեր ու գպրոց բոլի մէջ կորան,
Բնաւոր հայեր անխնայ մեռան
Անզոյ անօրէն խաւծանը որ Թագուց
Ջաւակը մօրմէն, հարսը իր փեսէն,
Ձեվատան անզգամ, Աստիւ գնաց
Կերան կշտացան հայու արիւնէն։
Պարապ է ուշագ հարուստ Ատանան
Մոխիր է գարձեր ամբողջ Կիլիկիան,
Միայն ապրեցաւ Հաճընը սիրուն,
Ինչո՞ւ չը շարժիր ապաւած Զէյթունն
Երեք օր գիշեր կրակը մէջէն,
Թշնամւոյն աւրը գնդակը գրկէն,
Ջնջեցին հայը երկրի երեսէն,
Արիւն կը վազէ մեր ջինջ գետերէն։
Ալ բաւ է որքան վտանգուն լուծը
Կրեցինք Թագուհնք մեր լացն ու կոծը,
Օտարին տունը ալ չէ ապահով
Հայ հազերու վրայ հինք մեռնինք փառքով։

196 ՀՐԵՇՏԱԿ ՓԵՋ ՊԱՇԱՊԱՆ

Կուգի՞ս ինձնից հեռանալ
Ով հատորն իմ սրտիս
Իմ աղջ ուրախութիւնն ալ
Փեզ հետ պիտի տանիս
Ինձ մտատի երբ բաժնուիս
Ախտաւոր սիրտս միայն
Գնա բարով սիրելիս
Հրեշտակս քեզ պահապան։

Իր հովանոյն, տակն անգին
Բախտս, հանգիստս ինկան
Այս բախտն, հանգիստն իմ կեանքին
Դաւ ես լոկ սիրական
Քեզ հետ պատկերս ալ գիտե՞ս,
Պիտ՝ անցնի ահ դեղնած,
Գնա բարով սիրելիս, ցցիս
Քեզ պահէ Աստուած։

Օ՛ երանի թէ դագրեր
Ինչ որ քեզ կոչ տայ ցայ.
Ինչպէս հոս ցորեկ գիշեր
Կը տենչամ քեզ անձկայ.
Ու երբ ինձմէ բաժնեիս,
Խինդերս ալ խոյս պիտի տան
Դընա բարով սիրելիս
Հրեշտակիդ քեզ պահապան։

197 ԿՈՒԺՆ ԱՌԱՅ

Կուժն առայ, ելայ սարը,
Զրգրատայ ֆիդան եարը.
Ֆիդան եարը ինձ տուէք,
Զբքաշեմ ահ ու զարը։

Մեծ սարի հովին մեռնեմ.
Շէկ տղի բոյին մեռնեմ.
Մի տարի ա չեմ տեսել,—
Տեսնողի աչքին մեռնեմ։

Բլլուլը դարի վերայ,
Խրնձորը ծառի վերայ.
Սիրած սիրածի տային,
Ձոր գետնին՝ քարի վերայ։

198 ՓԱՅԼԵՐԳ ԽԱՆԱՍՕՐԻ

Կըռուեցէ՛ք, տղերք, կռուեցէք քաջ քաջ
Անվեհեր կանգնած Թշնամյն առաջ,
Յանկալի է մեզ մինչև ազնիւ մահը,
Հեռու մեզանից ասխին ահը.

Յառաջ խիզախենք իբրեւ նահատակ
Ի զուր Թող չանցնի մեզնից մէկ գնդակ։

Ահա՛ քիւրտերը փախչին ասբասփած,
Ահա՛, դիակներ արեամբ շաղախուած.
Կրա՛կ տեղացէք անդադար կրակ.
Փառք Դաշնակցութեան առատ է գնդակ։

Այս անգամին ալ ցոյց տանք Թշնամյն
Թէ՛ ինչ է Հայոն այժն ու քաջութիւնն։

Մեզ ասնախմբին մեր նախնի քաջերը,
Մեզի կ՛ապաւեն մեր հէք եղբայրներ.
Զի ծնանք ազատ գէթ մեռնինք ազատ,
Մեր սիրան ու հողին պահենք անարատ.

Դէ՛հ կռուինք տղերք մինչեւ չունչ վերջին
Արժանի լինինք փառաց պսակին։

Մեռնինք յուսալով մերն է ապագան,
Մեռնինք, բայց կեցցէ՛, կեցցէ՛ Հայաստան,
Այսպէս յորդորեց և ինկաւ արին
Թողով մեզ անուն յիշատակ բարին.

Ահեղ կռուի մէջ մի փոքրիկ հերոս
Անմոռանալի կտրիճ Մարտիրոս։

199 ՀԱԲՐԲԱՆ

Տղայ — Հաբրբրան
Աղջիկ — Ջահնէ ջահն
Տղայ — Սիրել եմ սէրն երեսին,
Անթառամ թերն երեսին,
Ով իմ սիրածն ինձ չի տայ,
Ասպրծու կերն երեսին։
Աղջիկ — Հաբրբան
Տղայ — Ջանէ ջահն
Աղջիկ — Սարի թրթնչուկ թռչա,
Մեղր ու շաքար քեզ մռչա,
Ինձ նազանի աղջիկ
Ձեզ պէս տրղին ո՞նց սազայ։

Տղայ — Պզտիկ աղջի համ ունես
Զոքեքդիմաց ծամ ունես,
Խունջիկ-մունջիկ մի՛ անի,
Ինձ առնելու կամ ունի՞ս։

Աղջիկ — Գալթանդ հոպ՛, հոպ՛,
Գալթանիդ տակը քոլ ա.
Քանի գրժալթիւն անես,
Քեզ առնողը տոլ ա։

Տղայ — Ձեր տան տակին վար կանեմ
Ձար ազատին կեր կանեմ.
Թող իմ սիրածն ինձի տան,
Գրժալթիւնս թարկ անեմ։

Աղջիկ — Ջուրը իր ճամբով կերթայ.
Ցօղածը վարդի թերթ ա.
Ինձ սիրող կըարիճ սրդէն
Հազարի մէջ մի բերդ ա։

Տղայ — Բռնել ես բաղի մէջին.
Շամամի թաղի մէջին.
Դիշեր ցերեկ մի՛ լար.
Դու ես իմ խաղի մէջին։

Աղջիկ — Աչուղի պէս խաղ ասա,
Բլլբուլի պէս տաղ ասա.
Ինչքան որ գովես՝ արժեմ,
Իմ մօր գովական փեսայ։

200 ՀԱԲՐԲԱՆ

Հաբրբրան ջան է ջան։
Աղջի անուշդ է Շուշան,
Արի երթանք սուրբ Նշան,
Ջան է ջան, մատանիք տուր քեզ նշան։

Հաբրբան, ջան է ջան
Աբեւ դիպաւ սաբերուն,
Կաբաւ թռաւ քաբերուն,
Եզան կայնէ վըր դաբուն։

Հաբրբան, ջան է ջան
Ջուկն էկաւ, նատաւ կալին,
Թրմահ չունիմ ձըր մալին,
Կաբօտ իմ յերսիդ խալին։

201 ՀԱԲԲԲԱՆ

Հաբբրան ջան է ջան
Հայ եմ թրքիկ գարի ա,
Իմ եարը սազարի ա,
Սազագ գընալուն մեռնիմ,
Ջան է ջան, խօսքերը շաքարի ա։
Արեւը բոլորել ա,
Լուսնակը նորել ա,
Սիրուն խաթեր համար՝
Քունը աչքիցս կորել ա։
Հէնքերն հենած հասայ,
Իմ եարը քնած տեսայ,
Զեռն սպիտակ քուլիքը,
Բոլորը մանած տեսայ։
Դարիր զուշը բուն ունի,
Եիմամ գղեն տուն ունի,
Ինձ նման սէրտագրը,
Աշխարքումը ինչ ունի։

202 ՀԱԲԲԱՆԸ

Հաբբրան, ջան է ջան,
Աբազից ջուր ա գալի՝
Հարցրէք ո՞ւր ա գալի
Մի լար սիրուն սիրական,
Բաժանման լուր ա գալի։
Հաբբրան, ջան է ջան,
Ապուր եմ եփել ադի.
Ուտողի սիրտը տաղի,
Ես ու գուն իրար սիրենք,
Թող թուշմանը կատաղի։
Հաբբրան, ջան է ջան,
Մենց անիլ ես բար չունիս,
Մենց ջահել ես, եար չունիս,
Երկնքի դուշ ես գաւել,
Իջնելու ոմուտ չունիս։

203 ՎԱՆԵՑԻ ԿՏՐԻՃ

Հազիւ լրացաւ քսան մէկ տարիս,
Ազատամարտ բաւ երես ծնօտիս,
Թշերէս կարմիր վարդեր կը կաթի,
Ջիղերս ամուր՝ ասես երկաթի։

Տուէք ինծ սարեր՝ սարեր կործանեմ,
Ծառը արմատով գետինէն կը հանեմ,
Սուր ակռաներովս երկաթ կը ծամեմ,
Մէջս այդքան ոյժ, ասէ՛ք, ինչ անեմ։

Առջեւս գրէ՛ք մարդ հաւրիւր ու հազար—
Յարձեմ տրորեմ գերդ բզկ ու հազար,
Ինչ այլք շաբթու մէջ՝ այն ես օր կ՚անեմ.
Մէջս այդքան ոյժ, ասէ՛ք, ինչ անեմ։

Ինձ պէս բիւրերով լի է Հայաստան,
— Նրա սուրբ հողին բլլիմ ես զուրբան—
Մարմինը ուժեղ՝ ու ահոյգ է Հային,
Այլ, ափսո՛ս, թմրած է նորա հոգին։

Թէ մէ օր զարթնէ նորա վեհ հոգին,
Նա պարզ կը ցուցնէ հեթանոս Ազգին,—
Ո՛վ էր երկաւէն սարուկ և կամ ակր...
Ա՛խ, ե՛րբ պիտ՝ թնդաք, խե՛ղճ Հայի սրտեր։

204 ՀԱՅ ԱՊՐԻՆՔ

Հայ ապրինք, եղբարք, մարդկութեան մէջը,
Հայ կրնքեր է մեզ պատմութեան էջը.
Հայ անուամբ ըզմեզ կ՚ոգջունեն երկինք —
Եղբարք, Հայ ապրինք։

Հայ ապրինք,— մեր հայրն է այն գիւղացուն,
Որ գիշատութիւն ասրվեցուց մարգուն.
Ու մեզ վեհ անուն մը արաւ բաժին.—
Եղբարք, Հայ ապրինք։
Մեր աշխարհն է ան՛ւրը,— Մեր հողուն վրան,
Ճաստաւած է բաղէ՝ հանելով գլգամ.
Մեր լեզուն աստղեր ու խօսեր նախ ինք —
Եղբարք, Հայ ապրինք։
Հայն ու մարդկութիւն՝ նոյն ունին որբան.
Երկիր փրկութեան է մեզ Հայաստան.
Կրօնէն նախքին սեղան է Մասիս.
Եղբարք, Հայ ապրինք։
Հայուն պերճ անուն՝ ոչ միայն յերկիր՝
Այլ և յերթևեկ մէջ չորոյ լուսոյիր.
Քանչ Հայկին սատեղք անմա՛հ են երկինք.—
Եղբարք, Հայ ապրինք։
Հայ ապրինք.— Ո՞ր ազգ կայ Հայուն նման,
Որ ունենայ հին պարծանքներ ա՛յսքան,
Ո՞ր ազգ Հայուն պես չքեղ Հայրենիք.—
Եղբարք, Հայ ապրինք։
Քանի, ո՞ր Ազգին չորս առաքեալներ
Երկնից Թադէոսն է գեղգան զրկիր;
Ո՞ր Թադէոսին հետ Թլթակցեր ինք.—
Եղբարք, Հայ ապրինք։
Ո՛վ կրնայ հաւրել սըրոց մեր անուանք,
Մեր պատմութիւնն է նահատակաց ցանկ.
Մեր եկեղեցին յերկրի է երկինք.—
Եղբարք, Հայ ապրինք։

Քրիստոս ունինք անգրանիկ օրհնինք,
Հաւատոյ եղանք միշտ ախոյեան մենք.
Հայը զարմացուց զերկիր և զերկինք.—
Եղբարք, Հայ ապրինք։
Մեր Ազգ հեաեւող է ճիշդ Յիսուսի,
Որ խաչն այսչափ գոր տաւած է յուսի.
Ո՛չ, չը խոնարհիր. չըլար գաւաղիք.—
Եղբարք, Հայ ապրինք։
Այո՛, խաչին կեանք, կեանք է վշտալից,
Այո՛, Հայուն կեանք՝ կեանք է ցաւալից,
Բայց խաչն յաղթութիւն անի վեհ կնիք.—
Եղբարք, Հայ ապրինք։
Ո՛չ ճակատագիր՝ մեր չէ՛ միշտ ախոր՝
Ըղձաշաւութեան ատեղ հացն ու ջուր.
Նոր երջանկութեան ապագայ մ՛ունինք.—
Եղբարք, Հայ ապրինք։
Հայ ապրինք, որ մեր որդիք ալ, եղբարք,
Կարենան պարծիլ որ մեզ անին Հարք.
Ջըլանք Հայ անուան, չըլանք նախատինք.—
Եղբարք, Հայ ապրինք։

205 ՀԱՅԱՍՏԱՆ

Հայաստան, երկիր գրախտավայր,
Դու մարդկային ցեղիս օրրան,
Դու և բնիկ իմ Հայրենիք
Հայաստան, Հայաստան, Հայաստան։

Ի վեհ անունդ սիրտ իմ, ո՜հ յոյժ
Ոգեւորի ի նոր խրախոյս,
Եւ անձկայրեաց ի քեզ յուսամ
Ի քեզ, ի քեզ յոյս իմ միայն.
Հայաստան ևն։

Հայաստան, անուն փարելի,
Ի քեզ հանգիստ Նոյեան տապան
Եգիտ՝ և քեւ ապրեցաւ Նոյ,
Հայաստան, ևն։

Դեռք քաջառաջք ազենաբուղխ,
Ջհողդ բարի առնեն յուղխի,
Քեւ ապրիմ ես, քեւ միշտ ցընծամ,
Քեւ, քեւ պանծամ փառք իմ միայն
Հայաստան ևն։

Հայաստան ծընող դիւցազանց
Եւ հրաշալեաց հանգիստարան,
Քո գեփիւռին քաղձր է շընչիւն,
Հայաստան, եւլն.

Զոր շընչեցին և զօրացան,
Հայկ, Արմենակ, Արամ, Տիգրան,
Ցրգատ, Սմբատ, Վարդան, Վահան,
Ըղքեզ յիշեմ, ըղքեզ սիրեմ,
Ըղքեզ, ըղքեզ, սէր իմ միայն,
Հայաստան, եւլն։

206 ԱՐՑՈՒՆՔ ՀԱՅՐԵՆԵԱՑ

Հայաստան, քաղցր իմ Հայաստան,
Ոգիքս յանուդ հալեցան,
Մինչեւ ցե՞րբ ես ի քէն պանդուխտ,
Սիրտս իմ ե՞րբ լրցցի ուխտ.
Արդեօք ոչքս անձկալից,
Երբեմն ըզքեզ տեսցե՞ն,
Աչքս այս արտասուալից
Երբէք գոգ արեսցե՞ն.
Շուրթն իմ հոգդ կենսաւոր
Տայէ՞ զհամբոյրն ուխտաւոր.
Արդեօք գլուխս, վշտակոծ
Հանգիցէ՞ քոյդ ի ծոց.
Հայաստան, սէր իմ Հայաստան,
Ոգիքս ի տենչդ հալեցան,
Մինչև ցե՞րբ ես ի քէն պանդուխտ
Սրտիս իմ ե՞րբ լրցի ուխտ
Հայաստան, իմ պերճ Հայաստան,
Մ'վ երկիր նաւթական.
Հընոց կենաց և սրտրան,
Հաշտարար երկնից խորան,
Ի քէն սուրբ հովանիս
Մ՞ զնըժդեհս տանէր զիս,
Մ՞ ի ստուերդ երազմոյն
Ըզնախնեացս հեղգէ քուն
Անմահութեանց, վհատուն,
Ծըծել անդ զոգ և զարիւն,

Եւ զաստեացս վշտաց
Գըտանել կատարած.
Հայաստան. ևն.։
Հայաստան, սիրուն Հայաստան,
Ցուսոյ խարիսխ մարդկութեան.
Ակնկալեաց դու իմ լոկ վայր
Ցոր աչք իմ ձգին յամայր.
Ո՞ զմին գէթ տայր լընուլ
Ջիմս ըղձից և քեզ հոյլ.
Ո՞ զփափաքս յարատեւ
Իրը ըզսիւք մի թեթեւ։
Հասուցանէր մինչ առ քեզ.
Եւ զայս ողջոյնս սըրտակէզ
Եւ զհառաչս ոգւոյս բիւր,
Զոր ընդ բլուր տա՛յր և ափիւռ.
Հայաստան ևն.։
Հայաստան, իմ վեհ Հայաստան,
Երանութեան օթևարան.
Ո՛ տայր զաւուրս իմ ցաւալիս
Փոխել, ո՛հ, յերանելիս.
Ոչ փառօք վայելիմ
Վաղանձուկ ոչ ոսկով,
Այլ գթեղ տեսանել
Սուրբ ըզսարօք ողջունել,
Ջաւերակօք քո փարել
Եւ զհարցս անգուստ վայն լսել.
Եւ զնոցիս հետս անանց
Համբուրել զեանամած։
Հայաստան ևն.։

207 ՄՈՒՐԱՏԻ ԵՐԳԸ

Հայաստանէն եկած զինուոր.
Պատմէ ինծի հայրենիքից
Անգրանիկի զինուորները,
Վըէժ են լուծում քիւրտերից։
Ուրախ եղիր դու հայ տղայ,
Ուռնիս պաշտպան քաջ Անդրանիկ,
Մուրատի պէս հոտառ ծաղիկ,
Էլ ի՞նչ է ուզում հայրենիքդ։
Վիթխարի պէս կորիճ Սեպուհ
Պոզպատի պէս բազուկները,
Կայծակի պէս կորճ՝նները.
Էլ ի՞նչ է ուզում հայերը։
Դէորգ Զավուշ և Հրայրը.
Սարսափ ձգեց Քիւրտիստանը
Կատորեցաւ ողջ բանակը,
Ազատուած չէ Հայաստանը։

208 ՀԱՅ ԵՄ ԵՍ

Հայ եմ ես, մեռնիլ գիտցող Հայ եմ ես,
Մեռնելով ապրիլ գիտցող Հայ եմ ես.
Ո՛հ, Հայ եմ ես, նախահօրս Հայկին պէս.
Ազատ ապրող ազատ մեռնող Հայ եմ ես։
Հայու վշտեր իմ կրծքին
Հանեն բոցեր սրտակէզ,
Հայ ազգութեան նուիրուած՝
Մահ փնտռող զոհն եմ ես։

Հայ եմ ես, ասբասափեցէք իմ գէմքէս,
Վատ Թշնամու մահ կը Թռչի իմ զէնքէս,
Ինչ մ'առաջուայ ստրուկը կամ գերին չեմ ես,
Քաջ Արամայ կատղած Թոռը, Հայ եմ ես,
Հէյու վշտեր եւն.

209 ՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐ

Հայ երիտասարդներ, շուտ ըշտապեցէ՛ք,
Րոպէն շատ Թանկ է առաջ քալեցէք.
Օտարն հայերին կ'ասէ վախկոտ են,
Քաջու Թեան կարմիր դրօշը պարզեցէք։
Մի՞Թէ մենք վարդանի ցեղիցը չենք.
Մէկս հազարի դէմ կը կռւենք.
Մի ժամանակ մենք շղԹայուած էինք
Այժմ ազատ ենք և ունինք շատ զէնք։
Օգնու Թեան հասան քաջ Խանն ու Մուրատ,
Ձիշդ հայու զաւակ-ծնունդ հարազատ.
Մոկացի Դրիգոր և երկու Աբշակ՝
Դնդակ էին Թափուէ կարկուտից արագ։

210 ԱԶԱՏՈՒԹԵԱՆ ԱՌԱՋԻՆ ՔԱՅԼԵՐԳ

Հայե՛ր, այսօր ազատ կեանքի նոր արեւ
Երբ խանդավառ կը շողշողայ մեր վեր ւ,
Պէտք չէ բնաւ որ մեր սիրտն ու մեր հոգին
Սին անարժան բաղձանքներով բորբոքին.
Պէտք չեն մեզի սիրտ միջոցներ, այժ, զէնք,
Ազատու Թիւն մենք կ'ուզենք.

Թուրք ազգին հետ, իբր ազգական խնամի,
Ձեւինք երբէք, պիտի չըլլանք Թշնամի,
Ջաւակներ նոյն հայրենեացց, նոյն աստր հողին
Թշնամին ենք մեզ իրարմէ բաժնողին,
Պէտք չեն մեզի ըիրտ միջոցներ, այժ ու զէնք,
Ներքայրու Թիւն մենք կ'ուզենք։
Միշա ձեռք ձեռքի, հաստատ քայլով անխափան
Պիտի կարնոց մենք յուսաւոր այն ճանրան,
Որ հեշտարոյր ծագկանց մէջէն ընտանի
Դէպի լոյն ու գէպի բարին կը տանի։
Պէտք չեն մեզի ըիրտ միջոցներ, այժ ու զէնք,
Ազգաբու Թիւն մենք կ'ուզենք։

211 ԵՐԳ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԵԱՆ

Հայեր, մինչեւ ե՞րբ արտասուենք,
Լանք յուսահատ, յիշենք, հեծենք.
Կնոջ անկ է ոգբալ, կոծել,
Մեզի՝ քրտինք արիւն Թափել։
Կ'ուզե՞նք փրկու Թիւն,
—Սիրենք գիտու Թիւն,
Սիրենք միու Թիւն
Ու ազատու Թիւն.
Սիրե՛նք Հայու Թիւն,
Սահմանադրու Թիւն։
Միմիէ ոգով կանգնի՛ն, Հայե՛ր,
Մեր բազմազգի ազերակներ.
Արի կենանք, գործե՛նք փութով
Լո՛յս ծագ ագնք չերմ չերմ եռանդով։
Կ'ուզե՞նք փրկու Թիւն ևն։

Թող մեր աչեր հո՛ւր աթձակեն,
Ու՛ մեր լանջեր թընդան, տրոփեն,
Երակաց մէջ, փոխան արեան,
Հայրենասէր բոցք ընթանան
Կ՚ուզե՞նք փրկութիւն, ևն.

Անցա՛ն, անցա՛ն սուգի գարեր,
Սէր, յոյս ու լոյս խաչատան յիմեր.
Օ՛ն, շարժեցէ՛ք, ճակա՛տաք սրթի,
Զարթի՛ք, առի՛ծք, Հայաստանի
Կ՚ուզե՞նք փրկութիւն, ևն.

213 ԲԱՆՏ

Հայը բանաւէն չի վախնար,
Հայը մահէն չի վախնար.
Մ՚իշտ կուզե պատերազմիլ,
Հայկական հողին համար։
Դայե՛ք ըսե՛ք, վատ քուրտին
Թող հեռանայ մեր հողէն.
Հայը վարժութիւն ունի,
Պատերազմը մօտեցաւ։
Հինգ հարիւր տարուան մեռեալն
Այսօր առի կանդնեցաւ.
Դայե՛ք ըսե՛ք, վատ քուրտին
Դառնատառանը վերջացաւ։
Հերիք այսչափ տառապանք,
Հերիք այսչափ գերութիւն.
Փշրենք մեր շղթաներն,
Շաւաւ երթանք Հայաստան։

Արարատ դաշտին վրայ
Հայոց քաջ խումբ պատրաստուենք.
Զէնք, սուր ձեռքերնիս առած,
Կռուինք վասն հայրենեաց։

Արի՛ք Հայկազեան քաջեր,
Առի՛ք ձեզ հետ ձեր սուրեր.
Շուտով վազեցի՛ք Կարին,
Որ յաղթենք վատ քուրտ ցեղին։

Արիւնածարաւ Հայեր,
Ջնջեցէք Կարնոյ ոսխներ.
Հայոն վերջին ժամն է.
Պէտք չէ քուրտին խնայել։

Ո՛հ, Հայն ա՛լ ազատուած է,
Ցանգի տուած կորած է.
Պէտք է որ ջնջենք Քուրտեր,
Վերականգնենք մեր Հայեր։

214 ՊԱՐԵՐԳ

Հայկազունք պար բռնենք.
Թեւ ի թեւ ան երթենք,
Ցնծութեան ձայներով,
Եւ զուարթ երգերով։

Զի ահա ի նոր բաղդ,
Զայն կուտայ երկինք արդ,
Ի սուրբ կոչում ուխտեմք հաստատ։
Վանձնուէր դոլ պատրաստ։

215 ՀԱՅՈՐԴԻ

Հայորդիներ ենք, Հայկայ սերունդք մենք
Մեր պատանեկան սրտերն են աննենգ
Զարգացման ակնով վառուած հոգիներ
Պաշտամունքնիս է գիտութիւն և սէր։
Անդուլ կ՚աշխատինք դիմել դեպ յառաջ,
Ծիծաղկոտ դէմքով, աննկուն ու քաջ.
Մայր Հայաստանը մեզի է կարօտ
Իր խրոխտ ճակտին օն բլանք նարօտ
Ցառաջդիմութեան վարդ ճամբուն վրայ,
Մրցանակն անշուշտ երկինք մեզ կառոյց.
Մերն է յաւաշող վարդ լոյս ապագան
Մենք պիտի յաղթենք վաղ թէ անագան
Մ՚Հ, ասպդերուն տակ, կա՞յ բան մը սիրուն
Բան թէ անձկալի առ եղբայր անուն,
Զոր մենք կը կրենք, մշտ աչքի առջեւ
Կը շողշողան իր վեց տառերն արեւ
Խրախճանք, ցնծութիւն մեր սրտին մէջ կոյս,
Մենք հաւատաք ունինք, մենք ունինք սէր յոյս,
Հաւատաք յաղթութեան, սէր հայրենիքին
Ցոյս ապառութեան, մեր արեան ի գին
Դաւաճաններու պիղծ չրթունքներէն
Հոսած ժահրը սեւ մեր հոգւոյն խորքին,
Ատելով կ՚ատենք անոնց գործ դիակ,
Ահաթոյր բլլայ մեր սուներուն տակ
Իսկայը մեր այս է անփոփոխ,—
վառուն, յառնին, ոտիդն ընկէ սուսկոխ,
Ընդդրկել բարին, ապնիւն գեղեցիկ,
Պահել գըգուանքով հասուստուն ու ձիգ։

216 ՀՆՉԱԿԵԱՆ ՄԱՌՇ

Հայոց աշխարհում ծագեց նոր հրդեհ,
Օգնութեան հասէք Հայկայ զաւակներ,
Վտանգը մեծ է չըկայ մի օգնող
Այրըւող տանջւողին մի ձեռք կարկառող
Նա գաւառաց է իր հայրենիքին,
Որ օգնել չուզեր ճիշդ ժամանակին,
Հարաւ և հիւսիս շատ թափառեցինք.
Պապական տանն էլ հետքը կորաւսինք
Զոր թշնամիքը միշտ ահաբեկիչ՝
Թոյն են սերմանել մեր մէջ վարակիչ
Բաւ է բաւ Հայեր օտարք մեզ խաբեն,
Եւ մեր արիւնով իրանք աշխատեն
Ապաթէղը բաց է մեզի ահա,
Զարգում փշրում են մեզի անխընայ,
Բաւ է մեզ ընկերք յաց ու կոծ անել,
Անարատ Հայրն երբէք չի վայլեր
Կարիճ Հնչակեան դուրս եկ համարձակ
Պարզէ քու մաքուր ամրիծ գրօշակ,
Վտահ քայլերով պատիր առաջ
Եղիր քաջ գինուոր և պարտաճանաչ

217 ՀԱՅՈՑ ԱՂՋԻԿՆԵՐ

Հայո՛ց աղջիկներ, ձեր հոգուն մատաղ,
Երբ միտս էք գալիս՝ ասում եմ ես ա՜խ,
Հալվում եմ, հալվում օտարութեան մէջ.
Ա՜խ, սիրտս խորվում, ցաւիս չկայ վերջ,

Երբ կարմիր գինին բաժակումս ածած՝
Սեղանիս վրայ առաջս է դրած՝
Աչքերս ակամայ վրան եմ ձգում,
Ձեր սիրուն պատկերն եմ մէջը տեսնում։
Տեսնում եմ եւ. ա՜խ, մինչև է մոլորվում.
Դառն արտասուքով աչքերս պղտորում,
Կարծում եմ բոլոր աշխարհն մրմինեց,
Արեւն էլ խաւրեց, էնգամ որ սխրեց։
Հայո՛ց աղջիկներ, ձեր հոգուն մեռնեմ,
Ձեր սիրուն աչերն էլ ե՞րբ կը տեսնեմ
Լին սեւ սեւ աչերն սեւ ունքով պատած,
Կարծես՝ երկնային զուլմով քաշած։
Էէ սեւ սեւ աչերն, որ շատին սպանեց,
Բայց էլի շատին դժոխքից հանեց,
Ես էլ կենդանի տեղս եմ մեռած,
Առանց կրակի երուած խորոված։
Էլ ե՞րբ կը տեսնեմ ես ձեզ մանգալիս,
Բաղ ու բաղձալուս սէրըան անելիս,
Ինչտեղ ամռնից վարդն էլ է գեղնում,
Երբոր ձեր կարմիր թրչերը տեսնում։
Բլբուլն էլ վարդից ձեր ձայնը լսելիս՝
Թրռչում է, թրռչում, ամպերում կորչում
Եւ իր Արարչի տեսածն ասելիս
Փառք քեզ Տէր Աստուած, փառք քեզ է կանչում։
Հայոց աղջիկներ, ինչ անուն տամ ձեզ,
Թէ հրեշտակ ասեմ հրեշտակ չեմ տեսել,
Թէ մարդ անուանեմ՝ ըսխմամաղ կ՚անեմ
Ուրեմն ինչ անեմ, մոլորուած եմ ես։

Մոլորուած եմ ես օտար աշխարհում,
Հաւատան էլ օտար, օտար ես լեզուն,
Աղջիկն էլ օտար ու ձեզ չի նման,
Հայո՛ց աղջիկներ, դուք էք անհման։
Ձեր աչերն է միայն սրտումս պահած,
Ձեր սիրով միայն եմ էս կենդանի,
Ձեր սէրը միայն ես կեանքս մաղուած
Օտարութեան մէջ դեռ կը պահպանի։

218 ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԵՐԳ

«ՀԱՅՈՒՀԻ» ՄԻՈՒԹԵԱՆ Ա. ՀՈՒՓՓՈՒՄԵԱՆ Վ.ԲԺ. Ի

Հայաստի անուն, պաշտելի անուն
Քանիո՜ն շրքեղ, հմայքդ է անհուն.
Բարեխե՛ մեր սիրտ, թրթռուայ քնար,
Այս յորգ եռանդին կատին անհրնար։
Ազատութեան վեհ զգացմունքերով
Տոգորուած հոգի ունինք ու կորով.
Նահատակ Ազգին նոր կեանք ներշնչենք,
Պարծա՛նք Հայութեան՝ Հայուհիներ ենք։
Յարաճուն չանք խանգ՝ կազմեն մեր պրսակ,
Ջինուորուհիներ հայ սուրը գրօշին տակ,
Պայքար կը մղենք բուռն ու անվհեր,
Տգիտութեան գէմ՝ որ մեզ է գերեր։
Ոգեպատ ցեղին սէրն ենք կաթոգին,
Թոզ Անոր սիրոյն զոհուի մեր հոգին.
Ըլլա՛նք գրքութեան մարմընով հրեշտակներ
Ջըրկեալին դատին կեանքերնիս նըւէր։

Իբրեւ զվարսերով մեր սեւ ու դեղձան
Փառքի Թափիներ զոր անշուշտ կը ղձան,
Կարմիր օբերուն հերոսներն արի,
Անոնց լոյս հողին մեր հոգին, փարիր
Հայաստան աշխարհ, սիրա՛ւն հայրենիք,
Ահա կանգնած ենք, գոչենք ա՛լ հերիք
Թացես արցունքներ Մատաց կատարէն,
Իղձերդ Հայուհիք պիտի կատարեն
Իրաւունք ու պարտք, մեզ նըշանաբան,
Յառա՛ջ, Հայուհիք, դիմենք անխափան,
Պարտականութեան կոչումին յարմար
Խորհիլ, գործելու ապրելու համար։

219 ԽՐԱԽՈՅՍ ԱԶԳԱՍԻՐՈՒԹԵԱՆ

Հայրենեաց սիրով վառուած վեհ սրտեր
Ի՞նչ կը յապաղէք ելնել ՚ի հանդէս։
Ի՞նչ կը յապաղէք — սիրտ կը դիմանա՞յ,
Սիրտ որ ազգասէր բլլալ կը ցանկայ։
Տեսնել հայրենեաց այսքան բիւր ազէտ,
Եւ դեռ անտարբեր ցարդ մնալ յաւէտ։
Թեռ աւելութեան և չար նախանձու
Սերմերն ու հողին հեռու մղենք հեռո՛ւ,
Սիրտ սրտի կապած, թեւ թեւի տուած,
Հայրենեաց սիրոյ ասպարէզն բացուածծ։
Օ՛ն վազենք յառաջ, ի սուրբ խաչ վառած
Օ՛ն երթանք յառաջ, և անձնանուէր,
Հայրենեաց օգտին բլլանք ուխտանուէր։

Հայ մի վհատիր, սիրտ առ և սիրտ տուր։
Տըկարք զօրանան քաջը խրախուսին
Վատերը բացուին, վատերը զատուին,
Ճշմարիտ Հայերն առաջ Թող անցնին,
Խաչ, սեր, են Նշան Ճշմարիտ Հայուն,
Խաչ, սեր են պարծանք Ճշմարիտ Հայուն։

Սիրոյ դրօշներ
Թո՛ղ արդ պարզուին։
Հաշտու Թեան ձայներ
Թո՛ղ արդ հնչուին
Հայն մէկ սիրտ եղաւ,
Սիրով մրցաւ։
Սուտ են որ բսեն,
«Հայը զիրար կ՚ատէ»։

Սուրբ Աբարատեան մայր ամօսին գիրկը
Եկէ՛ք Հայկազունք, եկէք մրանանք,
Եւ սփոփենք մեր վշտացած մօր սիրտը,
Օրհնելով աերը որ մեզ պարգեւեց,
Մեր ազգին կապն ու հոգին
Ազգային Սահմանադրութիւն,
—Յաւերժացիր արդիւնաւէտ։

220 ՖԷՏԱՅԻ

Հայրենիքի սիրուն խմբեր պատրաստել եմ քաջ
Հրացաններըը ուսերնին փամփուշտները ձախ ու յաջ։

Հնազանդ կարգով չարուած իրանք առիւծի պէս քաջ
Գնում էին գեղի յառաջ, օգնելու Անգրանիկին։

Համիսիկ ալագին հրովարտակ բաժնեցին
Թնդանօթներով, զէնքերով, զէպի Սասուն գնացին։
Եաման եկաւ քալէ ֆէտան, սարսափ սիրեց բանակին
Փախչում էին զէպի լեռներ վախկոտ քրդեր ահագին։
Դիրքերից գալս ցտակեցին, մօտենում են մեծ յոյսեր
Դաշնակցութեան ցանած սերմեր տալիս են նորա-
բոյսեր։

221 ՀԵՐՈՍ ԴՈՒ ԱՆՑԱՐ...

Հերոս, գալ անցար քո կեանքի ուղին,
Այժմ քո փառքը կ'ապրի աշխարհում.
Կապրի քո վեմ, անձնուրաց սրտին
Սուրբ հայրենիքիդ հզօր երգերում.
Կ'ապրի քո գործը—գործ հերոսական,
Որ Ազատութիւն պարգեւեց ներքան։

Քանի որ ազգը շնչում է ազատ,
Կենդանի կը մընաս դու նրա կրծքում
Դու բնակ'ր... բայց քո արիւնն անարատ
Կը հասէ դարձեալ մեր երակներում.
Եւ քո գործերի փառաչէզ գափնին
Միշտ այժ ու եռանդ կըտայ քո ազգին։

Կաւի փոխարէն անունդ քիչերով,
Սարսափ կը ձգենք թշնամու սրտում.
Հերոսիդ ժահը կ'երգեն մեծ փառքով
Մեր մատաղ լոյսերն իրանց երգերում.
Եւ դու չես լսել երբեք լալի ձայն—
Լացը կ'անարգէր քո սուրը պղեզման...

222 ՀԱՅՐԵՆԻՔ ՍՐԲԱԶԱՆ

Հայրենիք սրբազան, իմ սիրուն աշխարհ,
Թռչում եմ դէպի քեզ հոգւովս անդադար.
Բայց, աւա՛ղ, այս բանտում փակուած եմ անտես,
Պատերազմի գաշտում չեմ կռւում և եաւ

Հանապազ տանջուելով քո ճակատագրով,
Սրբասէմս չղթաների ձայներ կրելով...
Չեմ կարող մոռանալ իմ ազգ հարազատ,
Ա՜խ, կամ ոչնչանալ, կամ լինել ազատ։

Բաջ ընկերներուս հետ է ինձ կռւել,
Եւ սուրը զօրէն համար քաղցր է մնռանել,
Բայց, աւա՛ղ, այս բանտում փակուած եմ անտես,
Պատերազմ գաշտում չեմ կռւում եւ եաւ

Զգիտեմ, ինչպէս է կռիւն հրգհնռւում,
Ես չունեմ ոչինչ լուր, բայց լուրն է թռչում...
Ծաբռւմ է միշտ համլռւ ազատնռթեան ահեզ,
Թափռւմ է ազգն արիւն, բայց ես չեմ այնտեղ։

Ա՜խ, քո ազատութիւն փոխարկի մէջ է,
Եւ վառ արշալոյսով քո օր կարմրում է...
Թո՛ղ այս անգ չարչռւեմ անծանօթի կապտած,
Միայն քեզ, Հայրենի՛ք, տեսնեմ ազատուած։

223 ՀԱՄԻՏԻՆ ԴԷՄ

Հայրենիքի մէջ մեր եղբարք կ'ազգան,
Հերիք ալ հայեր, դիմենք առ Աւլիան,
Մեկզի դնենք լաց, գրիչ ու փետուր,
Զեռքերնիս առնենք հրացան և սուր։

Հայաստանի մէջ նոր սպառնալիք,
Նահատակուեցան Հայ դրօշի նեբքեւ.
Կեցցէ՛ Հայաստան, կեցցէ՛ Հայաստան
Թող սառկի Համիտ և իզզէթ փաշան։

Օրինակ առնենք Պուլղարի ազգէն,
Մենք ալ կ՚ազատուինք բռնապետեան ձեռքէն
Կեցցէ՛ Հայաստան, կեցցէ՛ Հայաստան
Թող սառկի Համիտ և իզզէթ փաշան։

224 ԱՐԽԱՆԵԱՆ

Հայրիկը ծերացել է
Ազգին համար ցաւելով.
Ազատութիւն կը գոչէ՝
Սէր մխիթիւն ցանելով։

Հայրիկին քարոզները
Հանեցին մեզ յեղները՝
Թշնամուն դէմ կռուելու,
Հայենիքը փրկելու։

Առաւօտ արշալոյսին
Զորս կողմերիս պատեցին՝
Ամբողջ չորս օր չորս գիշեր
Զորս հարիւր թշնամիներ։

Թիւով ընկեր էինք հինգ
Երբ քարայրին մէջ էինք.
Դարձեալ չէինք յանձնուէր,
Ահաղ անօթի էինք։

Ա՜հ՛ զ, Խորէն ի՞նչ եղար
Երէք գնդակով ինկար,
Մինչդեռ հոգի կռտայիր.
Դարձեալ պատերազմեցար։

Ազատութեան որդի եմ,
Արխանեան Գալուստն եմ,
Երբոր բանտէս ազատուիմ
Կրկին խումբեր պիտ՚ կազմեմ։

Մարգինս տուր ինձ, մայրիկ,
Սուրս ալ տուր գոտս, քոյրիկ.
Երթամ կռուիմ վտանի դէմ,
Խորենի վրէժ լուծեմ։

Արխանեան բռնաւորկուեցաւ,
Խորէն նահատակուեցաւ,
Արխանեանի զէնքերը
Յակոբին յանձնուեցաւ։

Թող լայ Խորէնի մայրիկը,
Թող համբերէ հայրիկը.
Չի գոհ գնաց վասն ազգին
Ի՞նչպսիսի այն Խորէնը։

125 ՀԱՌԱՋ ՆՔ ՀԱՅՐԻԿԻՆ

Հայրի՛կ, հայրի՛կ, քո հայրենիք,
Վատպուրական մեր աշխարհ,
Վարգի փոխան քեզ փուշ բերաւ,
Յաւերդ բրաւ մին հազար։

Մայիսն եկաւ սոխակներով,
Սարդի թփեր որոնեց,
Փոխան վարդի մացառ գտաւ,
Լալահառաչ ձայն հանեց։

Հայրիկն ասաց իմ հայրենեաց,
Փուշն է անուշ քան ըզվարդ.
Ես ան փշից մէջէն դարձեալ
Կը յօրինեմ սիրուն վարդ։

Այն սայրատուր փուշերն ամէն՝
Փունջ կախեցէք շարի շար,
Թողէք գլխիս պըսակ հիւսեմ,
Որ իմ ճակտիս է յաժար։

Որքան ատոր գաւեր լսեն,
Սեւակոծեմ ագռաւներ,
Չէ կարելի արծիւն իւր բարձր
Դրքիցն յերկիր վար բերել։

226 ԱՂՋԿԱՅ ԵՐԳԸ

Հանգիստ իմ անուշ, անցաւ գնացիր,
Մխայն վերքն անբոյժ սրտումս թողուցիր.
Սոխակն գեղեցիկ կանուչ պարտիզում,
Երգելով քաղցրիկ ինձ չէ գրաւում։

Գեզանով միայն երջանիկ էի,
Տիկին ինքնիշխան ինձ կարծում էի
Ցերեկը մինակ փակուած սենեակում,
Ողբում եմ անյագ ոչ ոք չէ լսում։

Դիշեր է գալիս մահիճ եմ մանում,
Տրտում է հոգիս քունս չէ առնում.
Մազերդ թուխ երկայն, ատերդ զբաւիչ,
Ինչ հասակ ինչ ձայն, ինչ հոգի կարիճ։

Ո՜հ սիրտս այրուած ողջ քեզ է կանչում,
Ողջ քո անմոռաց անունդ եմ յիշում,
Աղուէթ ինձ խաբեց, ուրիշին սիրեց,
Ա՜խ, նա ինձ դեռ վա՛ղ, գազազ պատրաստեց։

227 ՈՐՍՈՐԴՔ

Հապա քաջազունք ի Հայոց զաւակունք,
Առէ՛ք ազգունք ի մահ երազունք.
Աննաւաք ըսպասեք, կենդանիք սարսեն,
Զինուցդ ի ձայնէն կենդանիք սարսեն.
Շեշտակի նետեր
Թափեցէ՛ք, քաջեր,
Յերես անվեհեր։
Վազենք ուր վրաանք՝ այս մեր ըղձօսանք,
Որոց արշաւանք՝ մարտից են կըրճանք.
Երթանք գունդ ի գունդ՝ յաղեղ և մըկունդ,
Յուսով սրբատաթունդ՝ յաղեղ և մըկունդ.
Շամփրենք զկենդանիս
Իբր ըղձնամիս
Ի մեր հայրենիս։
Չի օր մ՚ալ նոյնպէս մարտին ի հանդէս
Չարենք մահազդեաց զոսոխս հայրենեաց.
Եւ յաղթանակաւ լըցեալ աւարաւ
Դառնամք քաջաբաշաւ լըցեալ աւարաւ,
Եւ ի մեր գաւիթք
Ծափ տան սիրելիք,
Պանծան հայրենիք։

Եւ ի մեր թափնիք
Ծափ տանք սիրելիք,
Պանծան հայրենիք։

228 ՔԱՋ ԵՂԻՔ

Հասաւ արդ ժամ փառաց, օ՜ն եկէք Հայեր
Ալ ի՞նչ հարկ վարանման, կռգմինք բանակներ
Ի բերախոյս առէք, և արիաբար
Ձենք առէք, քաջ եղիք, մի՛ անկք դադար։

Օն, դիմինք մենք ի գաշտ, դիմինք Շաւարշան
Համախմբեալ կռգմինք բանակ Հնչակեան,
Վատ է այն անսիրտ հայն որ Ի՛նամիի
Երեսէն կը դողայ, չունի սիրտ արի։

Իակ արի պինդարին լուսափայլ ճակատ
Մշտադալար գափնին բոլորէ պըսակ։
Ոտքերու տակ սըփռենք վարդեր ու շուշան
Ցեղասակըն Հայոց երգենք յաւիտեան։

Ծածանի մեր գրօշ ի Կարին ոստան
Մայր քաղաք Թոզ բլայ Հայոց պետութեան։
Զրահներ հագուցէք սիրոյ հաւատքին
Փառք ունինք մենք Թէ՛ հոս Թէ մէջ երկնքին։

228 ԱՌ ՀՆՉԱԿ

Հեռաւոր երկիր նստած դու նժդեհ
Հայրենեաց բազդին մօտաւոր ես տեղեակ,
Քարող քաջարի նոր սկզբանց վեհ,
Ցեղափոխութեան ձայնատու Հնչակ։

Նոր գաղափարի քո ցանած սերման
Ազնիւ պտուղներ, հասունանան արագ,
Կարին և Պոլիս որոտման նման
Անդրանիկ շարժմանդ ծնան քեզ, Հնչա՛կ։

Զար բռնակալը, Հայոց՝ կեղեքիչ
Վախէն պահուեցաւ ոսկի գահին տակ,
Խուլ Եւրոպայի Թնդաց մէն դահլիճ,
Հայը ցնցուեցաւ, կարմրեցաւ Հնչակ։

Այսօր քո սերմանց նոր պտուղք ահա,
Հասած կարմրերին արեան նմանակ,
Կենաց և մահու սուրը ժամ մերձենայ,
Կարմիր հրաւէրիդ ակն ունինք, Հնչա՛կ։

Կոչնակդ Հնչեցո՛ւր, Հնչեցուր արագ,
Թող Հայք ոտք կենն ծագէ մինչեւ ծագ,
Փըշրի ծանր շղթան ծագէ նոր արեգ,
«Ազա՛տ ենք» հնչէ ոսկեզօ՛ծ Հնչակ։

230 ԵՐԳ ՊԱՆԴԽՏՈՒԹԵԱՆ

Հեռու եմ քենէ օտար, երկրի մէջ
Եղած եմ պանդուխտ, սիրուն Հայրենիք,
Ի լեռ և ի ձոր կ'ըլնեմ եւէչէ,
Քեզ չեմ տեսներ ես, սիրուն Հայրենիք։

Ճարտարախօս չեմ Միւռանի նման,
Որ գրախտի մը նմանցնեմ քեզ
Եւ ոչ Եւնկի պէս ճարտարամիտ եմ,
Որ գովարանեմ, սիրուն Հայրենիք։

Տելեմաքի պէս քաչեմ արկածներ,
Կը պատահին ինձ ձախորդ դիպուածներ.
Քեզ մտածելու եմ, երբեք չեմ կարծեր,
Ծնած եմ քո մէջ սիրուն հայրենիք։

Կ'երեւակայեմ մտքիս մէջ քեզ միշտ,
Ձէ թէ ցօրեկներ՝ գիշերներն ի բուն,
Երբոր մրափեմ կամ բլլամ ի քուն,
Երազներս ես դուս սիրուն հայրենիք։

Լեռներդ ծագիկով պաշարդ չուշանով,
Լեցուն ես միշտ գուս, անուշ հառերով.
Թէ որ ես քազեմ խառն խառերով,
Կը հատուցատամ քեզ սիրուն հայրենիք։

Երբ կուգայ գարուն, կը բացուին վարդեր,
Խմբակ կը կազմեն երիտասարդներ,
Պար առեալ ցնծան և օրհերգներ,
Երգելով բերկրիմ, սիրուն հայրենիք։

Զարդարուած պարահդ անուշ մխրքերով
Աս ափն եփրատեայ՝ պատուական դիրքով.
Քեզ գովաբանել կ'ուզեմ նոր երգով.
Խորերդ քաղաքն իմ սիրուն հայրենիք։

231 ՅԱՆԴԻՄԱՆՈՒԹԻՒՆ ԱՌ ՀԱՅՍ

Հերիք ալ, հայեր այս չափ լռութիւն,
Դատաւորներու մեր այս դերութիւն,
Մեզ ի՞նչ վայել է այս չափ լռութիւն.
Ազգասէից սրտեր, հերի՛ք, ա՛լ հերի՛ք։

Հայե՛ր, ի՞նչ խնդաք փրկեալ ազգի պէս,
Իշխան և ընչեղ՝ գիտուն մարդու պէս,
Մեզ ի՞նչ վայել է ապրիլ հայու պէս.
Դպրոց առաղներ, հերի՛ք, ա՛լ հերի՛ք։

Հայե՛ր, խորհեցեք ի՞նչ վիճակ ունիք,
Կրօնք, ազգութիւն հայու սիրտ չունիք,
Մեզ ի՞նչ վայել է ծախսել հայու պէս.
Եղբայր առաղներ, հերի՛ք ա՛լ հերի՛ք։

Հայե՛ր, ի՞նչ կ'ապրիք ազատ մարդու պէս
Ի՞ւր են թագն ու աւրն ամէն ազգի պէս,
Նայեցեք չորս դին, կա՛յ ազգ ձեզի պէս,
Ամենուն գերի՛, հերի՛ք ա՛լ հերի՛ք։

Հայե՛ր, խորհեցեք ի՞նչ վիճակ ունիք,
Ո՛չ կեանք, ո՛չ պատիւ ո՛չ ափ մ'հող ունիք,
Ամենուն ձեռքը մենք ենք խաղալիք,
Ձապրած ալ մահնիք, հերի՛ք, ա՛լ հերի՛ք։

132 ԽՐԱԽՈՅՍ

Հերի՛ք որդիակք, այգաբան տարուան տառապանք.
Հերի՛ք դաժան անգութ քիւրտի ատքն ինկանք.
Քանի խանարհ գլուխ տունիք գայլերին,
Այնքան ծանր բեռներ դրին մեր վզին։

Հերի՛ք, եղէնք ցոյց տանք թէ մենք հարազատ
Հայ քաջերի արիւնէն ենք և ազատ.
Թէև չունինք ոչ սուր, ո՛չ թնդր. ո՛չ նիզակ,
Մեր բահերն էլ կանեն նրանց չանսասակ։

Ինչով են նրանք մեզ տիրելու արժանի.
Նրանք մարդ չեն այլ լեռնական վայրենի.
Մերն է ձիրքը, մերն է ուսումն ու հանճար,
Մերն է հողը, մենք ենք նրա տէրն արդար
Հերի՛ք, ելլենք ելնե.
Նրանց են մեր կոյս աղջկունքը, հարսունքը
Նրանց են մեր ճակատ քրտանց արդիւնքը,
Նրանց սուրն ծայրն է կարծես մեր հոգին.
Նրանց դամբարը մեզնից չատ է թանկագին
Հերի՛ք, ելլենք ելնե.
Մենք եղբայրներ ունինք հեռու տեղերում,
Նրանք մեր վրայ լուիկ արցունք են թափում.
Չեն խնայել թեւ ու թիկունք, կը հառնին
Շուտով կուգան կը միանան սուրը դործին
Հերի՛ք, ելլենք ելնե.

233 ՎԱՐԴԱՆ ՄԱՄԻԿՈՆԵԱՆԻ ԵՐԳԸ

Հիմի՛ էլ լռենք, եղբարք, հիմի՛ էլ,
Երբ մեր թշնամին սուրն է դրկէ,
Իր օրհասական սուրը, մեր կծին,
Ականչ չի դնում մեր լաց ու կոծին
Ասացէ՛ք, եղբա՛րք Հայեր ինչ անենք.
Հիմի՛ էլ լռենք։

Հիմի՛ էլ լռենք, երբ մեր թշնամին,
Դաւով. հրապուրանքով տիրեց մեր երկրին.
Ջնջեց աշխարհէն Հայկայ անունը.
Հիմքից կործանեց Թորգոմայ տունը.
Խլեց մեզանից Թագ, և խաչ, և դէնք
Հիմի՛ էլ լռենք։

Հիմի՛ էլ լռենք, երբ մեր թշնամին,
Խլեց մեր սուրը—պաշտպան մեր անձին.
Մըշակի ձեռքիցն էլ խոփը խլեց.
Այդ սուր ու խոփից մեր չղթան կրուեց.
Վա՛յ մեզ, չղթայով կապած դիրքի ենք,
Հիմի՛ էլ լռենք։

Հիմի՛ էլ լռենք, երբ մեր թշնամին,
Մոսկալի դէնքը բռնած մեր գլխին,
Կուլ տալ է տալիս արտասուք առատ,
Ադեխաշ բողոք վարուց ապիրատ,
Մեր գլուխ լուալու եփրատ ծուր փնտռենք
Հիմի՛ էլ լռենք։

Հիմի՛ էլ լռենք երբ մեր թշնամին,
Լիրը գոռոզութեամբ լցրած էր հոգին,
Արդարութեան ձայնն հանած իր սրտից,
Արտաքսում է մեզ մեր բնիկ երկրից
Պանդո՛ւխտ, հալածեա՛լ, եղբա՛րք, ո՛ւր գիմենք,
Հիմի՛ էլ լռենք։

Հիմի՛ էլ լռենք, երբ մեր թշնամին,
Անգոհ մեր բերած ծանր զոհերին,
Իւր լիրը, նզոված ձեռքերը կարկառեց,
Ազգութեանս վերջին կապը պատառեց.
Հայի կորուստը մատ է, ինչ անենք,
Հիմի՛ էլ լռենք։

Հիմի՛ էլ լռենք, երբ մեր թշնամին,
Աբհամաբհելով մեր փառքն ազգային
Մեր եկեղեցուն ձեռնամերձ եղաւ,

Գայլազգեստ գառին մէջ գըլուխ գըբաւ.
Սուրբ խորան չունինք, արդ ո՞ւր ազօթենք,
Հիմ՛ էլ լըռենք։
Հիմ՛ էլ լըռենք, մարգիկ ի՞նչ կ՚ասեն,
երբ մեր տեղ քարին ապառաժ խօսեն.
Զե՞ն ասիր որ Հայք արժանի էին,
Այդ սարկական անարգ վիճակին.
Մեր սուրբ քաջ նախնեաց գործերը գիտենք,
Հիմ՛ էլ լըռենք։
Թո՛ղ լըռի մտնջը, անգամոյծը
Կամ որոց քաղցր է Թշնամու լուծը,
Բայց մենք, որ ունինք հոգի ու սիրտ քաջ,
Ե՛կ անվախ ելնենք Թշնամու առաջ.
Դանիէ մեր փառքը մահով չետ խրլենք,
Եւ այնպէս լըռենք։

234 ՄԱՄԻԿՈՆԵԱՆ ՄԵՓ ՎԱՀԱՆԻ

Հիմ՛ էլ խօսենք, եղբարք հիմ՛ էլ,
Երբ բնաւեկան երկպառակութեամբ,
Ուրիշ բան չունինք, բայց իրար դաւել,
Եւ սարսափելի ազգ ու բացութեամբ
Մըր նախնեաց ուխտ ոսքով կոխել ենք,
Հիմ՛ էլ խօսենք։

Հիմ՛ էլ խօսենք, երբ քաջն Վարդան,
Վահնսան հազարից, հազարով մնաց,
Մինչ մնացել որ Պարսից լոկ մատեան
Գանգը, մեր վահնսան հազարի գիմաց.
Երբ մեզ վատութեամբ, ազգ կորուսել ենք։
Հիմ՛ էլ խօսենք։

Հիմ՛ էլ խօսենք, երբ օտարից չատ,
Մենք ենք մեր ազգի արիւնն խմած.
Մոխրատոկով լցինք, Դուին Արտաշատ,
Ծխի մէջ կորաւ խաչն եկեղեցուն.
Երբ այս ամենը մենք կատարել ենք,
Հիմ՛ էլ խօսենք։

Հիմ՛ էլ խօսենք, երբ հրապարակում,
Պարսիկը առակ է արել Հային.
«Եթէ Աստուա նման աշխարհում,
Ձկայ մի վատ ազգ, բայց քան Ասորին,
Լ՚ել վատ է Հայը», մենք այս տանում ենք,
Հիմ՛ էլ խօսենք։

Հիմ՛ էլ խօսենք, երբ իշխանութիւն
Ծախած է անարգ հացկատակն բին.
Մինչ սարսուկ մարգիկ նատան մեր գլխին,
Եւ մեզ կարծում են հող իրենց ոտքի.
Ու մենք մեզ կոխող. ոտքը լիզում ենք,
Հիմ՛ էլ խօսենք։

Հիմ՛ էլ խօսենք, երբ Լուսաւորչի,
Բնիկ ժառանգի թևերը կարած.
Անարգ Պարսիկը այս ու այն թևին,
Կարգում է տեսուչ բան իւր չար մտաց.
Եւ մենք գեռ «կեցցէ արքին» գոռում ենք,
Հիմ՛ էլ խօսենք։

Հիմ՛ էլ խօսենք, երբ ձեռք ենք տալիս
Երբ ողջունում ենք մենք այդ չբքերին.
Որ գրան շուն են, և մեզ տեսնելիս,
Շուտ գիմակները գնում երեսին.
Այդ պիսիներին գարձեալ պատիւ ենք,
Հիմ՛ էլ խօսենք։

Էլ մեր երեսին մուշ մի կմիխ,
Ամօթի սուրբ չուր որ բերան բանենք,
Մ՚չ թէ չենք ուզում հողից հող կորչի,
Թշնամու արիւնով մեր Թրին չուր տանք.
Ազգ, եկեղեցի փրկենք ապատենք
Ապա թէ խօսենք։

235 ՆՈՒԷՐ ՀՆՁԱԿԵԱՆ ՁԻՆՈՒՈՐԻՆ

Հնչակեան զինուոր ուժգին համարձակ,
Շողացուր միշտ սուր, սուլեցուր գնդակ
Ազատց տատանման անվեհեր թափով,
Դիմիր ու գիմիր դէպ վեհ նպատակ։
Նուիրիր կեանքդ քո եղբայրներին,
Զոհ բեր թշնամուդ քո կարուկ սուրէն,
Հակառակորդից դու մի՛ երկնչիր,
Դեղ դարման եղիր արնոտ վերքերին։
Զարուխեան ոգու թոյնը սպաննիչ
Թող հեռու կենայ սրտիդ, ա՛յ կարիճ.
Իբրեւ դրօշակին հարազատ պաշտպան,
Աոիր միշտ ոխը, քէնը քայքայիչ։
Անխարդախ ոգով միշտ առաջ գնա.
Բռնակալ ուժը չնչելու չանա՛,
Ցեղափոխութեան թշնամու հանդէպ
Եղիր անողոք, անգութ, անխնայ։
Կարիճ Հնչակեան ուժգին համարձակ,
Շողացուր միշտ սուր, սուլեցուր գնդակ,
Ցեղափոխութեան սրբազան գաշտում
Միայն այդ լինի քո վեհ նպատակ,

236 ՀՆՁԱԿԵԱՆ ԵՆՔ ՄԵՆՔ

Հնչակեան ենք մենք ուխտեալ զինուորներ
Կեանքի չափ սիրենք մօսին հրացաններ,
Նորից պիտ էլլենք Սասնոյ սարերը,
Ջոր ու դաշտ ներկենք կարմիր արիւնով։

Մեզի տատցին հանգիստ նստեցէք,
Սուլթանին հետը գործ մի ունեցէք,
Ձեր ազգին գաւառը մեղի յանձնեցէք,
Նրա վճիռը մեզնից ուզեցէք։

Ուղիղ եօթ տարի ոչինչ չարեցինք,
Եւրոպի խօսքին ականջ դրեցինք
Ալ բաւական է, ինքզինքնիս գտնենք,
Հնչակեան դրօշը կրկին վեր առնենք։

Մենք պիտ՝ պաշտպանենք մեր արդար գաւառը,
Սարսափ պիտ՝ ձգենք ամբողջ երկրագը,
Գացէ՛ք ու ըսէք Սուլթան Համիտի՛ն
Կեանքը չատ ծանր է Հնչակ-զինուորին։

Գիտի որ Սուլթան չունի զինուժիւն
Ուժով պիտ՝ առնենք ինքնավարութիւն.
Ողջ մնայ Սասուն, ապրի մեր Զէյթուն
Կարմիր տոպերով թողնենք պատմութիւն։

Թշնամուն եմ ես ձեր միշտ ատեաբեր,
Ոտքի կաշնեցէք Հնչակ զինուորներ
Կենաց և մահու հնչեն զանգակներ,
Ալ մեզ համար չեն աշխարհի օրեր։

237 ԳԱԻԱՌԱԿԱՆ

Հով սրէք սարե՛ր չան, յով սրէք,
Իմ դարդին դարման սրէք։—
Սարեր հով չեն անուամ,
Իմ դարդին դարման անուամ

Ամպեր, ամպեր, մի քիչ դով արէք,
Վարար անձրեւ թափէք, ծով արէք.
Դէշ մարդու օր արեւը
Սեւ հողի տակով արէք։
Հով արէք, ամպե՛ր ջան, հով արէք,
Իմ դարդին դարման արէք։—
Ամպերը հով չեն անում,
Իմ դարդին դարման անում։
Աղբեր ձորեր, գաշտեր ու ջրեր,
Մարմանդ-մարմանդ վազող աղբիւրներ,
Մի՛ վեր կացէք, խմացէք,
Տեսէ՛ք իմ սրտի ցաւեր։
Հով արէք, սարե՛ր ջան, հով արէք,
Իմ դարդին դարման արէք։—
Աղբերը հով չեն անում,
Իմ դարդին դարման անում։

238 ԳԵՂՋԿԱԿԱՆ ՍՐԻՆԳ

Հովիւը սարում ախբեց
Սիրոյ երգը նուագեց
Երգը՝ բաց աչերին
Երգը՝ վառ այտերին
Երգը՝ գուարթ օրերին։
Ահ խեղճ հովիւ քեզ բաժին՝
Խոր ձորում ճնացիր
Երգը՝ բաց աչերիդ
Երգը՝ վառ այտերիդ,
Երգը՝ գուարթ օրերիդ։

Ահա կըգայ նոր գարուն
Ու ծաղիկներ զարգարուն [հա՛ հա՛ հա՛։
Քոյն գոյն ծաղիկները ես սիրում եմ
Ահ, խեղճ հովիւ եղիր։

239 ՀՈՎԵՐՆ ԱՌԱՆ

Հովերն առան սար ու գարեր,
Ամպերն եկան մուխն ընկաւ,
Անգին մէրիկ հերիք յուսաս,
Քո չողչողուն աստղն ընկաւ.
Լաց մէրիկ ջան, որ էլ չեմ գայ
Վէրքը սրտիս առն չեմ գայ։
Կաթիլ-կաթիլ ամպն է ցօղում
Սեւ ու պղտոր երկընքէն,
Մաղիկ-մաղիկ վէրքս է ծորում
Իմ անգութեան, սեւ սրտէն
Լա՛ց, մէրիկ ջան որ էլ չե՛մ գայ,
Վէրքըս խորն է, ճար չը կայ . . .։
Անգութ կեանքում վէրքը սատկայ
Արտանց սիրած ընկերէս.
Անխիղճ կեանքում վէրքը սատկայ
Անո՛ւշ սիրած քոյրիկս . . .
Լա՛ց մէրի՛կ ջան. որ էլ չեմ գայ,
Ազիզ բալեդ է՛լ չը կա՛յ . . .։

240 ԵՐԳ ՄԵԾՆ ՎԱՐԴԱՆԱՅ

Հուր բարկութեան համայն հայոց,
Բորբոքեալ վերդ բոց բարկաճայթ.
Եւ կայծակացըս բիւր բիւրոց·
Զարթոյց ի մարտ սաբա սառնապատ՝
Զի՛ վարանիմք սատ սրդ եղբարք,
Դատարկ ձեռամբ, դատարկ ձեռամբ՝
Զեռամբ յԱրտազ Տղմուտ օն գրոյդ ի գրոյդ,
Ի գրոյդ թռչիմք սրանամբ. սրանամբ սրանամբ՝
Հուր զէնի ձեռին
Ու վրէժ ահագին
Սպասեն և կան
Քաջք Արշակունեան՝
Եւ յոր երկինք հանդիսատես՝
Զաշխարհ նախնեաց հեղու ի մեզ՝
Հապ՝ օն քաջք քաջախ
Ընդ սառան կուրծս
Մխեացուք մկունս
Ուժգին ի տարուած՝

241 ՌՈՒՍ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՔԱՅԼԵՐԳ

Հրաժարի՛նք, ընկերնե՛ր, հին օրէնքներից,
Նրանց փոշին թափ տանք մեր ոտքերից,
Մենք պաշտել չենք կարող ոսկէ կուռքերին,
Գարշում ենք բռնակալ Ժանտ Զարին.
Մենք կերթանք հալածուած ընկերների հետ,
Մենք կ՝երթանք մերկ, սոված բանուորների հետ,
Դաւադիր թըշնամուն մենք միշտ կ՝անարգենք
Ու կուի նրանք դուրս կը կանչենք՝

Դէ՛հ, ելի՛ր, բոզոքի՛ր, խեղճ բանուոր դասակարգ,
Դէմ ելէ՛ք թշնամուն կռուելու, ճա՛ն եղբարք՝
Թո՛ղ գրոհ տայ բանուորն անվախ, քաջ,
Առա՛ջ, առա՛ջ, առա՛ջ՝
Բռնակալ հարուստներ անկուշտ յագուրդով
Ծծում են մեր արիւն աշխատանք,
Լափում են, յղփանում նրանք մեր քրտնով,
Ուզում են որ մեր հացը իրենց տանք.
Սոված կա՛յ, որ տղայք զուարճանան,
Իրանց խիղճն ու հոգին վաճառքի տան
Ու ծագրեն մեր պատիւն մարդկային՝
Դէ՛հ, ելի՛ր, բոզոքի՛ր, ևն.
Դու հանգիստ կ՝ուտենաս յոկ գերեզմանում,
Որ չ՝անցնի՝ հարկերը չափերն,
Զարը նենգ կը ճնշի քեզ իր պնդանում,
Վամփիր Զարն կարօտ է արեան,
Նորան պէտք են միայն բիւր զինուորներ,
Դուրս քաշիր տուր նրան զաւակիդ,
Նորան պէտք են խնջոյք ու ճոխ պալատներ.
Տուր նորան հիւթերը ջղերիդ.
Դէ՛հ, ելի՛ր, բոզոքի՛ր, ևն.
Բաւ է եղ որքան ցաւ կրեցինք մենք,
Այսուհետեւ պիտ կռւենք հանապազ,
Հիւսիսից սկսած մինչեւ արեւելք,
Վոլկայից մինչ հեռաւոր Կովկաս,
Ոսոխներ, տէրտէրներ կուշտ հարուստներին
Եւ վամփիր, թշնամի բիրտ Զարին,
Տուր ջարդիր նզոված այդ ոսոխներին
Որ փայլի արեւը մեր օրին՝
Դէ՛հ, ելի՛ր, բոզոքի՛ր ևն.

Կը չոգայ արիւնոտ վտառ արշալոյսին
Արեւը սիրոյ եղբայրութեան,
Նա գնաց արիւնով խեղճ դաղտվրդին,
Պիտ՝ հասցնի նրան երջանկութեան,
Եւ կ'զգայ օրը աւերը, Մեծ Ազատութեան,
Բանութիւն և չարիք կը կորչին,
Եւ համայն մարդկութիւն սերտիւ միացած՝
Վեհ աշխատանքին ջերմ կը հանգչին։
Դէհ, եղբ՛ր, բողոքի՛ր. ևն.։

242 ՍԱՅԼԵՐԳ ՎԱՅՈՅ ՁՈՐԻ

Հօ՛լ արա, եզ՛ օ,
Ջան՛ն, ա՛զբէր ջան հօ՛,
Թօ՛լ արա ե՛զ՛օ,
Ջան՛ն, ազբէր։

Դէ՛, սի՛րուն, է՛լ, է՛լ, է՛լ, է՛լ՝
Դէ՛, ծիրան, է՛լ, է՛լ, է՛լ է՛լ,
Դէ՛, տո՛կան, է՛լ, է՛լ, է՛լ, է՛լ, հօ՛։

Հօ՛լ արա ակը
Ջան՛ն ա՛զբէր, ջան, հօ՛,
Թօ՛լ արա ակը,
Ջան՛ն ա՛զբէր։

Դէ՛, սի՛րուն, է՛լ, է՛լ, է՛լ, է՛լ,
Դէ՛, ծիրան, է՛լ, է՛լ, է՛լ, է՛լ,
Դէ՛, տոկան, է՛լ, է՛լ է՛լ, է՛լ, հօ։

243 ՀՕ՜Յ ՆԱՋԱՆԸՄ…

Հօ՛յ նազանըմ, նազանըմ
Դիւլ նազանըմ, նազանըմ,
Եար ջան, դուն բարով էկար
Կանանչ կաղերով էկար.
Կարմիր սոլերով էկար.
Եար ջան դու բարով էկար,
Կանանչ կաղերով էկար.
Կարմիր սոլերով էկար։
Ազջի՛, մազերդ թուխ է,
Իս ի՞նչ բարութի մուխ է.
Մուխ անողը քուանայ,
Ինձի, քեզի մոռանայ,
Հօ՛յ նազանըմ ալլն.
Մէխակի ծառ եմ սընկել,
Քեզ համար հիւանդ ընկել,
Օխտը տարի տեղումըս
Ես մի կըչտի եմ պառկել,
Հօ՛յ նազանըմ ալլն.
Դիւլըս գիւլում ա գառել,
Եարս լկլում ա գառել,
Ո՞նց ասեմ որ հաւկանաք—
Մի հատ զուլում ա գառել,
Հօ՛յ նազանըմ ալլն.
Թեւդ թեւիս մօտեցնեմ,
Ձեռքդ ձեռիս կըպցընեմ,
Մի կերպ գուրս արի՛ գուռը,
Թաղքամ թաքուն թըռացընեմ
Հօ՛յ նազանըմ ալլն.

244 ՀԷՅ ՄԱՅՐԻԿԻՍ ՄԱՏՈՒՆ ԲԵՐԵՔ

Հէյ մայրիկիս մածուն բերէկ
Քոյրիկիս կարագ,
Թեղձ հայրիկիս Թանով ապուր
Լէն էլ կորկոտ չունենայ՝
Մաշիկով ազիկ
Կօշիկով ազիկ,
Հասակով կարճ ես
Դուն ծեծի խարճ ես՝
Հէյ մայրիկիս կալօշ փոթին
Քոյրիկիս սկարբին
Թեղձ հայրիկիս ջուխտ մը չարուխ
Լէն էլ սրբըմ չունենայ՝
Մաշիկով ազիկ
Կօշիկով ազիկ,
Հասակով կարճ ես
Դուն ծեծի խարճ ես՝

245 ԿԱԼԵՐԳ

Հօ՛, ռօ՛լ, օ՛, լո՛, լո՛, լո՛, լո՛,
Աբի՛, արի՛, եա, մասագ,
Հօ՛, եզը՛ ջա՛ն,
Հօ՛ ռօ՛ւել, հօ՛,
Հօ՛, ռօ՛ւել, հօ՛,
Հա՛, կա՛լ արա, ման արա
Հօ՛, եզը՛, ջա՛ն,
Հօ՛, ռօ՛ւել, հօ՛,
Հօ՛, ռօ՛ւել, հօ՛։

Հա՛ կա՛լը գարման արա
Հօ՛, եզը՛, ջա՛ն,
Հօ՛, ռօ՛ւել, հօ՛,
Հօ՛, ռօ՛ւել, հօ՛։
Յորենն ինձ, գարման քեզ՝
Հօ՛, եզը՛, ջա՛ն,
Հօ՛, ռօ՛ւել, հօ՛,
Հօ՛, ռօ՛ւել, հօ՛։
Հշանը գարման արա,
Պռէ՛բէ, հօ՛մ, պռէ՛,
Պռէ՛բէ, հօմ պռէ՛,
Պռէ՛բէ, ջա՛ն։

246 ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՄԱՐՇԸ

Հայ երիտասարդներ, շուտ շտապեցէք
Բոպէն շատ թանգ է, առաջ քալեցէք,
Օտարք հայերին կ'սանեն վախկոտ են,
Քաջութեան գրօշակը պարզեցէք։
Միթէ մենք վարդանի ցեղից չենք՝
Մէկս հազարի դէմ կը կռւենք,
Մի ժամանակ մենք շղթայուած էինք,
Հիմա ազատ ենք և ունինք շատ զէնք։
Օգնութեան հասան քաջ խան ու Մուրատ
Ձիշդ հայու գուակ ծնուինք անտրատ,
Մոկացի Գրիգոր և երկու Աբշակ
Դնդակ թափում են կարկտաից արագ։
Քաջ Թուխմանեանցը, որսորդ Գէորգը
Կազմել պատրաստել են իրանց խմբերը
Դաշնակցութեան գրօշակի ահից
Սարսափահար փախչում էին քրդերը։

247 ՀՈՎ ԼԻՆԻ

Հո՛վ, հո՛վ, հո՛վ լինի,
Եարիս տունը ծո՛վ լինի.
Թո՛ղ, թո՛ղ, թո՛ղ լինի,
Եարըս քամարո՛վ լինի։
Դէ՛ գանէք, գա՛նէք, հո՛ղը հանէք,
Մեր Թըշնամու գո՛ղը հանէք,

Ծաղիկ ես ծաղկանց մէջին,
Հո՛վ հո՛վ, հո՛վ լինի,
Մի հատ ես ադլկանց մէջին.
Եարիս տունը ծո՛վ լինի.
Եա՛ր, ինձ պարզերես արա,
Թո՛ղ, թո՛ղ, թո՛ղ լինի,
Իմ բնկեր մարգկանց մէջին.
Եարըս քամարո՛վ լինի։
Դէ՛, գանէք, գանէք, հո՛ղը հանէք,
Մեր Թշնամու գո՛ղը հանէք։

Աքի մի փաթպար խաղանք,
Տընկող մընանք չը կաղանք,
Հարսանիքիդ ալիւրը
Մուղնու ուխտից վազ ազանք։
Իրար հետ բազը գընանք,
Ուտենք, խըմենք, լիանանք,
Թըշնամու աչքը հանենք,
Մեր Աստծուց գոհանանք։

248 ՇՈՂԵՐ ՋԱՆ

Ամպել ա, ձուն չի գալի, Շողեր Ջան,
Սարից տուն չի գալի, Շողեր Ջան,
Դուն օրօրա, դուն չօրօրա, Շողեր Ջան,
Ամպի տակին ձուն կերեւայ, Շողեր Ջան։
Սիրտս կըրակով լըցուած, Շողեր Ջան,
Աչքերիս քուն չի գալի, Շողեր Ջան,
Դուն օրօրա, դուն օրօրա, Շողեր Ջան,
Ամպի տակին ձուն կերեւայ, Շողեր Ջան։
Հոր է Թափառմ վերիցը,
Ես վառայ քո սէրիցը.
Վարդավառին ինձ համար
Ջուն բեր գաւ սարերիցը։
Սարի գլխին ձուն եկաւ,
Շէկլիկ եարըս տուն եկաւ.
Դեռ մաբատիս չը հասած,
Վրէս խորունկ քուն եկաւ։
Աչուընն եկաւ սարիցը,
Ցերեւ թափեց ծառիցը,
Շողոն գարդով լըցւել ա,—
Հեռացել ա եարիցը։

249 ՊԱՆԴՈՒԽՏԻՆ ԿՈՒԸ

Հաչրենեաց երկրէն հեռու ապրեցայ,
Հեռու լեռներէն ու բլուրներէն.
Ցակոյն գաւն վիշտերն իմ սրտիս վրայ
Բոյն դրին ապ՛ր ու ակօսեցին։

Հաստեղ ապրեցայ անշուք աննշան
Համակերպեցայ բարուց ու վարուց,
Նէզուէթեան համար ապրեցայ միայն
Կեանքը չի տուաւ հաճոյքն ինձի ցոյց։

Արդ երբ ես մեռնիմ մտնեմ ցուրտ շիրիմ
Յաւ չէ մեռնելըս բնաւ ինձ համար,
Այլ ցաւս է միայն զի լացող չ'ունիմ,
Մարդիկ են օտար, ամէն ինչ օտար։

Ձակատագիրըս չեմ գիտեր ինչպէս
Ինչո՛վ գրուած է այսչափ մը ախուր.
Ցաւերն ինձ համար անանց անհամար
Չեմ գիտեր ինչպէս, որո՛ւ գիմեմ ա՛ռ։

Աստուած իմ Աստուած, բարի ու արդար
Չի՞ս տեսներ արցունքս ու հառաչանքներս.
Խնդրեմ մեղմացուր և կամ զարկ դիս առ,
Թող չապրիմ թշուառ խլէ իմ հոգիս։

250 ԵՐԿԱՐԻՐ ԳԻՇԵՐ

Երկարի՛ր գիշեր. մեծ տարի դարձի՛ր,
Դաժան, սեւ խաւար, իջիր, թանձրացիր.
Իմ մաբադն առայ այսօր իրիկուն —
Վերջապէս ելաւ հիւր հարս թագուհի։

Ելթը տարի յետու կանգնիր, արշալոյս,
Թէ չէ կը փախչին սիրածիս քո լոյս,
Թող յաւէտ այսպէս խաւարում մնամ.
Միայն երբս միշտ կրծքիս ունենամ։

251 ՏԱՊԱՆԱԳԻՐ

Կանգնի՛ր, ո՛վ անցորդ
Դու այս շիրմի մօտ
Եւ հանգիստ կարգա՛ քանի նահատակին,
Որ կուգի գաշտում
Սուր ու զէնք ձեռքում,
Զոհ երթաց կեանքը իւր ազգի փառքին։
Բայց կարեկցութեան
Ո՛չ լաց, ո՛չ կական
Թող չը պղտորին քո սիրտն ու հոգին.
Նա լալ չէր սիրում
Կրնուի փոխարկում
Նահատակն ինկա՛ւ ժրպիտն գէմքին...։

252 ՁԱԽՈՐԴ ՕՐԵՐ

Ձախորդ օրեր ձմրան նման կուգան ու կ'երթան,
Վհատելու չէ. վերջ կ'ունենան, կուգան ու կ'երթան,
Դառն ցաւերը մարդոց վրայ չեն մնար երկար
Որպէս յաճախորդ, շար ու շարան կուգան ու կ'երթան։
Փորձանք, հալածանք և նեղութիւն ազգերի գլխին,
Ինչպէս ճանապարհի կարաւան կուգան ու կ'երթան,
Աշխարհը փուրսատան է յաւտուկ, մարդիկը ծագիկ,
Որքան մանիշակ, վարդ պարսան կուգան ու կ'երթան։
Ո՛չ ուժեղը թող պարծենայ և ոչ տկարը տխրի,
Փոփոխակի անցքեր դանդան կուգան ու կ'երթան,
Արեւը առանց վախնալու ցոյտում է լոյսը,
Ամպերը դէպի ազօթարան կուգան ու կ'երթան։

Երկիրը ուսեալ զաւակին է փայփայում մօր պէս,
Անկիրթ ցեղեր թափառական կուգան ու կ'երթան.
Աշխարհը հիւրանոց է, Ջևան, ազգերը հիւր են,
Այսպէս է կանոնը բնական, կուգան ու կ'երթան։

253 ԷՐԶՐՈՒՄ

Ձայն մը հնչեց Էրզրումի հայոց լեռներէն
Թունդ Թունդ ելան հայոց սրտեր զէնքի շաչիւնէն։
Հայ գիւղացին գարուց ի վեր սուր, զէնք չէր տեսած,
Դաշտը Թոզուց, սուր հրացան՝ բահի տեղ առած։
Հայ ձերուկը ցուպն ի ձեռին լալով խնդում է
Հայրենիքի ազատութիւն տեսնել ու մեռնիլ։
Հայ տիկինը սոխպում է ամուսնոյն գնալ,
Պատերազմի դաշտին վրայ վերք տալ ստանալ։
Բընդուշ կեանչ ո ծանր է Թըւում Հայ օրիորդին
Ձէն ի ձեռին սիրտ է տալիս հայոց քաջերին։
Երիտասարդք զէն ի ձեռին գոռում գոչում են
Պատերազմիլ, ազգին համար և արիւն Թափել։
Հայ քաջերը արիւն գըրով նամակ ցրուել են,
Արարատայ դաշտին վրայ զինուոր խրմբել են։
Ա՛լ բաւ լացիր, Մայր Հայաստան երկիրդ փառաց,
Քու զինուորներդ միշտ կարիճ են, որչափ ալ քաղցած։
Ան ու գգուէ այդ քաջերը քու սրտիդ վրայ,
Որք կը Թափեն իւրեանց արիւն սուրբ հողիդ վրայ։
Անմխիթարիւն, տուընը քանդող Հայոց խեղճ ազգին,
Հրաժարեցաւ, տեղի տուաւ միութեան ձայնին
Լսեց քուրդը ու սառեցաւ արիւնը խեղճին
Չէր երազել Հային տեսնել նա այդ վիճակին։

Յընձա՛ր, մայր մեր, ով Հայաստան, որդիքդ միացան
Տասը տարուան սուգ ու Թախիծ մեզնից վերացան։
Ուրախացաւ Մայր Հայաստան ելաւ կանգնեցաւ,
Վեց դարերի սուգ, տառապանք մի քիչ մեղմացաւ։

254 ՆՈՐ ԵՐԳԸ

(«Ձայն մը Հնչեցաւ եղանակով)

Ձայն մը հնչեց Վոսփորոսի
Ոսկի ափերէն.
Թունէթ Թունէթ ելան Հայոց սրտեր
Ազա՛տ կապերէն։
Ազատութեան ոգին սուրաց
Նըման կայծակի,
Խաչն ու մահիկ հաշտուեցան
Սիրով ցընծագին։
Փախէք ամպեր տառելութեան
Փախէք մեր երկրէն,
Հայրենիք մեր պիտ՝ ազդուի
Լոյսով վեհօրէն։
Վերջալոյսի ոսկի շողեր,
Դացէք խնդագին
Սուրբ խաչերիկը հաղորդելու
Հայոց հայրիկին։
Տարէք, հոգեր, այս լուրն արագ
Իրրեւ զրաղէն,
Ինկած քաջեր գեռ չեռ մեռած,
Լուրի կ'ապաւէն։

255 ՁԱՅՆ ՏՈՒՐ

Ձայն տուր, ո՛վ ծովակ, ինչո՞ւ լըռում ես.
Ողբակից լինել չկամի՞ս գժբաղդիս.
Շարժեցէ՛ք զեփիւռք, ալիքը վեր վեր,
Խառնեցէք զարտասուս այս ջրերի հետ։

Հայաստանի մէջ անցքերին վրկայ.
Ակդրից մինչ այժմ, խընդրեմ, ինձ ասա՛,
Մի՞թէ միշտ այդպէս պիտ՝ մնայ Հայաստան,
Փըշտալից անապատ՝ երբեմն բաբառատան։

Մի՞թէ միշտ այդպէս ազգն խըղճալի,
Կը լինի ծառայ օտար իշխանի,
Մի՞թէ Աստուծոյ աթոռին մօտին
Անարժան է Հայն և Հայի որդին։

Աբդեօք գալո՞ւ է մի օր ժամանակ՝
Մասիսի գլխուն տեսնել մի դրօշակ,
Եւ ամեն կողմից պանդուխտ ազգայինք,
Դիմեն դէպի իւրեանց քաղցըր հայրենիք։

256 ՁԱՅՆ ՏՈՒՐ, Ո՛Վ ՖԷՏԱՅ

Ձայն տուր, ո՛վ ֆէդայ, ինչո՞ւ ես տրտում,
Լուռ ու մունջ նստած երկար մտածում.
Շարժեցէ՛ք շաւտով սուրբ շողշողուն,
Թափեցէ՛ք կրակ թշնամեաց գլխուն։

Պարզեցէ՛ք դրօշ վեհ Դաշնակցութեան,
Լինի առաջնորդ մեր ազատութեան.
Բանի այսպէս է ազգը խըղճալի,
Չինեալ կը մնայ ամբողջ ֆէդայիք։

Շտապենք, ֆիդայք, խմբուենք մի տեղ,
Դաշնակցութեան դրօշը ծածանուի աշխատեղ,
Թափենք մեր արիւն իրրեւ ախոյան,
Վրնի առաջնորդ մեր ազատութեան։

Եկէ՛ք միանանք, ո՛վ քաջ հայդուկներ,
Վրէժ են գոչում մեր նահատակներ,
Մօսին հրացանը ձեռքերնիս բըռնած՝
Թուենաւոր փամփուշտ կուրծքերնիս ձգած։

Հայ զինուոր եմ ես, անձնազոհ ֆիդայ,
Դժբախտ հայրենեաց անցեալին տեղեակ.
Մենք ենք սերունդը ընիկ վեհ Հայկեան,
Տոհմէն դիւցազանց, որդիք Թորգոմեան։

257 ԹԻՖԼԻԶՈՒ ՔԷՖ

Ջմեռն ինչ կ'ուզէ Թող ըլլի, (եար եարալի),
Թէ ազուռն էլ սարերն ըլլի, (Թար եարալի),
Մեզի ցուրան չի վախցընի, (եար եարալի),
Թէ գլխներըս տաք կ'ուլլի, (եար եարալի)։

Երբ Նոյին գինին կամեցաւ,
Հատած խաղողը քամեցաւ.
Լին վախար նա գինին կոնծեց,
Ջուրը անառնոց յանձնեցաւ։

Հաղըստութիւն ոչինչ է,
Կեանքը ոսկով երծըթով չէ,
Հարուստ տեսած ենք տարեկան,
Ախ ու վախը մեզ համար չէ։

Երբ կուգան սիրուն գարունքը,
Իջնանք գաւիթ մեր Թիկունքը,
Մենք լաւ կարմիր գինին կոնծենք,
Թոզնենք վարդ պըլպուլի սուգը։

258 ՁԱՄԲԱՅ ՏՈՒԷՔ

Ձամբայ տուէք առաջ գամ,
Սիրած եարիս բարև տամ.
Ախտ եմ սրել, որ առնեմ,
Թող տեսնի աշխարհ ալամ։
Սարեր ձորեր, հետ կացէք,
Իմ եարին ճամբայ բացէք.
Եար եարի հետ խօսելիս
Ականչ սրէք, ամացէք։
Նշչի ծառին նուշ կընկնի.
Վարդի հոտն անուշ կընկնի.
Երանեկ էն ազգկան
Սիրած եարին թուշ կընկնի։

259 ՄՈՒՐԱՏԻՆ

Մահուան ճանկերից հպարտ յաղթական,
Դարձեալ առպարէզ նետուում է հսկան.
Բանտ ու չարչարանք. աքսոր ու հարուած,
Նոր վրէժ անուշին սրտումը տաղտուկ։
Ու ծով ճեղքելով նետած է մանուկ,
Զբնաղ աւետիս ամեն կողմ թընդում,
«Ազատ է Մուրատն, ազատ Բարիզում
Իր ընկերների սիրալիր գրկում»։
Ուրախալի լուրը չանձնց Մուլթանին,
Հայ ազգի դահիճ անգութ գազանին,
Ինծայ Հայաստին թունդ ելան սրտեր,
Նորոգ վառեցան Հնչակեան գընդեր։

Աննման Հնչակ, հնչիր անընդհատ.
Ահա՛ մեր չարքում Մուրատն անհատ,
Կարմիր օրերի նա անյաղթ հերոս,
Անզեկ Հայաստեան լուսատուր փարոս։
Տարէ՛ք Աւետիս Ճաճկահայ եղբարց,
Որ երբ կոչ անէ Մուրատն յանկարծ,
Ոտքի թող ելլեն Մուշ, Սասուն, Զէյթուն,
Ու ազատ հնչակեն Հայրենի մեր տուն։

260 ՄԱՅԻՍ

Մայիս գայ ժպտուն
Զբղնաղ ժամն տարուոյն.
Լուր թռչնիկն կ'բսէ արդ.
Ջուարթ մայիս, զուարթ մայիս,
Մայիս զուարթ։

261 ԱՐԱՔՍԻ ԱՐՏԱՍՈՒԿԸ

Մայր արաքսի ափերով
Թայլամոլոր գնում եմ
Հին հին գարուց յիշատակ
Ակեաց մէջը պըտրում եմ։
Բայց նոքա մըշտ յեղյեղուկ
Պըղտոր ջրով եզերքին
Դարիւ դարիւ խփելով
Փախչում էին լալագին։
— Արա՛քս ինչո՛ւ ձկանց հետ
Պար չես բռնում մանկական,
Ես դեռ ծովը չի հասած
Սըգաւոր ես ինձ նըմանու

Ինչո՞ւ սրցունք ցայտում են
Քու սեգ, հպարտ աչերից,
Ինչո՞ւ, արագ փախչում ես
Այդ հարազատ ափերից՝

Մի՛ պըզտորիր յատակըդ
Հանդարտ հոսէ խաչատով,—
Մանկութիւնը քո կարճ է,
Շուտ կը հասնի դէպի ծով։

Վարդի թերթեր թող բուանեն
Քո հիւրընկալ ափի մօտ,
Սոխակները նոցա մէջ
Երգեն մինչեւ առաւօտ։

Մշտադալար ուռիներ
Սառ ծոցի մէջ քո ջրերին
Ձրկուն ոտն ու տերեւ
Թող թաց անեն տապ օրին։

Ափերիդ մօտ երգելու
Հաւիւք թող գան համարձակ,
Գառն ու ուլը քո վրճիտ
Ջուրը մանեն միշտ արձակ»։—

Մէջքը ուռցուց Արաքսը.
Փրփուր հանեց իւր տակից,
Ամպի նման գոռաւոտով
Այսպէս խօսեց յատակից։

—«Խիզախ անմիտ պատանի,
«Ներհէս ինչո՞ւ դարեւոր
«Վըրդովում ես, նորոդում
«Իմ ցաւերը բիւրաւոր։

«Սիրելիի մահից յետ՝
«Երբ ես տեսել որ, այրին
«Ոտքից գլուխ պճնուի
«Իր զարդերով թանկագին։

«Որի՞ համար զարդարուիմ,
«Որի աչքն հրապուրիմ.
«Շատերն ինձ են տուել,
«Շատերին ես օտար եմ։

«Իմ ազգակից գիժ Կուրը՝
«Թէև այրի ինձ մնաց,
«Արկօրէն տանում է
«Դայթակղիչի կուռ չղթան։

«Բայց նա չէ ինձ օրինակ,
«Ես Հայ՝ Հայիս կը ճանչնամ,
«Օտար փեսայ չուզիմ
«Ես միշտ այրի կը մնամ։

«Կար ժամանակ, որ ես էլ՝
«Շքեղազարդ Հարսի պէս՝
«Հազար ու փիւբ պչրանքով,
«Փախչում էի ափերիս։

Յատակը պարզ ու վճիտ,
«Կոհակներս պղտուն,
«Լուսարերը մինչեւ այգ
«Ջրերս մէջին էր լողում։

«Ի՞նչքա մրնաց էն օրից,
«Ա՛ր չրամօտ գեղերս,
«Ա՛ր իմ չէն քաղաքից,
«Ա՛ր բերկրալի տեղերը։

«Տուրքը չրի ամէն օր
«Իր սուրը ծոցէն Արարատ
«Մայրաքաղաք ինձ անուղ
«Պարզեւում է լիառատ։

«Բայց ես այն սուրը չրերով
«Ասրը Ակօրի տղրիս բին
«Պիտի ցօղո՞մ արատապղծ
«Իմ ատելի օտարին։

«Մինչ իմ սրդիք, ո՛վ գիտէ
«Ծարաւ, նօթի. անտէրունչ
«Օտար աշխարհ յածում են
«Թոյլ ոտքերով կիսաշունչ...
«Հեռո՛ւ հեռո՛ւ քըշտերին
«Բլրնիկ, ազգն իմ Հայկեան,
«Նորա տեղը ինձ տուին
«Ազգ անկրոն, մոլեկան:
«Դոցա՞ համար զարդարեմ
«Իմ հիւրընկալ ափերը,
«Եւ կամ դոցա՞ հրապուրեմ
«Ձրպուռս, պրլշած աչերը:
«Բանի որ իմ զաւակունք
«Այսպէս կը մընան պանդուխտ
«Ինձ միշտ սրտոտ կը տեսնէք,
«Այդ է անխաբ իմ սուրբ ուխտս»:
Էլ չը խօսեց Արտքսը,
Յորձանք տուեց ահագին,
Օդակ-օդակ օձի պէս՝
Առաջ սողաց մոլեգին:

262 ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒ

Մայրենի՛ լեզու, մայրենի՛ բարբառ,
Ախորժ ընտանի իմ հոգւոյս համար,
Առաջին դու խօսք ականջիս հասած,
Դու սիրոյ քաղցրիկ առաջին յօդուած,
Մանկական լեզուիս թոթոփանք տկար,
Հնչում ես իմ մէջ դու միշտ անդադար:
Դեղեցի՛կ լեզու, հրաշալի՛ լեզու,
Այդ ի՞նչպէս քաղցրը հընչում ես ինձ դու.
Կամի՞մ աւելի քաջ ծանօթանալ
Քո ճոխ գանձերին, հոգով հայանալ,

Ասես թէ ահա կանչում էին ինձ
Պապերն ու հայրերն խոր գերեզմանից:
Հնչի՛ր դու հնչի՛ր այժմ և յաւէտեան,
Մայրենի լեզու բարբառ սիրական
Արի՛ բարձրացիր հնութեան փոշուց.
Դու իմ հայ լեզու մեռացած վաղուց
Զգեցիր նոր կեանք սուրբ գրուածներով,
Որ ամենայն սիրտ վառուի քո սիրով:
Ամէն տեղ փչում է Աստուծոյ շունչը.
Սուրբ է այս միւս, այլ ձև ու ոճը.
Բայց թէ աղօթել գոհանալ պէտք էր,
Իմ սրտի սէրը յայտնել արժան էր,
Իմ երանական մտածութիւնքը—
Ապա կը խօսիմ իմ մորըս խօսքը:

263 ԵՐԳ ՆԺԴԵՀԻ

(«Ծիծեռնակս ի եղանակով»)

Մայրենի սուրբ հողից
Հեռացայ դէպի հիւսիս.
Բայց ճմլում են հոգիս
Աբարատ ու Մասիս:
Նոցա լոյն գաշտավայր,
Նոցա օդ զովարար՝
Զեն այլ իմ գլօսարան,
Եւ հոգուս բալասան:
Նոցա պաղ աղբիւրներ,
Սառնորակ վրտակներ,
Զովացնում չեն ծարաւ
Պանդխտիս մշտաերեր:

Ահա ո՞ւր է նոցա ջուր
Աբծամեծ պէս մաքուր.
Ինձ այսօր Հիւսիսի
Մրնաց խորհ ըմպելի,
Իմ սիրուն վարուժան,
Երբ Թրուչիս Հայաստան,
Փոխանակ նըժդեհիս
Համբուրես իմ Մասիս՝
Ասես Թէ քո որդին՝
Հիւսիսի ափերին
Սուգ նըստած որբի պէս
Աղրում է մըշտապէս՝
Դիշեր ցուն չունի նա,
Յերեկով մըտոյած,
Ո՛չ ուտում, ո՛չ խըմում,
Կարօտից քո այրուած՝
Ասես որ դէպ Հիւսիս
Թո՛ղ պարզէ իւր մտքնիս,
Շուտ քաշէ ինձ իւր մօտ,
Դեռ չառած մահու հոտ՝
Թո՛ղ առնուն մեզմ գագաթ,
Իմ ոսկերք բազմչարչար
Մասիսից աւրը ծոցում՝
Իմ ծրնընդեան օրրոցում՝
Է՛կ, պարզէ՛ր, իմ Թրուչնակ,
Քո Թեւեր լայնաբաձակ.
Թրուէ՛ր արագ, շատ ու շատ.
Դէպ ի վեհ Արարատ՝

Պատրաստիր անգ տօպան
Պանդխտիս Հայկագեան,
Թո՛ղ լինի նորա հաղ
Իմ վերջին պատսպարան՝

264 ՀԱՑՐԵՆԵԱՑ ՏԷՆՋԸ

Մայրիկ իմ, ի քէն հեռի
Կարօտով սիրտս խիստ կ'այրի.
Լաւ գիտեմ արդի տան մէջ կայ հոգ կըրակ.
Երբ Թողի քեզ հոտ մինակ,
Քաղցր վայր մեր տնակ՝
Թէ այս խօսքն և Թէ վայրը գան ինձ մրչտ՝
Գամ, գամ, գամ, պիտ՝ տուն, մայրիկ գամ.
Թէև էի ցարդ անգամ,
Սիրտս, մայրիկ իմ, արդ հալի,
Քոյր եզբայր ինձ սիրելի.
Դառնամ տուն պիտ՝ իմ մայրիկ, դառնամ տուն պիտ՝
Երազոցս մէջ խուռն տակաւ
Տեսիլքներ ինձ գան կարգաւ,
Ամպողջ ութ տուս տաբիներ շարտին յանկարծ.
Իմ աչացս գիմ ի առջեւ,
Ձեմ զարմնուր. ես լամ մինչեւ
Սուգ արցունք կարծես արտիս կուգայ ինձ վարձ՝
Գամ, գամ, եմ,
Ձեմ տեսներ գիմքն Թէպէտ ես,
Միշտ պատրաստ եմ սոսկ ի տես.
Բայց երբէք իւր հասակ, աչք, այտ չեմ մոռցեր,
Երազն ինձ տայ կեանք և կուր,
Երբ տեսնեմ զայն ջինջ մաքուր,
Երբ լսեմ ձայն «Կարօտ եմ ազօթքին ձեր»՝
Գամ, գամ, եմ

265 ԽԵՂՃԸ

Մայրիկ ինչո՞ւ այս խեղճը
Կը պտըտի պատատած,
Ոտքը բոպիկ, գլխարաց
Կարծես լինի նա հարբած։
Զի զրկեցին վարժատուն
Բարի խրատ չի տուին,
Խեղճը մնաց անուսում
Անօգնական բնաւին։
Մայրիկ չուգիմ ես նման
Լինիլ թշուառ այս մարդուն,
Այսուհետեւ պիտ՝ երթամ
Ամենայն օր վարժատուն։

266 ՄԱՆԿՈՒԹԵԱՆ ՕՐԵՐ

Մանկութեան օրեր երապի նման,
Անցաք գնացիք, ալ չէք գառնալու,
Ո՛հ դուք երջանիկ, ո՛ անհոգ օրեր,
Ընդունակ միայն ուրախացնելու։
Զեզանից յետոյ եկաւ դիտութիւն,
Իւր ծանր հայեացքով աշխարհի վերայ.
Ամէն բան ընկաւ մտածութեան տակ,
Բոպէ չը մնաց ազատ կամ ունայն։
Գիտակցութիւնը յանդգնեց սորին,
Ազգի վիճակը ծանրացաւ սրտիս...
Ապոլլոն տուեց ինձ իւր քնարը,
Որպէս փարատիչ տրտում յաւերիս։

Աւա՛ղ, այդ քնարը իմ ձեռքում հնչեց,
Նոյնպէս լալագին, նոյնպէս վշտահար.
Ինչպէս իմ սիրտն էր. իմ զգացմունքը
Ուրախացուցիչ չի գտայ մի՛ լար։
Ես այն ժամանակ միայն զգացի
Որ այդ ցաւերից ազատուելու չեմ,
Որչափ իմ ազգս կը մնայ տարուկ,
Օտարների ձեռք անխօս տխրագէմ։
Մանկութեան օրերս ինչո՞ւ այդպէս շուտ
Թռաք գընացիք անդարձ յաւիտեան.
Եւ այն ժամանակ անհոգ ու ազատ,
Կարծում էի ինձ աշխարհի իշխան։
Տէրութեան չղիման ինձ զգալի չէր,
Եւ ոչ բռնութեան անգութ ճանկերը,
Զեզանից յետոյ ծանրացան նոքա,
Ո՛հ անիծում եմ ես այս օրերը։
Լուռ կաց դուս քնար, այլ մի հնչէր ինձ,
Ապոլլոն, յետ առ գարձեալ դու նորան.
Տա՛ր մի այլ մարդու, որ ընդունակ է,
Ջոհ բերել կեանքը սիրած ազգիկան։
Ես պիտի դուրս գամ գէպի հրապարակ,
Առանց քնարի. անզարդ խօսքերով,
Ես պիտի գոչեմ, պիտի բողոքեմ,
Խաւարի ընդդէմ պարերազմելով։
Ներկայ օրերում ալ ինչ սև քնար,
Ասւր է հարկաւոր կարիճի ձեռքին.
Աբիւն ու կրակ թշնամու վերայ,
Այս պիտի լինի խորհուրդ մեր կեանքին։

Թող պատգամախօսը հնացած Դէլֆի,
Իւր եռոտանուս վրայ փրփրի.
Թող մխիթն դարու գազափարներով,
Ամբոխը խարէլ ճգնի աչքառաւի։

Թող նա Թարգմանէ զրպարտութիւնը,
Թող մխիթարուի ծովի ափերում.
Մենք ազատութեան ենք միայն Թարգման
Միայն այս խօսքըս ունիմ բերանում.

Ով Հայր, ով դու Հայր, որ երկնքում ես,
Իշնայիր Թշուառ մեր անտէր ազգին.
Մի տար զոհ գնալ Թշնամիների,
Նա ալ չէ լսում Դէլֆեան հարցուկին։

267 ՀԱՅ ՁԻՆՈՒՈՐ

Մասիսի ճակտին ամպրոպ պատռեցաւ,
Հայկազուս սրտէն վախ փարատեցաւ,
Նժոյգ է տակս ձեռիս այնպէս.
Սալմա՜ն, ունի՞ս դուն դիմացը.

Ըսաբուկ եմ եկել, կը դառնամ ազատ,
Յետ խրլած քեզմէն հոգն իմ հարազատ։

Անսուտ երգումով ուխտել եմ ազգիս—
Զոհել մարմինըս զոհել և հոգիս,
Արհամարհել ցավ և անդորրութիւն,
Տալ Հայաստանին տուրը ազատութիւն։

—Ըսաբուկ եմ եկել կը դառնամ ազատ,
Յետ խրլած քեզմէ հոգն իմ հարազատ։

Լլ ես ահ չունիմ քու վախկոտ զօրքէն,
Զգուած եմ ես քու շարեալի օրէնքէն,
Մշու դաշտերը վան ու Արզրում
Կ'լուանան զօրքիդ սեւ ու պիղծ արիւն.
—Ըսաբուկ եմ եկել, կը դառնամ ազատ,
Յետ խրլած քեզմէն հոգն իմ հարազատ։
Թշո՛ւառ, քու յոյսն է Զէրքէզն ու Քիւրդը—
Չա՛, մէկ քամիին տամ նոցա բուրդը.
Զեռքիս ունիմ ես Ղեւոնդի լախտը,
Որ ջարդեմ փշրեմ քու փտած թմախտը,
Սալմա՜ն, սիրտ ունի՞ս իջիր մարտի դաշտ.
Տես քու տաչեւն է Թշնամիդ անհաշտ։

268 ՀԱՅԻ ԳԱՆԳԱՏԸ

Մեկի մոռցաւ Հայոց ազգը,
Չի լսեր մեր պատառանքը,
Տեսնել չուզէր մեր տանջանքը,
Ապա որին մենք գանգըտինք։
Աստուա՜ծ, սրբուով որ բարի ես,
Մենք վար, Դուն վեր շատ հեռի ես,
Այժմ ալ խօշոր զօրձերի ես.
Ապա որի՞ն մենք գանգըտինք։
Ցոյնը մեզի սալը կ'ուտէ,
Նէմցէն մեզնէ կրօնքով զատ է,
Ցիրանկի բանը, կ'ասեն, վատ է,
Ապա որի՞ն մենք գանգըտինք։
Թուրքին միտքը դէպի Պալքան
Իպատ մոռցաւ նա Հայաստան,
Նըրան պէտք է լոկ մեր փարան.
Ապա որի՞ն մենք գանգըտինք։

Թուրքին միտքը դէպի Պալքան,
Իապառ մոռցաւ նա Հայաստան,
Ներքան պէտք է լոկ մեր փարան.
Ապա որի՞ն մենք դանգրտինք։

Մեր աչքը քայլ կը տրիճներ կան,
Պէտք որ եզաւ ատակ ալ կուգայ
Մինակ՝ ճամբայ ցուցնող չկայ.
Ապա որի՞ն մենք դանգրտինք։

Հայի գաշա՛ր, արեւմն գաշաեր,
Շատ կուլ տուիք Հայի քայլեր,
Թէ որ ձեզնէ մէկը ելլէր,
Մեր գանգատին վերջ կը դնէր։

268 ՄԵՆՔ ՊԷՏՔ Է ԿՌՈՒԵՆՔ

Մենք պէտք է կռուենք և ոչ լաց լինենք,
Ազգի կորուստը զէնքով յետ խլենք.
Այսքան դար լացինք, ա՛լ է լսողը,
Մեզ լի՞նչ շահ բերեց արցունքի ծովը։

Այլևս չլանք և ոչ լաց լինենք,
Կրակուած սրտով մեր գործը վառենք,
Անվեհեր քայլին այս է պատկանում.
Միշտ ազատ մեռնիլ կռուի լայն դաշտում։

Մոլի և երկչոտ թշնամին թող լայ.
Երբ հայ քայլի դէմ կռիւ դուրս կուգայ,
Մենք վախեցող չենք մահից տանջանքից,
Եւ ոչ ալ մահու դաժան զնդակից։

Անէծք այն հօրն, որ չի մղում որդուն
Որ ազգի սիրուն նա թափէ արիւն.
Անի՛ծք այն Հային եւ բիւր նախատինք,
Որ ազգի սիրուն չի զոհում բարիք։

270 ՄԵՆՔ ԱՆԿԵՂԾ ՉԻՆՈՒՈՐ ԵՆՔ

Մենք անկեղծ զինուոր ենք տառնց ի վհճակ.
Ուխտել ենք ծառայել երկար ժամանակ.
Պարսկաստանի խորքից եկել խնամակ,
Դնում ենք բարով, կ'ուշանանք տարով. [մեզի
Արիւն, սուր ու հուր պատերազմի դաշտ կ'սպասեն

Դաշնակից մեզ տուեց «Ջանֆիդայ» անուն
Այդ անուան համաձայն տեսաւ զօրութիւն.
Մենք չենք ուզեր ազատ կամաւ բռնութիւն,
Ուխտել ենք կռուիլ այդ սիրով մեռնիլ, [կութիւն
Համոզուած ենք որ այդպիսով մեզ կայ մեզ փրկ-

Ատամզօլը պիտի լինի արեան ծով.
Ամեն կողմից կռիւ կ'սկսի շուտով.
Կռուորենք Բաշկալայ, անցնենք հեշտ կերպով
Աչից վ.արդանը ձախից իշխանը,
Դրաւենք Աղբակ տարածենք տարափ.
Փառք Դաշնակցութեան։

Բաշկալայ գաւառում, այն պատերազմին,
Ահեղի մեծ տարափ տիրեց թշնամուն.
Բայց Զէյթունը յաղթեց վատ չար գազանին.
Կեցցէ Զէյթունը, խրոխտ Սասունը, կռուակցութիւնը
Բաղդատոր օրեր, պարծանք Հայերուն։

271 ԵՐԳ ՄԻՈՒԹԵԱՆ

Մենք Հնչակեան ենք, եղբայր դուք Դաշնակցական
Մենք երկուքս էլ կուլանք ի սէր Հայկեական
Արիք եղբարք հոգւով սրտով միանանք,
Ծեռք ձեռքի տանք տալա գործենք սրշաւանք,
Արիք եղբարք, միանանք.
Բաւական է մեր տանջանք,
Ի սէր ճնշուած Հայ ազգին,
Գործ գնենք մեր ճիգ ու ջան,
Մեր պապերն էլ ներկայս պէս գործեցին,
Իրենց ձեռքով իրենց տուներ քանդեցին,
Արի եղբարք ևն։

272 ԻՏԱԼԱՑԻ ԱՂՋԿԱՆ ԵՐԳԸ

«Մեր հայրենիք, թշուառ, անտէր,
Մեր թշնամեաց ոտնակոխ,
Իւր որդիքը արդ կանչում է,
Հանել իւր վրէժ, քէն ու ոխ»
«Մեր հայրենիք չղթաներով
Այսքան տարի կապկապած,
Իւր քաջ որդւոց սուրը արիւնով
Պիտի լինի ազատուած»
Ահա՛, եղբայր, քեզ մի գրօշ,
Որ իմ ձեռքով գործեցի.
Ինչերներըը ևս քուն չեզայ,
Աբտաստքով լուացի»
«Նայիր նորան երեք գոյնով՝
«Նուիրական մեր նշան,
«Թող փղփղի թշնամու դէմ,
«Թո՛ղ կործանի սէգ հրսկան։»
Ինչքան կեն մարդ, մի թոյլ էակ,
Պատերազմի գործերում
Կարէ օգնել իւր եղբօրը
Զանց չարեցի քո սիրուն»

Ահա իմ գործ, ահա իմ գրօշ,
Շուտ ձի հեծիր քաջի պէս,
Դրնա փրկել մայր հայրենիք,
Պատերազմի վառ հանգէս»
«Ամենայն տեղ մահը մի է,
Մարդ մի անգամ պիտ՝ մեռնի,
Բայց երանի՛ որ իւր ազգի
Ազատութեան կը զոհուի»
«Դրնա՛, եղբայր, ասուած քեզ յոյս,
Ազգի սէրը քաջալեր,
Դրնա թէև չեմ կարող գալ,
Բայց իմ հոգին քեզ ընկեր»
«Դրնա մեռիր դու քաջի պէս,
Թող չը տեսնէ թշնամին
Քո թիկունքը, թող նա չտես
Թէ վատ է խտալացին»
Ասաց տուեց օրհրդը
Իւր եղբօրը մի գրօշ,
Մեսաբտից էր, ազնիւ գործած,
Ուր երեք գոյն կար որոշ
Եղբայրն առաւ և ողջունեց
Իւր սիրական քրնքուշ քոյր,
Ասաւ զէնքը, սուր, հրացան,
Հեծաւ իւր ձին սեւամոյր
«Քոյրիկ, կանչեց քաջ պատանին,—
Մրնաս բարեաւ սիրական.
Այս գրօշակին պիտի նայի
Ամրողջ բանակ Իտալեան
«Նա սուրը է ինձ երբ մկրտուած
Աբտաստքով ուր կռնքած
Դու չտեսնեցիր ինձ յիշատակ,
Հայրենիքի նուիրուած
Թէ մեռանիմ դու մի սրդար,
Իմացիր որ տարեցի
Դէպի մահու արքայութիւն,
Իմ հետ քանի թշնամի»

Աւաց վազեց դէպի հանգէս
Աւտարիացոց յանդիման,
Իւր արիւնով գրնել յաւէրժ,
Ազատութիւն Իտալեան.
Ո՛հ, իմ սիրտը կորտամուտ է
Տեսանելով այսպէս ակր,
Դէպի թշուառ մի հայրենիք,
Որ տանկոխ եղած էր։
Սորա կէսը, կէսի կէսը,
Դէմ երեւէր մեր ազգում.
Բայց մեր կանայք... ա՛ւր, եղիչէ,
Ո՛ւր մեր «Տիկնայք փափկասուն»։
Ո՛հ... սրտաստ ք ինձ խեղդում են,
Այլ չեմ կարող բան խօսել.
Զէ՛ ... թշուառ չէ Իտալիան,
Եթէ կանայք այսպէս են։

273 ԽՆԿԻ ԾԱՌ

Մեր գրատանը խընկի ծառ,
Գիւրո՛ւմ չան,
Ձեր գրատանը խընկի ծառ՝
Գիւրո՛ւմ չան.
Խընկենին ա բերել բար,
Իմ խօրտիկ, պըղտիկ եար
Գիւրում չան։

Մեր գրատանը խընկի ծառ
Նաշխատն բըլբուլ վըրէն թառ,
Երեսար ա գար, չորոր տար,
Սիրուն եարին օրօր տար։

Մեր գրանը խընկի ծառ,
Մարջան բըլբուլ վըրէն թառ,
Գընար ու գար, շուրին տար,
Անուշ եարին թեւին տար։

Մեր գրատանը խընկի ծառ,
Ոսկի բըլբուլ վրէն թառ,
Կարմիր խընձոր անել տար
Ախտան ծաղիկ տանել տար։

274 ԱՆՎԵՐՋ ԳԱՆԳԱՏՆԵՐ

Մեր խեղճ ազգը ուսում չունի,
Զունի ուսում խելք ալ չունի.
Խելօքներս այդ լաւ գիտենք,
Բայց ա՛խ միայն մենք կը խօսենք։

Մեր խեղճ ազգը հալածած է.
Երկրէ երկիր տարագրած է.
Բազդաւորներս այդ գիտենք,
Գիտենք և միայն կը խօսենք։

Հայ մշակը երկիր չունի.
Երկիր չունի՝ հարկ շատ ունի,
Հարուստներըս մենք այդ գիտենք.
Գիտենք և միայն կը խօսենք։

Հայի տղան գրքեր չունի.
Վարժարանը վարպետ չունի.
Գիտուններս այդ լաւ գիտենք.
Գիտենք և միայն կը խօսենք։

Հայ տէրտէրը կարդալ չգիտէ,
Հայ տիրացուն շատ տգէտ է.
Եպիսկոպոսք այդ լաւ գիտենք,
Օգնելու տեղ լոկ կը խօսենք։
Հայ գեղջուկի աղջիկն ու կին,
Անմարթ սեղեխ են Թուրք, Պարսկին.
Ամերաներս մի՞թէ չգիտենք,—
Օգնելու տեղ լոկ կը խօսենք։
Աչքըս գարձնեմ արեւմուտքին,
Արեւ ծագէ Վլաւոն ազգին.
Հայի արեւն տհա վեց գար,
Համատարած պատէ խաւարն
Հայի գանգատ, անվերջ գանգատ,
Տրտունջ ու լաց սուգ անընդհատ . . .
Երբ ապա աստ, ե՞րբ արդ շաչիւն,
Փողի ձայներ մարտի գոչիւն...։
Թուրը ձեռքէս Թուրքը առաւ.
Տուայտանքէ խելքս թռաւ,
Անգութ ցեղնօղ. մի՞թէ չես տալ
Ազետալի բաղդս սըգալ։

275 ՆԱԻԵՐԳ

Մեր նաւն իրրեւ փետուր
Հովերուն անձնատուր,
Ալեաց վրայ ծըփուն
Թափառինք օրն ի բուն։

Ինչ հարկ Թեւաճակ ու զեկ.
Այս ծածանքն է ազեկ,
Կապուտակ ջաբերէն
Օրօրուինք հեշտօրէն
Երկնից տակ լուսափառ,
Մահինք լուռ անբարբառ,
Թող մեր հոգեր չընչին
Ամպերն ի վեր թըռչին
Եւ երազներ թեթեւ՝
Մեր հոգւոյն տալով թեւ՝
Եգեմի թուփերէն
Բուրումներ մեզ բերեն։
Մեր սրտին անդորրիկ
Ակն է՝ կուռ փոխորիկ.
Ուր անփոթ մենք նաւազ՝
Կը գիմենք վազն ի վազ։
Նայուածքներն աչքերուն
Տարփալից ու սիրուն.
Փայլակի հանդուներակ,
Կը շոգան շարունակ։
Եւ լուսնակն ու արեւ
Կը ժըպտին մեր վերեւ,
Մինչ հեռու եզերքէն
Նըւագներ մեզ կ'երգեն...։
Մեր նաւն իրրեւ փետուր
Հովերուն անձնատուր
Ալեաց վրայ ծըփուն
Թափառինք օրն ի բուն։

276 ԱՐԻ ՍԻՐՈՒՆ ԳՆԱ ՍԻՐՈՒԲ

Մեր տանը եասե քառատուն կարաս,
Քառատուն կարասի գինին է խաս,
Օակի գիւղիս արծըմի թաս,
Աբեն թասին պագիկ մի տաս։

Աբի սիրուն, գնա սիրուն,
Հազար էրանեկ քո սիրուն։

Մեր տան ձեր տան մօտիկ, մօտիկ,
Դու կապել ես կարմիր դօտիկ,
Էրթանք քաղենք կանանչ խոտիկ,
Ցեանանք վիր եարն է խօրօտիկ։

Գամին էկաւ էբան-էբան,
Գնաց հասաւ Մշու բերան,
Մշու հաւեր թեւաւորան,
Գեալուշի տուն սեւաւորան։

277 ԱՌ ՀԱՅԱՍՏԱՆ

Մեր սիրուն վայելչական տեղերն օտարներ են առեր
Պրի՛ք եզարք ի միասին, դու գտատատան ո՞ւր տեղ
Ով որ իւր ազգն ուրանայ [եաւ
Երկու աչքը կուրանայ
Ցեանեալ աղբատի նման
Դանէ ի դուռ մուրանայ։
Հանապարհումըդ նայելով աչքերումըս լոյս չը մնաց,
Երկնային աստղերո՞ւ մէջ ես դու Հայաստան ո՞ւր
Կշտին դպչի գեղարդը, [տեղ եա
Փորիցը թափի լեարդը

Դետին անցնի բիւր անգամ
Ազգն որացող վատ մարդը։ [տեղ եաւ
Քու փափաքով վառւում եմ ես, իմ սիրական ո՛ւր
Երկնային աստղերո՞ւ մէջ ես, դու Հայաստան, ո՛ր

Ով որ իւր ազգն ուրանայ [տեղ եաւ
Երկու աչքը կուրանայ
Ցեանեալ աղբատի նըման
Դանէ ի դուռ մուրանայ.

278 ՄԵՐ ՊԱՀԱՆՋՆ Է՝ ԱՐԴԱՐ

«Հրաժարուեմ բնկերներս» եղանակով

Մեր Պահանջն է արդար, դա՛տը ճշմարիտ
Զենք կարող հանդուրժել մենք բանուԹեան,
Մինչ, տեսէ՛ք, կը աքնինք ցաւերն դարմանել
Հալածանք մեր բաժին կը գտնենք։
Ձոյս կ'ըղձանք տարածել ժողովուրդին մէջ.
Ցոյն անոյշ՝ ներշնչել սրատեսկներուն,
Եւ անցքերն մեր առջեւ գոցուած կը գտնենք,
Ասպարէզը խափանուած վատերէ։

Հերի՛ք, ժողովուրդ, այս որքան նեբեցիր
Կանգնէ՛ դուն պաշտպան շահերուդ վտանգուած
Ուժգին որոտալով վրէ՛ժ, վրէ՛ժ, յառա՛ջ յառա՛ջ
յառա՛ջ, յառա՛ջ։

Բաջանանք, զրկուածներն այսօրուայ կեանքին
Վաղն է ծոն անկասկած յաղԹութեան.
Մենք՝ պատրաստ լուսանքին և հալածանքին,
Դէպ յառաջ միշտ սուրանք անյողդողդ։
ՅաղԹական դափնիներն պիտի չ'ուշանան
Զարդարել մեր ճակատն այս վաստակաբեկ.
Մինչ վատերն քանակել մեզի խորհելին,
Բարացած պիտ մնան մեր առջեւ։

Հերի՛ք ժողովուրդ, այս որքան նեցիր եւն։

ԳՐԱԴԱՐԱՆ

279 ԱՐՄԵՆԻ ԵՐԳԸ

Մեր քաջ հայոց զօրութիւն
Վեր կացէ՛ք ասաց Աբամ,
Յառաջեա բացէք նըշան,
Դնամք հայ լեզուն տարածել,
Ո՛հ, Աբամ, Աբամ, Աբամ.

Նեւքար զըսարուկ Ասորին
Բարբառ կոչէ առաջին,
Դլուխն աշտարակ մըխեցէք
Որ երկնից սոսվի հայերէն,
Ո՛հ, Աբամ. Աբամ, Աբամ։

Ցորդան տուք զօրք, օ՛ն յորդան
Դէպի կողմն արեւմտեան,
Պայապիս քաղեա Տիտան,
Դիրք ի տապաստ ի դամբան.
Ո՛հ, Աբամ, Աբամ, Աբամ։

Ցորդան տո՛ւք զօրք, օ՛ն յորդան
Տէգ լայնալիճ աղեղան,
Բընդուշախօս ամբոխին
Տալ պլեզու հայկական,
Ո՛հ, Աբամ, Աբամ, Աբամ։

Ո՞վ չի գիտէ հայերէն
Ոչ ճանաչէ նա զօրէն.
Որ բանիւն հայոց արար,
Այս մեծ աշխարհ մեզ համար,
Ո՛հ, Աբամ. Աբամ, Աբամ։

Ի ծովէ մինչև ի ծով
Թող խօսին հայ բառերով,
Ներհակողին ներգակով,
Յուզէ՛ք ո՛հ, ասաց Աբամ։

280 ՎԱՆԻ ԿՈՏՈՐԱԾԸ

Մի գեղեցիկ պարզ գիշեր էր՝
Երկինքը լի աստղերով.
Եւ լուսինը մեղմ փայլում էր
Պաճնանարան իր լոյսով։
Նա նայում էր լուիկ ծիծիկ
Իրրեւ մի կոյս գիպի վան.
Նըրա աչքին երեւում էր
Բիւր ցուտի տեսարան։
Դա տեսնում էր անմիթիւ քիւրդեր
Բռնած սուր, թուր, հրացան
Պատորում են կողոպտում են.
Վաւերում են անտէր վան։
Եւ կարծեմ թէ վեր երկնքից
Խօսում էր այդ լուռ վկան.
«Վրայ հասի՛ր, Հայ ազգասէր.
Ձեռքից կ՝երթայ Հայաստան»։

281 ԿԱՐԻՆԻ ՍՈԽԱԿԸ

Մի երգիլ իմ սոխակ,
Պատուհանիս դուռ տակ,
Սրտորայ գէպ Կարին
Ափսոսիլ խեղճ հայերին։

Կարինն ոդբացած,
Զաւակունք կոտորած,
Արտորա՛ եղեւ
Կարինն է հոգեվարք,
Հեռո էլ խեղճ հայ աշխարհք
Արտորա՛ եղեւ
Կարին կը հառաչէ,
«Օգնեցէք» կը կանչէ.
Արտորա՛ եղեւ
Տառն հազար աչնալու
Կրնայ ինձ փրկելու
Արտորա՛ եղեւ
Մի օր շատ կը ցաւիք,
Որ օգնել չուզեցիք.
Արտորա՛ եղեւ
Դէպ Կարին, հա՛յ եղբայր,
Մինչ կործան չէ՛ իսպառ.
Արտորանք դէպ Կարին՝
Ազատել Հայերին։

282 ՄԻ ԼԱՐ ԲԼԲՈՒԼ

Մի՛ լար բլբուլ, քեզ մի տանջիր,
Որ փոթորիկն անիրաւ
Վարդըդ սիրուն, վարդըդ կարմին
Թըփից պոկեց ու տարաւ . . .

Կ'անցնեն օրեր, կուգան կըրկին
Մի նոր գարուն վարդ տալու.

Եւ մոռացած քո վիշտը հին
Նորից կ'երգես վարդի սէր։
Բայց վա՛յ կեանքին այն խեղճ երգչի
Որ վաղաժամ սըրտպատառ,
Իր սիրելի խօսուն վարդին
Սառը հողի մէջ տեսաւ։
Երգչի համար գարուն չը կայ
Ո՛չ էլ նոր վարդ կը սիրէ.
Նա պէտք է լա՛յ, պէտք է սըգայ
Մինչ յաւիտեան կը լըռէ։

283 ՊԱՆԴՈՒԽՏ

Մի հեծեր մայր իմ, մի հեծեր
Չէ թէ կը մեռնիմ.
Տարիքս է քսան տարեկան
Փափաքս չեմ առած,
Դառաց փոշն պատերազմի,
Չէնքեր թնդացին
Հայ կարիճներ ոտքի ի ձեռին,
Խումբ խումբ քալեցին
Տուր ձեռքերդ մայրիկ սիրեմ
Կրկին համբուրեմ.
Հայոց թագն է կոխ արեւն,
Պարտքս կատարեմ
Տուր զէնքերս քաղցրիկ մայր իմ,
Ես պիտի երթամ
Տուր ձեռքերդ մէյմ ալ սեղմեմ,
Գուցէ չդառնամ։

Մի լար մայր իմ, մ՛ողբար մայր իմ,
Սիրտս փղձկեցաւ.
Բայց չեմ կարող մոռանալու,
Ես պիտի երթամ։
Հայրեր կուլան, մայրեր կ՛ողբան,
Սիրտ չի դիմանար.
Պատերազմի դաշտին վրայ,
Զէնքեր կը թնեթան։
Հայրիկ սա մեր գուռին դիմաց
Կայ մի սև անտուկ,
Որդեակ այդ քո սեւ դագաղն է՝
Վայ քու ծնողաց։
Կակօյտ երկինք գոյնզգոյնով
Կամար է պատեր,
Մեր հայ տղոց արտերն ալ
Խաւար է պատեր։
Սրբէ աչքերդ ադնիւ մայր իմ
Ինչո՞ւ կարտասուես.
Մի՛ լար մայր իմ, մ՛ողբար մայր իմ
Թէ գիս կը սիրես։
Տուր զէնքերս քաղցրիկ մայր իմ,
Ես պիտի երթամ,
Տուր մայրական օրհնութիւնդ
Մի քիչ զօրանամ։
Ցաջողութիւն մաղթեցէք
Ծերուն հայրեր
Զեզ կը թողում իմ սգալի
Մայրեր ու քոյրեր։

284 ՀԱՅԴՈՒԿԻ ԵՐԳԸ

Մինչ բընութիւն էր զբաղթ
Բացօթեայ պարզ երկնից տակ,
Հայ հերոսներ անտառին մէջ
Երգում էին երգ մ՛յատակ։
«Մենք ենք ազատ Հայ պատանիք,
Աշխարհն է այս լեռները.
Սուրն է միայն մեր սիրելին,
Եւ ընկերը՝ պէրտանը։
Մեր զարգերն են մեր զէնքերը
Եւ թանգ ոսկի փամփշտաման,
Անկողինը կանանչ խոտ՝
Փափուկ, մաքուր, պատուական։
Մեզ ապաստան՝ ժայռ քարերը,
Եւ լապտերը՝ վառ լուսնակ,
Բնակարան՝ անտառները
Եւ հայելին՝ պարզ վըտակ։»
Կարկաչահոս առուակները
Օձապտոյտ թաւալմամբ,
Անտառի խոր ձորերու մէջ
Թափուում էին ցոլացմամբ։
Քաղցրահնչիւն պուլպաբիները
Մատների նուրբ շօշափմամբ,
Մեղմիկ մեղմիկ զարնուում էր
Մելամաղձիկ շառաչմամբ։
Բնութեան շքեղ այս վայրերը
Սիրահարած արտերով,
Թնդացնում էին անտառները
Երգ երգելով պարելով։

Ծածանում էր նրանց դլխին
Ոսկի բանուած մի դրօշ,
Նահատակի արեամբ ներկուած
Սա բառերը բացորոշ—

«Ազատութիւն, արդարութիւն
Թշուառների լոկ պաշտպան.
Անձնանուէր Հայ ազգութիւն
Ընդդէմ չարին բռնութեան»

Մխօրինակ զդեստները՝
Կարիճ ուսդմի ձեւի տակ,
Ոսկի բանուած բաշլըխները՝
Փայլում էին լուսնի տակ։

Փամփուշտները նրանց կրծքին՝
Խաչաձեւ ուսից ձգուած,
Փոքրիկ սիրուն պէրտանիներ՝
Ծրնկաց վրայ միշտ դրուած։

Ցանկարծ հակիչ մը այդ խմբէն,
Խորհրդաւոր մի սուլով.
Դադար տուեց այդ հանդէսին՝
Դէպ ընդ առաջ քալելով։

Երիտասարդ լրարերը
Արագաշարժ նժոյգով,
Բերում է յաջող լուրեր.
Զուարթերես, վառ ճակտով։

Լրտեսապետն էր խրկեր
Հրահանգ մը այդ խմբին
Դէպի լեռն Իլրիպկի
Սպասել մի մտանիչի։

«Ղզերք,» գոչեց խմբապետը.
«Շուտ ընդ փոչի ի ճանապարհ.
Զարնենք փշրենք այդ վտառերը,
Թող խնդայ Հայաստան Մայր»։

285 ՄԻՆՉ ԵՐ

Մինչ Ե՞րբ մեր վրայ բռնանայ քիւրտը,
Մինչեւ Ե՞րբ կրենք այս անարդ լուծը,
Միթէ հինդ դարեր չբաւեցա՞ն,
Յագեցնել նրա փափագն բռնութեան։

Մինչ Ե՞րբ, ո՛վ Աստուած արիւն քրտինքի
Մեր վաստակովը կերակրենք քիւրտի.
Մինչ Ե՞րբ դաժան քիւրտ ծընծէ Հայ արիւն
Մինչ Ե՞րբ թալանէ մեր կայքը ու տուն։

Մինչ Ե՞րբ, ո՛վ Փրկիչ, քո սուրը խաչափայտ,
Օրն ի բուն պղծէ վատ ազգն անհատատ,
Մինչ Ե՞րբ, անարգուի հայութեան անուն,
Եւ նրա պաշտած սուրը դառնութիւն։

Չէ՞ որ Հայ եղբարք, մենք էլ մարդ ծնանք
Եւ որչափ ունինք ազգային պարծանք,
Միթէ ամօթ չէ՞ մեզ՝ դեռ համբերել,
Եւ այս սարկի անարդ լուծն քաշել։

Փշրենք, Հայ եղբա՛րք, խաւարի շղթան,
Շուտով ափրենք մեր մայր Հայաստան,
Զթողունք երբէք մեր ձեռքից գէնքը,
Մինչեւ չազատենք մեր Հայրենիքը։

Եւ դու ո՛վ Աստուած (որ տէր ես որբին,)
Այժմ էլ օգնող լեր թշուառ խեղճ հային,
Մէն մի հայու ձեռք տուր հրացան,
Եւ անյաղթ բազկով միշտ լեր օգնական։

286 ՈՂԲ ՀԱՅԱՍՏԱՆԻ

Մինչ երբ գլուխդ պիտի ծեծես,
Շղթայակապ այդպէս հեծես,
Հէք Հայաստան շինել արեւ
Երբ սոխակը սրգատեսիւ
Նոճիներէն շուտ տալով խոյս
Պիտի երդէ վարդ արշալոյս՝
Եղո՛ւկ, քեզի հէք հայրենիք
Որ շորգելով շքեղ դարնիք,
Որդիդդ անխիղճ գլխուդ վատուժ
Բոլորեցին սեւ նաճ ու փուշ
Ա՛հ վրէժխնդիր շանթեր ճայթին
Հայրենադրուժ հայոց ազգին։

287 ՀՐԱՒԷՐ ՀԱՅՐԵՆԵԱՑ

Մինչ թշնամիք հնչեն փողեր մարտին
Մինչ որոտած թնդանօթներն ահագին.
Արի՛ք ընկերք, խմբուինք արագ
Ազատութեան գրօշակին տակ.
Թո՛ղ կործանին բռնաւորք
Ազատութեան ենք գինուորք։
Բռնաւորներ թո՛ղ սարսուռն զգոյնուն,
Վերայ իրենց շքեղապարդ Գահերուն,
Որոնց շուրջը յար կը բզզան .
Հառաչէք ու ողբ ու սեւ կախան.
Թո՛ղ կործանին բռնաւորք
Ազատութեան եմք գինուորք։

Հին դարերու այն մընացորդ ճիւաղներ
Մինչ ե՞րբ ջնջին, մինչ ե՞րբ գերին հէք ազգեր,
Ջինուինք լոյսով ուսման ջահին
Վերջին հարուած մը տանք ուժգին,
Թո՛ղ կործանին բռնաւորք, ելին.
Ո՛չ զէնք, ո՛չ սուր, ո՛չ կախազան ո՛չ աքսոր
Ըր կասեցնեն Թո՛ղ մեր շաւղէն մեզ այսօր,
Կանգնել անկասկած ժողովուրդը
Այս Թող ըլլայ մեր սուրբ ուխտը,
Թո՛ղ կործանին բռնաւորք եւլն։

288 ԵՐԳ ՀԱՅՐԵՆԻ

Մինչդեռ լոյսով խայտայ բնութիւն
Ցեւ գառնաշունչ ձմերայնոյն.
Եւ ի գաւառն իմ հայրենի
Գեղածիծաղ գառնայ գարուն,
Մինչ բոյր ի բոյր փըթթին ծաղկունք
Եւ ճառուղեն նորեկ ծիծառունք,
Ի քեզ ես գարձ առնեմ յոյնժամ,
Ո՛վ ցանկալիդ իմ Հայաստան։

Ո՛չ Հելուեետեան լինձ դաշտավայրք
Եւ կամ գուարթ մարգագետինք,
Ո՛չ քան ըզգեղ չըքնաղագեղ
Իտալական պարտէս երկինք.
Հեռի ի քէն պանդխտ գոյով
Ցոյսվըդ յար կիզում անձկով.
Ի խանձարուրդ իմոց կենաց,
Ո՛վ Հայաստան, առնեմ ես գարձ։

Դայցեն աւուրք ուր մանկութեան
Անկցի տիրոջս իմ գեղ դալար,
Եւ հինէն խոյս տայցեն վայելք
Կենաց՝ թեթեւ ի գաբշապար
Ուր հէք մուսայս մտան ի յերեր
Մոռանայցէ երգել ըզսէր,
Ըզնինջ ի ծոցդ առնում յայնժամ,
Ո՛վ ցանկալիդ իմ Հայաստան։

289 ԽՈՍՏՈՒՄՆ

Մինչեւ մահուան անյիշատակ ի շիրիմ,
Մընամ քո սիրոյդ միշտ հաւատարիմ,
Կըրնայ բլլալ որ դուն, աւա՛ղ, մոռանաս զիս,
Բայց ես հաստատ եմ միշտ իմ խոստումնքիս։

Ո՛վ իմ հրեշտակ. յոյս իմ միակ նազելի,
Քեզի կեանք ու բաղդ բոլորն ալ տուի
Իմ մանկութեան տիրոջ դու սէր նախընծայ
Սիրտդ գերել միշտ ես փափաքեցայ։

Սակայն ախո՛ս, երջանկութիւն այն փափուկ
Մահուան ժանտ ձեռքով բլլայ վաղանցուկ,
Այս է վըճիռ զոր գրեց ճակտին մեր երկինք,
Պէտք է իրարմէ անգարձ բաժնուինք։

Սակայն իմ սիրտս քուկին տրտիդ անբաժան
Քեզմէ չի զատուի մինչ ի գերեզման.
Սիրոյս յետեն բաղձանք՝ յետին նշանակ,
Քու քուկդ է հանդչիլ՝ մահուան բարին տակ։

Սէխակն երգէ իւր դայլայլիկ գիշերին
Նստի ի վերայ մեր ցուրտ դամբանին,
Մինչ երկուքնիս, մենք ի տեղւոյն այդ դադար
Մահուան գրկաց մէջ ննջենք անդադար։

Վըրկայ բլլան աստեղք երկնից կամաբաց,
Ըզքեզ յաւիտեան սիրեմ անմոռաց,
Չի դադրիմ պիտի երբեք ըսել քեզ՝
«Ես քուկդ եմ յաւերժ սիրով բոցակէզ»։

Ո՛հ, ինչ ընեմ, ըսէ, սըրտիս իմ հատոր,
Արի՛ւնըս կ'ուզես, թո՛ղ վազի բոլոր.
Բայց թէ անով ալ գոհ չըլլաս, ո՛վ անգութ,
Կեանքըս այս ես զոհ կուտամ քու սիրոյդ։

Պիտի սիրես զիս յետ մահուանն ալ եւս,
Բայց անօգուտ տեղ արցունքներ թափես,
Շերմիս վրայ անմըխիթար ողբալով
Այն սիրըլիդ որ կորսուեր չուտով։

290 ՄԱՌ

Մնացես բարեաւ, սէր իմ սէր,
Հրրաւէր մարտին որատաց.
Թէ չեմ քաջաց ես ընկեր,
Ձկայ բաժին ինձ փառաց։

Մի լար, հոգւոյս իմ հատոր,
Գուցէ դառնամ, ո՛հ, մի լար
Թո՛ղ կայցէ մտրտին ես ի գոռ.
Տեսցուք յերկինս մենք պերար։

Եղբայրասպան չէ նախանձ.
Որ բորբոքեալ յիս վառի.
Ի սուրբ հողոյ հայրենեաց.
Բառնամ ըզլուծ օտարին։

291 ՔԱՅԼԵՐԳ Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ

Մշակ, բանւոր բենջպեր ախբեր,
Արի՛ք միանանք յառաջ գնանք . . .
Աշխատանքի դառն պաշտպան
Դաշնակցութեան թեւ թիկունք տանը՝
Ա՛խ, մենք տանջուենք քրտինք թափենք,
Արիւն՝ վաստակ դառնենք դիզենք.
Շահագործող ցեցեր վառնեն,
Իսկ մեզ՝ չոր հաց բաժին հաննեն,
Դէ՛հ ահ օրեր, լաղոք դարձե՛ք,
Արիւն, քրտինք երկուենք մաե՛ք.
Տանջանք, զրկանք լեզու առե՛ք,
Սօցեալիզմի ճամբան բացեք . . .

292 ՄՈՒԹ ՊԱՐՏԻԶՈՒՄ

Մութ պարիզում սըրտատրոփ, սիրասենչ
Իմ նազելուն ըզգաստում եմ այս գիշեր.
—Շըշուկ ընկաւ ահա վարդի, ծաղկանց մէջ,
Շուրջըս փըռուած սրբեչումի գառ փեչեր.
Իմ նազելուս քընքուշ չունչը ինձ չհասեց.
Կարօտավառ հընգարտ կըրծքին փարուեցի.
Ծո՛ւխ-մազերի անո՛ւշ ըռչիւ ծաւալուեց.
Աւազ-աչերին համբոյրներըս վազեցի.
Շըրթունքներէն ջերմ արիւնը կաթկաթեց.
Է՛ւ բաղդաւոր, և՛ երջանիկ լացեցի . . .
—Վա՛յ քեզ, թշուա՛ռ, երազներդ խեղճ սըղո՛յ,
Ոչ ոք չըկա՛յ, ոչ ո՛ք չունիս՝ քեզ մօտ գայ . . .

293 ԱՒԵՏԱԲԵՐ ԱՌ ՄԱՅՐՆ ՀԱՅԱՍՏԱՆ

Մռայլ կողեր թողէ՛ք զիս,
Ձայն մի լսուի փրկարար,
Ձեռք մի քակէ իմ պատանք,
Ելի՛ր մայրիկ, բաւ նիրհիս,
Յարութեան դար է այս դար՝

Պատանեակ մ՚է այս առյոգ.
Վարդանի դէմքն է իւր դէմք,
Դորով ցայտէ աչերէն.
Ես վաստրէն թռչիմ հոս,
Ելի՛ր մայրիկ, բա՛ւ հիրհիս՝

Մի ձեռքին մէջ կայ օրէնք,
Ձակտին գրուած Հայրենիք,
Իւր քայլերուն հետքն է լոյս.
Շղթաներըդ թող մէկդի,
Ելի՛ր, մայրիկ բա՛ւ նիրհեաւ

Խաւար թափի աչերէս.
Այն ինչ այդ է լուսածին.
Այն ինչ այդ է վարդածին.
Լոյսն ապագան է Հայուն,
Վարդերըն յոյս են Հայուն՝

Ելնեմ ապա պարեմ զուարթ.
Բերէ՛ք զարդերս պճնուիմ,
Ոսկի զարդերս բերէք ինձ.
Անոնք աւերց տակ կորան,
Յուսոյ վարդ մը բաւ է ինձ՝

294 ԼԵՒՈՆ ԶՐԴ Ի ԲԱՐԻԶ

Մտաւ արեւ երջանկութեան գլխուս պատեց մութ
Քաղցրիկ օրերս պայծառ ժամերս ինչպէս անցան շուտ.
Դիշեր ցերեկ կը հառաչեմ չկայ ինձ օգնական,
Ես իմ ցաւերս, ես իմ վիշտերս որոյ ես պատմեմ,
Աշխարհ ինձի աւերակ է մինչ գահէս զուրկ եմ,
Ո՛հ հայրենիք իմ անուրանալ ցաւոց մէջ հեծէ,
Միթէ սիրտս ապառաժ է որ չի հառաչէ.
Իւր հայրենիք, պատառ, գինուոր ինչպէս չի յիշէ,
Ես իմ ցաւերս լեն.

Ամիսս է գար, օրերս տարի, ո՛հ ժամերս ամիս
Սէր կիկիկիս անառէր գահոյս լալով կոչէ զիս
Եգիպտաց ալ խաժադուժ քանդէն հայրենիքս.
Ես իմ ցաւերս, ես իմ վիշտերս որոյ ես պատմեմ.
Աշխարհ ինձի աւերակ է մինչ գահէս զուրկ եմ,

295 ՏՐԴԱՏ

Յուզատն ի վեր ի Մասիս
Աբիւք որդիք Հայկեան,
Յրրուեալքդ ի մի խումբ պարու,
Բառիչ հոգմոց փող ազդու,
ՅԱռաւուածախրախոյս ձայնի (կրկնիւ)

Նախնի կամաց բազմերփեան,
Ահա պատի զնովաւ.
Ամպրոպայոյզ մրրըրկաց,
Հաշտարան պատերազմաց,
Տարփալից ցոյցաւ (կրկնիւ)

Զայն որոտաց ձայն ահեղ՝
Խորանաձեւ յարկէն.
Արիագունդ տուն Հայկեայ,
Զատապալեալ գահիդ արքայ
Վերականգնեմ անդրէն՝
Դիւցազանցն պար Թորգոմեան,
Տըխրագեաց յեղիսեանս
Ըզկըրծագոյն գիմաց մէգ,
Յաստեղաց բոց վառին չէգ.
Յաւետեաց հրաւիրանս՝
Արդ իմ արի սպառազէնք,
Տուք կայծս հրակայաքայլ,
Դաշտաք ի պըղինձ բոցասգին.
Լերինք ի նշոյլ շլլասցին.
Զոկատիցդ ի գետալ՝
Ահա ձեզ Հայկ երկնաճեմ,
Հայր ձերում բանակի,
Ասպարափակ Հովանեաւ՝
Զձեօք ի բարձանք փառեցաւ,
Անթափանչ նիզակի.—
Խումբ պար առեալ զարքայիս,
Զօրավարք արամաց,
Բոլորեցէ՛ք Տամերամ
Պըտակ փառաց անթառամ.
Կեցցէ՛ ՏՐԴԱՏ արքայ՝

296 ՕՐՕՐ

Ննջեա՛, որդեակ անուշ քնով,
Օրօր կ'ասեմ ու նանի,
Քնոյ հրեշտակն իւր թեւերով
Քո երեսին հով 'անի,
Օրօր, օրօր իմ գառիկս, (Ամեն տան
Օրօր, կ'ասեմ հրեշտակիս վերջը կրկնիւ)

Ննջեա՛, ննջեա՛, անուշ զաւակ,
Շուտ մեծացիր ու մարդ դառ,
Հայրենիքիդ լեր պիտանի,
Նորա արեան վրէժն առ։

Դիտես արդեօք ո՞վ էր պապդ,
Ու ի՞նչ գործեր նա արաւ.
Նա վարդանն էր որ իւր գործով,
Հայրենիքին փառք բերաւ։

Քո անունն էլ նոյնպէս վարդան,
Դու էլ նորան նմանիր.
Նորա տուած օրինակով
Հայրենիքիդ ծառայիր։

Դէ՛հ մեծացիր ու քաջացիր,
Ազգիդ վերայ մտածիր.
Զեռքիդ եկած ամէն բարիք
Նորա մի՛ խնայիր։

297 ՕՐՕՐ

Ննջիր մանուկ իմ սիրասուն,
Օրօր եմ ասում.
Պայծառ լուսինն էլ չի նայում
Քո օրօրոցում։

Այն օրւանից երբ հայրդ ինկաւ
Իրդի գնդակից,
Պայծառ լուսինն էլ խաւարաւ
Անարդար գործից։

Արիւնթաթախ հայրդ խանութից
Տարան գերեզման,
Այնտեղ տուին չինած հագից
Մի հանգստարան.

Բայց նա չունի ոսկորներին
Մի փոս առանձին,
Ժողված միասեղ թագեցին
Բոլոր հայերին։

298 ՊԱՆԴՈՒԽՏԻ ԵՐԳ

Նուիրագործ է հայրենիք հէգ Հայուն,
Ջոր քանդեցին ժանտ մեքենայք անցեալուն,
Հին գարուց մէջ ծանօթ էր մեր ազգութիւն,
Մեծ հեղիներ ցրուեցին մեր միութիւն,
Հայ զաւակ մ'եմ կ'ապրիմ ցաւով,
Ես պանդուխտ մեմ խիստ կարօտով։

Մինչեւ ամպերն բարձրացած էր Հայ անուն,
Հայ անունը սարսափ կ'ազդէր դարերուն.
Անցան դարեր փոփոխութեամբ չատ անհուն՝
Հայ անունը հռչակուեցաւ վատ անուն։
Հայ զաւակ մ'եմ խեղճ անտերունչ
Միշտ կ'արտասուեմ լուիկ ու մունջ։

Հայաստանն է գժբազդ Հայուն օրօրան.
Հոն փայլեցաւ նա իւր ոգին արութեան
Արդ չունի սիրտ, ուժեղ թիկունք և արմունկ,
Չի խլուեցաւ իւր արմատէն խիստ խորունկ,
Հայ զաւակ մեմ հեռու յոյսէս,
Խիստ հեռու եմ հայրենիքէս։

Կենդանարար հող, ջուր, օդ, երգ հայրենեաց,
Որ կեանք տալեն անմահ քաջաց, դիւցազանց,
Ո՛հ, չեն կամիր իրենց բարիք օտարին,
Կ՝ուզեն պահել զայն հայ Թշուառ զաւակին,
Հայ զաւակ մ՝եմ կարօտակեզ,
Ես շուշան մ՝եմ արեւակէզ,
Հայք կը յարին օտար ազգի և երկրի,
Օտար կրօնի, օտար լիզուի և փառքի.
Ասա այն ցրուեալ, Թափառական կը շրջին՝
Զը լսելով մեր հայրենեաց մօր ձայնին,
Հայ զաւակ մ՝եմ անօղնական,
Մոլորած եմ աստանդական։

299 ՀԱՌԱՋԱՆՔ

Նպատակիս հասնիմ միակ,
Թող զիս հանեն կախազան,
Կախազանէն խեղդուկ ձայնով
Պիտի գոչեմ, ա՛խ, Հայաստան։
Ա՛խ, Հայաստան, սիրտս ու հոգիս
Բեզ նուիրեմ ընդունէ՛
Թէ կարելի. Թո՛ղ ես մեռնիմ,
Հայրենիքս դուն ապրէ։
Անոր սիրոյն բանտն ալ դրուիմ,
Պատրաստ է այն ինձ համար.
Ջեռքերս ոտքերս շղթան զարնեն,
Երջանկաբերն է ինձ ան ալ։
Թէ մինչեւ իսկ աքսորուիմ ալ,
Թափառական ընէ զիս բազդ,

Հայաստանի սիրոյն համար,
Փըշոտ վայրեր կ՝ըլլան դրախտ։
Ա՛խ, Հայաստան, դու սիրուն մայր,
Մինչ ե՞րբ այսպէս քու որդիք,
Բեզնէ հեռո՛ւ պիտ՝ հառաչեն.
Երբ դու այստեղ անտէր կ՝մնաս
Մըրբ պիտի գայ իմ թագաւոր,
Որ ես հասնիմ իմ ուխտին,
Դրօշակներ ծածան ծածան
Ակռաձակուս թագը դրկեն։
Ա՛խ, Հայաստան, աչքդ դանձուր
Բեզ փընտրող որբերուն,
Պէս պէս ցաւօք կը տանջուին,
Դարման եղիր հայ քաջերուն։
Վախնամ մեռնիմ ես այս ցաւով
Ու իմնեմ սև գերեզման,
Գերեզմանէն մեռած ձայնով
Պիտի գոռամ, վա՛խ Հայաստան։

300 ԵԱՐԱԼԻ ԲԼԲՈՒԼ

Նպատակիս գէթ մը մասը կատարուէր.
Եարալի բըլբուլ եմ.
Հայրենիքիս ազատութիւնը տեսնեմ ու մեռնիմ.
Եար արէ, տուն արի, շուտ արի բըլբուլ։
Սարերի դիւն եմ.
Ա՛խ իմ դարդըս չատացել է չեմ կարող,
Եարալի բըլբուլ եմ.
Դարդի ձեռից ա՞ր ջուրն ընկնեմ ազատուեմ.

Տուն արի, շուտ արի, եարալի բլլլում եմ,
Սարէրի գիւլն եմ։
Ա՛խ, անրադդ հայդուկիս, Տէր իմ, գու խզճայ,
Եարալի բլլլում եմ,
Մի՛ թողներ քու բրի գնդակով զուր գնում կորչեմ։
Եար արի, տուն արի, շուտ արի բլլլում եմ.
Սարէրի գիւլն եմ։

301 ՇԱԻԱՐՇԱՆԻ ՔԱՅԼԵՐԳ

Շաւարշանի հերոսներուն
Արի սերունդն ենք հարազատ,
Պիտի պատուենք անուց անուն,
Պիտի բլլանք մենք յար ազատ
Եթէ ատեն մը գայ չարի,
Պիտի կռուինք միշտ անհանգիստ,
Անոնց նման ալ քաջարի՝
Պաշտպանելով բարուն պահանջ։

Մենք չենք ճանչնար երբէք խըտիր,
Ասեր միութեան ենք չերմ պաշտպան,
Սիրոյ դրօշը գերընտիր
Պիտ՝ ծածանի յար անխափան.
Ձշմարտութեան յառաջապահ,
Աշխատութեան ալ ռահվիրայ.
Դրկիչ ու գիրք, բլլլիչ ու բահ
Մեր յարդանքին են առարկայ։

Կուռ, ներգաշնակ մըշակութեամբ
Պիտի կըլթենք հոգի մարմին,
Նըկարագրով, վարկով անառակ՝
Արժանաւոր հայկեան զարմին։
Համայն աշխարհ գիտէ այսօր
Թէ վառ լոյսի պաշտող են Հայք—
Շաւարշանի դրօշէն բռնոր
Լոյս ծագեցաւ, շողաց Նոր Այգ։

302 ՇՈՐՈՐԱ, ԱՆՈՒՇ

Շորորա՛, Ա՛նուշ Ջան, շորորա՛.
Անուշի շորորով ես կորայ։
Ա՛նուշ. լուսնակ նորել է,
Շորորա՛, Անուշ Ջան, շորորա՛.
Նորել՝ բակ բորորել է.
Անուշի շորորով ես կորայ։
Շարան-շարան ամպի մէջ
Շորորա՛, Ա՛նուշ Ջան, շորորա՛.
Մըռել ու մոլորել է։
Անուշի շորորով ես կորայ։
Ծամեր ունես ծիրանի,
Քամին տա՝ թել-թել անի.
Էգ կապուտակ ծով-աչեր,
Ո՞մ խելքն ասես՝ կը Հանին։
Ալ վարդ բացուել է Հովին,
Սոխակ կայնել է քովին.
Բացի իրնից ձեռ տալու՝
Մ՛օ՛տ չի Թողում ոչովին։

303 ՊԼՊՈՒԼՆ ԱՒԱՐԱՅՐԻ

Ո՛հ, դու բարեկամ այրած սըրտերու,
Թօսնակ գիշերոյ, հոգեակ վարդերու,
Երգէ՛ պըլպուլիկդ, երգէ ի սարէդ,
Զանմահ քաջքն Հայոց երգէ՛ հոգւոյս հետ։

Թագէր վանուց ձէնիկդ ինձ գիպաւ։
Սիրտիկս՝ որ ի Խաչն էր կիպ՝ Թունդ տառաւ,
Ի Խաչին Թեւէն Թըռաւ ու հասաւ,
Գրտաւ գքեզ ի գաշտ քաջին Վարդանայ։

Պըլպուլ, քեզ համար մեր հաբքն ասացին
Թէ չէ հաւ՝ պըլպուլ մեր Աւարայրին,
Եղիչեայ հոգեակն է քաղցրագոյնիկ
Որ գվարգան ի վարդն տեսնէ կարմիրիկ։

Ձմեռն յանապատ կու գնայ, կայ ի լաց
Գարունն յԱրտազ դայ ի Թուփ վարդենեաց
Երգել ու կանչել յեղիչեին ձայն [գան։
Թէ պատասխանիկ ս՛արդեօք ատ՚յ վաթ-

304 ՀԱՅՐԵՆԻՔ

Ո՛հ, ինչ անուշ և քնչպէս զով
Առաւօտուց փչես հովիկ,
Ծաղկանց վրայ գուրգուրալով
Եւ մազերուն կուսին փափկիկ։
Բայց չես հովիկ իմ հայրենեաց,
Գնա՛ անցիր սրտես ի բաց։

Ո՛հ, ինչ ազու և սրտագին
Ծառոց մէջէն երգես Թռչնիկ,
Սիրոյ ժամերն ի յանտառին
Զմայլեցան ի քո ձայնիկ։
Բայց չես Թռչնիկ իմ հայրենեաց,
Գնա՛, Թռիր սրտէս ի բաց։
Ո՛հ, ինչ մրմունջ հանես վտակ.
Ականակիտ և հանգարտիկ,
Քու հայելւոյդ մէջ անապակ
Նային գիրենք վարդն ու աղջիկ։
Բայց չես վտակ իմ հայրենեաց,
Գնա՛, հոսէ սրտէս ի բաց։
Թէպէտ Թռչնիկն և հովն Հայոց
Աւերակաց Թռչին վրայ.
Թէպէտ պղտոր վտակն Հայոց
Նոճիներու մէջ կը սողայ,
Նոքա՛ հառաչքն են հայրենեաց,
Նոքա չերթան սրտէս ի բաց։

305 ԱՌ ՀԱՅԱՍՏԱՆ

Ողջոյն ընդ քեզ Հայաստան
Մեր դէւցազանց գերեզման.
Ողջոյն հայոց Թագուհի
Պատկեալ փառօք հայրենի։
Երկինք գրկէ քեզ հրեշտակ
Բիւր վարդք ծըլին ոտքին տակ,
Իւր մէկ նայուածքն երկնադեղ
Քու սրտասուացդ ըլլան տեղ։

Ո՛հ, ի՞նչ անուշ նուագներ
Պիտի հնչեն սոխակներդ
Երբ քու ճակատդ պսակէ
Ծաղկեռնեան դափնիէ՝
Մանուկն յօրոց կը խայտայ
Եւ ծերունւոյն սիրտ ցընծայ,
Երբոր նշոյլք կը ժպտին
Հայ աստեղաց նոթածին՝
Ո՛հ, չիմացող քալ ալ հանգչի
Անմահութեան վեհ ոգի
Մինչ զաւրթնակք ի բարձանց
Պսակս սփռեն Հայկազանց՝
Փափուկ մատունքդ թող դրօշմեն,
Այն տաւերով ոսկեղէն,
Մեր սրտին մէջ «սէր և յոյս».
Մեր հոգւոյն մէջ «կեանք և յոյս»՝
Քու վշտերուդ փոխանակ
Երկինք կանգնեց յաղթանակ,
Քու վէրքերուդ ալ դարման
Բեզի օրհնք շնորհեցան՝

306 ՊԱՆԴԽՏԻ ՈՂՋՈՅՆ

Ողջոյն տուէք իմ հայրենեաց
Կիսակործան տաճարներուն,
Ողջոյն տուէք աւերակաց
Արարատեան դաշտաներուն՝
Ողջոյն տուէք Ասպրոյրին
Արիւնաներկ Ս. վայրերուն,

Ողջոյն տուէք տխուր լուսնին
Որ լացն է սեւ շիրիմներուն՝
Ողջոյն տուէք պանդխտի Հայուն,
Թշուառ Հայուն, չուառ Հայուն,
Ո՛հ, ձեռք տուէք, ո՛հ սիրտ տուէք
Հոգի տուէք անկեալ Հայուն՝
Ողջոյն տուէք ոյզ մոլոր,
Բոլոր վազող գետակներուն,
Ողջոյն տուէք պղտոր բոլոր
Ագի, լեղի աղբիւրներուն՝
Ողջոյն տուէք ի հող եզած
Աբգբայական պալատներուն՝
Ողջոյն տուէք գետնատապած
Սրբոյ անբիծ մասունքներուն՝
Ողջոյն տուէք խումբ ի խումբ
Որկան թագած հոգիներուն,
Ուր Հայ սոխակ թուէբէ ի թումբ
Կեանք կը խնգրէին գետ շաւերուն՝
Ողջոյն տուէք հայ մուսային
Որ լայ զփառս իւր հաւերուն,
Ողջոյն տուէք իմ քնարին
Որ Հայկայ տանն է ողբերգու՝

307 ՕՏԱՐՆԵՐԷՆ ՉԿԱՅ ՅՈՅՍ

Ո՛չ, եղրա՛րք, ո՛չ. օտարներէն չկայ յոյս,
Մի՛ ակնկալիք, մի՛ գործներնէք յոյս յոյն կոյս,
Օտարն զձեզ թէև սիրէ հիւբարար,
Օտարն, ա՛հ, միշտ է օտար՝

Օտարը ձեր վիշտ կը դիտէ անդորով,
Ինչ փոյթ թէ դուք թափէք արցունք արիւնով.
Ով որ Հայ չէ, Հայուն ցաւեր նա չըզգար,
Ինչ կը խարուիք անդադար։

Մի՛ դուք ձեր յոյս, մի՛ աւանդէք օտարին,
Մի խոր վերքերնիդ ցուցունէք անգութին,
Յարգահատո՞նս կը յուսաք օգնութիւն
Ձեր կը ծաղրեն մերկութիւն։

Դիտեմ ձեր բեռը ծանր է ծանրը. ո՛վ Հայեր,
Բայց կը կարծէ՞ք դուն վերջընեն օտարներ.
Թողէ՛ք զօտար, ուէք եղբայր եղբօր թեւ
Եւ զօրացէ՛ք անդադար։

208 ԹԱՂՈՒՄՆ ՔԱՋՈՐԴԻՈՅՆ

Ո՛չ փող զարկինք. ոչ արձագանք լեռնատոյղ,
Սարէ ի սար չարաշրշուկ տարին լուր,
Ու չերգեցին սղոց երգեր սրատոյզ,
Երբ պատանւոյն բացինք մըտոյլ փոսին դուռ։

Դիշերական մանչ բատուերներ չուրջ կային,
Երբ հրացանի կոթով ըղոդ փորեցինք,
Լուսին մխայն գողգոջ շողայր մեր գլխին,
Սուգ էր պատեր ըզգաշտ լուր և երկինք։

Պէտք չէր գագաթ, և ոչ ճերմակ պատանքներ,
Որով դոյուէր ազատորդի Չէյթունցին,
Նա յետ մարտին կարծես յոգնած կու հանդչէր,
Ու վերարկուն կարմիր, բաւ էր իւր անձին։

Ընձայն ու կարճ «ննջեցեալոց» մի զրուցեց
Մեր քաջ Տէրտէրն, ղինուոր Հայոց ս՛Աստուծոյ.
Գովեց ըզմահն և ղաչուէթիւն իւր օրհնեց,
Թոյլ չտուաւ հառաչ մ՛ու ճիչ հանելոյ։

Բայց երբ գլուխն ի բարձ դրինք հողաշէն,
Տեսանք ըզգեղ ճակտին ու վերքըն պայծառ.
Ո՛վ պատանեակ, ըսինք տմնքա մէկ բերնէն,
Վասն հայրենեաց մեռար, գու շա՛տ ապրեցար։

Գընա՛ զրուցէ՛ Հայկեան զարմից մեծ ոգւոց,
Որ կան այս տեղ ազատ ու քաջ գեռ Հայեր,
Որոնք ի լուր պատերազմաց թեպէտ խոց,
Մէջ սմպրապաց ի ժայռ կանգուն են կեցեր . . .։

Մէյ մ՛ալ քամին յանկարծ փըչեց ցըրտաշունչ,
Լուսնին շողերն եկաւ գոցեց մրիկին սեպ.
Ու մար սարերն գերդ ուրջտականք անմրմունջ,
Սև գլուխնին անկած դիտեն ապշութեամբ։

Ցայնժամ ցուրտ ցուրտ հող լեցուցինք իւր վրան,
Խաչ մի գրինք, ինչպէս իւր մոր պատուէր եառ.
Ո՛չ այլ շրքեղ արձանագիր ոչ տապան,
Ձինքըն մրնակ թողուցինք իւր փառքին հետ։

209 ԵՐԳ ՀԱՅ ԱՂՋԿԱՆ

Ո՛վ ես որ գաս առանձին,
Ձեռքդ կուրծքիդ խաչագէս,
Ծաւները գրած ի գետին՝
Լըռիկ առ ո՞ րազաքեաւ

Անբիծ ճակատդ է կնճռոտ,
Յօնքերդ ի ծուփ ալկոծ.
Կայտ, սիրտդ ինչի՞ է կարօտ,
Որ հերաշունչ հանէ բոց։
Երթալ կ'ուզես, կը յուզուիս,
Աչդեաք սիրո՞վը մարդու։
Կամ սուրը սիրոյն կը ծանի,
Որ Ճառաւածն է պըտերուն,
Ես հայ աղջիկ եմ գինուոր՝
Տրդմատի մէջ մըկրտուած.
Պատմուճաններս են բոսոր,
Զենքըս խաչն է յաղթապանծ։
Զինուոր կ'երթամ Հայաստան,
Օրօրոցիս օրօրով.
Զինուոր կ'երթամ Հայաստան,
Իմ հայրենեաց կարօտով.
Ազատու Թեան կարօտով։

310 ԲԱՆՏԱՐԿԵԱԼՆ ԱՌ ՄԻՄԵՌՆԱԿ

Ո վ ծիծեռնակ վարանաց թըռչնիկ, ինչ տըխրագին
Ձայնիս. ձայնիս կ'եղանակես մօտ իմ բանտին.
Մինիչ վարուժանըդ սիրան
Հոս մխայնաւոկ թռղուց դըեղ.
Եւ դուն անմըխիթար կը հնձես,
Ո՛հ, լա՛ց ուրմն ինձի պէտ։
Բայց երանի՛ քեզ, բիւր երանի, կ'ընաս թռչիլ,
Թեթեւ թեւացդ ի ծայր ընդ սար ու ձոր։

Իսկ հոս արեւուն նշոյլն ազօտ
Մուխի բանտիս է անխուսափանց,
Եւ ոչ մեզմ հովիկ մ'ալ կը փչէ
Որ տանի ձայն իմ սիրելեացս։
Դէմ դու գնա՛ գտնել սիրելիդ, ցաւերը սրտիդ,
Սակայն դարձիր նորէն մօտ չուտափոյթ,
Եւ հոս հանգչէ այս իրիկուն
Լե՛ր դու վրկայ տըխուր մահուանս
Եւ իմ շիրմիս վրայ ճըռճըռալով
Դէմ դու լիչէ պիս անմոռաց։

311 ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒ

Ո՛վ մեծաքանչ դու լեզու,
Ո՛վ հնչուն բառբառ մայրական,
Փափկահընչիւն բառերուդ
Նըման արգեօք այլ տեղ կա՞ն։
Դու որ նախ ինձ հընչեցիր
Սիրային, ո՜հ, հնչուն խօսքեր,
Այն նախ ըղձեզ թոմովներ՝
Դեռ իմ մըտքէն չէ ելեր։
Իմ մայրենի քաղցրը լեզու
Կեա՛ց անեռաան կեա՛ց յաւէտ,
Կեա՛ց մինչ լեզուդ հայկաբժան,
Կեա՛ց ծագկաթից ծագկաւէտ։
Ի՜նչ գառըն վիշտ է սըրտիս
Երբ օտար տեղ ու լեզու՝
Բըռնի իրեն դիս քաշէ,
Սըրտէս արիւն կը հեղու։

Ո՛հ, զայն օտարն ես սիրել
Բընաւ չեմ կարող ի սրտէ,
Զէ՛ այն չէ՛ քաղցրը իմ լեզու,
Որ սիրով դիս կ՚օղջունէր
Իմ մայրենի քաղցրը լեզու ևքն.
Լեզու համակ սիրաշաբժ,
Քանի ճոխ, պերճ ու պայծառ
Մինչ կը հընչես դուն քեզի
Սըրտերն ամեն զողացար,
Հընչէ՛, հընչէ՛ յաւիտեան,
Վեհ դիւցազանց պերճ երգ գոռ.
Թօթռուէ՛ փոշիդ, խոր մահէն
Ե՛լ երեւան, պերճ երգ գուռ
Իմ մայրենի քաղցրը լեզու ևքն.
Ցաւերժական սուրբ Գրոց մէջ
Կեա՛ց միշտ նորէն ու նորէն,
Կըշռեալ անոյշ քու ոտկերդ
Թող ամեն սիրտ արծարծեն.
Շընորհ ունել Աբարչէն
Կամ պէտք ըլլայ աղօթել,
Շըրթունքս սրբուէ բորբոքած
Կ՚ազատակէ անարգել
Իմ մայրենի քաղցրը լեզու ևքն.

312 ՍԵՐՈՒ ՓԱՇԱՅԻ ԵՐԳԸ

Ով որ քաջ է ինչ կ՚սպասէ,
Արդէն ժամանակն է թո՛ղ գայ,
Մահ-պատերազմի օրհաս է,
Ո՛վ որ անվախ, քաջ է, թո՛ղ գայ։

Կամ կռուելով մեռնինք անցնինք,
Կամ զենքով փրկութիւն ստանանք,
Կռուելով փրկինք Հայրենիք,
Ազնիւ մտածողը թո՛ղ գայ,
Մերթ Աստուծ մէջ, մերթ ի Սիփան
Կռիւ անենք միշտ անխափան,
Կռուելով փրկենք Հայրենիք.
Այս յոյս ունեցողը թո՛ղ գայ,
Այս հինգ դար է կ՚սպասենեն,
Բռնի՛ կրօնքէ մեզ կը հանեն,
Մեր կին, աղջիկներ կը տանեն,
Պատիւ ունեցողը թո՛ղ գայ։
Քարէ հողի, երկաթէ մարդ
Հալածէ թո՛ղ վտար ևամատ.
Քարի կուշտը անվախ չըքաղի՝
Անհատ խիղդը թո՛ղ գայ։
Վերջապէս մենք ունինք կռիւ,
Զենքով պիտի մաքրենք հաշիւ,
Մեր հայրենեաց փառքն ու պատիւ
Սերուի փաշան սիրողը թո՛ղ գայ։

313 ԱՌ ՆԺԴԵՀ

Ո՛վ երջանիկ դուռ նըժդեհ
Հիւր մեզ եկեալ պանծալի,
Թաղաղութեան ասկեփաձիկ
Փայլէ յաղնդ ձիթենիի
Ձախքեն ըղբև Թեւապար
Հաւատ և Սէր լուսաթռիչ

Ծագեալ յուսոյ կենսաւէտ
Նըշոյլ ի սիրտ բոլորից։
Հայրըն հոգւոց մեր Գրիգոր
Սերկեան աւուր ի հանդէս,
Զըւարթի ի քեզ ակնարկէ
Եկեալ խրիմ տանն ի տեսւ
Ըզքեւ ակումբ լուսերամ
Առեալ խայտամբ զեղապար,
Աստեղազարդ քեւ այս մեր,
Ցնծայ ողջոյն Սուրբ Տաճար։

314 ՁՕՆ՝ ԵՓՐԵՄ ԽԱՆԻՆ

Ո՛վ Հայաստան գժբա՛զդ այրի լաց նորէն,
Որովհետեւ աւար գընաց անօրէն
Դաւաճանի մը ոգեաւոչոր գընգակին
Հերոս որգւոյդ՝ ԵՓՐԵՄ ԽԱՆԻ կեանքն անգին։
Արեւելքէն մինչ արեւմուտք կը խօսին
Անյիշաչար ոգւոյն վերայ հերոսին
Որ ձակտիդ թոռնեն յափշտակող կոյր պարսիկն
Ազատելու համար միայն զոհեց զինքն։
Հինէն ի վեր ով Հայաստան քու արի
Զաւակներդդ աշխատած են օտարի
Բարւոյն համար թէև աւա՛դ, կած և լաց,
Զբրկանք ու մահ լոկ իրենք են վայելած։
Թուրքն ու Թաթար քուրդն ու չերքէզն ալ ևթէ
Հաակնային կորնեններուդ երկաթէ
Կամքն անրասիր սիրտն ու հոգին անձնուէր.
Շուտ այս երկիրն արքայութեան կը փոխեր։

Ո՛վ Հայաստան ԵՓՐԵՄԴ ինկաւ գաղանի
Մը պիղծ ձեռքով գերդ ճիտսի լաց դանի.
Մինդադային պատմիչներն իսկ դրեցին
Տապանագիր ժ՛յարմար հրակայ իր անձին։
Բայց ըմփոփուէ որովհետեւ քեզ համար
Ա՛յ չկայ մահ, մինչդեռ սղդերուն համար
Որ գարերով պայքարեցան քեզի հետ
Այսօր ինկած կամ եղած են անհետ։

315 ԴՊՐՈՐԱԿԱՆ ԿԵԱՆՔ

Ո՛վ սուրբ վայրեր, անհոգ ժամեր իմ կենաց,
Որ մտացս մէջ քաղցր յիշատակ մ՛էք թողած,
Ըսէ՛ք ինձի չէ՞ կարելի ետ գառնանք,
Այրած սրտիկս զովացնել գալ փութանք։

Ինչ քաղցր է սէր դպրոցական ընկերոջ,
Որով մարթիկ մանկութենէ յետ միմեանց,
Դաղտփարաց սերտ կապով մը կը կապուին
Եւ այդ կապով միմեանց եղբայր կը լինին։

Քար կամաց մէջ ամենէն քաղցրներըն
Են դպրոցի պատերազմի ընկերներ,
Որոնց սիրուն յիշատակներ՝ քան զալլոց,
Թողուն ի սիրտ՝ կարօտով հուր, բոց եւ խոց։

Ո՜հ երջանիկ էք դուք, մանկուներ դպրոցաց,
Որ ձեր անմեղ ժամերն ուսման նուիրած,
Մեղուի պէս ծաղիկներէն մեղր կազմեր
Եւ աշխարհիս ո՛չ հոգն ո՛չ վիշտ կը կրէք։

Կար աաեն մ'որ ես ալ ձեզ պէս երջանիկ,
Դպրոցին մէջ աչխարհն ու իմ հայրենիք՝
Մի ուրիշ կերպ կ'երազէի. և չէի
Դիտեր թէ ինչ մեծ ցաւ սրտիս տան պիտի

Բայց երբ անձամբ ի Հայաստան դիմեցի,
Եւ հայրենի այս թշուառութիւնք դիտեցի,
Ուրախութիւնն հեռացաւ ալ սրտէս,
Հառաչանքով միշտ «ա՛հ» լսում սրդ բերնէս

Ա՛հ հայրենիքս ինչո՞ւ այդպէս կաս թշուառ,
Չունաց մէկն որ հոգայ գանել քեզ մէկ ճար.
Ա՛հ, ամենքն ալ կը տեսնեմ որ անզգայ,
Անգութ դարձեր, ոչխերդ լսող մ'ալ չի կայ

Երանի թէ ես ալ մանուկ մի դպրոց,
Եւ կամ տղայ մ'որ գեռ հանդչի իր մօր ծոց
Ըլլայի և չդգայի այս բիւր ցաւեր,
Մինչ հայրենեացս այսպէս անկար եմ օգնել,

316 ՈՐՍԿԱՆ ԱԽՊԷՐ

Որսկան ախպէր ս էն կուգաս. սարի մառայ կը փնտռես,
Ասա եարաք, դուն չը տեսա՞ր իմ մարալիս իմ բալիս,
Դարդի ձեռիից սարէն բնկաւ, իմ մարալս իմ բալիս,
Գլուխն առաւ բարեն բնկաւ, իմ մարալ իմ բալիս:
Տեսայ ղոչիկ, ճաշնուն բալիդ կարմիր սլսակ էր կալել.
Սիրած եարի համբոյրի տեղ սրտին վերդեր էլ բոսել:
Որսկոն ախպէր, ասա՛ եարաք, ո՞վ է հարաք իմ բալիս,
Ո՞վ է գրկում չոր գլուխը՝ իմ մարալիս իմ. բալիս:
Տեսայ ղոչիկ սիրուն բալիդ.— բարև էր դրել բարձի տեղ,
Անուշ ննջել տաք գնդակն էր կրծիկն սեղմել եարի տեղ:
Սարի մարմանդ հովն է փչում ալաւ ճակատին մարալիդ,
Ծաղիկներ են վրան սգում ղո մարալիդ ղո բալիդ:

317 ԵՐԳ ԱԶԱՏՈՒԹԵԱՆ

Ոսկի փողերն Թող գոռան,
Թող դարձնու Թիւրքիա Համայն
Ազատութիւն է.
Տեսէք մահիկն հրաշափառ
Շողայ յերկինից ի վառար
Հայ և Թուրք ազգին համար,
Ազատութիւն է.
Օ'ն և մենք ալ անմխիթն
Միխանինք այս երգին,
Եղբայրացեալ Հայուն Թուրքին
Ազատութիւն է։

Արծաթի զանգակներ հնչեն,
Թող գոռան հայկեան լեռներն,
Ազատութիւն է.
Վախ և կասկած անցան արդ,
Սրտեր խայտան միշտ զուարթ,
Ազատ գոչէ աշխն մարդ
Ազատութիւն է։ Օ'նև մենք եւքն։

Հնչեն Թմբուկ, ծնծղայ,
Հայ և Թուրք, այր և տղայ,
Ազատութիւն է։
Դպիրք, Սոֆիաք համբնձաց
Ի ձայն ոսկի չեփորաց
Գոչեն ի սէր հայրենեաց
Ազատութիւն է։ Օ'ն և մենք եւքն։

Արդ՝ սուրբ արտով մրճաձայն
Լեռ դաշտ երգենք սիրածայն,
Ազատութիւն է.
կեց՛ցէ այս եղբայրութիւն,
Համահաւատարմութիւն,
Զոհաբերական պետութիւն,
Ազատութիւն է։

Օն և մենք ևե։

318 ԱՇԽԱՐՀ ՀԱՅԱՍՏԱՆ

Ո՞րն է աշխարհ Հայաստան, Միթէ սա՞ է Ռուսաստան,
Որ իւր բռնութեամբ գերել է զաշխարհն
Ազգին կեանք, կրօն յուխեան կորուն:
Չէ՛, չէ՛, չէ՛, չէ՛, սխալ է, մեր աշխարհն այլ է:

Ո՞րն է աշխարհ Հայաստան, միթէ սա՞ է Պարսկաստան,
Որի պատիերն է Սոդոմ ու Գոմոր,
Ընտանի կեանքն է Բաբելեան խմոր:
Չէ՛, չէ՛, չէ՛, չէ՛. սխալ է մեր աշխարհն այլ է:

Ո՞րն է աշխարհ Հայաստան, միթէ սա՞ է Տաճկաստան,
Որ իւր փառերէն բնաւ չի զրկուած
Կանանոցի մէջ կենդանի թաղուած,
Չէ՛, չէ՛, չէ՛. չէ՛, սխալ է, մեր աշխարհն այլ է,

Ո՞րն է աշխարհ Հայաստան, միթէ սա՞ է Յունկիկիաստան,
Որ իւր նոյն գգեստուի տիրել է աշխարհ,
Լուսաւորութեամբ առաջինն է այն:
Չէ՛, չե՛, չէ՛, չէ՛, սխալ է, մեր աշխարհը այլ է,

Ո՞րն է աշխարհ Հայաստան, աո՛ւ սա է Հայաստան
Որ իւր հզօրութեամբ, հաւատն ու կրօն
Պահպաներ է իակ, միինչև ի ցայսօր:
Հա՛, հա՛, հա՛, հա՛, ներե՛ք է, մեր աշխարհն այս է:

319 ԱՐԲԵՑՈՂԻ ԵՐԳԸ

Ուղիղ դիմեստունից ես տուն եմ գընում,
Փողոց, ա՛յ փողոց, էդ ի՞նչ եմ տեսնում
Աչ գընում թէ ձախ՝ ծուռ են երկուսն էլ,
Փողո՛ց, տեսնում եմ, դու էլ ես հարբել։
Լուսի՛ն ջան, ուխտդ է ծրտած,
Մէկ աչքդ կապուել, միւսը կէս բաց.
Դո՛ւ էլ ես կոնծել. ա՛յ դու անամօթ,
Ամաչի՛ր ինձնից, վաղուցուայ ծանօթ։
Բա, էստեղ-էստեղ,— տե՛ս. լապաներներն էլ
Զեն կարող ուղիղ ոտքի վրայ կանգնել,
Մէկ պարզ են վառւում, մեկ՝ սատիկ խաւար,
Կամ թէ՝ պատից պատ կըպչում անգադաբար։
Ազիէր՝ ես գիշեր ամենքն են հարբել,
Ի՞նչ բան է մենակ-մենակ ծամ պահել,
Չէ՛, էդ կը լինի խատակ գըժութիւն
Ուրեմն նորից նոր գառնամ գիմեստուն։

320 ԵՐԳ ՈՒՐԱԽՈՒԹԵԱՆ

Բաժակներ առնունք, եղբա՛րք,
Լիք-լիք բաժակներ գինով,
Կարմիր ու ճերմակ գինին
Մեզ լինի անուշ համով:

Բերնիս տանենք անվախ,
Չէ՛ դա խառնած կամ խարդախ,
Նեկտար է և ա՛չ գինի,
Խրմենք, մեզ անուշ լինի։

Արաքսայ ջրով ցօղած,
Հայոց արեւով հասած,
Հայոց աղջիկ է քաղել,
Քրնքոյշ ձեռներով քամել։
Այս Բերքն է հայոց երկրին,
Հայաստան անկած Նայէն,
Անմահ երինային գինին
Նա խմէց երբ իջաւ սարէն։
Այս անոյշ գինին խմողը,
Սըրտէն թող հանէ ոխը.
Ամենքս էլ սանք ամէն,
Որ մեզի շատ տայ ամ ի՛նն։

321 ՈՒՌԻ ԵՍ

Ուռի ես կռանալ մի
Մեր տնից հեռանալ մի
Վայ լե, լե, վայ լե, լե
Վայ լօ, լօ ջան։
Թէ Աստուածդ կը սիրես
Սիրել ես մոռանալ մի
Վայ լե լե լայլն։
Հեռու, հեռու, սիրածս
Ձնծղիկի թեւ ա սիրաս
Վայ լե լե լայլն։
Քանց վարդը կարմիր չկայ
Բաց ա՛խի սեւ ա լերաս
Վայ լե լե լայլն։

323 ԼՈՐԻԿ

Պաղ աղբիւրի ճօտ
Կանգնած հայ աղջիկ,
Վափորը ուսին՝
Ինքն էր գեղեցիկ։
Առաւօտուց Թռնիր վառ,
Ես մայիլ եմ քեզ համար.
Նըման ես կարմիր խընձոր լորի՛կ,
Լորի՛կ, լորի՛կ, ջանըմ լորի՛կ։
Պաղ աղբիւրի մօտ
Կանգնած հայ տղայ,
Հրացանը ուսին՝
Ինք էր քաջ հըսկայ։
Առաւօտուց Թռնիր վառ,
Ես մայիլ եմ քեզ համար
Նըման ես կարմիր խընձոր, լորի՛կ,
Լորի՛կ, լորի՛կ, ջանըմ լորի՛կ։

323 ՍԱՀԱԿ—ՄԵՍՐՈՊ

(Թէ հայրիճեաց պատկադրի եղանակով)

Պանծացէ՛ք, օ՛ն, Սահակ, Մեսրոպ.
Հայ բազդին քաջ պահապան.
Ձեր շաւիղին մենք սրտատրոփ
Վը հետեւինք անխափան։
Դուք սերունդներ բիւր՝ մըրթմռատ
Մահուան ճանկէն փրկեցիք,
Ձեզմով Հայաւն կեանքն անապատ,
Գըրախտ եղաւ գեղեցիկ։

Ձաճանչներով ձեր կենարար,
Մի զոյգ աստղեր մեր երկրին,
Հայ հոգիներ դարեր ի դար
Պիտի պարծին ու բերկրին։
Սուրբ Տաճարները հայ կեանքին
Մրբան մշնան վեհ, կանգուն՝
Պիտ՝ օրհնուի ձեր քաղցր, անգին
Եւ խնկելի զոյգ անուն։
Ցոյսի, լոյսի հայրենիքէն
Մեզ նայեցէք սեւեռուն,
Ու ձեր աչքեր թող միշտ հրսկեն
Մեր կազդուրուած քայլերուն։

324 ԲԱԲԿԷՆԻ ՄԱՀԸ

Պանք-Օթօման գրաւած է
Դաշնակցական կոմիտէն,
Նրա մէջը լեցուցած է
Պայթիչ, խորտակիչ ռումբով։
Ամէն հայ, քաջ սպասում էր
Այն սիրելի րոպէին,
Թէ երբ պիտի նետուի ռումբ
Ու խորտակուի թշնամին։
Ահա ինկաւ պատուհանէն
Մի կլորիկ զումպարայ
Հոն սարսեցաւ Սուլթան Համիտ
Եւ իր վատ իղձի փուշտն։
Երբ այս լուրը լսուեցաւ,
Քոմը կանչեց Նազիմը.

Գնա՛, ըսաւ, հանգարտեցո՛ւր,
Այդ խռովեալ հայերուն
Պանք-Օթօման գետեղուած է
Բարկէն Սիւնի չարկին տակ,
Հոն գտնուեցաւ Բարկէն Սիւնի
Դաշնակցական վէհ հոգին։
Սորա անունը ասրսեցուց
Հարիւր հազար մխսլիման,
Սոցա Սուլթան Համիտ կոչուած
Իսլամ ազգին խալիֆան։

325 ՅԻՇԱՏԱԿ

1897 Յուլիս 25ի առտու ամիճ

Պաշարեցին Թանայ ձորեր.
Դաշնակցութեան քաջ հայդուկներ
Վէրա Շէրիֆի բիւր վրաններ
Կեցցէ՛ք, կեցցէ՛ք, հայ հերոսներ
Որ չարդէին վատ քիւրդեր։
Յարձակուեցան քրդաց վրան,
Սարսափեցրին Շարաֆ ազան.
Կին ու աղջիկ, փոքրիկ տղայք
Կեցցէ՛ք, կեցցէ՛ք, հայլեր։
Ազատ օրշլոյսին
Հայ քաջերը ձեռք վերցուցին,
Դաշտ ու ձորեր դիակ լցին,
Նահատակաց վրէժ լուծին
Կեցցէ՛ք, հայլեր։

Հայկայ բանակը արշաւեցին
Ձեռքին առած սուր ու մասին.
Բիւրգաց Ջարդին արշաւոյսին,
Կեցցէ՛ք, եւայլն,
Զաւարներաց բարակ սիւներ,
Այրուած էին Հայ հերաներ,
Սեւ կապեցին քրգաց կիներ,
Կեցցէ՛ք եւն.
Ծածանուած էր դրօշակներ.
Որոտաց են մասիններ,
Դլորուած են անթիւ քիւրդեր,
Կեցցէ՛ք եւն.
Սպարապետ քաջ Վարդան
Հրաման տուր քալենք դէպի Վան
Դադացնենք այն բանտիթիւն,
Որ ճանչնայ Հայան իւր ձեռը
Բանած սուր և հրացան ու ինքն
ազատ է ազատ։

326 ՊԱՐՋԻՐ ԱՂԲԻՒՐ

Պարզի՛ր աղբիւր, քրդի տղին չուր տանիմ,
Պարզի՛ր պարզի՛ր, պէյի տղին չուր տանիմ։
Աղբիւր գիտե՞ս քիւրդը մեզի ինչ կանէ,
Կը կոտորէ, կը հալածէ, կ'ըսպանանէ։
Աչքըս բացի սուք ու շիման ես տեսայ,
Նամերտ քիւրդին ա՛հ, զոհ գնաց իմ փեսայ։
Կար ժամանակ որ մենք ազատ կ'ապրէինք,
Լեռներ, դաշտեր, ազատ անվախ կ'եպրէինք։

Աղրի՛ւր, հիմա սեւն է պատեր մեր աչքերն,
Ջուլում, զուլում, Ջարդ ու սարսափ ու խաւար։

* *
*

Պարզի՛ր աղբիւր, պարզի՛ր արագ չուր տանիմ,
Պարզի՛ր, պարզի՛ր, քաջ Մուրատին չուր տանիմ,
Պարզի՛ր, պարզի՛ր, հայ ֆէտային չուր տանիմ։

327 ՎԱՐԴԱՆ

Պինդ պինդ ձայն տուին, ո՞ւր է Ս. Վարդան,
Արձագանք կրկնեց Վարդան ու Վարդան։
Յանկարծ լըսեցին ձայն որուփ հեռուանց,
Այս ո՞վ է արդեօք, կ'սանն Հայք մխիթարիչ։

Վարդանն էր, բայց ինչ փիճակի հասած,
Աբիւնախաժախ սրբտին նետ ցրցուած,
Աչքերը մրթնած, երեսը ժժգոյն,
Վէրքերեն ծոր ծոր կաթուած է արիւն։

Երկու մանկաւիկ բըռնած կրծերէն,
Կիսամահ քաջը իջուցին ձիէն,
Տղերք, ասաց նա, ձայնով դողդոջուն,
Ուզեցի ձեզ տալ իմ յետին ողջոյն։

Տղերք, ասաց նա, յայտնելով դիւթագին,
Հանգիստ ապանդել այս շունչը վերջին։
Լըռեց, և իսկոյն նետը մահաբեր,
Թաչեց իւր կրծքեն և գոչեց կայսեր։

Դէ՛հ, Մնաք բարեաւ, Տէ՛ր ա՛ռ իմ հոգին,
Ազատ կեանք կամ մահ ասէ որպէս Հային։
Կարգէ կարգ լռեց մին հետ միւսին,
Վերջին համբոյրը տըւին դիւցազնին։

Եւ երբոր փայլեց առաջին շողը,
Քաչի մարմինը կլլեց սեւ հողը։

328 ՎԱՆԵՑԻ ՄՕՐ ԵՐԳԸ

Պզտի՛ տղայ, չեմ որդիր օրօրաճրդ, որ խուճ լաս,
Հայ ազատարդ ոտի ելաճ, միճակ դո՛ւ ես պիտ՝ մրնաս.
Ցարբէ՛ նոգիս, աճուռ խուճէդ, քաղ աչերդ լուս տնօճիր,
Արեւմտեան աեւ ծագեց, քաղդը բաճեց Հայ ազգին:

Շար բռնութեաճ ոսկի բախտը ցարդուեցաւ, վար ինկաւ,
Թախտի տակէն հազար ազգաց ազատութիւճ ծագեցաւ,
Ով որ շուտով ոտի էլլէ, ազատութիւճ կը գտնէ,
Սիրուճ ուղիօս միքէ միճակ չար լուծի տակ պիտ՝ մրճէ:

Մենճ Սալթանին շաս խրնդրեցինք կողոզոգին, ու լոցինճ,
Ազի ազի սրտաուխով ձեռնճ ու ոտքը լուացինճ,
Բայց ճա չաճաց պազատաճին ազամնի ճայեուճ,
Այժմ, ճայինճ, ճա կը լսէ՞ շաւաչիւճը սաւրեուճ:

Տուր, սիրանաճ. հակեմ ձեռքիդ պաղատիլերս. ուձակեմ,
Ու այդ բռլիկ աչիդ մէջը մի պզպզած սուր պրնեմ.
Ըսուուկ պրծա աւեճն գաւթը, վերադարձիր ազատուած,
Աւդեօք մի օր պիտի լսէ՞ս մեր խրնդիրը ով Աստուած:

329 ՍԱՍՈՒՆ

Սասուն գաւառ, հին Հայաստան,
Համբաւդ լսեց աշխարհ համայն,
Երիտասարդք են քաջագոն,
Հայոց պարծանք մրայն Սասուն:

Սասուն պարարտ հովիտներով,
Պարծի բնդ միշտ իւր քաջերով,
Որք Թ'ևւ ուտեն կրկըլ, կորեկ,
Խոզան բնդ սուր գիշեր. ցորեկ:

Սասուն գաւառ, անտառներով,
Պարսպապատ բարձր լեռներով,
Դիմադրեց միշտ քուրդ զօրքերուն,
Հայոց մատաղ եղաւ Սասուն:
Սասուն երկիր լեռներու մէջ,
Ա'լ սըրբացաւ իւր եկեղէջ,
Բարեաս, լեռնոտ ու խորտ ու բորտ,
Սասուն բուրէ այժմ արեան հոտ:
Սասուն երկիր յոյժ բարելի,
Լեռներ, գաշտեր ծաղկօք են լի,
Թէև Թահսին քանդեց Սասուն
Բիւր Հայք բաղձան սեւ հողերուն:
Սասուն կտրիչ եւ հրաման,
Խալիֆատիպ Համիտ սուլթան
Կանայք, մանկունք և արք ինկան,
Իրր քաւչարար զոհ Հայկականո
Յուբա դիակաց բարդեալ դէզ դէզ,
Եւ բազմիցք եկան ի տես,
Մարտիրոսաց կարգն է Սասուն,
Արժանացաւ սրբոյց դասուն:
Աբի Գրգոն՝ սուրբ Մարտիրոս,
Ի ձեռն քրդաց ինկաւ իրր սրս,
Գերի եղաւ անգութ քուրդին,
Բայց նահատակ Հայոց Ազգին:
Քաջ Գրգոի տարան էր Շնաբին,
Որ ձեռք քաշած իւրեան կեանքէն,
Կամաւ ձրգեց զինք լեռնէն վար՝
Նահատակեալ Ազգին համար:
Սասնոյ բընիկք բոլոր Հայ են,
Ֆէրիգն եղաւ նոցա կայէն.
Սասնոյ մէկ մաս կ'ըսուի կելի,
Արիւն թափեց գերդ Աբելի:
Սասնոյ տարսեր գերի գացին,
Մանկունք զօրաց ձեռք մնացին.

Սրբոյ Ճարակ եղաւ Սասուն,
Դիւզերը, արտեր, այգիք հասուն
Թէեւ ինկաւ անգէն, անոք,
Ա՛ւ Սուլթան չէտ ընաւ բոզոք.
Դեռի նըման հասող արիւն,
Դեռէն բոզոք եու Աստուծոյն
Թէև ինկար, ո՛վ վեհ ՍԱՍՈՒՆ,
Բայց գաս տուիր գերեալ Հայուն,
Թէ տուր ընգ տուր, բուռն ընգ բուռն
Բախմամբ արեւ ծագի մեր տուն

ՅՅՕ ՍԱՍՆՈՑ ԿՈՏՈՐԱԾԸ

Սասուն եկաւ ապատամբեց,
Աշխարհի մէջ հանեց Թմեղ.
Ամերիկա, Եւրոպ՝ ցնցեց
Քաջաց բանակն դուռնգաղունգ՝
Հայու արտեր թըրթռացին
Հայու ձայնը որոտաց
Կըտրիճք յառաջ շուտ խազացին
Ազատութիւնը թնգաց՝
Ա՛խ, Սասունցիք, քաջ Սասունցիք.
Ձեր արիւնին մենք դուբպան.
Հնչակեան տուրը անմեր ծնին,
Ազատութեան մենք դուբպան՝
Ոսխն տեսաւ և կատաղեց,
Զօրքեր հանեց բիւրաւոր.
Ցիտուն հազար զօրքեր կանչեց
Արիւնարբու, զօրաւոր՝
Եւ Սասունը պաշարեցին
Այն վայրենի քիւրտերը.
Թնդանօթներ որոտացին,
Քաջքանդ ըրին գիւղերը՝

Ա՛խ, Սասունցիք, քաջ Սասունցիք
Ձեր արիւնին մենք դուբպան,
Ա՛խ, տուրը հողիդ, անմահ որդիք.
Դիակներնուդ մենք դուբպան՝
Մօր արգանդն ոսխը պատռեց,
Դուխներ անցուց նիզակով,
Մինչ վերչին շունչ Սասուն կռուեց
Ազատութեան կարօտով՝
Եւ արիւնը գետի նըման
Թըրչեց Սասնոյ վեհ ասլեր
Հայք բիւրաւոր կատորացան—
Դարչ բանութեան տուրը զոհեր
Ա՛խ, քուրա, թաթխոտ բրանաւորներ,
Նըզով բլայ ձեր գլխուն.
Միչտ կարիճ են Սասունցիները
Նըզովէ՛ Ձեզի քո անուն
Եւրոպ՝ տեսաւ ցընցեց արդէն,
Ապշած նայեց Հայերուն
Տեսաւ վիճակ գէշ է տեղւոյն,
Բայց խորհեցաւ չահերուն՝
Հայու արեան չը հատատաց
Եւ յանձնախումբ մը ծրնաւ,
Քուրդն առաջ ընկաւ խրնդաց
Ձիւնոտ լեռներ ցոյց տուաւ՝
Ա՛խ Եւրոպա, մոր մը պէս խորդ,
Հայ գիակներ կը ծագրես.
Քուրդին կ՝ընտրես քեզ տաճկորդ.
Այս ինչ կատակ մեզ կ՝ընես՝
Կեցցէ՛ կըռիւ, կեցցէ՛ արիւն
Այս է ճամբան մինչ մեզի.
Մեր արիւնը Եւրոպային
Անշուշտ թէ քիչ կը թըւի՝

Ազատութեան համար անմահ
Թող երթէ ողջ Հայաստան.

Մեր արիւնով մեզ ներկած
Շահախնդիր Եւրոպան
Սասունցի կին, Սասունցի քոյր,
Ձեր արիւնին մենք դուբպան.
Հնչակեան սուրբ սերմեր ծլլին.
Ազատութեան մենք դուբպան։

331 ՍԱՍՆՈՑ ՊԱՇՏԵԼԻ ԼԵՒՈՆԸ

Սասնոյ գաւառում ծնաւ մի մանուկ,
Անունն էր Լեւոն, ուժեղ ու կարճուկ,
Դեռ նա չի հասած պատանեկութեան,
Ցանձն առաւ զոհուիլ ի սէր ազատութեան։
Վրիժառու լինել ուզեց իր նախնեաց
Վեցնել կարօտը իր փափաքանաց
Բիւրակնեան լերանց ստորոտն իջան
Այն տեղ կանգ առին մի քիչ քնացան։
Ցանկարծ արշինցան մօտ էր կէսօրուան,
Բարբարոս քիւրտեր վերեւից տեսան,
Ընկերք զոչեցին, Լեւոն արթնցաւ,
Հրացան ձեռք չառած գետին փռուեցաւ։
Արցունք աչքերից վառ վառ կը թափուէր,
Լեռ ան ցաւոց մէջ ինկած տատանէր,
Ով հայեր, հայեր թափեցէք արիւն,
Ցաւերժացուցէք ձեր նախնեաց անուն։

332 ՍԱՐԵՐԻ ՀՈՎԻՆ ՄԵՌՆԻՄ

Սարերի հովին մեռնիմ,
Իմ եարին քոյին մեռնիմ,
Էս օր օխանօր չեմ տեսել,
Ցեանողի աչքին մեռնիմ։

Ախ էնիմ արուն կուգայ
Սեւ արբուխ գարուն կուգայ
Ինչ էնիմ ես էն եարը
Գըռշտի տարուն կուգայ։
Եար, եար, եար, եար, նա նայ,
Ախ, նանի ջան, նանի, վա՛ նանի, նանի ջան։
Լուանակը կէս ու կամար,
Քոյրը մէնի եղբօր համար,
Օխտն օր պատ եմ պահել,
Իմ եարի ճամբի համար։
Ախ էնիմ արուն կուգայ եւայլն...

333 ՍԱՐԷՆ ԵԼԱԻ

Սարէն եկաւ երկու մախ,
Բոյիդ մեռնեմ,
Մինը հանգ ա, մինը ծուխ.
Սոյիդ մեռնեմ.
Երկու սիրուն երեւաց.
Բոյիդ մեռնեմ,
Մինը շէկ ա, մինը թուխ
Սոյիդ մեռնեմ.

Կապոյտ քուռակն առել ա,
Ոսկի սարքը ճարել ա.
Դէմի կանաչ սարի լանջ
Արեւի պէս վառել ա։

Իմ եարն ա շատ խորոտիկ,
Մէջքին ա ոսկի գօտիկ.
Աստուած սիրէ, տղերքիդ,
Ինձ տարէք եարիս մօտիկ։

334 ՍԱՐԷՆ ԿՈՒԳԱՅ ՁԻԱՒՈՐ

Սարէն կուգայ ձիաւոր,
Վայ լէ, լէ, լէ, լէ,
Մեր տունը չարաւետաւոր,
Ինճիկիկ փընճըլիկ կարճըլիկ եար եար,
Ինճիկիկ փընճըլիկ կարճըլիկ եար եար·
Հրէս եկաւ իմ աղբէր,
Երեք օրուան ճամբաւոր՝
Ծառերի հովին զուարթան,
Իմ եարի պօյին զուարթան,
Երկու օր ա չեմ տեսել,
Տեսնողի աչքին զուարթան՝
Անձրեւ եկաւ շաղալէն,
Ուռի տերեւ դողալէն,
Հրէս եկաւ իմ աղբէր,
Ալ ձին տակը խաղալէն՝
Ձամբա՛յ տուէք՝ առաջ գամ,
Սիրած եարիս բարեւ տամ,
Ուխտ եմ արել, որ առնեմ,
Թող տեսնի աշխարհ ալամ՝

335 ՍԱՐԵՐԸ ՄԱՆ ԵՄ ԵԿԵԼ

Սարերը մամ եմ եկել, եար ճայ ճանի ջան
Նանինա ճանայ ճանանայ ճանայ ճանայ ճանիջան
Ծաղիկ, վարդ վարդ իրար հիւսել, եարնայ ... ճանի ջան,
Դաղլու բալիս մուջ մի փունջ կապել, եարնայ, ճանի ջան...
Բլբլուլը կանգ է առել, եարնայ, ճանիջան...
Ալ վարդենուն աչ է առել, եարնայ, ճանիջան...
Արիւն է սիրտը կապել, եարնայ, ճանի ջան...
Շատ ու ջոխար արցունք թափել, եարնայ ճանի ջան...:

336 ՕՐԸՐ ԱՓԻՆՕ

Սարը սարի նըման չէ,
Հօ՛յ, օրօ՛ր, Ափինօ,
Լաւն ասէք, լաւն ասէք՝ իմ եարի·
Իմ սիրելու վատը մ՛ասէք՝ իմ եարի՝

Քարը քարի նըման չէ,
Հօ՛յ, օրօ՛ր Ափինօ,
Լաւն ասէք, լաւն ասէք՝ իմ եարի·
Իմ սիրելու վատը մ՛ասէք՝ իմ եարի՝

Հարսն ու աղջիկ շատ տեսայ,
Հօ՛յ, օրօ՛ր, Ափինօ,
Լաւն ասէք, լաւն ասէք՝ իմ եարի·
Իմ սիրելու վատը մ՛ասէք իմ եարի՝

Մէկն էն եարի նըման չէ՝
Հօ՛յ, օրօ՛ր, Ափինօ,
Լաւն ասէք, լաւն ասէք՝ իմ եարի·
Իմ սիրելու վատը մ՛ասէք՝ իմ եարի՝

Ջառ-մանուշակ բաղի մէջ,
Թաղնուել է թաղի մէջ·
Լուսաբաջին ծագկամ է,
Ձովի, շաղի, շաղի մէջ՝

Երանի քեզ, ա՛լ աղջիկ,
Ոսկիդ ծալէ-ծալ, աղջիկ·
Դու մեր տանը հարսնացու,-
Ես քեզ համար տալ, աղջիկ՝

337 ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆԻՆ ԵՐԳԸ

Մրջլի դաշոյն, ա՛խ սարսռանակ
Մանուածդ մօսին կեանք ես դու մեր
Երբ քեզ ձեռք առնէ հայդուկ ընդունակ
Ցիր ու ցան կանէ թշնամու բանակ
Դուք էք մեզի կեանք շնորհողը
Փրկիչ ու արեւ հանդիսացողը
Թշնամուց վրէժ սրբուխ Թախիծը
Լուծող թշնամիից ցաւ փարատողը
Ժրնեւից եկած Նըւէր Թանկագին
Կրաւոզ անձնուէր այն Դաշնակցականին
Ներշընչէ հոգի վեհ ազատութեան
Այս զէնքով փրկենք ամբողջ Հայաստան
Ժրնեւից եկած մօսին հրացան
Դէու քեզ կրկու չեմ եզած սրժան
Պարզ հոգւով կ'երգնում, պող կուրծքիս
Հայդուկի վրէժը քեզանով լուծէմ լանգմէմ
Սուրբ Դաշնակցութեան անվեհեր անուան
Անշէջ կրակը սրտիս ջեզաբուն,
Սրբոյին այրուած անձնուէր ջեզան
Կը փոթայ զընալ գէպի Հայաստան

338 ՋՈՒԼՈՒՄ Ա ՇԽԱՐՇ

Սիրեցի եարըս տարան
Եարս տուին ու տարան
Էս ինչ գուլում աշխարհ է
Սիրարս բօկեցին ու տարան

Ցաւըս մեծ է ճար չկայ
Ճար կայ ճարակ չկայ
Էս ինչ գուլում աշխարհ է
Սըրտակից ընկեր չկայ
Սարերի վրով գընաց
Իմ եարը խրով գընաց
Ոչ լոր-եր նա ոչ կաքաւ
Ջեհիցըս Թըռաւ գընաց
Լաւ օրերս անցան գացին
Սեւ տարաերըս մընացին
Ա՛ս ինչ գուլում աշխարհ է
Խոր ցաւերըս մընացին

339 ՄՕՐ ՍՈՒԳԸ

Սիրարս կըրակ ունի, արցունք՝ իմ հոգիս,
Որ կը մըխայ սեւ սուգին պէս մայրիկս.
Ո՛հ Մայրիկիս
Հառաչանքի շանթեն ակօսէ խորն հիմիս,
Տարտամ ստուերն իմ սրգակիր մայրիկիս.
Ո՛հ Մայրիկիս
Բոյլ մը խորհուրդ միշտ կը զարթնուն մէջ դանկիս
Ցուրտ ու սարսուռն օրերուն պէս մայրիկիս.
Ո՛հ Մայրիկիս
Ալբիւ կ'ուզեմ գունեզ զրարթ զերթ նարկիս
Դիրգ ու փափուկ թեւերուն մէջ մայրիկիս.
Ո՛հ Մայրիկիս
Սէր ու ժրպիտ ծրծեն թելերն իմ կեանքիս,
Թունդ պաշտամունքն, գուրգուրանքն մայրիկիս.
Ո՛հ Մայրիկիս

Երգէ՛ հոգիս կեանքիդ չիզ տաբ վանկիս,
Քանի քու մէջդ է կեանքն ու յոյս մայրիկիս,
Մ՛ն Մայրիկիս։

340 ԻՄ ՅԱԻԸ

Սաբր տենչերով լիկ ծարաւած
Յամաք գտնել աչքերքն յոյսայր.
Յամքիլ ծագիկ հասակի մէջ,
Մ՛ն, չէ՛ այնչափ ցաւ ինձ համար։
Չերմ համբոյրով մը դեռ չտյրած՝
Աս ցաւբա ճակատդա գալկահար
Հանգչեցընել հոգէ բարձին,
Մ՛ն, չէ՛ այնչափ ցաւ ինձ համար։
Դեռ չկրցած էակ փունջ մը
Ժպտէ, գեղէ, հոտէ չպրեալ,
Թրկել սա ցաւբա հոգակոյտը
Մ՛ն, չէ՛ այնչափ ցաւ ինձ համար։
Քաղցր կրտգով մ'յղի մրափ մը
Զանգորրած գլուխս մրրկահար՝
Նրնջել հոգէ վերմակի տակ.
Մ՛ն, չէ՛ այնչափ ցաւ ինձ համար։
Հագնիլ հին գին մաբ անուններ,
Ծրծել նորա մրաբ օգն յար.
Միշտ ցաւիլը մրայնդամայն.
Մ՛ն, չէ՛ այնչափ ցաւ ինձ համար։
Հէգ մարդկութեան մէկ ատոր դա՝
Հայրենիք մը ունիմ թշուառ,
Զօդնած անոր՝ մեռնիլ աննշան,
Մ՛ն, պդի է ատոկ ցաւ ինձ համար։

341 ՍՈՆԱ ԵԱՐ

Սո՛նա եա՛ր, Սո՛նա եա՛ր.
Սո՛նա սիրուն, Սո՛նա եա՛ր։

Տղայ. Վարդավառը գալիս ա,
Սո՛նա եա՛ր Սո՛նա եա՛ր,
Ծաղիկը ցընծալիս ա.
Սո՛նա սիրուն, Սո՛նա եա՛ր։
Ա՛յ գեղջուկ կանչող աղջիկ,
Սո՛նա եա՛ր, Սո՛նա եա՛ր.
Ձենըդ ծըլվըլալիս ա։
Սո՛նա սիրուն, Սո՛նա ե՛ար։

Աղջիկ. Կանաչ տեղը՝ բաղում եմ,
Պարի մէջին խաղում եմ.
Կաքաւի պէս սորալով,
Տըզանների գաղում եմ։

Տղայ. Կարմիր գինին թասում,
Ես եմ քո հաւասումը,
Ե՞րբ կը տաքնան աղջկերք,—
Վարդավառի պատումը։

Աղջիկ. Հայ, ասի՛ նա, ասի՛ նա,
Կարմիր գինին թասին ա.
Տըղէք երբ կը կատորաբին,—
Հորթ-ոխոզի պատին ա,

Տղայ. Սիրո՛ւն աղջիկ, նազ ունիս,
Շահ գաղալի տող ունիս.
Հոգիս չան գաղի գըլուխ,
Դու իմ հոգում հազ ունիս։

342 ԵՐԳ ԱԻԱԶԱԿԱՑ

Վառեց երկինք իւր մամբեն.
(Թրալալա, Թրալալա, Թրալալա),
Վառեց երկինք իւր մամբեն,
Աւազակաց համար, աւազակաց համար,
Ոահի գուարթ Թող գիշերն,
(Թրալալա, Թրալալա.Թրալալա),
Ոահի գուարթ Թող գիշերն,
Մեր պատան է անտառ, մեր պատան է անտառ,

Երգեն հոգմանք փոխորիկ
(Թրալալա, Թրալալա, Թրալալա),
Երգեն հոգմանք փոխորիկ
Աւազակաց համար աւազակաց համար,
Դինուով լըցուի մեր փորիկ.
(Թրալալա, Թրալալա, Թրալալա),
Դինուով լըցուի մեր փորիկ.
Եկէ՛ք օն, գու՛ք ի պար. եկէք օ՛ն գու՛ք ի պար,

Երբ որ մեռնիմ ես, ա՛վ բնկերք
Հարիւր դինով խոսք տուին որ
Մեր բաժակներ ամենուն ձեռք
Գան ու պարեն շիրմիս բոլոր, (կրկնէ)
Եւ աւ ի գոհ մեծ քաւութեան՝
Հոգւոյս հանգիստ պատառելով
Պիտի ցօղեն իմ գերեզման
Հարիւր պուզով դինիներով (կրկնէ)

Մեր կը գիմէ գուարթագէմ աւազակ.
Մինչ լուսին չողայ յիմեր կապուտակ
Մեծ խչան քարանձաւաց, լեռներուն
Դիմէ ըզհետ նաղուհաց և գանձերուն
Ժայռից հատորք են նեղուկ իւր կողին,
Խոտ փափուկ գոլարադեզ անկողին,
Երգ ի բերան փակին աչք մըթագատ,
Աւազակին կեանքն ու մահն է ազատ կրկնէ

343 ՎԱՐԴ ԿՕՇԻԿՍ

Վարդ կոչիկս, վարդ կոչիկս,
Վարդից գեղեցիկ մաշիկըս՝
—Մեր տան մէջը քընող սըղայ,
Կաբմիր խընձոր ծախող սըղայ,
Վարդ կոչիկս գըտնող սըղայ,
Տըղա՛յ, ղըրկէ՛ վարդ կոչիկըս՝
—Ձեր տան մէջը քընել չեմ ես,
Կաբմիր խընձոր ծախել չեմ ես,
Վարդ կոչիկդ գըտնել չեմ ես,
Իմ մտաքս չէ վարդ կոչիկդ՝
—Լաւ օրս եղաւ ա՛խ ու վա՛խ.
Կորցուցի կոչիկըս, աւա՛ղ,
Հայ սըղա՛յ, հոգուդ մատա՛ղ,
Տըղա՛յ, ղըրկէ՛ վարդ կոչիկըս՝
—Որ մտաքս չէ ո՛ւրտից ճարեմ,
Ագնիւ աղջիկ, հոգիդ սիրեմ,
Եթէ գըտնեմ յետ կ՛ուզարկեմ.
Իմ մտաքս չէ վարդ կոչիկդ՝

—Մի՛ մընար ինծի պարտական,
Աղջիկ եմ, տաս-չորս տարեկան,
Ես կը լինեմ քեզ սիրական.
Տըղա՛յ, դըրկէ՛ վարդ կօշիկըս։
—Ինչո՞ւ, մընամ քեզ պարտական,
Կամիս՝ տամ հազար դահեկան,
Եթէ կ'ըլնես ինձ սիրական՝
Ես կը ճարեմ վարդ կօշիկըդ։

344 ՎԵՐՋԻՆ ՎԱՐԴ

Վերջին վարդ, վերջին վարդ,
Սիրականիս վերջին դարդ,
Նա քեզ հանեց իւր կրծքից,
Ինձ պարգեւեց, վերջին վարդ։

Մանկութեան վերջին ժամերն,
Անցել են անդառնալի,
Կորած սիրոյս յիշատակ,
Դու ես միայն իմ վերջին վարդ։

Դարնան օրերն անցել են,
Տօթ ամառն է ինձ երում,
Միշտ սպասում եմ քու տեսքին,
Դուն ամառուա վերջին վարդ։

Երջանիկ կեանքիս օրերը,
Յաւ են դառել առաջիս.
Ուրիշ օրեր, ուրիշ կեանք.
Միտքըս բերիր, վերջին վարդ։

Շատ չի տեւել, կը բացուի,
Առաջիս սև դերեզման,
Իս աշխարհից միայն քեզ
Հետս կ'առնում, վերջին վարդ։

345 ՍԵՄԵՐՃԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Վէրքերով լի չան ճկատայ եմ
Թափառական տուժ չունեմ
Եարիս փոխան զէնքս եմ գըրկեր
Մի տեղ հանգիստ քուն չունեմ։

Արիւնոտ երկրի սուգ ու շիւան
Ինձ դուրս կանչեց փակ կեանքից
Տանջուած հայրենիքի սէրը,
Զը վախեցուց վըտանգից։

Ես կռուեցայ չանգիզդօյի,
Ըսկզբունքըս սուրբ մընայ
Թող իմ արեան կոմիկներով
Հայ գինուորը զօրանայ։

Մակեդոնիա իմ եղբայրըս
Իմ խաչովս պըսակուեց.
Եղբայրական սիրուն զէնքով
Դպան խուխանն խորտակուեց։

Ահա՛ հանգիստ հող կը մտնեմ,
Յայսքս դուք էք ընկերներ,
Շարունակէք մեր սուրբ գործը
Դաշնակցութեան վեհ քաջեր։

Կախազանից երբոր քարին
Ինձ տարբերէ ճօճալէն,
Յիշէք Պետրոս Սերեմճեանին.
Թշնամիէն վրէժ գոռալէն։

346 ԵՐԳ ՊԱՏԵՐԱԶՄԻ

Վըէժ կը գառան շիրմանց խոբէն
Գոռ գիւցազանց ստուերքն ահեղ.
Վըէժ կը մրմռան արգ արքեօրէն
Մեր հէք եղբարց արեան հեղեղ։

Մաեաց ժեռուտ սարն բոցավրէժ
Մեր սըրտերուն խոր ժայթքէ վրէժ ...
Օ՜ն, անվհեր վանենք զրկանք՝
Որ Հայաստան առնէ նոր կեանք։

Բիւր սուր, հուր, մահ,
Զազգեն մեզ ահ ...
Արգ քաջալանջ
Նետուինք առաջ։

Սուր մը յագուրդ
Վատ և անգութ՝
Թող Թըշնամւոյն
Խըմէ արիւն...

ՆՈՐԱՑՐ

Կայծակնահար թող կորընչին,
Ոըք կը մատնեն հայրենիքնին։

347 ՏԱԼԻՈՐԻԿ

Ցալտրիկի զաւակ եմ զորդ,
Քաղքըցու պէս չեմ Թուլամորթ.
Սարի զաւակ, քարի որդի
Հին քաջ հայոց եմ մնացորդ։

Ցալտրիկի զաւակ եմ քաջ,
Չեմ խոնարհիր վտանի առաջ.
Քարաւտ լերանց եմ ազատ լառ՝
Չեմ տեսել ո՛չ արօր, ո՛չ մառ։
Հայ ախըբրտիք, վայ ազըբրտիք,
Ցալտրիկի զաւակ եմ քաջ.
Վազատամեան սիրոյն համար
Ելիէք դէպ ինձ յառաջ, յառաջ։
Երբ իմ աչեր բացի յաշխարհ,
Ազատ տեսայ մեր աշխ ու քար.
Մինչ չի փակեմ աչքս ի խաւար
Պիտ՝ չը կոխէ հոս ազգ օտար։
Իմ մամ ծնաւ զիս սարերու ծոց՝
Ընկերցի կոշղ մ'ինձ օրորոց,
Տըկլոզ ծընօյ, մնծցայ տըկլոզ,
Կեանքիս բաժինն է կախ ու բոց։
Հայ ազըբրտիք՝ վայ ազըբրտիք, ևն
Ոտքըս բոպիկ, կուրծքս միշտ բաց,
Ինչ փոյթ թէ քոյրս ալ մերկ մնայ.
Ինձ մօտ մէկ է արեւ, բուք, ցուրտ,
Բա՛ւ է չիշխեր հոս անգութ Քուրդ։
Իմ կեանքըս խիստ է ու չարքաշ,
Փափուկ կեանքի վայրից չեմ վարժ,
Բընակարանս է ապառաժ,
Ընկերս՝ մըրկի ու երկրաշարժ։ Հայ ևն.
Թո՛ղ ալյք բնակին հովիտ ու գաշտ,
Վատ ազդին հետ թող լինի հաշտ.
Ես պիտ՝ մնամ միշտ անընդառաջ,
Թէև վրաս գայ քառասուն վաշտ։

Ցորենի տեղ կ'ուտեմ կորեկ,
Երկաթ ծեծեմ գլուխը ցորեկ
Շինեմ փէտատ, խոփ, խաչ-երկաթ.
Ծանր է գառուծս, լսայց եմ ազատ

Հարստութիւն, ուսում, հանճար,
Փառք ու պատիւ չեն ինձ համար.
Բա՛ւ է ունիմ տեգ, թուր, խանչար,
Բնաւ չի փոխեր հոս ոսք օսար, Հայ ևն

Սիրած գէնքերս չեմ ձգեր ձեռքէս,
Ախտն անվախ չէ ինձի պէս.
Կը սիրեմ որս, կըռիւ· ուար,
Կ'ըսպասեմ երբ ընկնի հասար

Դիշերն ալ գէնք վրաս քընեմ,
Երազիս մէջ կռիւ կ'ընեմ,
Կըռուիլ ինձ մօտ միշտ խաղալ է.
Կըռուով մեռնիլը հալալ է: Հայ ևն.

Այծեամի պէս կը ցատկըռտամ.
Ախտիս պէս կը մըռընչեմ,
Ծովի նըման կը փրփրիմ.
Կայծակի պէս կը հարուածեմ,

Կըռուոյ դաշտը բաղդն է կեանքին,
Երբ կը ծագի արշալոյսը.
Կամ աւետիս տայ դրօշակին
Կա՛մ պատ տեսնէ քու երեսը, Հայ ելլե.

Հասար ընկնի երեսամ յառաջ,
Սանոյ լերինք հանեն հառաչ,
Հառաչ հանեն և նեկրլրին
Կարճեներուն արիւնով քաջ.

Կըարճեին սիրտ, կըարճեին ձեռք,
Ի՞նչ փոյթ քաջին հազար մէկ վէրք,
Մէկ հարուածին կուտաս հարիւր,
Ագռաւին լեշ կ'անես հազար, Հայ ևն.

348 ՀՐԱԻԷՐ

Տեսէք ազատնին Նոյեան տապանին
Եկած ու կանգնած ի սար Տաւրոսին
Աւետիս կուտայ Հայկեան սերունդին
Թէ եկաւ գարուն Թորգոմայ զաւրին,

Արթընգէ՛ք Հայեր, քաջաց զաւակներ,
Առէք մխիթեան տէգ ու նիզակներ.
Շուտով կազմէցէք սիրոյ խմբակներ,
Հազէք քաջմէնեան զէն ու զրահներ.

Հինգ հարիւրամեայ մի քուն քընացանք,
Չ'Աւատուած ու գեղեցիկ խոպան մոռացանք,
Սիրոյ, միութեան չմեկնիլ մերկացանք,
Աստիւծեան ձեռք խաղալիք դարձանք.

Մոռցանք Հայրենիք, մոռցանք Հայաստան
Կորուսինք մեր փառքն ու Արմենիստան
Մաս մ'Աւատատան, մաս մը Պարսկաստան
Մնացինք Հայիր, թշուառ անպաշտպան.

Երկինք բարկացաւ. Հայրենիք լացաւ,
Մեր ջրեր ու հողին մեզ սրիւն գարձաւ,
Խաչեցան Յիսուս մեզի մոռացաւ
Հայերուն բաժին մնաց սուգ ու ցաւ.

Այսչափ բնանալ մեզի հերիք է.
Թրքերին ու պարսկի խիստ մեծ չարիք է,
Սրբեն ու սիրուիլ արդէն բարիք է,
Հայու գինուորին համար պարտք է.

Եկէ՛ք մրանանք. բանանք գոլոցներ.
Մեր մատաղ մանկանց համար փարծոցներ.
Վառե՛նք, բորբոքե՛նք սիրոյ հրնոցներ,
Մեր սառած սրտին բլան հալոցներ.

Շուքի պէս անցան այս հինգ մեծ գարեր,
Լացին Հայրենեաց գաշտեր ու սարեր,
Հերիք ալ ձեզի, հերիք է, վաւեր,
Հե՛րիք մեր բաժին արցունք ու ահեր.

349 ՄԱՂԹԱՆՔ

Տէր, կեցո զու, ըղեալս.
Եւ արա զնոսա պայծառս,
Կեցո՛ զհայս
Զողորմութիւնդ վերին (պար)
Հաճեաց ձօնել նոցին,
Զի նոքա մարթասցին
Ապրիլ յաստեաւ
Ով տէր մեր, տէր փութա՛,
Զազգ մեր հանայն փրկեա՛
Ի թշնամեաց,
Կարի՛ զաչս նոցաւն,
Հասո զարմատոցն զրուն.
Եւ զազգ մեր պարտասուն
Արա՛ հղգօր,
Ի քո իջեալ տեզի
Զաթոռ հայրապետի
Մեր հաստատեա՛ս
Զերկարութիւն կենաց
Հօր մեր Աստուած ազգեաց
Շնորհեա՛ պահին մեր հարց,
Որ զմեզ հովուէ։
Աջովդ հաստատեալ
Զազգ մեր արտահալած
Փոյթ զուսմանեա՛ս
Ցաչխարհ արարատեա՛ս
Ի վայր մեր ծնդեան,

Որ այժմ է ահիհասեան
Օտար ազգաց,
Առաքեա ի բարձանց
Զհամակցութիւն կամաց
Ի մերազնեայս
Զաչն ի մէնջ յարո՛
Պաշտպան ազգի մերոյ
Տուր նմա ցուպ հուժկու
Հովուել զմեզ։

350 ՎԱՆԵՑՈՑ ԱՂՕՔԸ

Տէր, ողորմեա՛ Հայոց ազգին
Տո՛ւր զօրութիւն մեր Թոյլ բազկին,
Հալածէ՛ դու մեր Թշնամին,
Տէր, ողորմեա՛, Տէր, ողորմեա՛։
Շընորհեա՛ մեզ մէկ քաջ զօրավար.
Ժողովել Հային միագումար,
Մարտնչեցնել կրօնի համար.
Տէր, ողորմեա՛, Տէր, ողորմեա՛։
Թո՛ղ դադրի մեր գերութիւնը,
Յառնէ Հայի ազգութիւնը,
վերջանայ մեր հէրութիւնը,
Տէր, ողորմեա՛, Տէր, ողորմեա՛։
Ցիշեա՛ զմեզ, Տէր այս անգամը,
Ուրախ չանցնի պատեհ ժամը,
Հայքս ալ ազգաց ՚լայք անգամը.
Տէր, ողորմեա՛, Տէր, ողորմեա՛։

ՏԷ՛ր, թէ այժմ ալ չես ողորմիլ,
Ա՛լ հայիս մէկ բան չի օգնիլ,
Մեզ կը մնայ չուրը ընկնիլ.
ՏԷ՛ր, ողորմեա՛, ՏԷ՛ր ողորմեա՛։

Ապա Թըշուառ եղբայր Հայեր,
Ձեռքերս առնենք մէյմէկ սուրբ,
Դրօշակ բանանք, փչենք փողեր.
ՏԷ՛րըն խըղճայ ի վերայ մեր։

351 ԿՈՉ ՄԱՐՏԻ

Տղայք ժողովինք հեռուէն ու մօտէն,
Զինուոր կանչելու փողեր ձայն կը հանեն,
Սաստիկ պատերազմ ընելու պատրաստ ենք,
Չէնքերնիս առնենք ու յառաջ ալ քալենք,
Յառաջ ալ քալենք, ա՛հ յառաջ ալ քալենք։
Չէնքերնիս առնենք ու յառաջ ալ քալենք։

Ահա մեր առջև կայ անթիւ թշնամի,
Բայց մեզ վանելու զօրութիւն, ուժ չունի.
Չօրութիւն է մեր կամք, մեր երդն այս ընենք,
Ու քաջութիւնով միշտ յառաջ ալ քալենք։
Յառաջ ալ ևն,

Մինչ մահ կը հանի մենք կ՚ուզենք մարանչիլ
Մեր քաջ զօրապետ չի կրնար յաղթուիլ.
Հայկայ փայլուն տուրը մեր ձեռքը առնենք,
Յաղթութիւն տանինք ու յառաջ ալ քալենք։
Յառաջ ալ ևն.

352 ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ

Տո՛ւր ձեռքդ եղբայր, ժամ է զարթնելու
Ժամ է ժամ յառաջ ուաքի ելլելու
Մօտ է վախճանին Հայերուս օրհասը,
Վինել չլինել մեզնից է կախուածը։

Տո՛ւր ձեռքդ, եղբայր, հերիք Համարենք
Հերիք օգնութիւն ուրիշիկ հայցենք,
Մենք ենք առնջուողը, մենք ենք չարչարուողը
Մենք պիտի լինինք մեզի փրկողը։

Մեր վեհ Հայբենիք գարերով ճնշուած
Դարեր շատ ու շատ մեր արեամբ ներկուած
Պահանջէ մեզնից արիւնով ներկել
Թշնամու արեամբ լեռները ու գաշտեր։

Շտապիր, եղբայր, ա՛ւ, ահա քեզ զէնք
Սրբանով մխայն փշրկուելու ենք մենք.
